Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

4087

281.6
П-92

1877

2010

ԱՌԱՆՁՆՈՒԹԻՒՆ

ՀՈԳԵԻՈՐ

281.6
Պ-92

28.6 սգ.
7-92.

ԼՈՒԴ. ՊՈՒՐՏԱԼՈՒԻ

ԱՌԱՆՁՆՈՒԹԻՒՆ

ՀՈԳԵՒՈՐ

308

ՓՈԽԵԱՑ Ի ՄԵՐՍ

ԳԵՐ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻՒԶ

ԱՐՔԵՊԻՇԿՈՊՈՍ ՍԻՒՆԵԱՑ

ԵՒ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՐԲԱՑ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻ

1/1221
29009
200223-59
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A. Публичная Библиотека
7/11 1922
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ՂԱԶԱՐՈՍ

1877

36667
36667 ար.

ՅԻՇԱՏԱԿ

ՆԵՓՍԵԱՆ ՏՈՀՄԻՆ



ՉԵԿՈՒՑՈՒՄՆ

Լուդովիկոս Պուրտալու՝ մին՝ի հռչակաւորացն բեմադասից արքունեացն և աշխարհին Գաղղիոյ՝ի Լուդովիկեան դարուս, հեղինակ է դրոցս։

Ծնեալ յամի 1632՝ի Պուրժ Գաղղիոյ, յընտիր և՝ի բարեպաշտոն ծնողաց, անդաստին յանտիական հասակէն զերաժեշտն ընտրեաց յաշխարհէ, և խուսափեալ՝ի կենցաղականաց, եմուտ յընկերութիւն Յիսուսեանց, եւ թէպէտ շատ ընդդէմ դարձան ծնողք նորա, մինչև բռնի իսկ՝ի Փարիզացւոց քաղաքէն ածել զնա՝ի Պուրժ, այլ յանտեղիտալի հաստատութենէ մտաց պատանւոյն յաղթահարեալ, մտադիր թողին նմա հետևիլ երկնահրաւէր ձայնին։ Զամս ութևտասն կրօնաւորեալ նորա՝ի Փարիզ, և մտավարժ և քաջանուն՝ի վարժս ուսմանցն հանդիսացեալ, ուսուցիչ նկատ հռետորականին, և խմաստասիրականացն և աստուածաբանական հրահանգաց։ Այլա յղեցաւ ևկն, յԱմիան, ՚ի Ռուան և այլ

ի գլուխ զգործն գժուարին, զովութիւն և մեծարանս յամենեցուն ընկալեալ յուղղափառաց և ի նորազանգից։ Ցամի 1700 հրաժարեալ ի քարոզութենէ, ապա այնուհետև զնորանոր վաստակոց բարեպաշտութեան բուռն հարկանէր. յեկեղեցեաց Աստուծոյ և ի բեմից՝ զորս փառաւոր արար քարոզութեամբ, փութացեալ ի հիւանդանոցս և ի բանտս՝ սփոփել և քաջալերբանիւք սրտապնդել զհիւանդս և զհոգեվարս, և փարատեալ զահ և զվարանս ի մտաց նոցա, քաղցրացուցանել զդժուարին և զտագնապալոզական անցսն՝ ի կենաց ի մահ։ Եւ մնաւ նա ի 1704, յերեքտասաներորդ աւուր մայիսի։

Հաւասար փայլեն ի բեմբասացութիւնս Պուրտալուի պարզութիւն ոճոյ և հմտութիւն, կորով բանից, սեղմ և անպաճոյճ դեղ, որով գիտաց հրապուրել զսիրտս, և յինքն յանկուցանել զունկնդիրս. և հասանէր նմա առաջին և նախագահ հանդիսանալ ի քարոզիչս՝ եթէ ըստ կորովոյ բանիցն և պատճառաբանութեանց, փայլէր և արտաքին ձևովք ճարտարախօսութեան, որ գիտեն զարմացուցանել, գերել և նկուն առնել զամենայն միտս։ — Բազմապատիկ են քարոզք նորա, յորոց չընտրեցաղունիցն ակն ունիմք ընդ հուսկ տալ ի

քաղաքս քարոզել զբանն Աստուծոյ. և ամենայն ուրեք յահճուս կացուցեալ զամենեսեան օձութեամբ աստուածապզեցիկ ոգւոյն և զեղեցիկ ճարտարախօսութեամբ, կոչեցաւ վիւանգամ ի Փարիզ. ուր և փութային կանխէին ամենեքեան ի լուր աստուածահրաշ բանից քարոզութեան նորա։ Եհաս բանն առ թագաւորն Լուդովիկոս ԺԴ. վասն որոյ և կարգեցաւ քարոզիչ արքունեաց նորա։ Տասնիցս յանդիման եղև նա արքայի և զբանիկաց պաշտօնակալաց նորա, լսելի առնել նոցա զբանս և զպատուիրանս աստուածայինս, թէպէտև ոչ աւելի քան զերիր նուագ հրաւիրեալ զոլով նախորդաց նորա ի նոյն պաշտօն. քանզի և Լուդովիկոս արքայ՝ յօժարափոյթն ի լուր բանից նորա, սովոր էր ասել թէ ցանկալի և օգտակարագոյնք էին նմա կըրկնութիւնք բանիցն Պուրտալուի առաւել քան զնորալուր ճառս այլոց. վասն որոյ և աւելի անուամբ յորջորջանաց կոչէր զնա Քարոզիչ թագաւորաց և Թագաւոր քարոզչաց։

Լուդովիկեայ արքայի յետս կոչեցեալ զհրովարտակն Նանթեսի, առաքէր զՊուրտալու ի Լանկտոք գաւառ, հրահանգել զնորազանգսն ի հաւատս ուղղափառութեան. և նա խոհական զգուշութեամբ և աստուածատուր իմաստութեամբ հանէր

լոյս նաև 'ի մեր լեզու. իսկ որ այժմ ընծայի մատենիկս Հոգեւոր առաձնութեան բովանդակութիւն իմն համարեալ է ամենայնին. զի պատկեր և հայելի է ճշդիւթ աստուածասէր սրտին և եռանդուն հոգւոյն, յորմէ ակն ունիմք օգտիլ ոչ միայն հետեւողաց նորա՝ մեկուսացելոց և հրաժարելոց յաշխարհէ, այլ և ամենեցուն որ խրատեցան 'ի Քրիստոսէ նեղ և անձուկ լինել ճանապարհին որ տանի 'ի կեանս:

Որում և տենչացեալ՝ ամենապատիւ տէրս մեր և առաջնորդ՝ Գէորգ Արքեպիսկոպոս Հիւրմիւզ, Թարգմանեաց զայն 'ի մեզս, 'ի սիրոյ իւր և 'ի հոգեւոր բարգաւաճանս հոգեկցաց իւրոց և որդւոց. զոր և յետ երջանիկ փոխմանն և առ Աստուած դարձին՝ ընորհապարտ մնօք և սրտիւ փութամբ կարգել 'ի վայելս հասարակաց:

ՀՈԳԵՒՈՐ

ԱՌԱՆՁՆՈՒԹԻՒՆ

Վասն հոգեւոր կրթութեան

ՄԱՍՆ Ա

Աստուած է որ կոչէ զիս յայս կրթութիւն հոգեւորական՝ 'ի բաց կալ զաւուրս ինչ յարատաքին զբաղմանց և պարապել 'ի պէտս հոգւոյ իմոյ. պարտ է ինձ ապա զամենայն փոյթ 'ի միջ առնուլ, և յօգուտ 'ի վար արկանել զայս ընորհս: Ոչ ամենեցուն տայ Աստուած զընորհս զայս և զպատեհութիւն. քանիք թերևս կարեին ուղղել զանձինս և զգաստանալ սովին, և ոչ առնեն նոցա: Իսկ ինձ ողորմութիւնն Աստուծոյ ընորհէ զայս. որպիսի՛ Հանիւ պարտ է ինձ ապա յարդել զընորհն:

Թերևս այս վերջին կրթութիւն է՝ զոր սկըսանիմս առնել: Եթէ գիտէի հաւաստեաւ զի այսպէս էր՝ քանի՛ եռանդեամբ, քանի՛ խնամով Հանայի կատարել զայն: Ո՛հ, քանի՛ կրթութիւնք անցին զնա անօգուտք և առանց գործելոյ յիս փոփոխումն. այլ արդ պարտ է զի լցեալ ապանցելոցն ամենեցուն զթերին, և կատարեսցէ յիս զներգործութիւն ընորհացն Աստուծոյ: Աստուած է որ ածէ զիս այսր. ինքն ինձ առաջնորդէ: Փրկիչն իմ Յիսուս՝ սուրբն սրբոց վարէ-

ցաւ 'ի հոգւոյն յանապատ. պարտ է ինձ ապա նմին լինել նմանող 'ի կրթուԹեանս, եԹէ կամիմ զի լինի սա ինձ 'ի փրկուԹիւն: Ի նուազս ոչ սակաւ՝ եղև ինձ իբր ակամայ և 'ի սովորուԹենէ գալ յայս՝ և մոռանել 'ի կրթուԹիւն, վասն զի այսպէս կանոնագրէն կրօնք իմ, և չկարեմ իսկ զանց առնել զայնուհիկ, որով և ոչ օգտեցայ ինչ: Պարտ է ինձ ապա մոռանել զայս նուազ 'ի կրթուԹիւն նովին հոգւով, որով սկըն իմ վարեցաւ յանապատ:

ՄԱՍՆ Բ

Աստուած կամի սրբել զիս, վասն որոյ և կոչէ զիս 'ի ներանձնուԹիւն. պարտ է ինձ ապա յաւուրս յայսոսիկ հրաժարիլ յամենայնէ՝ որ կարէ մեկնել զմիտս իմ յԱստուծոյ. պարտ է ինձ այնպէս զաւուրս ցայսոսիկ անցուցանել, որպէս ԹէԹ չգոյր յաշխարհի այլ ինչ բայց միայն Աստուած և ես, որպէս զի կարացից յԱստուած միայն պարապիլ, որպէս զի կարացից ասել. «Եղբօրորդին իմ ինձ, և ես նմա»: Ի բաց կացցեն լինէն այլ ամենայն խորհուրդք իմ՝ որ չափ և օգտակարք այլով մտամբ և բարիք իցեն: Որ խափան բարւոյս այսմիկ ինձ լինել, ոչ և ես բարի: Կամի Աստուած լինել ընդ իս միայն ընդ միայնում, առ 'ի խօսել 'ի սիրտ իմ. պարտ է ինձ ապա պատրաստել նմա զսիրտ իմ ազատ յամենայն աշխարհական իրաց. ոչ միայն յայնցանէ որ 'ի մեծի աշխարհիս են, յորոց վաղ իսկ հրաժարեալ եմ, այլ և որ ինչ 'ի փոքրու աշխարհիս կան 'ի ներքս 'ի յիս կիրք և իղձք. վասն զի ցորչափ այսոքիկ բռնեալ կան 'ի յիս, ոչ խօսի ընդ իս Աստուած, և ոչ սիրտ իմ պատրաստ լինի 'ի լսել զբանս նորա:

Եղիւկ զինև, եԹէ ինչ յայնցանէ 'ի սրբարան այսր բերեմ ընդ իս. դոյզն ինչ փառասիրուԹիւն, դոյզն ինչ գԺտուԹիւն, դոյզն ինչ շահախնդրուԹիւն, դոյզն ինչ նախանձ և կամայ ինչ յայսպիսեացդ, խափան լինին Տեառն բարեաւէտ ընդ իս: Եղիւկ լինիմ, եԹէ այսպիսեօք անպատրաստ գտանիմ 'ի լուր աստուածային բարբառոյ որ ինդրէ սիրտ յամենայն կրից զերծ, և չկարիցեմ ասել ընդ Սամուէլի. «Խօսեաց, Տէր, զի լուիցէ ծառայ քո»: Պարտ է ինձ ըստ օրինակի Կուսին զամենայն բանս նորա լսել, և խնամուտ լինել կամաց նորա և ազդեցուԹեանց 'ի սրտի իմում:

ՄԱՍՆ Գ

Ընդէր մոռանեմ 'ի կրթուԹիւնս յայս: Ոչ առ 'ի պարապել առաւելագոյն ժամանակ յաղօԹս, ոչ յառաւելագոյն ընԹերցուածն հոգևոր գրենով, ոչ առ 'ի ճգնուԹիւնս առնել. ապաքէն գովելի են այսոքիկ, և մարԹ իսկ է ինձ վարել սոքօք առ 'ի հասանել 'ի նպատակ կրթուԹեանս, այլ ոչ այսոքիկ են նպատակք իմ. սխալեմ 'ի չիմաԹել զուղին ընդ նպատակն. և սխալեցի ցարդ՝ համարելով բարւոք արարեալ կըրԹուԹիւն այնու՝ զի 'ի նմա կատարեցի զաղօԹս և զհոգևոր ընԹերցուածս,

Այլ նպատակ կրթուԹեանս իմոյ է ուղղել զվարս իմ, ճանաչել քաջ զանձն իմ, և որ ինչ գիտաւորուԹիւնք կամացն Աստուծոյ 'ի վերայ իմ. 'ի միտ առնուլ միանգամ զյաժախուԹիւնս սրտի իմոյ, զձերբուԹիւնս իմ և զչար սովորուԹիւնս, բարեկարգել միանգամ զվարս իմ, զգործս և զպարապս. նորոգել զհոգի կոչմանս իմոյ, և միանգամայն ատյեալ՝ փոխիլ յայս

յայլ և լինել «նոր արարած 'ի Քրիստոս», ըստ առաքելոյն: Զի եթէ կրթուԹիւն իմ ոչ յանկեսցի 'ի սոյն, և եղից ես 'ի կրթուԹենէս առանց ուղղելոյ զսովորական ԹերուԹիւնս իմ, անօգուտ լեսցին առնոյն ջերմեռանդն խղճք սրտի իմոյ և տեսուԹիւնք մտաց հոգևորականք:

ԱՂՕԹՔ

Լուսաւորեա զիս, Տէր, ճանաչել զԹերուԹիւնս իմ, և տուր ինձ զնորս քո, որով կարացից ուղղել զնոսին: Դու կոչեցեր զիս 'ի կրուԹիւնս քոյս, դու ցոյց ինձ ճանապարհ ընդ որ կարիցեմ հասանել 'ի կատարելուԹիւն կոչման իմոյ: Մի Թողուր, Տէր, զի լեսցի ինձ 'ի դատապարտուԹիւն կրթուԹիւնս այս, որ այլոց մեղաւորաց բազմոց եղև 'ի փրկուԹիւն: Հրամայեա ինձ, Աստուած իմ, ուսս ինձ առնել զկամս քո, զի ասպասին 'ի սկզբանէ կրթուԹեանս Թուխ ինձ Թէ ինչ պատրաստ սկզբ իմ 'ի լսել քեզ, և խոնարհ վստահուԹեամբ գոչեմ ընդ մարգարէին. «Պատրաստ է սիրտ իմ առ քեզ Աստուած, պատրաստ է սիրտ իմ»: Այլ Թէպէս խոսիմ, Թէպէս անձնասիրուԹիւն 'ի խորչս սրտի իմոյ դարանեալ կայ: Օգնեա ինձ, Տէր, առ 'ի մերկանալ ինձ յամենայնէ՝ որ անհաճոյ է առաջի աչաց քոց. լցո զԹերին պատրաստուԹեան սրտի իմոյ, որ ցանկայ հպատակել կամաց քոց յամենայնի, և որ ոչ առ այլ ինչ մտանէ 'ի կրթուԹիւնս քոյս՝ բայց առ 'ի բարւոք ղեալ զաղեցուԹիւնս չնորհաց քոց:

ՕՐ ՍՈՒՏԶԻՆ

Ցաղագս առ ի՞նչ ստեղծեալ է մարդ

ՄԱՍՆ Ա.

Առ ինչ ստեղծ զիս Աստուած: Զի ծանեայց զնա, զի սիրեցից և փառաւորեցից զնա 'ի կենդանուԹեան, և յետ մահու ժառանգեցից զնա յաւիտեան: Զեմ եկեալ յաշխարհ առնել ինձ բախտ և մեծուԹիւն կորստական և անուն և համբաւ, և ոչ 'ի վայելս և յանձնդիւրուԹիւն, այլ 'ի սիրել զԱստուած, 'ի ծառայել նմա և առնել զկամն նորա. «Սյս է մարդն ամենևին» որպէս ասէ իմաստունն:

Ցայս ձշմարտուԹիւն մեծ և կարևոր բովանդակեալ է ամենայն: Սակայն ձշմարտուԹեանս այսմիկ չէղէ, կամ ոչ որպէս պարտն էր եղէ ես խելամուտ. զի կեցի ցարդ՝ որպէս Թէ չգիտէի զի ստեղծեալ եմ վասն Աստուծոյ. կեցի վասն անձին՝ զանձնէ ևեթ խորհելով, զանձինն խնդրելով յամենայնի և անձին միայն սպաս տանելով. միանգամայն ասացից՝ համարեցայ զիս ստեղծեալ վասն անձին, զայս չիարեմ ժխտել: Յայսպիսում աղետալի կուրուԹեան անցուցի զկեանս իմ բովանդակ, կամ զպատուականագոյն մասն կենաց իմոց: ԵԹէ բարւոք 'ի միտ առեալ էր իմ զվասն էրն գոյուԹեանս, և զնոյն առաջի աչաց կալեալ հանապազ, սրբուԹեամբ արդեօք անցուցանէի զաւուրս իմ: Եւ արդ զինչ եղեն պատճառք մոլորուԹեանս իմոյ և հեղգուԹեան, բայց զի մուացայ զվասն

էրն գոյութեանս իմոյ և յաձախ անփոյթ եղէ ի խոհուեմն փրկաչէս Աստուածութեանս այսորիկ, և ի կարևորագոյն գործս, յորս պարտ էր ինձ վարել քրիստոնէապար իմաստութեամբ՝ ոչ ինչ փոյթ կալայ հայել ի նպատակն իմ. և այս ահա եղև պատճառք կորստեանս իմոյ:

Եւ զի ստեղծեալ եմ վասն Աստուծոյ, հարկ է ապա թէ Աստուած իցէ պատճառ և նպատակ գոյութեանս՝ ոչ հասարակաբար միայն, այլ և միոյ միոյ ի գործոցս: Հարկ ուրեմն է ապա զի ամենայն գործք իմ իցեն վասն Աստուծոյ: Ոյր վասն և առաքեալն Պօղոս և ոչ մի ինչ ի սովորական և յանարգագոյն իսկ գործոցս ի բայ հանելով ասէ. « Եթէ ուտիցէք, եթէ ըմպիցէք, զամենայն ի փառս Աստուծոյ արասջիք »: Զուր ուրեմն վաստակեցի յայն ամենայն՝ զոր ոչ վասն Աստուծոյ արարի, և անվարձ գոյ: Թէպէտ և մեծամեծս իցեմ արարեալ, թէպէտ և հրաշս գործեալ, այլ զի ոչ վասն Աստուծոյ արարի, ընդունայն գոյ. « Ամենեքեան խոտորեցան, ասէ մարգարէն, և անպիտանացան ». մանաւանդ թէ ամենայնին անպիտանացաւ վասն գործելոցն: Յայս աղէտս կամ ես, և չկարեմ ըստ արժան բաւականին ողբալ ընդ այն:

ՄԱՍՆ Բ

Բարձրութիւն նպատակին իմոյ հարկ է զի յորդոր լինի ինձ դիմել ի նոյն. քանզի և Աստուծոյ ինքնին չէք այլ նպատակ բարձրագոյն՝ զի ինքն ինքեան է նպատակ: Ի յաւիտեան նոյ ծանեալ զինքն, սիրեալ զինքն և ի փառս իւր խորհեցաւ զամենայն, և զխորհեցեալսն ած յայտիւնս ըստ իւրաքանչիւր ժամանակի: Յայդ

իսկ սահեզծ և զիս ի պատկեր իւր և ի նմանութիւն՝ տալով ինձ միտս ի ճանաչել զինքն, կամս ի սիրել, և հոգի և մարմին ի փառաւորել: Նոյն ապա բարձրագոյն նպատակ որպէս Աստուծոյ՝ կայ և իմ առաջի: Աստուած իմ, գոչէ Երանելին Յոբ, Աստուած իմ, զինչ է մարդ զի մեծացուցեր զինա այդպէս: Ծանիր անձն իմ զպատիւ քո. ոչ զի փքասցիս, այլ զի փառաւորեսցես զարարիչդ, և խոնարհ հպատակութեամբ մատուցես նմա փոխարէն՝ զարժանին փառաւորութիւն:

Բայց թէ ընդ հակառակն զայլ ինչ քան յԱստուծոյ կալայց նպատակ գործոցն իմոյ, անձամբ զանձն նուաստացուցանեմ և անպատուեմ, և կապտեմ ի պատուոյն գոլոյ ստեղծեալ վասն Աստուծոյ: Եթէ զանձն իմ խնդրեցից, գոյից զայն, այլ ի պատուհասս ինձ. զի ի գաղնել զանձն իմ գոյից զընդունայնութիւն. « Մարդ ի պատուի էր և ոչ խմացաւ ». և վասն այնորիկ ոչ միայն հաւասարեցաւ անասնոց անբանից, այլ և վաղթարացաւ քան զնոսա: Քանզի և անբանք թէպէտ և զուրկք ի մտաց, սակայն կան յիւրաքանչիւր կարգի և ի սահմանին, և ամենայն գործք նոցա կարգեալ են առ Աստուած. իսկ ես եթէ ցայն վայր կուրացայց և անհնազանդ մնայի ընդ այլսմ փոխանակիլ, ոչ ես Աստուած իցէ իմ նպատակ:

Ոչ բարձրագոյն միայն է նպատակն իմ, այլ և կարևոր՝ ըստ պատշաճի Աստուծոյ և անձին իմոյ: Աստուծոյ՝ քանզի եթէ մարթ էր ինձ և օրէն կեալ և գործել ինչ վասն այլոյ և ոչ վասն իւր, ոչ ես էր Աստուած: Բայց ոչ եթէ ըստ հարկի էութեան իւրոյ և եթէ պարտ է ինձ ունել զնա իմ նպատակ, այլ անձնանուէր յօժարութեամբ. զայս խնդրէ նա յինէն և զնոյն փառք

նորա պահանջէն, և զանապատեմ նմա զայն: Ըստ պատշաճի ևս անձին իմոյ, քանզի Աստուածոյ միայնոյ է երանացուցանել զիս, ապա և նմա միայնոյ գոլ իմ նպատակ. « Արարիր զիս, Տէր, վասն քո, ասէր սուրբն Օգոստինոս, և ոչ հանգիցէ սիրտ իմ բայց ի քեզ »: Զոր ինչ և ստացէ ինձ աշխարհ՝ յագեցուցանել զիս ոչ ունի. զայսր զիտուք առեալ՝ անգիտանալ ոչ կարեմ: առաքելապէն ինչ քան զաշխարհ պէսք են ինձ, և Աստուածով միայն յագեցայց:

ՄԱՍՆ Գ

Ամենայն ինչ բայ ի մեղայ կարեն վերբերել զիս առ նպատակն իմ Աստուած. չիք ինչ յարարածոց որ ոչ արբանեկեսցէ ինձ ի ճանաչել զԱստուած, և ոչ զիատարերումեն ինչ նորա երևեցուսցէ ինձ: Զիք ասա արարած որ չիցէ, կամ չիարիցէ գոլ ինձ միջնորդ և ասպէնձան վերբերիլ առ Աստուած: Երկինք, աստեղք, արեգը և համագոյքարարչէն ինձ զԱստուած. և չիք ինձ արգարանալ՝ եթէ ծանուցեալ զնա, և ոչ որպէս պարտն է փառաւորիցէ: Եւ բնաւ իսկ, ով Տէր, գոանիցէն յաշխարհն այնպիսիք ոմանք անհաւատք, ապուշք և ապառամ լսելեօք առ ի չլսելոյ զայս ձայն համագոյից: Եւ զի գոանին՝ հաւաստ մեզ զայն առաքեալն քո՝ վկայելով առ նմին, զի արդար գատաստանաւդ քով մատնեցեր զայնպիսիսն ի ցանկութիւն սրտից իւրեանց ի պղծութիւն: Զինչ լեցի և ինձ, Տէր, եթէ և զնս մատնեսցես ի ցանկութիւն անձին իմոյ: Պարտ է ինձ ասա զամենայն ինչ, որ ըստ սահմանելոյ աստուածայնոյ սեռ չուեցեան ստացի ինձ, ընդունել ի ձեռանէ նոքա որպէս միջնորդս և ատաւս Հաստատելոյ ի

նպատակն իմ՝ թէպէտ յաջողակք լցեն, թէպէտ ձախողակք, թէպէտ առողջութիւն, թէպէտ տկարութիւն, եթէ աղքատութիւն և եթէ փարթամութիւն, եթէ հանգիստ և եթէ նեղութիւն. « Ինձի գիտեմք, ասէ առաքեալ, զի որոց սիրեն զԱստուած, յամենայնի գործակից լինի ի բարիս »: Զի թէ հաւատարիմ գտայց ընդհայն Աստուծոյ, ամենայնին առաջնորդեսցէ ինձ առ Աստուած, յօգեսցէ զիս ընդ նմա, նուաճեսցէ ընդ նովաւ և յորդոր լիցի ինձ գիմելոյ առ նա: Ինձի և ընտրելոցն իւրոց ընդ այլ և այլ ճանապարհ առաջնորդեաց Աստուած. և ընդ այլ և այլ ճանապարհ միօրինակ ժամանեցին նոքա ի պատրաստեալն իւրեանց վրկութիւն, և ներհակակիր գիպք ոչ վնասեցին զնոսա յարքայութենէն Աստուծոյ՝ որ էր իւրեանց վերջին նպատակ:

Սակայն էգիտացի եմ՝ որպէս պարտն էր յօգուտ ի վար արկանել զայնոսիկ, և ոչ խելամուտ եղէ խորհրդոյն Աստուծոյ որ ի նոսա. կամ թէ մոռք ևեթ եղեալ խելամուտ՝ և յարգեանցն վերջագայ: Ինձի ներհակաբար խորհրդոյն Աստուծոյ վարեցայ նոքօք, առողջութեամբ՝ ի կեալ ըստ հաճոյս ախտաւոր ցանկութեանց, տկարութեամբ՝ ի թուլութիւն, վշտօք՝ ի տրտունջ, ուրախութեամբ՝ ի զբօսանս, յաջողութեամբ՝ ի գոռոզութիւն, ձախողակօք՝ ի վհատութիւն: Եւ այսպէս տապալեցի զկարգ տեսչութեանն Աստուծոյ ապահով արարեալ զօգուտն իմ: Պարտ է ինձ այսու հետև այնպէս վարել արարածովք զի հասից ի նպատակն իմ, և այնչափ առաւել յարգել զնոսն, որչափ առաւել մերձեցուցանէն զիս առ Աստուած և զօգնեն զիս ընդ նմա անքակ: Եթէ այլ ազգ առնիմ զնոցանէ գատաստան, գարձ-

2002 / 1006
20023 -59

Հ.Ս.Հ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/31 · 1922
ИМЕНИ А. МАСЕНЦЯНА
Ա. ՄԱՍԵՆՑՈՅԻ ԱՆՎԱՆ

ցեն ինձ 'ի միտս՝ զարարչին իւրեանց խնդրելով յինէն զկնի. և փոխանակ սատարելոյ ինձ և օգտելոյ, աղետաբեր լեցեն և 'ի կորուստ:

ՍՂՕԹՔ

Քեզ միայնոյ է, ով Տէր, քեզ միայնոյ է զերծանել զիս հնարհիւդ քո յոլքալի կորուածեն եթե ասես յոր անկեալ դնիմ 'ի բազում ժամանակաց հեռւ: Բայց, Տէր, զաչս իմ զի ծանեայց զիս, զինչ եմ և վասն որ: Տուր ինձ յատակացեալ հայեաց տեսութեամբ վերահնել 'ի նպատակն իմ յոր դիմել պարտիմ, այնպիսի տեսութեամբ որով շարժեցայց 'ի գործ և վառեցայց դիմել 'ի նպատակ անդր: Գնացք իմ յայս արասցեն զի ոչ միայն յօժարիմ, այլ և ցանկամ և փափաքիմ ժամանել 'ի նոյն, և ամենայն ջանք իմ և խորհուրդք 'ի նոյն միշտ բերիցեն, և զօր ամենայն նորոգեցից զդիտաւորութիւն իմ և զկնձս ցանկութեան սրտի իմոյ, և յանգիմանեցից զիս անդուլ բանիւն քո առ Մարթա Թէ «Դու հոգաս և զբաղուիմ իւիք զբաղեալ ես, բայց սակաւ ինչ պիտոյ է»: և սակաւն այն է նպատակն իմ մեծ և կարեւոր:

Վասն որոյ խնդրեմ 'ի քէն, Տէր, տուր ինձ յամենայն դէպս կենցաղոյս 'ի յաջողակս և 'ի ձախողակս, 'ի մեծութեան և 'ի նուաստութեան, յանգործրուս և 'ի վիշտս՝ ըստ կամաց քոց կեալ միշտ տուրը իմն անխորութեամբ ջառնել զով ինչ խաւր ընդ ձոխութիւն և ընդ աղքատութիւն, ընդ զօրութիւն և ընդ տկարութիւն, ընդ պատիւ և ընդ անարգանս, միայն զի ես քո եցեմ միշտ և դու իմ անկասելի: Զինչ փոյթ թէ ընդ այս ճանապարհ կամ թէ ընդ այն լեցի ինձ ժամանել 'ի նպատակն իմ, շատ է զի հասցէ: Ա՛յսու տուրը անխորութեամբ կացից անցաւ և անվրդով 'ի յուզմանց և յերկիւղէ, որք 'ի սէրոյ առէիցս ծնանին 'ի յիս. այսու տուրը անխորութեամբ անհետացին 'ի սրտէ իմմէ ամենայն ախտաւոր կիրք և յօժարութիւնք, յորոց խռովեալ յուզիմ մշտատատան. ով անխորութիւն տուրը՝ խաղաղարար սրտի իմոյ, ո՞րով աստուն երջանկանամ:

Յաւէտ լինէ, Տէր, ընդ տուրը անխորութեանս և զսրբագործն ընորհն զայն նախաստեծար յատենայն կենցաղականացս ընտրելոյ զայնոսիկ, որք գիպողագործքն են առ հասանելոյ 'ի նպատակն իմ. զի թէպէտ և ամենայնի մարթ եցէ ածել զիս առ քեզ, սակայն են՝ որք առաւելագոյն առնելականութեամբ և անսահմանութեամբ առաջնորդեն ինձ 'ի նոյն, որք թէպէտ ծանուցք եցեն, թէպէտ գժուարընդելք բնութեանս, սակայն պարտ է զի նախաստեծար արարիչ զայնոսիկ քան զորս զկնիք եցեն բնութեանս և որովք գիւրին եցէ ինձ վերծանել:

Ի վեր քան զամենայն օգնեա ինձ, Տէր, 'ի տուրը առաջադրութեանս ընթանալոյ անխոթիր ընդ օր և է ճանապարհ առաջնորդեացես ինձ առ 'ի ժամանել 'ի նպատակն իմ. զի թէ ընդ ամենայն ընթացեալ յօժարութեամբ, և ընդ մին միայն հեղգացայց և գժկամակեցայց, չեցեն ինձ սիրապէս անկեղծ և անթերի կամք առ հասանելոյ 'ի նոյն: Քաւ լեցի ինձ, Տէր, խոթիր առնել և չափ և սահման գնել յայսպիսի ինչ մեծ և կարեւոր: Քննեցից ապա զսիրս իմ թէ եցէ պատրաստ յանխոթիր ընդունելութիւն այնր ամենայնի որ ինչ էէ Աստուած: Իցէ պատրաստ յընտրութիւն այնր ճանապարհի որ աներկիւան ստուգութեամբ առաջնորդէ ինձ առ Աստուած. և թէպէտ գժուարագոյն իցէ այն և ծանր՝ իցէ պատրաստ ընթանալ ընդ նոյն յօժարակամ:

Ցաղագս հոգւոյ քրիստոնէութեան

ՄԱՍՆ Ա.

Աւ ինչ եղեալ եմ քրիստոնեայ. — զի պաշտեցից զԱստուած և փառաւորեցից զնա՝ ոչ ևս ըստ Թեւագրելոյ ևեթ բանին, որոյ տկարացեալ լիս մեղօք, չիջեալ և աղօտացեալ՝ չկարեմ տալ ինձ զարժանաւոր պատկեր աստուածայնոյ մեծվայելչութեանն. ոչ ևս ըստ ուսուցանելոյ կրօնից հասարակաբար, քանզի յառնէ քրիստոնէի առաւելագոյն ինչ պահանջէ Աստուած, քան զոր սահմանեն կրօնք հասարակաբար այնոցիկ ամենեցուն՝ որոց զԱստուած միայն ճանաչեն և ՚ի նա ևեթ հաւատան: Այլ ես քրիստոնեայ եմ՝ զի պաշտեցից զԱստուած և փառաւորեցից այլով առանձին կարգօք և ըստ հոգւոյ օրինաց Յիսուսի Քրիստոսի: Պարտ է ինձ ապա ըստ օրինացն այնոցիկ կեալ, զի կեցից ըստ կամացն Յիսուսի:

Քանզի Յիսուս վասն այն եկն յաշխարհ զի ծանուսցէ ինձ զԱստուած և ուսուսցէ ինձ ըստ արժանի նորա փառացն և մեծութեան պաշտոն մատուցանել նմա: Ոյր վասն ասէ խոկ ինքն. « Հայր, յայտնեցի զանուն քո մարդկան »: Մովսէս ուսոյց Իսրայէլացւոց զոհիւք և ողջակիզօք պաշտոն մատուցանել Աստուծոյ. այլ զոհքն այնոքիւ՝ անբանից կենդանեաց սպանդք, ըստ ուրեք էին և օրինակք Ճշմարիտ պաշտամանն՝ զոր պահանջէլոց էր Աստուած յինէն: Զոհքն այնոքիւ՝ որ ևս յոյժ էին քան զարժանն Աստուծոյ. եկն Յիսուս զի ուսուսցէ ինձ պաշտել զԱստուած հոգւով և ճշմարտութեամբ. այն ինքն է՝ նուիրելով նմա զիս ինքն և ուրանալով զանձն:

Դա՛ արդարև երկնային զոր մարդացեալն Աստուած յանձնէ իւրմէ ուսոյց օրինակաւ, զի ՚ի մտանել իւրում յաչխարհ՝ ասէր. « Զոհս և պատարագս ոչ կամեցար, բայց մարմին հատուցեր ինձ. ընդ ողջակէզն և ընդ վասն մեղացն ոչ հաճեցար և ոչ կամեցար որք ըստ օրինացն մատչէին, վասն այնորիկ ասեմ: Ահաւասիկ գամ առնել զկամն քո Աստուած », զանձն իմ մատուցանել քեզ ողջակէզ: Համայն ասել՝ ինքն զենաւ, ինքն ուննայնացաւ վասն փառացն Աստուծոյ, որպէս զի ասասցէ և ինձ. « Եթէ ոք կամիցի զկնի իմ գալ, ուրասցի զանձն, առցէ զխաչ իւր և մահակից լիցի ինձ »:

Յայս սակս ահա եղէ և ես քրիստոնեայ, և այսու օրինակաւ միայն կարեմ մատուցանել Աստուածոյ զայն պաշտօն Ճշմարիտ և զփառս զոր պարտիմ նմա: Չարկ ուրեմն է ինձ խոստովանել զի թէ ոչ ուրանամ զանձն, անուամբ եւ եթէ լեցեմ քրիստոնեայ. եթէ ոչ ուրանամ զանձն՝ ոչ որպէս պարտն է ճանաչեմ զԱստուած, սխրեմ զնա և փառաւորեմ: Յայս ուրացութիւն անձին հաստատեալ է և բովանդակ քրիստոնէութիւն: Իսրայէլացւոց մարթէր անգիտանալ զայս, բայց յետ լուսապայծառ վարդապետութեանն Քրիստոսի՝ տգիտութիւնն իմ ՚ի գտատպարտութիւն ինձ լեգէ: Մանր է արդարև և գժուարին ուրանալ զանձն, բայց կարևոր. խիստ բանք են և գժուարընդելք ղգայութեանց և ընդակից յօժարութեանց բնութեանն՝ հրաժարել յանձնէ, մերկանալ յամենայնէ, բայց բանք փրկաւէտք, բանք կենաց և յաւիտենական կենաց:

ՄԱՍՆ Բ

Որպէս քրիստոնեայ պարտիմ լինել կերպա-
րանակից Յիսուսի. « Ա՛ռ այս ընարեալ գիւրն,
ասէ Աստուած, յառաջագոյն սահմանեալ զնո-
սա լինել կերպարանակից պատկերի որդւոյն
իւրոյ »: Արդ եթէ լցեմ յիս նմանութիւն ինչ
Յիսուսի, մարթ է ինձ յոտնաձիգ և
ապաւինել յողորմութիւն նորա: Իսկ եթէ
չլցեմ ինչ նմանութիւն ընդ նա և ընդ Յիսուս,
թէպէտ և զկրեշտակաց կատարելութիւնն
ունիցիմ, ոչ ընդ նա բան ծանիցէ զնա Աստուած
և ոչ ընդ նա համարեսցի: Այս գործ է իմ
ապա, և ի սոյն ջանալ պարտիմ զի որպէս
քրիստոնեայ՝ եղիցի կենդանի պատկեր Յիսուսի,
և կալցայ զնա ինձ որպէս գերակատար օրինակ
նմանութեան՝ ասելով ցանձն իմ հանապազ զա-
տացեալն յԱստուծոյ առ Մովսէս. « Տես, որ-
պէս ցուցաւ քեզ օրինակ ի լերինն՝ արասցես »:

Որպէս քրիստոնեայ պարտիմ լինել զգեցեալ
զՔրիստոս. զայս մեկն և բացայայտ ասէ Առա-
քեալ. « Որք միանգամ ի Քրիստոս մկրտեցաք,
զՔրիստոս զգեցեալ եք »: Որպիսի պա-
րուք, զՔրիստոս զգեցեալ էք: Որպիսի պա-
տիւ մեծ՝ մերկանալ զկեն մարդն և զգենուլ
զՔրիստոս. բայց և ի հակառակէն՝ որ ամենի
մեծագոյն՝ եթէ արտաքոյ ևեթ զգեցեալ զՔրիս-
տոս, և զկերպարանս նորա բերելով ի վերոյ,
ի ներքոյ զուրկ լցեմ՝ի հոգւոյ նորա: Ո՛ր ան-
միաբանութիւն մեծագոյն՝ եթէ կրելով զարքա-
զան դրոշմն Յիսուսի և զնշանագլեսս նորա, ի
սրբութենէ նորին լցեմ վերջացեալ: Ո՛ր կեղ-
ծաւորութիւն այլանդակ՝ եթէ ընդ կերպա-
րանաք քրիստոնէի՝ կեցից առաջի Աստուծոյ
հեթանոսաբար սրտիւ և հոգւով:

Որպէս քրիստոնեայ՝ պարտիմ յօգիլ ի Քրիս-
տոս ելբև անդամ յանգամից նորա. պարտիմ
յօգիլ ի նա որպէս ի գլուխ. և զայս ևս վար-
դապետէ Առաքեալ. « Ո՛չ գիտէք, ասէ, զի
մարմինք ձեր անդամք են Քրիստոսի »: Արդ ընդ
գլուխն և ընդ անդամ հարկ է զի լցէ ինչ նմա-
նութիւն. իսկ թէ ընդ նա և ընդ Յիսուս չիք
ինչ նմանութիւն, չունիմ ընդ նմա զոյն կցոր-
դութիւն յոր հաստատեալ է ամենայն երանու-
թիւն իմ և վաստք ըստ Աստուծոյ: Կամ թէ
լցեմ ևս՝ որպէս քրիստոնեայ՝ անդամ յանդա-
մից նորա, այլ որպէս քրիստոնեայ անարժան՝
անդամ եմ խեղաթիւր որ ի նախատինս է խոր-
հրդական մարմնոյ նորա:

Չուսկ ապա՝ որպէս քրիստոնեայ պարտիմ
կեալ ըստ Յիսուսի, զի կեանքն Յիսուսի ի մար-
մնի նմանեալ յայտնեսցի, որպէս ուսուցանէ Ա-
ռաքեալ: Քրիստոնեայ եղեալ եմ, զի կարիցեմ
ասել ընդ մեծին այն ի սուրբս՝ « Կենդանի եմ
այսուհետև ոչ ես, այլ կենդանի է յիս Քրիս-
տոս »: Քրիստոս է որ խորհի յիս, որ խօսին և
որ գործէ: Արդ կարիցեմ տալ զանձինէ առաջի
Աստուծոյ զայս վկայութիւն առանց խաբէլոյ
զիս. սակայն յայդ իսկ կոչեցեալ եմ:

ՄԱՍՆ Գ

Ա՛ռ ի լինել ճշմարտապէս քրիստոնեայ՝ չէ
բաւական զի ընկալայց անխտիր որպէս ի ձե-
ռանէ Տեառն զայն ամենայն, որ չէ ինքն Աս-
տուած, այլ և հարկ է զի ընկալայց յօժարու-
թեամբ, և առանց դեղեւելոյ գնացից ընդ այն
ճանապարհ զոր ինքն ցուցանիցէ ինձ որպէս յա-
ջողագոյն և աներկիւն: Եւ զի որ ցուցանէն
Աստուած է, հարկ ևս է զի կալայց զայն որպէս

ճիակ Ճանապարհն ընդ որ ևեթ հարկ է ինձ ժամանել ՚ի կատարեալութիւն, յոր ՚ի պարտուց քրիստոնէութեանս եմ կոչեցեալ՝ առանց որոց չմարթէ ինձ ժամանել ՚ի նպատակն իմ։

Հարկ է ինձ ասել առանց յերկուանայց նախամեծար առնել զաղքատութիւն քան զՀնխոսութիւնս աշխարհի, և երջանկագոյն համարել զանձն մերկացեալ ՚ի մեծութեանց աշխարհի՝ քան Ճոխացեալ նոքօք, երջանկագոյն համարել զարհամարհութիւն նոցին քան զվայելեան. քանզի արհամարհութիւն մեծութեանց և հրաժարեն ՚ի նոցունց է սուրգագոյն Ճանապարհ զոր եցոյց ինձ Յիսուս ՚ի փառաւորել զԱստուած։

Հարկ է ինձ նախամեծար առնել զխստամբեր կեանս ապաշխարութեան քան զկիեանն մեղկութեամբ և յանձնդիւրի. քանզի և Յիսուս նախամեծար արար զայն և « Փոխանակ ուրախութեանն որ նմա առաջի կայր, յանձն էառ զխաչ» ։ զի գայր նա տալ օրէնս և կրօնս մեղաւոր մարդկան, որոց պիտոյ էր ապաշխարութիւն առ ողորթելոյ զարդարութիւնն Աստուծոյ։ Գայր ՚ի նորոգել զաշխարհ և յուղղութիւն զնա վերածել, և քաջ գիտեր զի մեղկութիւն և անձնդիւրութիւն աղբիւրք են թուլաւորք ապականաբարք աշխարհի։ և ՚ի հակառակն՝ խստամբերք կեանք ապաշխարութեան միայն դեղ է և գարման չարեացն։

Հարկ է ինձ ընդունել զվարդապետութիւնն զորս ՚ի վեր և ՚ի վայր յերդեղէ աւետարանն սուրբ և որով առաքեալքն վարեցան։ Հարկ է, ասեմ, ընդունել և հաւատալ՝ զի ոչ միայն բանալ պարտիմ զնաչ, այլ և ինքնայօժար ըստանձնել զայն։ ոչ միայն կրել զնաչ, այլ և սիրել զայն և պարծել նովաւ, քանզի այլազգ չկարեմ որպէս ուսոյց ինձ Յիսուս, փառաւորել զԱստուած որպէս ինքն կամի։ զի՝ Թէ ոչ ՚ի խաչ

հանից զանձն իմ, չկարեմ ունել մանն և բաժին ընդ Յիսուսի։ Հուսկ ապա՝ որպէս զի եղէց զգեցեալ զՔրիստոս, հարկ է ինձ զի և զմահն Յիսուսի յանձին իմում կրեցից։

Հարկ է ինձ չխոսել յարհամարհանաց և յանարգութենէ, այլ մանաւանդ ընդունել զայնոսիկ, սիրել և մեծարել քան զամենայն մեծութիւնս և զփառս աշխարհի. քանզի զայնոսիկ կալաւ Յիսուս որպէս դեղ և գարման զօրաւոր ՚ի հաստուցումն փառացն Աստուծոյ որ յափշտակեալն էր ՚ի նմանէ։ Մարդոյ ամբարտաւանութեամբ վտարանչեալ յԱստուծոյ՝ խոնարհութեամբ միայն մարթ է առնել հաստուցումն զրկանացն և անիրաւութեանց զոր արար առ Աստուած։ Դարման գերագոյն, գարման կարևոր՝ առանց որոյ անհնար է գտանել շնորհս առ Աստուծոյ։

ԱՂՕԹՔ

Աստուած իմ, զՀմարտութիւնս զայս աշխարհ ոչ ծանեաւ և արդ իսկ ոչ ճանաչէ։ Դեղ գոհութիւն անապատ, որ հաճեցար յայտնել ինձ զայս. այսուհի հաներ զնա ՚ի խորոց պատրանացն յոր ըմբռնեալ կայ աշխարհ՝ այլ ընդ այլոց բերելով կարծիս զառերևոյթ բարեաց կենցաղոյս։ Այսուհիկ բուժեցեր զսիրտ իմ յազդեցութենէ հրապուրանաց խաբեպիկ բանացն այնոցիկ, որոց գերեալ զսիրտ իմ՝ կեղեքէին անողորմ։ Այսուհիկ ետուր ինձ զՀաշակ քաղցրութեան իսկապէս հանգստեանն և զհաւաստիս անստուտ խոստմանդ՝ Թէ «Ուսայուք յինէն զի հեզ եմ և խոնարհ սրտիւ, և գտջիք հանգիստ անձանց ձերոց»։ Այսուհիկ մանաւանդ ուսուցեր ինձ փառաւորել զՀայր

քո՝ և մատուցանել արժանաւոր պաշտօն՝ նմա՛ ի հաճոյս և ինձ՛ ի սրբութիւն: Ո՛վ երկրպագեալ Աստուած իմ Յիսուս, օրհնեցից զքեզ յաւիտեան զի ծանուցեր ինձ զինչ է քրիստոնեայն և չինչ կոչեցեալ. որ ցուցեր զձանապարհ և զհնարս հաստանելոյ ինձ՛ ի նոյն, և ոչ յայտնեցեր ինձ միայն զճշմարտութիւնս զայսոսիկ, այլ և աստուածայնով օրինակաւդ դիւրեցեր ինձ զայնոսիկ: Առանց քոյոյ վարդապետութեանդ և օրինակիդ՝ չէր ինձ մարթ որպէս պարտն է խնամեալ լինել այնոցիկ: Արդարև այդպիսեամ ինձ պէտք էին աստուածայնոյ դասաղնց օրինակի, որով քաջալերեալ սրտապնդեալ արիաբար գիմել՛ ի նպատակն իմ՝ մաքառելով ընդ անձնասիրութեանս իմոյ, և ջանալով՛ ի կատարումն կարևոր պայմանացն որք դիմամարթին բնութեանս:

Սակայն էր իմ ցաւդ լեալ խնամեալ որպէս պարտն է ճշմարտութեանցս այսոցիկ: Թէպէտ քրիստոնեայ եմ, այլ իցեմ՛ ոբացեալ զանձն, որ զի այս է դրոշմն և բովանդակութիւն օրինացն Յիսուսի: Իցեմ խոնարհ սրտիւ, իցեմ մտացեալ և հրաժարեալ յանձնէ: Եթէ չիցեմ, զի՞նչ ուրեմն եմ առաջի Աստուծոյ, և զի՞նչ իցեն կեանք իմ, բայց երևոյթ ինն քրիստոնէի՝ գաբշելի յաչս Աստուծոյ: Զկարեմ, ասացից միւսանգամ, չհաւրեմպատճառել զանգիտութիւն և ինդրել յայտնութիւն՛ ի տեառնէ զի ծանուսցէ Թէ չինչ իցեմ կոչեցեալ. քանզի չատ իսկ ծանոյց ինձ զայն Յիսուս, և աւետարան բովանդակ զնոյն յեղյեղէ: Զինչ ապա, ով Տէր, կարիցեմ տալ պատասխանի յաւուր՝ յորում զաւետարանն ինձ՛ ի դէմս բերցես. զի՞նչ և այսօր կարեմ տալ պատասխանի եթէ վարք իմ չվիրաւորին ընդ աւետարանին: Աւետարանին չէք փոփոխել, ինձ ապա հարկ է փոխել զդնացս իմ և ուղղել զվարս:

Յաղագս հոգևոյ կրօնաւորական կոչման

ՄԱՍՆ Ա.

Ա. Ի՞նչ եղէ ես կրօնաւոր: — Որպէս զի կեցից հրաժարեալ յաշխարհէ, ոչ բնակութեամբ ևեթ, այլ և հոգւով և մտօք: Ա. Ո՛ ի լինել ինձ կրօնաւոր՝ չբաւէ ինձ սքեմ, և ոչ ուխտք կրօնաւորականք, այլ պահանջի յիս հոգի կրօնաւորութեան: Ա. Զաղելի գոայց քան զամենայն մարգիկ, եթէ առանց այսր հոգւոյ կեցից. ՛ի սիրոյ անց աշխարհի հրաժարեալ, յաստուածայնոյն իսկ զուարկ գտանելիմ՛ ի միութեանս: Դարձեալ զի և բանս մնասատանս ինձ լինիցի, եթէ մարմնով ևեթ հրաժարեալ յաշխարհ՝ ըղձանայցեմ միշտ նմա հոգւով:

Ա. Ի՞նչ եղէ ես կրօնաւոր: — Որպէս զի եղէց խաչեալ աշխարհի ըստ Առաքելոյն. ապա ուրեմն եթէ հանդերձ կրօնաւորական ուխտիւքս սիրեմ տակաւին զաշխարհ և սիրիմ՛ ի նմանէ, եթէ կարծիք նորա չիցեն հակառակ խնդա, և ոչ խնդ նորայոյն, չեմ ես կրօնաւոր: Ա. Ո՛ ի լինել արդեամբք կրօնաւոր՝ պարտ է ինձ կեալ յաշխարհի որպէս ՛ի վիշտս. պարտ է զի չիցէ ինձ աշխարհ որպէս խաչ:

Պարտ է ինձ գոլ մեռեալ աշխարհի, և աշխարհս այս՝ որում պարտ է ինձ գոլ մեռեալ՝ չիս ինքն է առաւելապէս, քանզի որ արտաքոյ քան զիս է աշխարհն՝ յոյժ նուազ ազդասկար է ինձ քան զնեղբինն իմ: Աշխարհ զոր չիսն կրեմ, են երեքին ցանկութիւնքն Թուեցեալք Յովհաննու

լոյն. « Յանկուվթիւն մարմնոյ, յանկուվթիւն ա-
ջաց և ամբարտաւանուվթիւն ասսի կենաց » : Ա-
յսոքիկ ինձ այնչափ առաւել են երկիւղալիք,
որչափ զի յիս ինքն բաւնեալ կան և դարանեալ:

Ուրեմն պարտ է ինձ գոլ մեռեալ անձին.
այս ինքն ոչ ևս ունել ոչ սէրիական կամս, ոչ
ակնկալուվթիւնս և ոչ պահանջմունս: Եթէ ինչ
յայտանէ կրի յիս տակաւին, և տակաւին խըն-
դրեմ՝ի կրօնն զնմա, չեմ մեռեալ վասն Ջրիստո-
սի և ոչ թաղեալ ընդ նմին. և տարապարտ է
մուտ իմ՝ի կրօն, և հրաժեշտ իմ յաշխարհէ:

ՄԱՍՆ Բ

Ա՛ր ինչ մոի ես՝ի կրօն: — Որպէս զի գոր-
ծեցից ասս՝ որ ինչ անմարթ էր ինձ գործել
յաշխարհի. և վաստակեցայց ոչ միայն՝ի փրկու-
թիւն իմ, այլ և առ՝ի կատարելուվթիւն: Սովին
գիտաւորուվթեամբ յանձն առեալ միանգամ
զպարտս կրօնաւորուվթեան, այսուհետև անմե-
կինք են՝ի միմեանց կատարելուվթիւն իմ և փըր-
կուվթիւն:

Ուրեմն ինձ այսուհետև Փրկիչն փոխանակ
ասելոյ « Եթէ կամիս կատարեալ լինել՝ թող
զամենայն և եկ զկնի իմ», ասէ. Քանզի թողեր
զամենայն և եկիր զկնի իմ, պարտիս լինել կա-
տարեալ: Ուրեմն իրատն աւետարանական ինձ
պարտք են այսուհետև անհրաժեշտք: Եւ ա-
կայն՝ի պարտուց ասսի ահա վերջանամ՝ ա-
պահա արարեալ զջանս նկրտելոյ՝ի կատարե-
լուվթիւն: Մնդք ծանր՝ որ ուխտազանց զիս կա-
ցուցանէ. քանզի՝ի մուտս իմ՝ի կրօնս ուխտե-
ցի գնմել՝ի կատարելուվթիւն. վասն որոյ ընդ
դադարել իմուժ գնմել անգր, ընդ կասել՝ի ջա-
նից ասսի և՝ի ցանկուվթենէ, ոչ միայն զրկիմ՝ի

ընորհացն Աստուծոյ, այլ և ապախտ առնեմ
զուխտ իմ, և զարտուղի երանեմ՝ի ճանապարհէ
յոր կոչեաց զիս Աստուած:

Արդ՝ի հեռանալ իմուժ՝ի կոչմանէս՝ քանի՞
ամօթ և քանի՞ երկիւղ չիցէ ինձ անկ, մինչ տե-
սանեմ յաշխարհի զբազումս առաւել քան զիս
մահացեալս, առաւել քան զիս խոնարհս, ա-
ռաւել քան զիս եղբայրասէրս, և առաւել քան
զիս հեռամուտս կատարելուվթեան: Քանի՞ դա-
տապարտուվթիւն լիցի ինձ յաւուրն Քրիստոսի,
յորժամ Փրկիչն մեր դիցէ զօրինակ նոցա առաջի
աչաց իմոց: Քանի՞ ամօթապարտ գտանիցիմ,
զի զայնչափ ամս կրօնաւորեալ և զկատարելու-
թեան պարտս յանձն առեալ, ոչ միայն չիցեմ
յառաջադէմ լեալ, այլ և ոչ սկսեալ խորհել՝ի
յառաջադիմուվթիւն. և Թերևս անկատարագոյն
գտանիցեմ ասս՝ի կրօնի՝ քան Թէ յաշխարհի:
Այս եղեն զոր պահանջէ յինէն Աստուած. այս
զոր ես խոստացայ նմա:

ՄԱՍՆ Գ

Առանձին իմն ընորհք աստուածային կոչեցին
զիս՝ի կատարելուվթիւն կրօնաւորական, և՝ի
վիճակս յայս ընտիր, զորոյ ոչ բաւեմ՝ի միտ
առնուլ զմեծուվթիւն: Չանձեցաւ Աստուած զի
եղէց ես նմա նուիրեալ. Հանձեցաւ կարգել զիս
՝ի Թիւս սիրելեաց իւրոց՝ որ յանձախեն առ նա,
և ընդ որս ընտանեբար ստէպ հաղորդի. Հանձ-
ցաւ ոչ միայն հեռի առնել զիս՝ի մեղաց, այլ և
ամբառնալ՝ի բարձր առաքինուվթիւնս, որպէս
զի միացայց ընդ իւր և առաւելագոյն վարձուց
եղէց արժանի: Չանձեցաւ կացուցանել զիս օրի-
նակ աչխարհի, որպէս զի խօսք իմ և գործք և
ամենայն կեանք իմ լեցին՝ի իրատ հաւատա-

ցեղից և 'ի յորդոր առաքինութեան. քանզի այս ամենայն՝ մասունք են սրբութեան իմոյ կարգիս :

Եւ արդ չիցէ՛ ինձ պարտ զարմանալ ընդ բարութիւնն Աստուծոյ, որ ընտրեաց կացոյց զնս 'ի վիճակ այսպիսի, որ ձրի շնորհէն իւրով սահմանեաց զնս 'ի մեծամեծս յայսոսիկ իրս, և պատրաստեաց զնս 'ի նոյնս. որ առ 'ի պահել զնս 'ի սուրբ կոչմանս իմում, և օգնել 'ի լրումն պարտուց կոչմանս իմոյ՝ մատոյց ինձ այսքան նպաստս. և չկարելեմ առաւելագոյն իրաւամբք գոչել թէ « Ոչ այսպէս արար ամենայն ազգաց տէր »: Զի ոչ միայն 'ի միջոց ամենայն ազգաց, այլ և 'ի միջոց անթիւս բազմութեան հաւատացեղից ընտրեաց զնս. և Թողեալ զայլս 'ի վտանգս աշխարհի, կացոյց զնս յահաստանի: Զինչ առաւելութիւն էր իմ քան զայլս՝ զի զնս հաճեցաւ ընտրել և կոչել 'ի կրօն: Ի՞նչ գտանէի ես արժանի այսպիսւոյ մեծի պատուոյ և բարերարութեան:

Որպիսի՛ ինչ հրեշ ապերախտութեան գտանիցեմ ուրեմն ես, եթէ 'ի վիճակիս յայսմիկ յորում պարտիմ լինել նուիրեալ Աստուծոյ, յայլ ինչ ամենևին բերիցեմ. եթէ ուր պարտիմն յաճախագոյն և ընտանեբար կենակցիլ ընդ Աստուծոյ, ձանձրանամ յաստուածպաշտոց և այլ զբաղմունս խնդրեմ. եթէ փոխանակ մխերիլոյ ինձ գանձս 'ի յերկինս, ծոյլ և վատ գտանիմ, և կամ ոչ ինչ 'ի կատարմանէ պարտուցս օգտիմ, առանց կրօնաւորական հոգւոյ՝ եթէ 'ի սովորութենէ զայնոսիկ կատարեալ. և եթէ փոխանակ չնեղելոյ զայլս՝ նեղեմ թերևս 'ի գայթակղութիւն նոցա: Խաղմոյ թերևս 'ի կրօնաւորաց 'ի դէպ գայցեն կշռամբանքս այսոքիկ, այլ ոչ առաւելագոյն ևս ինձ: Ի միտ առ

անձն իմ զայս ամենայն 'ի խրատ քեզ և 'ի զգուշութիւն:

ԱՂՕԹՔ

Ո՛վ Տէր, էէր ինձ ցարդ քաջածանօթ սահմանն վիճակի իմոյ՝ յոր զնս կոչեցեր, նմին երի և թեթեւ բահոդ գտայ 'ի գիմելոյ 'ի նպատակ նորին: Կրօնաւորական կեանք թուէին ինձ ցարդ նուաստ և արհամարհ և խեստ և դժպհի զգայութեանց, և ոչ 'ի միտ առնուի զգերազանցութիւն նորա և զիատարելութիւն: Այլ արդ խելամուտ լինիմ և զգամ զճաշակ բարեբաստութեան իմոյ, և այլ ինչ ամենևին թուի ինձ վիճակ իմ: Օգնեա ինձ, Տէր, շնորհօք քովք. զի կարացից յայսմ հետէ ընդուզ զպարտս կոչման իմոյ. բարձ զնոչ և զնուէր յառաջադիմութեան իմոյ 'ի կատարելութիւն, զորս դու քաջ գիտես Տէր. տուր ինձ յուշն ուշել միշտ՝ առ ինչ եկի 'ի կրօն, առ ինչ թողի զաշխարհ, զի մոռացօնքս այս եղեն ինձ գնևաւոր պատճառք թուլութեան: Յիշեցից միշտ զայն այսուհետև, և յիշատակս այս լիցի ինձ կանոն 'ի մեացուածս կենաց իմոց. քաջալերեա զնս և խրախուսեացէ յամենայն դժուարին, և օծութեամբ սուրբ Հոգւոյդ և շնորհօք քովք լիցի ինձ 'ի փրկութիւն:

Ցաղագս կատարելութեան հանապազորդ գործոց մերոց

ՄԱՍՆ Ա.

Կատարելութիւն մեր ոչ ՚ստահմանի ՚ի գործել բազումս. այս իսկ եղև վրիպակ Մարթային, զոր Փրկիչն ուղղեաց ասելով. « Դու զբաղումս իւիք զբաղեալ ես, աստ սակաւ ինչ պիտոյ է »: Եւ ոչ իսկ ստահմանի ՚ի գործել մեծամեծս. բազմաւք ՚ի սրբոց ոչ ինչ գործեցին մեծամեծս, այլ կեանք նոցա էին մեթին և անծանօթ, զորոց ոչ ինչ խօսեցաւ աշխարհ զփառաւորութեանցն: Էին նոքա մեծք ՚ի սրբութեան, այլ սրբութիւն նոցա ՚ի փոքունս էր ստահմանեալ. և Աստուած վասն հաւատարմութեան նոցա ՚ի փոքունն՝ ՚ի վերայ գանձուց բազմաց կացոյց զնոսա: Մեծք էին նոքա խոնարհութեամբ, և խոնարհութիւն տայր նոցա ընտրել զկեսին պաշտամունս՝ թողեալ այլոց վերևելիան, և ոչ բաւականս նոցին զանձինս համարեալ:

Եթէ կատարելութիւն մեր ստահմանէր ՚ի գործել զարմանալիս և նորանշան իրս, դժուարին յոյժ լինէր. զի և ոչ յաձախ դէպքն այնոքիկ պատահէին, յորս մարթ իցէ առաքինանալ զարմանալիս. այլ ստահմանի այն ՚ի սովորական գործս մեր՝ զորս գործեմք հանապազորդ, և յորոց հիւսին աւուրքք և ամք կենաց մերոց:

Զի որովհետև ՚ի սոսին կոչեաց զմեզ Աստուած, զայն ապա առաւելապէս պահանջէ ՚ի մէնջ, զի զգործս և զպարտս կոչման մերոյ կատարեսցուք: Եւ քանզի սրբութիւն մեր ոչ այլ ինչ է՝ բայց

կատարումն կամացն Աստուծոյ, և յարդ գործոցն մերոց ՚ի կամացն Աստուծոյ է, և առանց կամացն Աստուծոյ՝ մեծագործութիւնքն մեր առ հասարակ ոչ ինչ են, և կամքն Աստուծոյ անարգագոյնք ՚ի գործոց առնուն յարդ անկշռելի, ապա ուրեմն ոչ է ինձ մարթ լինել կատարեալ առաջի Աստուծոյ, եթէ ոչ կատարեմ զհանապազորդ պարտս իմ: Զինչ գործեաց Փրկիչն մեր ընդ ամս երեսուն. ոչ ինչ մեծ յաչս մարդկան. այլ ի զհաճոյս Հօրն իւրոյ առնէր հանապազ՝ որպէս ինքն իսկ ասաց. ամենայն գործք նորա արհամարհք առաջի մարդկան՝ էին մեծամեծք առաջի Աստուծոյ, վասն զի էին աստուածահաճոյք:

Զի՛նչ առաւելագոյն քան զայս կայցէ մեծ թարուրթիւն. չէք հարկ խնդրելոյ ՚ի բացեայ զկատարելութիւն մեր, այլ մտա առ մեզ կայ այն և ՚ի մեզ իսկ: Ի հանապազորդեայ ՚ի գործս իմ գտանեմ զայն. զայն իսկ պահանջէ յինէն Աստուած, այն իսկ չինէ զերբաս իմ, այն իսկ մեծարոյ առնէ զառաքինութիւն և պահէ ՚ի բարեկարգութեան զինաբանութիւն:

ՄԱՍՆ Բ

Կատարելութիւն մեր սահմանի արդարև ՚ի կատարել զսովորական պարտս մեր. բայց են և կարևոր պայմանք: Այս ինքն զի ոչ է բաւական կատարել զպարտս կոչման մերոյ, այլ պարտ է և բարւոք կատարել զայնս. որպէս զի մարթ իցէ ասել և զմէնջ որ ինչ զառնուն մերմէ առաջս՝ եթէ « Զամենայն ինչ բարւոք գործեաց դա »:

Պարտ է մեզ ապա նախ կատարել եռանգեամբ զպարտս մեր, այս ինքն է՝ մտադիւր սի-

բով և ախորժակաւ. մի գժկամակուԹեամբ, մի արանջելով և մի գաղջուԹեամբ: Զի ԹէպԷտ և պակասիցի 'ի մեզ եռանդն զգայական, բայց եԹէ հասատատուն կամօք և անտրտունջ և ընդդեմ գաղջուԹեանս մերոյ պատերազմելով կատարիցեմք զպարտս մեր, հաճոյագոյն ևս լիցին Աստուծոյ գործք մեր քան զգործեալսն զգայական եւեԹ եռանդեամբ:

Պարտ է մեզ գարձեալ կատարել զպարտս մեր յարատեւուԹեամբ, քանզի դիւրին իմն Թուի 'ի տեսուԹեան՝ կատարումն սովորական և հանապազօրեայ պարտուց մերոց, այլ 'ի կատարման անդ գժուարուԹիւն բազում ընդ առաջ ելանէ մեզ, մանաւանդ ըստ յարատեւուԹեան մասին: Վասն որոյ ասաց ոմն 'ի սրբոց միանձանց՝ զի զպարտս կրնաւորի մի ըստ միջէ ուրոյն նկատեալ, ոչ ինչ գժուարին Թուի, այլ պարտուԹիւն նոցա միանգամայն՝ հանդերձ մշտնջենաւորուԹեամբն՝ ընդ կարի իսկ գժուարակիր մարտիրոսուԹիւնս համարելի է: Զի են իսկ բազումք 'ի միանձանց հաւատարիմք 'ի կատարել զպարտս իւրեանց յաւուրս՝ յորս շնորհէ նոցա Աստուած եռանդն. այլ գտանել այնպիսիս՝ որք միշտ միօրինակ յարատեւեսցեն 'ի պարտս իւրեանց և 'ի պահպանուԹիւն կարգաց և կանոնաց, աքանչելիք իմն են գժուարագիւտք:

Ակտաբիկ են ահա պայմանք սրբուԹեան պտղոց իմոց, եռանդն և յարատեւուԹիւն. ակասն չիցէ՞ն սոքա ինձ պատճառք խոնարհելոյ և ողբալոյ զանհաւատարմուԹիւնս իմ: Զինդրի ինձնէն այլ ինչ առ 'ի սրբուԹիւն, բայ 'ի կատարմանէ պարտուց իմոց: Իսկ ես քանի՞ յաձախ վերջացեալ յայսցանէ գտանիմ, և զանց զսրբոք արարեալ. վասն որոյ և չեն ինչ զարմանք զի հանդիպ այսպան նպատակաւք 'ի յատկացիմուԹիւն,

այսպէս սակաւ յառաջադիմ գտանիմ լեալ. և չիցէ՞ ինձ պարտ սարսել ընդ այս և դողալ:

ՄԱՍՆ Գ

Է և այլ իմն պայման կատարելուԹեան և սրբուԹեան գործոց մերոց, և որպէս շունչ իմն և հոգի նոցա. այս ինքն է՝ կատարել զայնոսիկ հաւատով և հոգւով կրօնաւորուԹեան: Զի այլն ամենայն՝ մարմին է գործոց մերոց. իսկ որ կենդանացուցանէ զնոսա և հոգևորէ և սրբէ՝ է ներքին գիտաւորուԹիւն մեր և հաւատք: Զի գործել ըստ ախորժակաց, ըստ բնական յօժարուԹեան, յակնածուԹենէ մարգկան, առ 'ի ցոյց և առ 'ի շահ, ոչ է գործել վասն Աստուծոյ և ըստ կամացն Աստուծոյ. և եԹէ չիք 'ի գործս մեր մասն և բաժին Աստուծոյ՝ խոտանք են ամենևին և անպտուղք: « Ամենայն փառք գսաեր Թագաւորի 'ի ներքոյ », ասէ սաղմոսերգուն. ապա ուրեմն ԹէպԷտ և մեծամեծք լցեն արտաքուստ գործք իմ և գիւցազնականք, եԹէ 'ի ներքին զարդուց անակ կողոպուտք լցեն՝ անփառունակք են:

ՃշմարտուԹիւն որ ահ արկանէ յիս. զի եԹէ ամենայն գործոց իմոց հանդիպս առնիցեմ և քննիցեմ զնոսա, և 'ի նժարս այսր կշռոց բառնայցեմ, քանի՞ ինչ 'ի նոսա աստուածահաճոյ գտանիցեմ: Ապաքէն կատարեմարտաքուստ զպարտս իմ. աղօԹեմ, վաստակեմ, զբաղիմ և ամենայն ուրեք գտանիմ ընդ եղբարս իմ, այլ առանց խորհելոյ Աստուած, առանց ուղիղ գիտաւորուԹեան՝ 'ի սովորուԹենէ բերեալ, կամ յակնածուԹենէ, կամ 'ի պատճառից և կամ 'ի մարգկային պատճառաց. և ուրեք զի և բնդի և առհարկի և կամ գաղտնածածուկ ինչ անափառուս-

թեամբ բարի անուան: Այդ այս ամենայն զինչ
ևցեն առաջի Աստուծոյ. ոչ ապաքէն կեանք իմ
լի են այսպիսի գործովք. այս ինքն զի գոր-
ծեմ՝ լոկ թէ ոչ ինչ գործեցեմ, և գործք իմ
ոչ ինչ օգնեն առ ՚ի կատարելութիւն իմ: Եւ
այնչափ առաւել աւաղելի են կեանք իմ և
դառնապարտելի, որչափ զի չիք գործ անար-
գադոյն զոր ոչ կարեցեմ առնել արդիւնաւոր՝
նուիրելով զայն Աստուծոյ: Զի Աստուած ոչ
զմեծութիւն գործոյն, այլ զսիրտ մեր խնդրե
՚ի նմա. և յոյժ իսկ վասն այսորիկ ընդրհա-
պարտ գտանիմք նախանձամարտութեան նորա և
մարդասիրութեան: Զի ոչ ամենեցուն մեզ է
բաւականութիւն պարապելոյ հաւատարապէս
՚ի գործս մեծամեծս. այլ քանզի զամենեսին
զմեզ կոչէ հաւատարապէս ՚ի կատարելութիւն,
այսպէս հոգացաւ՝ զի չեցէ ինչ գործ անարդ և
ծառայական՝ որ չկարիցէ լինել մեծարգոյ՝ ուղ-
ղութեամբ և սրբութեամբ գիտաւորութեան
մերոյ, և որ չկարիցէ ամբառնալ զմեզ ՚ի կա-
տարելութիւն:

Ո՛հ, զի հեծել պարտիմ և աւաղել զաղքա-
տութիւն իմ հոգւոյս, մինչ այսքան դիւրին էր
ինձ մթերել գանձս, և գնալ յառաջադէմ ՚ի
զօրութենէ ՚ի զօրութիւն: Իւրաքանչիւր գործ
կենաց իմոց կարէր լինել ինձ պաղաբեր. և արդ
քանի՞ ինչ գտանեմ ՚ի կեանս իմ արժանի Աս-
տուծոյ, և ձեռնտու լինձ լեալ ՚ի յառաջադիմու-
թիւն: Ո՛վ կորուստ աւաղելի, որ ստիպէ զիս
՚ի փոյթ և ՚ի նախանձ փոխարինելոյ յայսմ հե-
տէ մեծի վնասուս:

ԱՂՕԹՔ

Թէպէտև հեղգ և գաղջ լեալ եցեմ ցարդ ՚ի
կատարումն պարտուց իմոց, սակայն իշխեմ,
Տէր, յուսալ ստակաւին՝ զի չեցեմ մերժեալ յո-
ղորմութենէ քումմէ: Կարող իսկ էիր մերժել,
և սպառնացար իսկ, և ես արժանի էի մերժե-
լոյ. այլ սպառնալիք քո եղեն ցարդ ինձ ՚ի խըր-
բատ և ՚ի թիւս հաւատարիմ ծառայից քոց, և ՚ի սուրբ
եռանդն կատարելութեան, դիմեմ մտադիւր ՚ի
հրաւէր քոյին. և առաջադրեմ ոչ ևս ըստ առաջ-
նոց գնացիցն իմոց գնալ: Այլ՝ բազում անգամ
առաջադրեցի. և ոչ առաջին նուազ է այս ա-
ռաջադրութեանս իմոյ, և ոչ այժմ սկսանիմ
խոստանալ քեզ զկատարումն պարտուց իմոց.
վասն որոյ և երկնչեմ պարտ է ինձ թէ մի գուցէ
և խոստմունքս իմ այսոքիկ հանդոյնք առաջնոցն
լինիցին: Եթէ յանցեալսն հայիցիմ, զնոյն վտանգ
երկիւղալի գտանեմ յիս, զի մեծ է յոյժ սակա-
րութիւն իմ: Այլ զինչ. միթէ վհատել ինձ այ-
սու պարտ եցէ. ոչ ժամ է ինձ արդ արիանալոյ
զնուրհաք քովք առ ՚ի գործել զպարտս իմ, զոր
աբեմուս այսուիկ յանձն առի: Ոչ շատ եցեն
ամքն զորս գողացայ ՚ի քէն. պարտ է ինձ ձգել
մինչև ՚ի վախճան կենաց իմոց զանկատարու-
թիւնս իմ, և կորուսանել մինչև ՚ի սպառ զար-
դիւնս գործոց իմոց: Տակաւին լսելի առնես ինձ,
Տէր, զձայն խրատուց քոց և զհշտամբանս խղճի
մտաց իմոց. սակայն եթէ ոչ օգտեցայց սրբօք
և զգաստացայց, զինչ լինիցի վախճան իմ, բայց
անկանել ՚ի կատարեալն յայն գաղջութիւն և
յանղգայութիւն՝ որ ոչ ինչ ընդհատ է ՚ի կու-
րութենէ և ՚ի խստութենէ, յոր թողուս լքա-

նեա զմեղաւորս: Մի թողուր ինձ, Տէր, զառաջանել ցայն վայր. այլ ձեռն տուր ինձ և օգնեա առաքադրութեանս իմում: Քոյով օգնականութեամբդ յաւժամ նորոգել զկեանս իմ, և ընծայօք քովք յարատևել ի նոյն. « Ասացի՝ այժմ սկսայց, և այս է նորոգումն աջոյ Բարձրելոյդ»:

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

Ցաղագս մահուչափ մեղաց

ՄԱՍՆ Ա

Կարևոր և անհրաժեշտ պարտք են ինձ գիտել և ճանաչել թէ զինչ մահուչափ մեղքն իցեն: — Է ծայրագոյնն ի չարեաց, մնասանդ թէ միակ չար ինքնաբուն և չար առ Աստուած: Ա՛յլ ամենայն չարիք՝ չեն իսկապէս չարիք. հիւանդութիւն, աղքատութիւն, վիշտք և նեղութիւնք այլովքն հանդերձ՝ եթէ գիտեցեմք ըստ կամացն Աստուծոյ յօգուտ ի վար արկանել զայնոսիկ, բարիք են մանաւանդ քան թէ չարիք: Միայն չար՝ մեղքն է, զոր Աստուած ոչ արար և ոչ իսկ առնել կարող է: Որպէս Աստուած է ծայրագոյն բարի՝ նոյնպէս և մեղքն ծայրագոյն չար. և որպէս Աստուած սիրելի է անչափապէս, նոյնպէս և մեղքն հարկ է թէ ի ցեց ատելի անչափապէս: Ա՛յս ահա չափ է և պայման ատելութեանն որով պարտ է ինձ ատել զմեղս. ատել զայն այնչափ՝ որչափ սիրեմ զԱստուած: Եթէ սիրեմ ինչ յաշխարհի հաւասար Աստուծոյ, ոչ ևս սիրեմ զԱստուած որպէս զԱստուած. և եթէ երկնչիմ՝ ի չարեաց ինչ նովին չափով, կամ առաւել իսկ քան զոր երկնչիմ՝ ի մեղաց, ոչ ևս առաւեմ զայն և գարշիմ յայնմանէ որչափ պարտին ատել և գարշել:

Ա՛յլ կարևորագոյն ինձ՝ ի գիտել այն է՝ զի մահուչափ մեղք ծայրագոյն չար է առ Աս-

տուած. որով արհամարհի նա և անարգի քան զառեղծուածս: Քանզի հարկաւորեալ մեղս ցեղոյն կամ՝ ի հաճոյից իւրոց հրաժարել, և կամ՝ ի չնորհացն Աստուծոյ անկանել, նախա- մեծար ընտրէ զանկանելն՝ ի չնորհաց Աստուծոյ, քան հրաժարել՝ ի մեղանչական հաճոյիցն յորոց գերեալն է: Գիտեալ գիտէ զի Աստուած անչափապէս գերազանցէ քան զարարածս. բայց այնու իսկ յանցաւորագոյն կա է՝ զի գիտելովքն՝ զայն նախատինս դնէ Աստուծոյ:

Զինչ զարմանք լցեն ապա զի վասն միոյ միայնոյ մեղաց ամբարտաւանութեան դահավէժ հոսեաց Աստուած յերկինից յանդունդս դժոխոց զգերագոյնս՝ ի առեղծուածոց իւրոց զՏերեզ- տակս՝ փոխելով զնոսա՝ ի գէւ, և ամենայն խըս- տութեամբ իւրով գատեցաւ զնոսա յաւիտենա- կան պատուհասիս, ոչ տալով նոցա տեղի և ժա- մանակ ապաշխարութեան: Օրինակ ահաւոր. և եթէ՝ ի հրեշտակս իւր Աստուած ոչ խնայեաց, զնաթրդ ակն ունիցիմ թէ խնայեսցէ յիս:

Զինչ զարմանք զի վասն միոյ անհնազանդու- թեան եհան արտաքսեաց Աստուած և զնախա- ստեղծն՝ ի դրախտէն փափկութեան կապուտ կողպուտ՝ ի չնորհաց անմեղութեան, և համե- րէն սերնդովք հանդերձ գառապարտեաց զնո- սա. որով և մեք ամենեքին վասն միոյ այնր մեղաց անկեալք ընդ գառապարտութեամբ՝ ծնանիմք որդիք բարկութեան, դրաւեալք ընդ աղխուխք և արտաքսեալք՝ ի ժառանգութենէ երկնից: Պատիժ սոսկալի, վրէժխնդրութիւն ահաւոր. և սակայն գառապատանք Աստուծոյ արդարք են, նա՝ արդարութիւն ինքնին գլխովին:

Զինչ զարմանք զի՝ ի քաւութիւն այնր մեղաց անհնազանդութեան՝ հարկ եղև յաւիտենական Բանին Աստուծոյ եղանիլ մարդ, խոնարհիլ և

ունայնանալ. որ զի այլ ազգ չէր մարթ առնել հատուցումն անարգութեան փառացն Աստու- ծոյ և փոխարինել արհամարհանացն եղելոց առ նա մեղօք՝ բայց միայն խոնարհելով Որդւոյն Աս- տուծոյ:

Զինչ զարմանք զի վասն վայրկենական մեղաց պատիժ յաւիտենական սահմանեաց Աստուած, և զի ընդ մեզս և ընդ պատուհաս յաւիտենա- կան՝ է արդարակշիռ հաւասարութիւն: Չայսո- սիկ ուսուցանէն ինձ հաւատոյ:

Այո՝ եղեն և՝ ի հաւատացելոց իսկ Թերահա- ւատք, որք հակառակեցան Աշմարտութեանցս այսոցիկ, զի ոչ որպէս պարան էր խեղճմուտ եղեն չարութեան մահուամբ մեզաց, և ոչ՝ ի միտ առին զի մեզքն է ծայրագոյն անիրաւու- թիւն առ Աստուած: Իցեմ ես որպէս պարան է խեղճմուտ Աշմարտութեանս այսորիկ. եթէ էի, քէզ մարթ էր ինձ յամենայն չարեաց աշխարհի զգուշանալ, իսկ՝ ի մեզաց ոչ նոյնպէս, նա՝ Թե- րևս յաճախել իսկ՝ ի նոյնս անզգուշաբար:

ՄԱՍՆ Բ

Ոչ ինչ ընդհատ կարևոր է ինձ գիտել և՝ ի միտ առնուլ՝ զի մահուամբ մեզք քան զամենայն չարիս պատասկարագոյն է մարդկան, զի զրկէ զնա՝ ի բարեկամութենէ Աստուծոյ, անզգայեաց՝ ի նմանէ և խղէ՝ ի սպառ զամենայն զօդ կեցո- ղութեան նորա ընդ Աստուծոյ, և բառնայ՝ ի նմանէ զպատուականագոյն կեանսն նորա՝ զիւրանս չնորհաց, տալով նմա մահ ազերաալի՝ զմահ հոգ- ւոյ՝ որ վասն իսկ կոչեցաւ մեզք մահացու: Շնորհն որով Ճոխանայ արդարն՝ է՝ ի նմա որ- պէս սկիզբն և հոդի գերբնական կենաց, և՝ ի

կորուսանելն զայն՝ մեռեալ ինն է ըստ Աստուծոյ և առաջի Աստուծոյ:

Եւ զի այս այսպէս՝ զի զարմանամ և ընդ երկուս այլ ձշմարտութիւնս աշաւորս և անժխտելիս: Մի՝ զի մեզք մահացու զրկէ զՀոգի իմ յաւիտենական արդեանց անտի որոց մարթէը ինձ ակն ունել՝ եթէ էի՛ ի հնորհս Թէպէտ և գանձս անբաւ մեծերաալ ունեմ, Թէպէտ և զաւրաքերցն ունելիմ զորբութիւն, եթէ մեղանչեմ մահացուի՝ կորուսեալ է ամենայն, և չէ ինձ մարթ վերստին առանալ զայնոսիկ, մինչև ոչ գարձայց՛ ի հնորհս Աստուծոյ. և Թէ դեպ լինի ինձ մեռանել՛ի մեղս իմ, այն ամենայն ոչ ինչ համարեացին առ Աստուծոյ, զի՛ ի Թշնամութեան եմ ընդ նմա. և Աստուած չկամի և չընդունի ինչ՛ ի Թշնամւոյ:

Երկրորդ՝ զի մահաւչափ մեղուցելոյն՝ սրբագործեալքն իսկ՛ ի գործոց և առաքինագոյնք՝ արհամարհն են առաջի Աստուծոյ և չարժին ինչ առ յաւիտենական երջանկութիւն: Թէպէտ հանապազորդ յաղօթս կացից, Թէպէտ զնստարկոն անապատականաց յանձին բերից զՀգուշս և առաքինացայց՛ ի գործս բարեպաշտութեան, համայն անպտուղք լինին և մեռեալք. զի և ես ինքնին եմ որպէս մեռեալ: Մարթ է Թէ յետոյ ուրեմն ողորմեցի ինձ Աստուած, բայց մեռեալքն այն գործք ոչ ընդ այլ գործս իմ պատկեացին յԱստուծոյ փառաց: Ինաւ ուրեմն անօգո՞ւտ եղիցին այնքանիկ: — Ոչ, այլ ընդ հակառակն օգտեացեն ինձ մեծապէս՛ ի զերծուցանել զիս՛ ի Թշուառութենէ անտի, ՛ի չարժել զսիրտ իմ դառնալ առ Աստուած, և զԱստուած՛ ՛ի տալ ինձ զնհորհս գարձի: Բայց ցորչափ կայ ինայ յիս անքաւելի մեղքն մահուչափ, չկք երկեցայել զի անպտուղք լինին բարեգործութիւնք իմ, և չուենիմ նոքօք երաւունս ժառանգելոց զերկինս:

Իցէ իմ արդեօք գտեալ երբեք յայդ սահմանն աղետալի, նա և արդ իսկ չիցեմ արդեօք՛ ի նմին պայմանի. գիտել ոչ կարեմ, զի «Ո՞ գիտէ սիրոյ արդեօք Թէ առերեսութեան իցէ արժանի»: Ո՛վ անստուգութիւն ահաւոր, ո՛վ խորք անդնդոց յորս միտք ոչ հասանեն, և ոչ յատել ոք կարէ հաւատոց աչօք և չսոսկալ: Ջանացայց գոնեայ յայսմ հետէ յապահովել զանձն իմ ողովք մարթեն է, և որչափ կարեմ՝ գործովք ապաշխարութեան հայթայթել ինձ վստահութիւն իմն սուրբ և աներկեան:

ՄԱՍՆ Գ

Թէպէտ և օգուտք մեծամեծք են իմ՛ ի կրօնի, սակայն չեմ՛ ի սպառ յապահովի՛ ի վտանգս մեղանչելոյ մահուչափ: Եւ իբր հնար իցէ այդ, երբ վերադարձն՛ ի հրեշտակաց արբանեակքն հանդերձ չեղեն յերկինս յակաստանի, և նախամարդն հաստեալ յանմեղութեան կործանեացաւ՛ ի դրախտին, և Յուդաս՛ ի դասս առաքելոց սրբացաւ ընկերացաւ՛ ի Քրիստոս: Մենաստանս յորում կամ՝ իցէ սրբագոյն քան զդաս առաքելոց, քան զդրախտն եդեմական և քան զերկինս: Ո՛չ ապաքէն և՛ ի կարի իսկ բարեկարգ միաբանութիւնս՝ յորում կործանեցան չարաչար. և արդ իսկ չիցէ՞ն բազումք որք կործանիցին: Աստուած Թողու զնոսա՝ և իցեն իւր պատճառք՛ ի Թողուլ, զի «Որ համարիցի հաստատուն կալ, զդոյշ լիցի՝ գուցէ կործանեացի»:

Ին և մեղք մահուչափք՝ յորս առաւելագոյն վտանգ է անկանելոյ՛ ի կրօնի. որպիսիք են մեղք ընդդէմ եղբայրսիրութեան, որոց առիթք այնչափ առաւել յամնախն՛ ի կրօնի, որչափ առա-

ւել առընթեր կան պատճառքն: Եթէ յոգնու-
թենէ և ի փառամոլութենէ թուխք ասա ա-
պահովեալք ըստ բաւականին, սակայն վտանգ
մեծ է ի քրիստնէացս, ի հակառակութեանց
և ի հերձուածոց: Եւ թէ գտատպարտութիւն
ինձ հասցէ, ահ, զի՞նչ չահ թէ այսու կամ թէ այ-
նու մեղք եցեմ գտատպարտեալ: Ո՞վր թողից
զի մահուսփք գործեցեալք ի կրօնի՝ ծանրա-
գունք են յոյժ քան զգործեցեալն յաչխարհս-
նոց, քանզի առաւելագոյն սրբութիւն պահան-
ջի ի կրօնի: Որ ինչ աշխարհիկ հաւատացելոյ
պարզաբար ի մեղս համարի, բազում այն է՝ զի
կրօնաւորին գրի ի սեղանակատուա ամբարշ-
տութիւն:

Այլ մի թէ յայն սակ՝ լաւագոյն եցէ կալ
մնալ յաշխարհի քան կրօնաւորիլ: Թէ այդպէս
էր, ապա և չէր իսկ արժան լինել ինձ քրիստո-
նեայ. որ զի ծանրագոյն յոյժ են հաւատացելոյ
քրիստոնէի մեղք քան զանհաւատ հեթանոսին:
Քա՞ւ ինձ ասա, Տէր, քաւ լինիցի խորհուրդ
այսպիսի. եթէ գոն վտանգք ի կրօնաւորու-
թեան, գոն և յաշխարհի և մեծագոյնք յոյժ.
իսկ յոր խորհելն ինձ պարտ է՝ այս ինչ է, չվըս-
տահանալ ի կրօնաւորութիւնս իմ, և երկիւղել
ոչ ի կրօնաւորութենէս, այլ յանձնէս. և թէ-
պէտ տուրբ իցէ կոչումն իմ, սակայն անյաւ խրա-
տու Առաքելոյն և «Ահիւ և դողութեամբ զան-
ձին փրկութիւն գործել»:

ԱՂՕԹՔ

Կատարեա՛, Տէր, բովանդակեա՛ յիս, չնոր-
հիւդ քով զոր ակսան ողորմութեամբ: Ընդու-
ցեր զիս յաչխարհս և կոչեցեր առ քեզ զի պա-
հեսցես զիս ի մեղաց. մի թողուր ապա զի մին-

չև ի սրբալայրս յայս հետամուտս լինիմ
մեղաց, և որպէս ի դիրկս քո հարեալ անկայց վի-
րաւորս: Վա՛յ ինձ և եղուկ՝ եթէ և «Յերկրին
սրբութեանց գտայց ամբարշտեալ», և ի մէջ
հոգւոց անարատից գտայց ի նզովս:

Տէր, որ քննես զսրտս մարդկան և յայտնա-
գոյն յոյժ տեսանես քան զիս, ցոյց ինձ թէ գու-
ցէ թոյն ինչ մահացու և ապականարար ծած-
կեալ ի նմա, թէ գուցէ ինչ յիս մեղք այնպիսի
որ մնկնէ զիս ի քէն, տուր ինձ յայտնութիւն
Ատուած իմ: Ահա կամ պատրաստ ի խլել զայն
և յապականել: Եւ թէպէտ ըստ բախտի անձնա-
պահ և ս լեալ իցեմ ցարդ յօրհասաբերը թշնա-
մեայն և խոյս տուեալ ի մահացու հարուածոց
նորին, սակայն վտանգ է ինձ տակաւին և եր-
կիւղ ի տակաւութենէ խմիզ. այլ ապաւինեալ
յօգնականութիւն քո, Տէր, զգուշագոյն գը-
տայց յայսմ հետէ. առ քեզ կարգացից, հսկե-
ցից՝ ի վերայ իմ անգուլուպութեամբ, և ի դոյն իսկ
վտանգաց զգուշացայց, որպէս զի մի լինիցի
երբեք տուընդանիզ ատուածայնոցդ քոյոց հրա-
մանաց:

Ցաղագս ներելի մեղաց

ՄԱՍՆ Ա

Սովոր եմք առ ոչ ինչ համարել զմեղս ներել-
լիս. սակայն եթէ քաջ զմտաւ ածէաք զի՝նչ են
ներելիքն այնոքիկ անուանեալ մեղք, յոյժ այլ
ազգ լինիցի մեզ խորհել զայնցանէ, և մեծագոյն
յոյժ զգուշութիւն մեր չանկանելոց յայնս:

Որչափ և թէեւ ինչ իցէ՝ սակայն զի անհա-
ճոյ է Աստուծոյ, այս չատ է կամ չատ պարտի
լինել ինձ առ՝ի զգուշութիւն: Աւրդարև չառնէ
զիս Թշնամի Աստուծոյ, այլ ցուրտ ինն արկանէ
ընդ իս և ընդ Աստուած. ոչ չիջուցանէ յիս ըզ-
հոգին, սակայն որամեցուցանէ: Աւրդ եթէ այդ-
պէս, չիք ինչ՝ի ժամանակիցս չարեաց որ կա-
րիցէ հաւասարել այսմ. զի ամենայն չարիք յիս
հոյին, իսկ միւսն առ Աստուած. վասն որոյ և
առանց համեմատութեան չարագոյն քան զառա-
ջինն:

Որչափ և թէեւ ինչ իցէ, չատ է զի անհաճոյ
Աստուծոյ է՝ չմարթի ամենևին գոլ ինձ օրինա-
ւոր: Եթէ զշնարհս ամենայն մարթ էր ինձ
ստուգութեամբ միով փրկել, սակայն անհաճոյ էր
նմա այն. եթէ զամենայն որ ինչ փառս մարթի
մատուցանել Աստուծոյ, առաջի կայր ինձ թէ-
թև ինչ մեղաք հայթայթել, սակայն այն ամենայն
փառք անհաճոյ թուէին նմա: Որչափ և թէեւ
ինչ իցէ, սակայն՝ի հաւատոյ է զի չիարեմ մտա-
նել ընդ խս, և ոչ ես նովաւ յարքայութիւնն
երկնից: Որչափ և առաքինութիւնս ունիցիմ և
վաստակս, թէպէտև նախասահմանեալ՝ի տեառ-

նէ իցեմ՝ի փառս, սակայն առանց քաւելոյ և
սրբելոյ զմեղսն զայնոսիկ՝ անմարթ է ինձ ժա-
ռանգել զԱստուած. պարտ է ինձ անցանել ընդ
հուր քաւարանին, ձուլիլ և զտիլ և սրբիլ և ա-
պա գրկախառնիլ ընդ նմա: Եւ յատակս խակ
քանի՞ խտիւս ոչ պատուհասէ զայնոսիկ Աս-
տուած. կորոյս գրեթէ զազգ մի վասն թէթև
ինչ մնափառութեան Դաւթի. և առ ոտս տա-
պանային սրբոյ տապատաս արկ զղեւսացին՝ որ
հուպ եւեթ յանդգնեցաւ լինել յայն: Ցոյժ ու-
րեմն սխալեմ ես առ ոչ ինչ համարիլ զթէթև
յանցուածս:

Բայց առաւել ևս գտատպարտելի այնու գտա-
նիմ, զի ստեղծեալ Աստուծոյ և լցեալ՝ի նմա-
նէ ամենայն պարգևօք և խնամիալ և գթութեալ,
փոխանակ երախտագիտ սիրոյ՝ այսպէս գիւրաս
բերիմ՝ի յանցուածս, որք թէպէտ և թէթևք,
սակայն իսկապէս հակառակ են կամաց նորա:

ՄԱՍՆ Բ

Գոնեա յանցուածքս այսոքիկ՝ էթէն այսպէս
յաճախաւորք և բազմութիւք: Ո՛հ, եթէ՝ի գաղջ
և՝ի թոյլ կեանս յայս՝ զոր վարեմ, մարթ էր ինձ
՝ի թիւս արկանել զամենայն գործեցեալս յինէն
զայսպիսի յանցուածս, և տայր ինձ ակր գիտել
ղգուսմար այնոցիկ, յոր անթիւս բազմութիւն ար-
գելօք հասանէին: Ինձ անգիտելիք են, այլ առա-
ջի ամենագիտին մերկատարածոց կան. բայց այս
իսկ անթիւս բազմութեամբ անցանել նոցա՝ի
վեր քան զհասողութիւն մտաց իմոց՝ չիցէ բա-
ւական՝ի զիջ անմխիթար համակել զիս: Փա-
ղձեցս առ ապիտութեան և իմ յանցուցեալ, քա-
ղձեցս առ մտացութեան պարտուցս, քանիցս

առ անհոգութեան, քանիցս առ ատունգանուե-
թեան խրատուց, քանիցս առ յանձնապաստա-
նութեան, քանիցս առ անխոհեմութեան, քա-
նիցս առ զբաղաքեր տարտամութեան, քանիցս
առ թեթեւութեան, քանիցս առ համարձակա-
խօսութեան, քանիցս առ ազատախոհութեան,
քանիցս առ տկարութեան և յողդողդութեան,
քանիցս առ չտալոցելոյ մահացուցանել զկիր,
և հպատակել կանոնաց, անձնատուր լինելով
'ի բերմունս բնութեան և յօժարութեան:

Քանիցս գարձեալ և առ չարութեան և ընդ-
գէմ խղճի մտացս յանցուցեալ եմ, այնու և եթե
զի չէն ծանուցանք յանցուածքս, և այսպէս յայտ
արարեալ, զի չէ ինձ փոյթ զվատացն Աստու-
ծոյ, այլ զշահ և եթե անձին խնդրեմ:

Ո՞չ ապաքէն այսպիսի լեալ է առաւելագոյն
մասն կենաց իմոց: Ցիրաւի չէ իսկ մարթ բարո-
յապէս գոլ յաղցաւոր կենցաղութեան զերծ յամե-
նայն իսկ թեթև յանցուածոց առ հասարակ-
ապէս, որ տայր հեծծել աստուա-
ծազգեցիկ արանց, որ զմահ ընտրելի առնէր
նոցա. «Այլ մի տառապեալ եմ ես, ասէր Պօղոս,
ոչ ապրեցուցեալ զիս 'ի մարմնոյ աստի մահու»:
Բայց չէք և ոչ մի 'ի յանցուածոց՝ յորմէ չկարե-
ցեմք առաւելագոյն զգուշութեամբ լինել զերծ.
քանի՞ ապա նուազեր թեւ նոցա՝ եթէ զգուշ-
չութիւնս զայս յանձին բերէք: Աւաղ, զի փո-
խանակ նուազեցուցանելոյ՝ թերևս աճեցու-
ցանեմ օր ըստ օրէ զյաճախութիւն նոցա:

ՄԱՍՆ Գ

Ո՞ր են աղիտաւորագոյն հետևանք թեթև
յանցուածոց, որոց գայս վայր չկարացի լինել
խելամուտ: Մղէ զառածանէ զիս 'ի մահուչափ

ձեղս, որպէս հիւանդութիւն 'ի մահ: Սորին
ազագաւ եթէ լցեմ լինձ փոյթ զհոգւոյ իմմէ,
պարտ է լինձ զնոյն զգուշութիւն ունել 'ի հե-
ռուէ մեզաց, որ լինչ 'ի հիւանդութեանց մար-
մնոյ որ ակնկալեմ լիս: Զո՞ր փոյթ, զոր հնարս ոչ
'ի կիր առնում առ 'ի զերծանել յայնցանէ.
զինչ զգուշութիւն ոչ բերեմ առ 'ի չանկանել
անդրէն 'ի նոյս. քանզի մարթեն ծանրանալ և
լինել լինձ մահառիթ. այս եթե չատ է՝ առ 'ի
լինել լինձ զամենայն հնարս հնարել զերծանելոյ
'ի նոցանէ: Եւ ընդէր է լինձ ոչ զնոյն խորհել և
զհոգւոյ. որ լինչ և լցեն մեզք, թէպէտ և թե-
թեք, հիւանդութիւնք են հոգւոյ վտանգաւորք,
որ ածեն զնա 'ի մահ անհամեմատ աւելորե-
թեամբ ահաւոր քան զմահ մարմնոյ:

Եւ զի արհամարհութիւն փոքունց 'ի ծա-
նուցս ածէ՝ պատգամ է սրբոյ Հոգւոյն: Արհա-
մարհութեամբ ներբնեցան՝ բառնին տակաւ ար-
հաւիրք ծանուցեալն. 'ի սկզբան անդ անուն եթե
մահուչափ մեզաց զարհուրեցուցանէ զմեզ, առ
տակաւ տակաւ սովորութեամբ և ընդելանամք. թե-
թեքն այնոքիկ հասանեն 'ի կէս՝ ուստի և անդր
տակաւ լինչ է խոչըն և գրեթէ անդրադարձ. և տա-
կայն կէսն այն անդրպատեալ ընդ կէսնս և ընդ
մահ մեր յարհեռնեան: Ոչ ահագին վտանգ
յերկեր վախիչ գահավիժութեանց աներկիւղ
դեղերիմ:

Անդրադարձ խոչըս այս հարկաւ տայ լինձ եր-
բեմն և չիտթել զմահուչափն ընդ ներբնեցոյ. ո՛հ,
քանիցս արդեօք խաբեալ մտաք՝ թեթև զծա-
նուցս վարկուցեալ եմ, քանիցս կուրացեալ
մտաք՝ ըստ ըղձից իմոց դատեալ եմ զայնցանէ,
թեթև ինչ համարեալ անիրաւութիւն՝ որ թե-
րևս ծանր և մահուչափ անօրէնութիւն էր ա-
ռաջի Աստուծոյ: Դժուարին է ընտրութիւնն,

ապա վասն այսորիկ իսկ պարտ է ինձ զգուշանալ՝ի նեբելեացս. սխալեցեալ, պարտ է ինձ ապաշխարհել՝ի միտս իմ, եւ յամենայնի իսկ զգուշանալ:

Բայց թէպէտ եւ գիտեմ վստահութեամբ առնել ընտրութիւն, սակայն չգիտեմ եւ զսկզբունքն իմ եւ զպայթոտ բնութիւն: Այդ եթէ այսքան եւ այսպէս սահմանակից գտանին նեբելիք ընդ մահուանէ մեզս, որոյ յանձնապատրաստութեամբ բերիմ ես՝ի ներելիսն՝ վստահացեալ անոխ եւ անդր չանցանել. մանաւանդ՝ի տեսակս ինչ մեզաց՝ յորս տպաւորութիւն բնութեան հզօր է եւ բուռն, եւ եթէ ոչ առանձինն ընդհանք Աստուծոյ ունկնկին ինչ՝ գահավիժ՝ի խորս բերիցիմ: Եւ չկայ՞ իսկ սովորական պատուհաս անզգուշութեանս մերոյ՝ի ներելի մեզաց՝ զոկիւ՝ի ընդհայ՝ որ պատրաստեալ էին մեզ, եւ որովք մարթ էր մեզ յապահովել զիւրմէ մեր. ուր զոկիւղալ մեր՝ի ընդհայ անտի՝ մարթիմք զառաջանալ՝ի մեզս ծանուցանս եւ մտանիլ՝ի կորզսա: Այսպէս ահա մեզք ներելիք՝ մարթին լինել, եւ են իսկ յաճախ մահաւիթք հոգւոյ:

ՍՂՕԹՔ

Եւ ոլպէս մարթ կայ ինձ զերծանել՝ի վտանգէ ասել, փրկիչ իմ Յիսուս, եթէ ոչ հպատակելով օրինացդ՝ոց յամենայնի եւ զհաճոյս քո առնելով հանապազ: Որչափ առաւել կանացայց կանգնել, այնչափ հեռի գտայց՝ի վտանգէ անկանելոյ. եւ որչափ առաւել զգուշացայց՝ի մեղանչելոյ, այնչափ անքոյթ գտայց՝ի մեծամեծաց: Իբր ոչ եթէ առաջագրութեամբս այսորիկ զոր առնեմ արդ առաջի քո, Տէր, խնդրեմ վստահել

ոչ ևս երբէք գթելոյ եւ անմեղ ամենևին գտանելոյ առաջի քո. զի ցորչափ յապահացու կենցաղս պանդխտիմ, եւ՝ի մարմնոյս մեզաց պարանեալ համ՝ հակեսցէ հողեղէն յարկ զմիտս իմ, եւ կարի իսկ զգիտրձ առից մարդկայինս թշուառութեան. այլ գէթ՝ի վեր քան զանհրաժեշտ պարտս իմ նկրտեալով՝ զերծ գտայց ընդհօք քովք՝ի գթելոյ՝ի մեծամեծս: Տուր ինձ, Տէր, խիղճ մտաց փափուկ եւ զգայուն, առ՝ի խրտնուլ՝ի ստուերագ իսկ մեզաց: Հաստատեալ զգաստութիւն զայն խիստ, որ ոչ իմիք ներեսցէ. այս անողոքելի խստութիւն ընդդէմ գործեսցէ զյաւխտենական յապահովութիւն իմ: Ապաքէն ծանր լիցի հրաժարել բաղձմանդամ՝ի հաճոյից, գերել զմիտս իմ, հեղձուցանել զախորժակս, սանձահարել զիւսս, փակել զաչս և մահացուցանել զզգայարանս. այլ եցէ ինձ ծանրագին՝ զոր չարժիցեն հաճոյք քո և փրկութիւն իմ: Երանութիւնն հաճոյ լինելոյ քեզ, և խաղաղութիւն խղճի մտաց, հաստուսցեն ինձ լիսւսլ զիւրմէ ամենայնի, Աստուած իմ, և ուրախ եղիցի՝ի քեզ:

Ցաղագս գայթակղութեան եւ չար օրինակի

ՄԱՍՆ Ա.

Թէպէտ և ընդհանուր Աստուածոյ ազատաք իցեմք ի կրօնիս յաղեռնաւոր հարիւ անտի՝ զոր Փրկիչն մեր ասէ «Չարիք է գալ գայթակղութեան», և չիցեն առ մեզ ժայռքն այնոքիկ՝ որք ի ծով աշխարհի գտանին յաձախ, յորս նաւաբեկին հոգիք բազումք, սակայն և ի կրօնի և ի մեհենատան ոչ սակաւ զեանք հոգեւոց գործին չար օրինակք, եթէ գայթակղութիւնս և զսոսա օրէն եկեալ կոչել: Եւ այնու իսկ զի այսոքիկ ոչ որպէս զաշխարհականացն գայթակղութիւնս արհաւրաց են արարողք, և այնու իսկ գարձեալ՝ զի կարևորագոյն կացորդութիւն կրօնակից եղբարց ընդ երեսս առաւել գիւրաթափոխիկ առնէ զօրինակս չարեաց, պատեհագոյն զգուշանալ մեզ պէտք են: Արդ խորհեսցուք յանձինս մեր՝ արդեօք մինչև ցայժմ զգուշացեալք եցեմք յայսմ ըստ բաւականին. արդեօք չիցեմք արարեալ կամ խօսեցեալ ինչ ընդդէմ սուրբ և լուսոյ. արդեօք չիցէ մեր տուեալ խորհուրդս ումեք ոչ համաձայնս կրօնաւորական կառուցուածոյ, կամ օրինակս ոչ յորդորիչս յուրացութիւն անձին կամաց կամ զանձինն ինչ ինդրելոյ: Արդեօք չիցէ մեր տրանջեալ երբեք զանհաճոյից, կամ թերացեալ ի համակրութենէ ընդ կամացն Աստուածոյ. արդեօք չիցէ զկծեցուցեալ զոք բանիւ կամ գործով, և կամ զվաստակս այլոց յաւելեալ՝ ինդրելով զհանգիստ մեր: Արդեօք չիցէ յաձախ զանց զկարգս արարեալ, և այլոց պատճառս տուեալ զնոյն առնելոյ: Եւ համանգամայն իսկ ասել՝ արդեօք չիցէ օգնեալ անհրաժեշտ թուլութեանց ինչ վաղգոյն սպրդելոյ ի ներքս: Այս ամենայն գայթակղութիւնք՝ են ի կրօնի խոչք և խութք կրօնաւորական կառուցուածոյ, զորս տուեալ է մեր՝ թերևս առանց իսկ խորհելոյ խոսեալ զնոսա. արդեօք չխորհելս մեր այս կամ անգիտանալս իցէ առաջի Աստուածոյ լեալ անսգամանելի. «Ի գաղանեաց իմոց սուրբ առ ինձ, տէր, և յօտարէն՝ այսինքն որով զեղբայրն իմ գայթակղեցուցի՝ պահեա զծառայս քո»:

ՄԱՍՆ Բ

Հասարակաց է պատուէրն տէրունական. «Այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինսն է»: Ոչ զոք սգսատ առնէ Փրկիչն մեր ի պարտուցս ընդ հակառակն գայթակղեցուսցէ զմի ոք ի փոքրկանց անտի յինքն հաւատացելոց, վայ ասէ մարդոյն այնմիկ, և լաւագոյն համարի նմա երկան իշոյ ընդ պարանոց իւր կապեալ՝ ընկղմել ի խորս ծովու: Վայ ուրեմն ինձ, եթէ փոխանակ ծագելոյ ի կրօնի երբեք զոյս, օգնելոյ այլոց օրինակաւս իմով ի կառուցուածսն և ի կանոնապահութիւնս, խափան լինիմ նոցա և օրինակ չար. և այնու իսկ զի վարկ բարի թերևս բերեն զինեն կրօնակից եղբարք իմ, առաւելապէս զի աղդէ ի նոսա օրինակ իմ, թուլութիւն ի ներքս մտանէ, քակտին ցանկք կրօնիս, մեղկին տակաւ հրահանգք, և կարգք և կանոնք եղծա-

նին: Ո՛չ ապաքէն այսու օրինակաւ Թուլացեալ կործանեցան բազումք ի սրբոց միաբանուածոց. ապա ուրեմն պատճառ լինին կողմանէ Թէհանց. ապա ուրեմն պատճառ լինին կողմանէ տամ կործանելոյ կրօնիս, և զլայն ակնարկանս յանձն իմ ձգեմ:

Բայց Թէպէտ և չձգիցին չարիքն ցայնվայր, սակայն գոնիցին տկարք ոմանք և գիւրաւ գայթագիւղանս իմ, զորս անշուշտ օրինակն իմ առեալ ձգեսցէ զկեա: Ապա ուրեմն վայ ինձ գարձեալ, զի լինին պահանջեսցի համար տկար եղբօրն գԹէլոյ. եղո՛ւկ լինէ, որ փորձովս և հաստակաւ պարտին օրինակ բարի կրտսերագունից ընծայել, և ընդ հակառակն՝ լինէ Թերևս սկսանին Թուլութիւնք լինչ և արատունութիւնք և անօրինութիւնք կարգաց և կանոնաց սպրդեալ մտանել, որոց դիւր և հանգիստ՝ քան Թէ հարկ ճշմարիտ առաւելապէս լինին պատճառք: Զինչ պատասխանի կարեցեմ տալ Աստուծոյ, յորժամ համարս լինին պահանջիցէ զկեանացս Թուլութեանցս այսոցիկ. Թերևս պատճառք որ չինն պատրեն՝ պատրեսցեն և զնեծատորս առ ի գԹալ չիս. այլ արդարադատն Աստուած ոչ պատրի պատճառանօք:

ՄԱՍՆ Գ.

Որպէս գոյ ի կրօնի տալ գայթակղութիւն, այսպէս գոյ և առնուլ. աւաղելի մին և միւսն, զի ոչ արգարացուցանիցէ զմեզ առաջի Աստուծոյ օրինակն այլոց, Թէպէտ և լինի առնիթ յանցանաց մերոց: Ապա ուրեմն չէ բաւական զի ջանայեմք չտալոյ գայթակղութիւն, այլ պարտ է մեզ զգուշանալ և ի խոտորելոյ կեանց չար օրինակի: Պարտ է մեզ հեծել և հառաչել ընդ այն, այլ ոչ աղմկիլ և խռովիլ կամ դրդուիլ յիւրմէ կիւղածութենէ: Պարտ է մանաւանդ յօգուտ ընտրելոց ի վար արկանել ի փորձ հաստատմանց Թէանաս մերոյ առ Աստուած. զամենայն մարդկային նկատմունս և ակնածութիւնս առ ոտն կոխելով, եթէ ոչ եԹէ արհամարհելով զերջայնոյն, այլ գԹալով ի նա, և ջանալով լինել զնա՝ փոխանակ մեր ենքնին խոտորելոյ զկեա նորա առ ականէ: Եւ միանգամայն ասել՝ պարտ է մեզ խոհական նախանձու զդեմ ունել եղծման կանոնաց, և արիաբար պինդ կալ ի նոսին. որպէս զի եԹէ պատահէր և այ, զոր Տէր մի արասցէ, եղծանել ի սպառ կարգաց և կանոնաց, սակայն պարտ էր մեզ ոչ միայն չհամարել զանձինս ազատ, և կամ Թուլանալ, այլ զամենայն հնարս ի մէնջ կուսէ հնարել ի նորոգութիւն նոցին, խնարհելով առաջի Աստուծոյ և գոհանալով զնմանէ, զի ի ձեռն կանոնապահութեանս մերոյ կամիցի Թերևս խրատակարկառ առնել զցանկ այլոց Դոյ իւրոյ:

ՍՂՕԹՔ

Քանի ողորմելի եմք, Տէր, զի հեռացեալք յաչխարհէ և ի ծածկոյթ խորանի քո պատրեալք, տակաւին չգիտանիմք զերծք ի սպառ յորոգայԹից: Մեր են յանցանք և ոչ հրեշտակաց կրօն կարգիս ի քէն հաստատելոյ. մեր են յանցանք՝ զի ոչ ըստ սրբութեան կարգաց սորա կենցաղավարիմք: Ապա այժմիկն, կամ մանաւանդ օգնեա զի կարասցուք առնել մեզէն, զոր ի յետնում առուր տալոց ես հրաման հրեշտակաց քոց՝ բառնալ յարքայութենէ քումէ զամենայն գայթակղութիւնս: Արքայութիւն քո յերկրի առաւելապէս ի սուրբ միաբանութիւնս յայտնի է. ասա ամենայն ինչ աստուածահաճոյ,

ամենայն կարդք և կանոնք ՚ի քէն ազդեցեալք են. տուր մեզ հպատակել այնոցիկ, զայնոսիկ ևեթ ունել մեզ օրինակ, և մի զնոսաորեալս երբեք յայնցանէ: Եւ եթէ գուցեն երբեք պնդել սիք, զարձո և զնոսին ՚ի սէր քոյդ սահմանադրութեանդ: Մի՛ լեցի մեզ յառաւելապոյն դատապարտութիւն՝ պատասխանելս մեր ընդ կանոնօքս այսոքիւք, առլով կամ առնլով օրինակս անպահպանութեան նոցին. այլ զամենեսեան զմեզ արա արժանի նովին կանոնիւս կենցաղավարեալ՝ երբ ամենք երկնընթացք օգնական լինել իրերայ, և խրախուսեալ զիրեարս օրինակաւ, ՚ի ձգել զակօսն առաքինութեան ընդհօք-քովք մինչև ՚ի սպառ:

Ցաղագս մտաւորական աղօթից

ՄԱՍՆ Ա.

« Արդարն ՚ի հաւատոց կեցցէ ». ապա և մեզ չէ մարթ սրբել զանձինս մեր և արդարանալ, քայց մեանալք վարդապետութեամբք Աւետարանին և հաստատեալք ՚ի կարևոր ճշմարտութիւնս քրիստոսական հաւատոցս: Եւ է այս վարդապետութիւն ընկալեալ ՚ի նոցին խոկմամբ հարհայնոց, և վկայեալ ևս՝ ղի այլազգ յոյժ վարիչն կեանս, և չլինելին անճնատուրք ախտից, եթէ ամրապինդք էին ՚ի հաւատս, կամ քաջ խելամուտք վարդապետութեանց հաւատոցն իւրեանց: Խորամուխ լեցուք ՚ի քննութիւն իրացս, և տեսանեմք զի որինչ զեղծմունք են յաշխարհիկս և թուղութիւնք ՚ի կրօնաւորս, համայն ՚ի նուաղութենէ հաւատոցն է, այն է՝ ջերմ և կենդանի հաւատոց: Իբր ոչ եթէ ՚ի սպառ վերջացեալք եցէն ՚ի հաւատոց, այլ զի պակասէ ՚ի նոսա հաւանութիւնն այն մտաց և պայծառ տեսութիւն, որով յափշտակեալք՝ զնմանալսն որպէս զչալիս տեսանեն ակնեբև:

Եւ այս ահա յաջողեսցի մեզ մտաւորական աղօթիւք՝ յեղեղելով առեպ ՚ի միտս մեր զշնորհս մարտութիւնս հաւատոց, խոկալով ՚ի նոսին և ընդ միտ ածելով զմեծութիւնն Աստուծոյ և զկատարելութիւնս նորա, զողորմութիւն և զարդարութիւն, զվարձատրեչն և զպատուհասեչ. զիորհուրդս տնօրինութեանն Յիսուսի մեսեչ. զիորհուրդս տնօրինութեանն նորա և ըստ միոչէ, զվարդապետութիւնս նորա և ըզվարս, և քաղելով մեզ յայնցանէ խրատս օգտակարս յուղղութիւն վարուց մերոց: Այս ամե-

նայն տեսութիւնք խորագոյնս տպաւորեալք ՚ի միտս մեր՝ ամենայն ուրեք և յամենայն պէտս առընթեր կացցեն մեզ պատրաստաբէ: Նոքօք ուսանիմք զպարտս մեր որ առ Աստուած, առ ընկերս և առ անձինս մեր. նոքօք վերամբառնամք ՚ի բարձրագունեցին տեսութիւն, ՚ի միտ առնումք զպատրանս մեր, զսխալանս և զվրիպակ դատաստան, և զոր ՚ի սկզբանէ ընդ աղօտ լեթէ տեսանէաք՝ գարձադարձ խոկմամբ ՚ի նոսին՝ լուսաւորեալ տակաւ ՚ի միտս մեր, և Թուխք ակն յայտնի տեսանել զճշմարտութիւնս:

Եւ ոչ այսչափ միայն. այլ քանզի նեբքին իմն և անձուկ կցորդութիւն է մտաց ընդ սրտի, ձշմարտութիւնքն այնոքիկ ՚ի միոյ ՚ի միւսն հաղորդեալք, վառի և սիրան՝ քան առելոյ սաղմոսերգուին. « Հնուր ՚ի խորհուրդս իմ վառեցաւ ». որով վերբերի մարդ առ Աստուած, քաղցրանան նմա պարտք իւր, ամաչէ ընդ մեղս իւր, ամրանդի զօրութեամբ և ելանէ յաղօթիցն նորոգեալ հոգւով և այլափոխեալ ամենևին:

Ընդ այս ձանապարհ ժամանեցին սուրբք յայն բարձրագունկատար սրբութեան, և զնոյն ցուցին աշակերտելոցն իւրեանց և որոց անձկալինն ժամանել ՚ի սրբութիւն: Սորին ազագաւ և առաքինին հնութեամբ կրօնաւորական կարգաց առանձին ինամով սահմանեցին և պատուիրեցին զհրահանգս մտաւորական աղօթից: Յայլում ամենայնի զանազանեալք յիրերաց ըստ տեսութեան, և այլազգաբար ներընկալեալք ՚ի հոգւոյն ՚ի յօրինել զայս գեղեցիկ և զբաւնչելի զանազանութեան կարգաց և կանոնաց որով վայելչապէս յոյժ զարգարեալ է եկեղեցի, այլ ՚ի ձաշակումն հարկի մտաւորական աղօթից՝ հասանել չկարէաք գոյն ամենեքեան:

Եւ յիրաւի. զի որ հանապազորդ անդուլ

լութեամբ ՚ի մտաւորական աղօթս որպէս պարտն է, դժուարաւ յոյժ թէ կործանեսցի. զի թէ և թոյլատուութեամբն Աստուծոյ դէպ լինի նմա անկանիլ և թերանալ ՚ի պարտուցն, զօրացն վիշն պատրաստ կացցեն նմա ՚ի զգաստութիւն մտաւորական աղօթք: Եւ զինչ պատճառք զերծանելոյ և ապականելոյ այնքանոյ բազմութեան հաւատացելոց, և և կրօնաւորաց, բայց զի առպատ առնեն զմտաւորական աղօթսն, որով հեռանան Աստուծոյ և կորուսանեն զհոգին բարեպաշտութեան, անկանին տակաւ ՚ի թուլութիւն և ՚ի դաղջութիւն օրհասաբեր, զրկին ՚ի ձշմարիտ մխիթարութենէ անտի հոգւոյ, և ինքեանք ինքեանց լինին գժպհի, և անձնատուրք ՚ի գերութիւն ախտից իւրեանց՝ նշաւակք կան ամենայն յարձակմանց թշնամւոյն, որոյ աղետաւլի կատարած շատ իսկ ցուցեալ է և վկայեալ ՚ի փորձոյ:

ՄԱՍՆ Բ

Զի օգտակար լեցին մեզ մտաւորական աղօթք՝ հարկ է մեզ զգուշանալ ՚ի թերութեանց անտի որք յաձախ անպատուղ առնեն զայն: Որոց նախկին և գլխաւոր այն է՝ զի ոչ որպէս պարտն է պատրաստութեամբ մտանիմք ՚ի նոյն՝ մտաց ցեալ զհոգեշունչ պատգամն թէ « Մինչեւ յաղօթս կացեալ՝ պատրաստեա զանձն քո, և մի լինիր իբրև զմարդ որ փորձիցէ զաեր »: Զի եթէ անպատրաստք և առանց եռանդան կացեալք յաղօթս և անկ ունիցիմք տեսան ընդ մեզ խոսելոյ, այնպէս իցէ այն, որպէս թէ խնդրել ՚ի նմանէ զի փոխեսցէ զկարգ տեսչութեան իւրոյ և հրաշագործեսցէ առ մեզ:

Պարտ է մեզ ապա ամիսոիմամբ մտաց և

անդրադառնալ խորհրդովք պատրաստել զանձինս ՚ի նոյն, և մինչև մատուցանել ՚ի խոհուժն՝ ընտրել զոր խոհալոյն եմք, և կարգել զայն ՚ի մատունս, և խնդրել զնորհս և զօգնականութիւն Հոգւոյն սրբոյ հակիրճ աղօթիւք:

Պարտ է զի եռանդեամբ մասիցուք ՚ի նոյն և ցանկութեամբ օգտելոյ նովաւ: Զինչ օգուտ եցէ ՚ի համախմբելոյ ընդ եղբարս, ՚ի կալոյ առ ընթերնոցա մարմնով՝ քան թէ հոգւով՝ և սահմանեալ ժամուն, ՚ի հարևանցի ինչ խոհմանց և ՚ի նեղդործութեանց որք ոչ այլ ինչ յանգին բայց ՚ի խաբել զանձինս թէ արարաք զամենայն: Իմատուածին երկնային որ սրբէն զմեզ « Երևի սիրոզայ իւրոց և գտանի խնդրողաց իւրոց»:

Պարտ է զի մի իսկ և իսկ ՚ի բարձրագոյն և ՚ի նուրբ տեսութիւնս թեականխոհեմութեամբ, այլ յանհաւորան մեզ և ՚ի կարևոր խոհմունս զկայ առեալ փոյթ կալցուք ՚ի համոզել և ՚ի յայտնահարել զմիտս մեր, և առաւել ևս ՚ի շարժել զսիրտս և ՚ի յորդորել զհամ մեր. զի թէպէտ և մտաց իսկ համոզումն կարևոր է, այլ կարևորագոյն և յորդորումն կամացն, որ ընտրյն աէրն է և հրամանատու ՚ի գործ:

Պարտ է զի և ՚ի գաւառն անդ և յընտրութեան դժուարանայցեմք ՚ի բազմամասնագ վերնայ կէն հանրաբար և ՚ի վերացեալն գաւառէդ զընդհանրացեալ. այլ մանաւանդ՝ առ մեզ և մարմնոյ թեանց. այլ մանաւանդ՝ առ մեզ և ըստ հանգամանաց և ըստ պէտոյից անձանց մերոց, յորս թէ խորամուխ լինիցեմք, ոչ իսկ և իսկ սպառեսցին մեզ երբ ՚ի խոհալ, այլ ասպա րէզ լայնածաւալ բացցի առաջի մեր ՚ի մտածմունս թեան իւրաքանչիւր:

Հուսկ ապա զգուշանալ պարտ է մեզ և ՚ի վնասակար թերութենէ անտի, որ մեծապէս արգելու և խափանէ զարգասիս աղօթից, այն

ինքն է հեղգութիւնն ընդակիայ բնութեանս, յորմէ տիրացեալ՝ անփոյթ լինիմք նուաճել զայն: Ի հալ յաղօթս՝ մտադրութեան մեզ պէտք են, և զի գժպհի է մեզ այն և յաւելուածութիւն, յայն սակս հնարիմք խուսափել, և ցանկամբ անաշխատ և առանց բուռն առնելոյ անձին՝ առաքինանալ, եռանդնոտ լինել, սթափիլ ՚ի թմբրութենէ և ՚ի թուլութենէ յոր անկեալն եմք: Նահապետն Յակոբ զիջեալն ՚ի գլուխ բռնամարտեալ ընդ հրեշտակին, ապա թէ օրհնեցաւ ՚ի նմանէ. և մեք հեզութեամբ և համաւոր թուլութեամբ կացեալ յաղօթս, զիարդ օրհնութեան ՚ի տեառնէ առնեցիմք:

ՄԱՍՆ Գ

Առ ՚ի խոյս տալ ՚ի մտաւորական աղօթից, են որք զյաճախութիւն գործոց իւրեանց պատճառեն՝ որով պակասէ նոցա ժամանակ յաղօթս պարապելոյ. այլք զբուռն և զանզուսպ ցնդումն մտաց զոր չկարեն նուաճել. կէսք զգաղջութիւն և զյամաքութիւն մտաց, և այլք զձանձրութիւն և զտաղտուկ յաղօթից: Հուսկ ապա են՝ որոց մեծ ինչ և գժուարին թուին աղօթք, և համարին զանձինս անկարողս յաղօթել: Ա.յս պատճառանք յառաջ բերեալք յաչխարհայնոց, և ուրեք զի և ՚ի կրօնաւորս լինին լսելի: Սակայն եթէ ճշմարտասէրք են և ոչ անձնախաբք, չիցէ նոցա գժուարին ՚ի միտ առնուլ զի զուր պատճառանք են համայն՝ որովք համարին ազատս գոլ յաղօթից:

Քանզի նախ՝ առ յաճախութեան գործոց ոչ եթէ խափանէս ազատ լինիմք յաղօթելոյ, այլ մանաւանդ առաւելագոյն հարկ ստիպեսցէ

զմեզ ներանձնանալ երբեմն, և զաղօթս որպէս նախահօգակ զգուշութիւն ՚ի վար արկանել ընդդէմ ցնդման մտաց, որ յառաւելութենէ գործոց պատճառի յաճախ: Սուրբքն որչափ առաւել բազմազբաղ էին ՚ի գործս իսկ հոգևորականս, նոյնչափ առաւել հարկ համարէին յաճախել յաղօթս, առ որ գոնեէին իսկ ժամանակ. և մեզ ընդէրք կայ չգոնանել:

Երկրորդ՝ որչափ անզուսպ և զբաղեալ կացեն միաք, սակայն կարեն խոհալ ինչ երբեմն: Ոչ ապաքէն զնոյն առնեն յաճախ յիւրս անօգուտս և ՚ի վնասակարս, և ընդէրք ՚ի կարևորսն կացեն անկարող: Իցեն այո՝ որք առաւելագոյն քան զայլս կրեսցեն աշխատութիւն առ այն. այլ ասա է զի մի խուսեսցեն յաշխատութենէ, և խուն ինչ բուռն արասցեն անձանց իւրեանց: Դարձեալ՝ ոչ անօգուտ ինչ են աղօթք, թէպէտ և ցնդմամբ մտաց արարեալք. չատ է զի մի կամաւորապէս կացէ ցնդումն և քանայցեմք միշտ ամփոփել զմիտս: Ֆանզի ձիգն մեր այն՝ կացէ մեզ Յարդիւնս առաջի Աստուծոյ, և հետք լիցի ճըշմարտութենանցն յորոց ՚ի խոհումն աշխատ եղեալք՝ ճեսցեն միշտ ՚ի միտս մեր:

Զնոյն է ասել և զգաղջութենէ սրտի և զցամաքութենէ մտաց. մեք որ ինչ ՚ի մեզն է արարեալ, զիեացեալն յԱստուած արասցուք ապաստան: Ա,յդուիկ փորձէ նա զհաստատմութիւնս մեր և զհաստատութիւն. եթէ սարտուցեալ ընկրկիցեմք, կորուսանեմք զամենայն. իսկ եթէ հանապազորդեսցուք յաղօթս մեր, գիտէ նա զժամ և զժամանակ այց առնելոյ մեզ և փոխարինելոյ ինաստն: Ապա ՚ի նա թողեալ զայն՝ մեք խնամարհեցուսցուք զանձինս մեր առաջի նորա, նմանեալք սրբոց միայնակեցին այնորիկ, որոց աղօթք և մրմունջք հանապազորդք այս

էին. « Որ սահմծէրդ զիս՝ ողորմեա ինձ »: Եւ չկայ այն ընդունայն կորուսա ժամանակի, քանզի ցոյց լինի և աստուածահաճոյ մեռելութեան և հոգւոյ ապաշխարութեան՝ մտադիւր տակաւ ձանձրութեանն և տաղտկութեան զոր զգամք յաղօթս: Յիսուս՚ի չարչարանաց դիշերին լքեալ և վհատեալ՝ թէպէտ ոչ յօժարաբար, այլ աղօթէր. նմին և մեք լինցուք նմանողք. և աղօթք մեր՝ թէպէտ և ոչ յայլ ինչ, այլ կացեն օգտակարք ՚ի կրթել զմեզ ՚ի համբերութիւն և յառաքինութիւն:

Հուսկ ապա չէ պարտ այնպէս բարձրագոյն ինչ և ամենակատար համարել զաղօթս, մինչև վհատել մեզ ՚ի ժամանելոյ յայն բարձրութիւն: Ամենեցուն մարթ է աղօթել, և գիտութիւն մարդկային սակաւ յոյժ նպաստէ առ այն. և ոչ չատախօսութեան ինչ պէտք են յաղօթէնն, զի միով ևեթ սովորական մտածութեամբ մարթ է յոյժ պարզամիտ առն մերձենալ առ Աստուած և միանալ ընդ նմա խանդաղատ հոգւով. և ամենայն յարգ աղօթից և պատուականութիւն՝ է ՚ի միաւորութեանն յայնմիկ. առ որ յօժարութիւն կամոյ պահանջի միայն. բերցուք զայն յանձին, և այլն ամենայն յաջողեսցի մեզ:

ՕՐ ԵՐՐՈՐԴ

Յաղագս գաղջութեան
՚ի ծառայութեանն Աստուծոյ

ՄԱՍՆ Ա.

Սուրբն Բեռնարդոս սուղ բանիւք ճարտար
Հիւսիսակ զնկարագիր գաղջ կրօնաւորի. «Զի՛ք,
ասէ, ընկերութիւն կրօնաւորական յորում չի-
ցեն գաղջացեալք, որք գժկամակութեամբ բառ-
նան զլուծն կրօնաւորական, և որչափ ՚ի կարի
իւրեանց է, հնարին թօթափել և կամթեթևա-
ցուցանել զայն. որք անդուլ մորակի են կարօտք
և խթանի յուղղութիւն. զբօսասէրք են և ընկ-
ճին ՚ի ախորժութենէ, զիրք նոցա վաղանցուկ է և
առժամանակեայ, զոյգք նոցա աշխարհայինք
և խորհուրդք նոցա համայն մարմնականք և
ընչաւորք: Զանձանց ևւեթ խորհին, և զգիւր և
զհաճոյս ինդրեն յամենայնի: Հնազանդին՝ այլ
ոչ առաքինաբար, աղօթեն՝ այլ առանց մոա-
դրութեան, խօսին անզգոյշս, և ընթեռնուն
առանց ինչ օգտի և ուղղութեան»: Նկարագիրս՝
արարեալ ՚ի սրբոյ վարդապետէն՝ չիցէ արդեօք
իմ նկարագիրս. գոնեա պարա է ինձ մանր զննել
զայն և տեսանել թէ չգուցե՛ն չիս տիպք ինչ
նմանութեան նկարագրին:

Մեծագոյն վտանգ գաղջութեան յայտմէ՛ն, զի
ախտացեալքն նովաւ՝ չզգան այնմ, և չհամարին
զանձինս ծանուցանս ինչ յանցուցեալ. քանզի

Հայն 'ի մեղն զոր գործեն, և ոչ 'ի բարիսն զոր պարտին առնել և ոչ արարին, այլ հայհոյութեամբ 'ի մեղն զոր չեն արարեալ, և 'ի սակաւ բարիսն զոր առնեն: Եւ փոխանակ համեմատելոյ զնեքեանս ընդ կրծնակից իւրեանց առաւելեալս եռանդեամբ և ուղղութեամբ, համեմատեն ընդ այնոսիկ որք յետ նեալք են և վերջացեալք յայնցանէ. և համեմատութեամբն այնուհետև պատրեալք և անգործութեամբ՝ ասեն համարձակ ըստ փարիսեցւոյն. Ջեմ իբրև զայս որ համ զայն՝ յայս ինչ կամ յայն յանցուցեալ. և թէպէտ հեղգ և ծոյլ 'ի ծառայութեան Աստուծոյ, սակայն վկայութիւն բան ըի տան զանձանց՝ որպէս թէ ընուցուն զամենայն արդարութիւն:

Պայման ազեսալի, առ որով՝ ազետագոյնն ըստ գրոյ պայման մեղաւորին՝ ընտրելագոյն արդ գեօք համարեսցի այնու՝ զի ախտացելութեամբ յայնոսիկ ծանր մեղօք, բազում այն է զի գիւրագոյն յաջողէ բժշկութիւն, քան գաղջացելութեամբ և հեղգացելութեամբ: Քանզի որ ծանուցանէ՝ 'ի խղճէ մտացն ամենեքեան հանապազ օր և 'ի ծանրութենէ մեղացն զարհուրեալ և նկուն լեալ, սակայն 'ի զեղջ և 'ի գարշ, ուր գաղջացեալն ոչ ինչ ամենևին խղճէ ընդ գաղջութիւն իւր: Նմին երկ և գժուարագոյն է վերանորոգութիւն նորին քան զառաջելոյն 'ի մեծամեծս: Եւ զիա՞րդ չզարհուրիցեմ ես 'ի ձմարտութենէ ասել:

Այլ այնու ևս ազեսալի է գաղջութիւն՝ զի ծանրացուցանէ մեզ զնեռն լուծն Յիսուսի զոր հոգի եռանդնոտ բարձեալ տանի խայտալով. իբր զի օծութեամբ ներհոգ հոգւոյն քաղցրանայ նմա ամենայն, ուր ընդ հակառակն՝ գաղջացելութիւն ծանրանայ և լինի անբերելի: Եւ այն իսկ է յայտնագոյն պատուհաս 'ի տեառնէ, որով ասէն իսկ պատուհասել զգաղջացեալն՝ նովին իսկ գաղջութեամբ իւրով: Եւ ոչ այսչափ միայն, այլ և որպէս ինքն Աստուած վկայէ, զղջանայ և նովին այնպիսի ածէ նմա գաղջացեալն՝ մինչև փսխել զնա 'ի բերանոյ իւրմէ, զոր և լսել իսկ սոսկալի է: Իբր ոչ եթէ գաղջացեալն անդէն 'ի սկզբանն անարգի Աստուածոյ, այլ զի առ սակաւ սակաւ այնչափ օտարանայ 'ի նմանէ, մինչև փսխեսցի: Այսպէս գաղջութիւն սկիզբն է և նշանակ անարգութեան Աստուածոյ, և չիցէ ինձ այս բառական 'ի զգաստանալ. կացից՞ ուրացից 'ի նմին՝ մինչև 'ի սպառ մերժեցայց յերեսաց Աստուծոյ:

ՄԱՍՆ Բ

Եթէ և զպատճառս ազետալի ախտիս այսորիկ գաղջութեան հետազօտել կամիցեմ, յիս ինքն խնդրել պարտիմ զայն: Քանզի չէ մարթ գաղջութեան մուտ ունել յիս և զօրանալ, եթէ ոչ կամաւոր թոյլտուութեամբս ինձ: Պարտ է ինձ ապա անձին լինել մեղադիր. և մի ծայրագեղ անզգամութեամբ համարել զայն Աստուծոյ: Է երբեք արդարև ոք և սրբոց իւրոց տայ Աստուած սիրա խիստ և ցամաքեալ, բայց խստութեամբն այնուհիկ կամի սրբել զնոսա և մաքրել և զբնկեալ յամենայն զպչական մեղեաց իւրեանց՝ ևս քան զևս ձգել զնոսա 'ի սէր իւր: Այսր ազագաւ չէ պարտ զխստութիւն զայն սրտի չվհատիլ ընդ գաղջութեան: Հոգի սուրբ և ջերմեռանդն հեծէծ ընդ խստութիւն սրտի իւրոյ. իսկ հեղգն և գաղջ ոչ ինչ հոգայ ընդ թուլութիւն իւր. նա ակամայ կրճ զայն առանց ինչ իւրոց յանցանաց, սա ախորժի ընդ

Թշուառութիւն իւր որում ինքն է մեղապարտ:

Վասն որի մին ՚ի պատճառաց դաղջութեան է Թողուչն վայրապար զսովորական գործս բարեպաշտութեան, ջնոգևորական ընթերցմունս, ջաղօրդելն սաեպ, զպատարագել, զքնութիւն խղճի, զգործս ապաշխարութեան և մեռելութեան: Իսկզն ինչ գործ, գոյզն զբաղուհին բաւականք են նմա ՚ի լքանել զայնոսիկ, կամ դէթ յընդհատել և յետս Թողուլ՝ այն ինքն է ՚ի սպառ Թողուլ: Քանիցս դիպեցաւ այդ և ինձ, քանիցս Թողն զԱստուած վասն աշխարհի, քանիցս վասն չնչին պատճառաց, և բազումք այն է նիցս վասն չնչին պատճառաց, և բազումք այն է զի և անպատճառ իսկ Թողն զնոգևորական կըրօնս Թուրքիւնս: Ջի՞նչ զարմանք եցեն ուրեմն Թէ դաղջացեալ եցեմ. և զնմիդ մարթ էր ինձ չդաղջանալ:

Բայց ոչ միանգամայն Թողումք համօրէն զնոգեւորական կրօնութիւնսն, այլ սկսանիմք նախ Թուլըութեամբ և վերջ ՚ի վերոյ կատարել զայնոսիկ. և այս ահա այլ պատճառք են դաղջութեանս մերոյ: Կեամք իբրև զայլս յերկուրեքն, և կատարեմք զամենայն կարգս կրօնին, բայց ոչ հոգւով և ոչ եռանդեամբ սրտի, այլ զբաղեալ մտօք ՚ի խորհուրդս օտարոտիս և գրաւեալք ՚ի նոցունց ըստ հանապազորդ սովորութեանս մերում: Եւ իբր հնար եցէ ՚ի յոդս այնքանեաց խառն ՚ի խուռն խորհրդոց վառ և անչէջ ուղղել զեռանդն և չթողուանալ ՚ի չանիցն առ կատարելութիւն, և ըստ չկիանելոյ եռանդանն՝ տարեկութիւն, և ըստ չկիանելոյ եռանդանն՝ չանկանել տակաւ ՚ի դաղջութիւն: Քաղաձայն է ինձ ձշմարտութիւնս և ՚ի փորձոյ անձինս հաւաստեալ:

Բայց և ոչ այս սկիզբն է և աղբերակն չարեաց դաղջութեան. յառաջագոյն ևս յայտնի բանիւ առնու զիւր սկիզբն: Քանզի սկիզբն

պատճառք դաղջութեան՝ Թէպէտ և հեռաւոր, է փոքունցն արհամարհութիւն: Անտի սկիզբն է սպասկանութեանն և սղխից. զի փոխանակ յուշ ածելոյ Թէ չինչ փոքր յորս ՚ի փառս Աստուծոյ և յարժանաւոր պաշտօն նորին են կարգեալ, զի մեծ ինչ է և ՚ի փոքունս գոլ հաւատարիմ, և զի մեծամեծք ՚ի փոքունց առնուն զօրութիւն և հաստատութիւն. փոխանակ, ասեմ, զայսոսիկ յուշ ածելոյ, Թողու լքանել գաղջացեալն զփոքունցն պահպանութիւն՝ որպէս համբակաց ՚ի ձահ, և սպասել արարեալ զայնոսիկ՝ ոսն առ ոսն յատակէ և հաստանէ մինչ ՚ի ծայր գաղջութեան և Թուլութեան: Ո՛հ, եԹէ անդամն յաւուրց մանկութեան իմոյ և նուիրելոյ Աստուծոյ զանձն իմ՝ զգուշացեալ էի միշտ ՚ի մանուանց Թերութեանց, և յանհաւատարմութենէ ՚ի փոքունս, որչափ յառաջադէմ լեալ էր իմ արդ: Այլ արդ, աւաղ, զի ոչ միայն չգտանիմ յառաջացեալ, այլ մեծ ինչ է՝ եԹէ եցեմ իսկ որ ինչ էին երբեմն յաւուրս նորընծայութեան իմոյ և փորձութեան:

ՄԱՍՆ Գ

Սակայն և ոչ ՚ի սպառ անդարմանելի է գաղջութիւն. է արդարև սխալ գժուարաբուժելի, բայց օգնականութեամբն Աստուծոյ չիցէ ՚ի սպառ ապստամբ ՚ի հնարից: Սակաւք գոն այս առողջացեալք յախտէս, բայց գոն. և Աստուծոյ կամք այս են՝ լինել և ինձ մի ՚ի նոցանէ. և յայդ իսկ կոչեաց զիս ՚ի կրԹութիւնս յայս: Եւ ո՞րք եցեն գարմանքն զորս պարտ է ինձ ՚ի վար արկանել:

Խոկալ նախ զմեծութիւնն Աստուծոյ և Թէ զի՞նչ է նա իմ, և զի՞նչ ես նորա: Նա աէր է իմ,

արարիչ և դատաւոր, զնմանէդ ապա պարտ է ինձ պաշտել զնա. եւ ես հպատակ իմ Տեառն, Ծառայ և արարած, ապա զոր պաշտօն պահանջէ նա յինէն: Այսու և առաքեալն Պօղոս յեռանդն ածէր զնախկին հաւատացեալսն ասելով. «Գնալ ձեզ արժանի տեառն ... յամենայն գործս բարեաց»: Կանոն գիւղեցիկ, սպեղանի ազգոյ և զօրաւոր ի գարման գաղջութեան՝ խորհել, խօսել, գործել, աղօթել և կեալ միշտ ըստ արժանի տեառն: Եւ զի օրինակ աշխարհի ի խրատ է ինձ և ի գաս հանապազորդեան, չամաչեմ զի իշխանք աշխարհն այնչափ և այնպէս պաշտին ի խուռն բազմութենէ շահասէր և օգտաբաւ մարդկան, և ես այսչափ հեզդ, գաղջ և ցուրտ գտանիմ ի ծառայութեան տեառն իմոյ և արարչի և Թագաւորի:

Խոհալ գարձեալ Թէ որչափ մեծ և կարեւոր են ամենայն գործք իմ կրօնականք զորս գործեմ, և որոյ անկշռա բարեայց լիցին ինձ պատճառք: Գործս զոր առնեմ կամ զորմէ բուռն հարկանեմ՝ է գործ Աստուծոյ. որչափ առաւել սրբութեամբ արարից զայն, նոյնչափ առաւել տացին ինձ և յաւելցին արիւնքը, և մարթ է ինձ պատրաստել նովաւ վառս յաւիտենական: Սոքիմքք և պլովք այնպիսեօք հապազորդ խոհմամբք վառեալ բորբոքեն զինքեանս յեռանդն՝ աստուածասէր կրօնակիցքն իմ և ուխտակիցք, զորոց զվարան լսեմ ցարդ և զորս պարտ է ինձ առնուլ յօրինակ:

Է և այլ գարման գործնական ազդուագոյն և հզօր ի սեմափել զիմմրութիւն գաղջութեան. այն է՝ ներհակ կրթութեամբք բառնալ զպատճառս գաղջութեանն. զի ներհակք ներհականաց բժշկին. զոր օրինակ՝ բուռն հարկանել վերատին ի կատարումն կրթութեանցն զորովք զանց ա-

րարեալ և առաժեցայ, հակել անդուլութեամբ ի ձիւդ պահպանութիւն կարգացն, և զամենայն փոյթ և զգան որ կան է, ի վար արկանել, և ջերեռանալ երբեք ի պահպանութենէ փոքրաւնկն եւս ի պարտուցս և ի կանոնաց, յաղթել ամենայն դժուարութեանց, նուաճել զգըժկամակութիւն ընութեանս, և յանձն առնուլ, Թէ այնպէս ինչ հարկ լցէ, ծառայել Աստուծոյ յամենայն կեանս իմ առանց երկիւղ մահացու Թեան և եռանդան: Երանելի եմ՝ եթէ և այսու պայմանաւ՝ տակաւին հաձեսցի տէր ընդունել զիս:

Ձնդրեա տես յէջ 57:

Ցաղագս յարգելոյ գշնորհս Աստուծոյ

ՄԱՍՆ Ա.

Ուսանիմ՝ի հաւատոյ զի Աստուած պահանջելոց է լինեն համարս վասն շնորհացն զորս ապաշնորհ է ինձ և ոչ ըստ օրէ. քանզի չըներքն այնքափիկ են ստացանդք աւանդեալք ինձ՝ի նմանէ զի յարգեցից. են որպէս դրամագլուխք տուեալք՝ի վոխ՝ զորս պարտ է ինձ հատուցանել անդրէն տեառն իմում:

Ուսանիմ դարձեալ՝ի հաւատոյ զի որչափ առաւելուն ինձ շնորհք, նովին չափով պահանջիցէ համարս. քանզի պարտ է ինձ յօգուտ անձին՝ի վեր արկանել զտուեալսն, և յաւելոյ՝նքօք զկնառս Աստուծոյ. «Տաղանդս հինգ ետուր ինձ, ասէ ծառայն բարի և հաւատարիմ, և ահաւասիկ հինգ այլ ևս զոր՝ի վերայ շահեցայ»:

Ապա ուրեմն որչափ յաւելու Աստուած ընձնորհս իւր առ ես, նովին չափով պարտ է ինձ խոնարհել և եռանդեամբ ծառայել նմա: Խոնարհել՝ զի ձրի պարգևս ընկալեալ զայնոսիկ և պարտիմ տալ համարս վասն այնոցիկ. և ո՞ կարէ պարծել յայն ինչ որ ոչ իւր է, այլ պարտի տալ համարս ընդ այնը: Եւ ծառայել եռանդեամբ՝ զի այնու ևեթ մարթի ես ինձ առնել հատուցումն անբաւ պարտուց իմոց առ Աստուած, վոխարէն անբաւ շնորհացն տուելոց ինձ՝ի նմանէ: Այրդ զի շնորհս բազումս առաւել յոյժ քան զհատուցացեալս աշխարհի՝ ընկալեալ է իմ յԱստուծոյ կրօնաւորութեամբս՝ այն յայտ իսկ

է, և կարի կոյր լեամ և ապաշնորհ եթէ ժըխտեցից զայն: Ապա առաւել յոյժ քան զաշխարհիկս պարտապան եմ ես Աստուծոյ, և խոստովան քան զնոցայն պահանջելոցդ համարս՝ի նմանէ:

Բազում անգամ երկիւղալի թուեցեալ է ինձ բազդ այնոցիկ, որոց Ճոխութիւն բազում ընկալեալ յԱստուծոյ և՝ի գերագահ աւագութիւնս ամբարձեալ են. այլ ահ, երկիւղալի ևս էր ինձ բազդ իմ, որ զայնչափ Ճոխութիւն հոգեկան բարեաց ընկալեալ՝ի Տեառնէ, և պարտիմ տալ նմա համարս վասն այնոցիկ: Ցիսուս տեսեալ ղերուսաղէմ ելեալ՝ի վերայ նորա. առ ինչ. ոչ վասն չարչարանացդ և մահուն զոր կրելոցն էր՝ի նմա. ոչ, այլ վասն այնչափ շնորհացն զոր ընկալեալ Ժողովուրդն այն ապաշնորհ, և ապախտ արարեալ էր զայնոսիկ: Այս էր որ՝ի գութ կարեկցութեան շարժէր զՅիսուս՝ տեսանելով անարգանսն զպատրաստեալ նմա աղէտսն վասն անարգելոյ նորա զայնչափ շնորհսն: Մի արդեօք և իմ իցէ տուեալ պատճառս Յիսուսի արտասուելոյ՝ի վերայ իմ: Պատապարտեալքն՝ի գժոխս ողբան և ողբասցեն յաւիտեան ընդ կորուստ շնորհացն զոր կորուսին. և վասն անգարձ և անգարման գոլոյ կորստեանն, յոսատահատութիւն առցէ զնոսա: Ապաշաւ նոցա լիցի ինձ՝ի խրատ, և յոսատահատութիւն նոցա՝ յորդոր՝ի յոյս: Մինչդեռ ժամանակս՝ի ձեռս է, և մարթ է ինձ գարման առնել կորստեանն՝ յարգելով զշնորհսն որք ինձ դեռ ևս, պարտ է զի զապաշնորհութիւն առից ինձ սատար և ձեռնտու, առ՝ի գտանել շնորհս առաջի Աստուծոյ և ակնկալութիւն բարեաց:

ՄԱՍՆ Բ

Բազմագիմի են շնորհք Աստուծոյ. են որ առաքին և են որ նեղբինք, Թող զձերս բնութեան: Աբրաքնովքն օժանդակէ ինձ Աստուած՝ի փըրկութիւն, և ոչ երբեք պակաս առնէ յինէն զայնոսիկ, նա առաւելուն իսկ առնէ ինձ զայնոսիկ՝ի կրօնաւորելս խմբում: Բայց զինչ օգտեցին ինձ այնք. զինչ այնչափ աղօթք, այնչափ ընթերցմունք, այնչափ խոստովանութիւնք, այնչափ ներանձնութիւնք և կրթութիւնք, այնչափ խրախոյսք յանդիմանութիւնք, խրատք սիրայորդորք և այնչափ օրինակք բարեաց: Ի զուր եղեն համայն. որոց վասն գաւեշտ է ցիս Աստուած. զի զեղծայ նոքօք, և փոխանակ օգտելոյ՝ մեղս ինձ յաւելի, որոց վասն չկարեմ ըստ արժանի բաւականին լալ և ողբալ առաջի Աստուծոյ:

Այո՛ գաւեշտ է ցիս Աստուած և կշտամբելոց վասն ապահաս առնելոյս զայնչափ մեծամեծ շնորհսն որք բաւականքն էին և առաւել քան զբաւական՝ի սրբել զոգիս. «Չատ կարեա ղգա, ասէ տէր այգեպն վասն անպտուղ թզենւոյն. հատ՝ի բաց, ընդէր և զերկիրդ խափանէ»: Մի արդեօք ես եցեմ թզենին այն. և թէ որ սպառնալիք մեծերեալ կայցեն ինձ եթէ հանապազորդեմ տակաւին վասնել՝ի զուր զնպաստն զորս ընձեռեալ ինձ կրօնն իմ, շատ իսկ ցուցեալ է յառակին:

Ոչ սպաքէն բիւրաւորք՝ի հաւատացելոց սոքիւքք շնորհօք նպաստաւորեալք ժամանեզին՝ի կատարելութիւն և՝ի փրկութիւն և՝ի սրբել զհոգիս իւրեանց: Իսկ ես յետ այնքան ամաց, յորս մարթ էր ինձ յոգուս՝ի վար արկանել զնպաստսն, չգտանիմ առաւելեալ ոչ յե-

ռանդն, ոչ՝ի փոյթ և՝ի զգուշութիւն, ոչ՝ի մեռելութիւն ախտից և ոչ յուրացութիւն անձին և աչխարհի: Ա՛յնչափ նպաստք բաւականք էին ածել՝ի հաւատս և զաղջ մի ողջոյն անհատ. իսկ ինձ չէղեն բաւականք յուղղութիւն միոյ աւեթ՝ի թերութեանցս, և առաքինանալոյ իւիք. «Վա՛յ քեզ Քորազին, վա՛յ քեզ Բեթսայիդա, զի եթէ՝ի Տիւրոս և՝ի Սիդոն եղեալ էին զօրութիւնքն որ՝ի քեզ եղեն, վաղուց ևս արդեօք՝ի խորգ և՝ի մոխիր ապաշխարեալ էր»: Ա՛ռ ևս են վայքն, և ինձ պատշաճեալք վայելչասէս: Դաստեցի զնս Աստուած ոչ միայն զի անպտուղս ինձ արարի զիրկաւէս նպաստսն զայնոսիկ, այլ և զի կամաւոր ապաստաւորութեամբ փոխեցի ինձ զայնոսիկ՝ի պատճառս մեղայ: Քանզի այսքան յաճախութիւն առաքեալ պատրաստ նպաստից առելոց ինձ՝ի կրօնաւորութեան՝ սպաքէն կշռեա ունէն, և՝ի ընդրկութենէն ինչ չիս, յաւելցին ինձ՝ի մեղս և՝ի դատապարտութիւն մեծագոյն: Ո՞ր սպա մեծերք բարկութեան դանձեալ կայցեն ինձ. և ես չերկընչիմ և չամապարեմ ողբել զերեսս Աստուծոյ՝ նա՝ փոխանակ ողբելոյ՝ զայրացուցանեմ զօրհասդ:

ՄԱՍՆ Գ

Բաց յարտաքնոց ասելի՝ի շնորհաց՝ են և շնորհք ներքինք, որովք Հոգին սուրբ տայ ինձ ճանաչել զճանապարհս Աստուծոյ և՝ի սէր նոցին յորդորել: Նչոյլքն լուսատուք մտաց իմոց, խաւսմունքն պատուոց, գաղանի ազդեցութիւնք՝ի փոխել զվարս իմ և՝ի կեալ որպէս արդարք կրօնաւորք՝ համայն շնորհք են Աստուծոյ, որոց ոչ անասցեալ, Հոգւոյն սրբոյ հակա-

ուակ կացի, և ըստ Աւաքեւլըն՝ գՀոգին շնորհաց Թշնամանեցի, զարիւնն Յիսուսի առ ոտն հարի և զարդիւնս խաչի և մահու նորա ընդունայն առնեմ:

Արհամարհումբիւն՝ զոր ասասին խակ պատուհասէ Աստուած զսկիզբ ի շնորհաց անտի. զի զոր արհամարհեմին՝ բառնայ, զոր անգոնեմին՝ չշնորհէ. և որպէս յայմհնայնի՝ նոյնպէս և յայսմ՝ արդար են յոյժ դատաստանք նորա. և ես՝ ինքնին կոչեմ՝ ի վերայ իմ զայն, մանաւանդ յանարգելս զշնորհն, յոր հաստատեալ է փրկութիւնն իմ կամ կորուստ, որ և՝ ի հոգևորական կեանն՝ է Ճգնաժամն այն որ՝ ի բնական հիւանդութիւնս մարմնոյ սահմանէ ընդ մահ կամ ընդ կեանս: Քանզի են արդարև ասէութք՝ յորս առանձին իմն օրհնութիւն է Աստուծոյ, որպիսիք արդեօք իցեն ինձ աւուրքս այս սրբոյ կրճութեան:

Զար է և յոյժ չար ընդունայն առնել զայնպիսի շնորհն: Սուրբն Օգոստինոս և այլք բազումք կորուսեալք եին արդեօք, եթէ չէր նոցա յօգուտ՝ ի վար արկեալ զժամն զայն, յոր տեսնուին Աստուծոյ սահմանեալ էր զշնորհս դարձի նոցա: Եւ քանիք ոմանք՝ ի կրօնաւորաց կործան անկան անյարիր, վասն չլսելոյ խրատուց աստուածազգեցիկ ձայնին որ յորդորէրն զնոսա՝ ի փոյթ կատարելութեան յորմէ վերջացեալքն էին:

ՍՂՕՔԻ

Դեռ ևս խօսիս ընդ իս, Տէր, դեռ ևս լսեմ՝ զգամ զազդեցութիւնս շնորհաց քոց՝ ի խորս սրտի իմոյ: Բարեբաստիկ եմ արդարև՝ զի՝ ի վերայ այնչափ գիմադարձութեանս իմոյ ոչ մերժեցեր զիս և ոչ՝ ի սպառ դարձուցեր զերեսս քո յինէն: Եւ մինչև ցերբ հեստեցից քեզ, Տէր, մինչև ցերբ կացից ընացից՝ ի կուրութեանս՝ ի կորուստ անձին իմոյ, մինչ դուս սիրողաբար զնջեալ՝ զսրկութիւն իմ հնարիս անդուլութեամբ:

Գոհանամ զքէն, Աստուած իմ, վասն ամենայն շնորհացն որովք ըստ անքննին բարեխնամ մոզ տեսչութեանդ քո հաճեցար ատատրել ինձ՝ ի սրբութիւն և՝ ի կատարելութիւն կոչմանս իմոյ: Զկարեմ ըստ արժան բաւականին օրհնել զքեզ, և ոչ որպէս պարտ է՝ սիրայորդոր սրտիս շնորհս քեզ մատուցանել: Եւ ընդ այն մանաւանդ ցաւէ ինձ՝ զի որոց վասն այնչափ երախտատպարտ գոլ պարտիմ, նոքին լինին պատճառք ողբոց և տրտմութեան. եղեր թէ շնորհիւ անբաւ գթութեանդ քո չվինեցին ևս պատճառք յաւիտենական ողբոց և կորանաց:

Կարծէի թէ վասն մեղաց իմոց ևեթ իցէ ինձ երկիւղ, այլ արդ՝ ի միտ առնում զի մեծագոյն ևս երկիւղ է ինձ վասն շնորհաց քոց: Եւ զինչ, խնդրեցիմ՝ զի բարւոյս չինեն զշնորհսդ և մի ևս տեղասցին չիս. եղուկ ինձ, և զինչ լեցի ինձ յայնժամ. առանց քո զինչ մարթի իցէ ինձ առնել: Մի, Տէր, մի բառնար չինեն զշնորհսդ, այլ յաւել ինձ մանաւանդ, զի այն իսկ է յոյս իմ և մեծութիւն բովանդակ: Տուր ինձ աղաչեմ, զի որպէս առաջադրեմ հաստատութեամբ՝ չանացայց յայսմ հետէ, որչափ՝ ի կարի իմում է, գործակից լինել շնորհացդ և յարգել զայնոսիկ հաւատարմութեամբ, ոչ ևս անստատել աստուածայնոց ազդեցութեանցդ, և ոչ չափ գնել և սահման փրկաչէտ և սրբարար թելադրութեանց քոց և յորդորմանց, և զմիացուած աւուրց իմոց բովանդակ կեալ և ծառայել քեզ

ըստ առաւելութեան ընդհանուր զոր հաձեցար
ընդհանել ինձ և ոչ երբեք նուազեցուցեր: Զայս
խոստանամ աւասիկ, և զսոյն ուխտեմ առաջի
քո ընդ մարգարէին. « Երդուայ և հաստատեցի
զի պահեցից զամենայն իրաւունս արդարու-
թեան քո »:

Յաղագս յարգելոյ զժամանակ

ՄԱՍՆ Ա.

Զիք ինչ պատուականագոյն քան զժամա-
նակն՝ զի գիտիք են յատկութենականութեան. որ-
պէս և զնարդ վաստացայց նովաւ ՚ի կեանս իմ՝՚ի
բարին կամ՚ի չարն, ըստ այնմ գաւառացայց Աս-
տուծոյ պարտաւորեալ կամ պատկեալ ՚ի մա-
հուն իմում. « Զի ընկալցի իւրաքանչիւր իւրով
մարմնով զոր ինչ գործեաց յառաջ եթէ բարի
և եթէ չար »: Ապա ուրեմն փրկութիւն իմ
բովանդակ հաստատեալ կայ ՚ի ժամանակին: Եւ
զի Աթաթիչն ՚ի ստեղծանել զմարդ և ՚ի դնել
յայս աշխարհ՝ պատուէր եա ամենեցուն զան-
ձանց փրկութիւն գործել, նովին իսկ պատուի-
րանաւ պարտս ՚ի վերայ եդ ամենեցուն յօ-
գուտ ՚ի վար արկանել զժամանակն և մի ընդու-
նայն վատնել զայն:

Ոչ յանձանց ևեթ ՚ի պէտս տայ մեզ Աս-
տուած զժամանակն, այլ մանաւանդ վասն իւր
և վասն փառացն իւրոց: Կամի զի ՚ի ծառայու-
թիւն և ՚ի փառս իւր վարեսցուք նովաւ, և յայն
կարգեսցի համայն: Վասն որոյ եթէ ոչ բովան-
դակ սրբեմք զայն և նուիրեմք Աստուծոյ, յան-
ցասուրք լեմք առաջի նորա՝ որպէս ծառայ ան-
հաւատարիմ որ խորհի զժամանակ ծառայու-
թեան տեառն իւրոյ: Եւ արդարև ոչ ինչ թե-
թևագոյն լեին յանցանք իմ եթէ զժամանակն
զոր պարտիմ Աստուծոյ, և զոր անձինս պար-
տիմ՝ ծախեցից ընդունայն. և թէպէտ այլով
մասամբ բարւոք իսկ կեցից չափաւորապէս և
ոչ մեղայց ծանր մեղօք, սակայն ոչ արդարա-

նամ. զի կորուստ ժամանակի ինքնին իսկ մեծ մեղք են:

Եւ այնու իսկ մեծագոյն՝ զի ժամանակն կորուսեալ ոչ ևս դառնայ: Ո՞ւր են արդ ամք իմ անցեալք. ո՛հ, մեն մի յաւուրցն և՛ ի ժամուց, նա՝ և վայրկեանք իւրաքանչիւր ծրծալի ինչ օգուտ կարէին գործել ինձ և փոխարէնս բազմապատիկս պատրաստել. և զինչ ինաց ինձ յայնցանէ և զի՞ր գանձս պատրաստեցի ինձ նոքօք: Ո՞ւր լցեն՛ ի ժամ մահուանս նա և ամքն և աւուրք զորս Թէ հաձեսցի Աստուած շնորհել ինձ գեռ ևս: Եթէ հանգոյն անցելոցն անպտուղք լինիցեն ինձ և այնոքիկ, զինչ ինաց՛ ի ձեռին իմում և զինչ ոտարայց ընդ իս: Առցեն զնա յայնժամ ապաշաւք, այլոց կարասցեն ապաշաւքն զանցեալս գարձուցանել ինձ յետս: Յայնժամ խելամուտ եղէց Թէ զինչ մարթ էր ինձ գործել և զինչ կորուսի. ողբացից յայնժամ զանձնապէս, այլ ամենայն ողբք իմ ոչ յայլ ինչ դառնապէս, եթէ ոչ յայն ևս ի ցոյց և՛ ի հաստատութիւն յանգիցեն, բայց՛ ի ցոյց և՛ ի հաստատութիւն մեծի և ցաւալից ձմարտութեանն, Թէ՝ անցեալքն զինև ամք ոչ ևս գարձցին, զի՛ ի ձեռս իմ էր յօգուտ՛ ի վար արկանել զայնոսիկ՝ որք ոչ ևս են արդ, և զի մարթ էր նոքօք ձեղուպրել զանձն՛ ի վերահաս կորստենէն, յորմէ ոչ ևս է մարթ խուսափել: Ո՛հ, ընդէր ոչ այժմէն գտայց բարեբաղդ խելամուտ լինելով երկոցունց ահաւոր և տխուր ձմարտութեանցս այսոցիկ «Կարէի» և «Ոչ ևս կարեմ»: Կարգացից յայնժամ առ Տէր, Թախանձ արկից նմա և խոստացայց բնութիւն, Թէ հաձեսցի միայն տալ ինձ տակաւին ժամանակ, չկորուսանել և ոչ վայրկեան մի. խոստումն գեղեցիկ. այլ ընկալցի՛ զայն Աստուած: Ո՛հ, քանի՛ օգտակարագոյն է և հաձոյ Աստուծոյ այժմէն իսկ առնել զխոստումն զայն՝

մինչ գեռ ևս գոյ ժամանակ ընդդէմ զնոյն և արգելամբք:

ՄԱՍՆ Բ

Որպէս յաչխարհի՝ նոյնպէս և՛ ի կրօնի մարթէ ընդ վայր կորուսանել ժամանակ. նա մանաւանդ առաւելագոյն վտանգ է կրօնաւորի անկանելոյ յայդ վնասակի՝ ազատ գոլով յայլ ամենայն հոգոց աշխարհի և՛ ի վաստակոց յորս զբաղին աշխարհիկք:

Են՛ ի կրօնաւորաց որոց սահմանեալքն՛ ի կանոնաց նոցա ժամք աղօթից և պաշտամանց կարճատևք գոլով, յետ վճարելոյ զայնոսիկ՝ ի՞նչ պարապիցին զնացորդ աւուրն ողջոյն. յաձախ և ոչ ինչ բայց լընդդունայն զղոյցս համայն աշխարհականս, յերկար այցելութիւնս օտարաց, ՛ի հետաքննութիւնս եղելոցն ներկոց և արտաքոյ, և այս բովանդակ զբաղմունք են նոցա: Բազում այն է զի խրատեմք զաշխարհիկս մի կալ պարապորդս, և լցեն կեանք նոցա պարապորդ քան զայնպիսեաց կրօնաւորաց:

Են և կրօնաւորք զբաղեալք յոյժ և անդադրք յաշխատութենէ ոչ տալով հանգիստ անձանց. այլ վասն ոյր և առ ինչ. լցեն վաստակք նոցա ըստ կամաց Աստուծոյ, ըստ պարտուց կոչմանն իւրեանց և ըստ հրամանի մեծաւորաց: Ոչ միայն չեն, այլ մանաւանդ՝ եթէ հնազանդութեան հրամայեալ էր նոցա զայն ամենայն, ծանր և անհնարին Թուէին համայն: Այնպիսիք՛ ի Թափոյ անհանդարտ բնութեանց միեալք, բազում այն է՝ զի և յանպատշաճն ինքեանց մխին՛ ի գործս առանին և արտաքոյ, զամենայն գործեն, յամենայն ինչ պարապին՝ բայց ոչ՛ ի պարտս կոչման իւրեանց. և իցէ նոցա այն պատշաճա-

պէս յօգուտ՝ի վար արկանել զժամանակն, եթէ մանաւանդ՝ի զուր վատնել զայն։

Հուսկ ապա են և այլք ոչ սակաւք, որ թէ պէտ և կատարեն ըստ բաւականին զկրօնաւորական պարտս իւրեանց, զպաշտամունսն և զկրթուածեանց, բայց այնու հեղգութեամբ և մարդկօրէն տեսութեամբք՝ մինչև մարթ է ասել թէ նոցա ժամանակք գնայցեն՝ի կորուստ։ Ժամանակն յայնժամ եթէ օգտակար եղիցի մեզ, յորժամ ըստ կամացն Աստուծոյ վարիցիմք նովաւ՝ի փրկութիւն հոգւոց մերոց։ արդ որ ինչ գործին հեղգութեամբ և առ մարդկան ականէ՝ հաճոյ լինել Աստուծոյ ոչ կարէ, ապա և անօգուտ մեզ և անվարձ առաջի նորա։

Պարտ է ինձ ապա յասացելոցս լինել խելամուտ նախ՝ զի և յետ կատարելոյ իմոյ զոր ինչ կանոնքն իմ օրինագրեն ինձ, և յետ ընդլոյ զգործս պաշտամանն իմոյ, եթէ տակաւին յաւելուցու ինձ ժամանակ, չկարեմ վարել նովաւ որպէս ինքնիշխան տէր՝ի զբօսանս իմ։ զի թէպէտ և օրէնք ինձ ինչ ոչ սահմանեն առանձինն վասն ժամանակին այնմիկ՝ այլ պատուիրեն ինձ հասարակաբար բարւոք՝ի կիր արկանել զժամանակին։ Երկրորդ՝ զի և բազմավաստակ կենօք չկարեցեմ շահել ինչ՝ եթէ ոչ ըստ պատշաճի և ըստ պարտուց կոչմանս իցեն վաստակքն իմ և ոչ ինքնօրէն ըստ հաճոյս կանձն առեալք ընդդէմ կանոնաց իակ կրօնիս։ Երրորդ՝ զի վասն սրբութեամբ անցուցանելոյ զժամանակին՝ չէ բաւական թէ ամենայն գործք իմ և վաստակք՝ ինքնին միայն սուրբք իցեն, այլ հարկ է զի և ըստ հանգամանացն իցեն սուրբք։ և զի պահպանութեամբ հանդերձ կանոնաց՝ կարեմ կրօնասանել զժամանակին իմ, եթէ ըստ գրոյն աւետ կատարեմ զպարտս իմ և ոչ ըստ հոգւոյն։ Եղե՛ւկ

ինձ, զի բազում յոյժ ժամանակս կորուսեալ եմ ցարդ, մինչ չկարել ինձ և ոչ՝ի մի յաւուրցս լինել վտահ։

ՄԱՍՆ Գ

Թէպէտ և ըստ միոյ տեսութեան անգամմանելի է կորուստ ժամանակի, բայց այլով տեսութեամբ ոչ նոյնպէս. քանզի՝ի կարի խմեմ է գնել զայն վերստին՝ որպէս յայտնաբանէ զայս Առաքեալ. «Գնոց առէք, ասէ, զժամանակն»։ Ընդէր մշակքն աւետարանին եկեալք անագան ընդ երեկս և որք զմիջաւուրըն եկին՝ ընկալան առհասարակ զնոյն վարձս հաւասար առաջնոցն որոց զօրն ողջոյն աշխատ լեալ էր. վասն զի՝ի սակաւ ժամուն առաւելագոյն փոխարէն աշխատեղէալ՝ որչափ անագանեցինն՝ի գալ, նովին չափով յաւելին զվաստակս իւրեանց։ Այսպէս ապա՝ի կարի խմեմ է դեռ ևս առաւելուցեամբ ջանիլ և եռանդան ստանալ վերստին զկորուսեալն հեղգութեամբ և թուլութեամբ։

Պարտ է ինձ ուրեմն փոխարինել ջանիւք ըզտոյժ կորստեան այնչափ աւուրցն, զորս անցուցի ընդունայն՝ առանց չահելոյ ինչ վասն երկնից։ Աւուրք արդարև թշուառութեան վասն իմ աւուրքն այնոքիկ. զի ոչ եթէ աւուրք վշտաց և նեղութեանց, աւուրք չարակրութեանց և հիւանդութեանց ըստ մարմնոյ՝ իցեն իսկապէս աւուրք թշուառութեան, նա մանաւանդ աւուրք բարեաց են այնոքիկ ըստ հոգւոյ վասն ճշմարիտ հաւատացելոյ և կրօնաւորի. այլ իսկապէս աւուրք չարեաց և թշուառութեան են աւուրքն զորս անցուցի հեղգութեամբ, թուլութեամբ և բազմազբաղ կենօք՝ առանց ներանձնութեան, առանց մեռելութեան կրից և

առանց հոգևորական խոհմանց, աւուրք՝ զորս պարտ է ինձ գնել վերստին։

Բարեբաստիկ եմ ապա զի ընդհակ ինձ Աստուած ժամանակ առ այն. բայց զի օգտեցայց ընդհուպ, աճապարել պարտ է ինձ. դարձն ինչ յապաղումն լռամտաւանդ եղիցի, քանզի չգիտեմ թէ զնոյն ընդհ ունկնդիմ յետոյ։ Արբազ հաւասար է ինձ զի յօգուտ ի վար արկեալ՝ որպէս պարտն է՝ ջժամանակս ընդհուպ՝ լցից զանցելոցն զթերին, նոյնպէս ևս անհաւասար թէ ցօրըստ յերկարեցե ինձ ժամանակս. քանզի չիք ինչ անստոյգ քան զայն։ Զոր ունիմ՝ գիտեմ զի Աստուծոյ ընդհ են, այլ զոր ընդ նիմ՝ չգիտեմ թէ հաճեսցի ընդհ։ Ապա լմասատուիւն այն է՝ փուքաղ և յօգուտ ի կիր արկանել զտուեալն։ Եւ թէպէտ ապագայն իակ հաւասար էր, միթէ շմո թուեսցի ինձ և զայն բովանդակ նուիրել Աստուծոյ. ո՞ր այն յաւելուած ժամանակի զոր չպարտիցիմ տալ փոխանակ կորուսելոցն։ Փնտրեցից միշտ զայն ընդ նա կորուսելոցն։ Փնտրեցից միշտ զայն ընդ իս ունիմ։ Գայ գիշեր, գիշերն յափտենական, յորում ոչ ևս կարիցեմ գործել և ոչ ընդհանալ։

ՍՂՕԹՔ

Աստուած իմ, Աստուած ողորմութեան, աղաչեմ խոնարհեալ անձամբ անկեալ կամառնս քո ըստ սպիկար ծառային՝ ոչ ունելով իւ հատուցանել զպարտս իմ. և աղերս արկեալ պաղատիմ առ քեզ։ Դու, Տէր, դու ես տէր կեանց և մահու, դու ինքն եդեր չափով զաւուրս իմ և ի քո ձեռս է համառօտել զոր ոչափ և կամք քո հաճեսցին։ Բայց անսա, աղաչեմ, սակաւիկ մի ևս երկայնամիտ լեր առ իս և զամենայն հատուցից քեզ. սակաւիկ մի ևս՝ և զամենայն Հոգևորական խոհմանց, աւուրք՝ զորս պարտ է ինձ գնել վերստին։

նայն չան ի գործ արկից ի հաճել քեզ։ Մի զոր խնդրեմն զլռացիս ինձ ի փրկութիւն անձին իմոյ. ապա թէ ոչ՝ զնաւդ լիցի ինձ երևել առաջի քո հէք և չքաւոր վերջացեալ յամենայնէ։

Սուրբքն առնչացեալք յաւիտենականութեան՝ զի համառօտեցոյց աւուրց իւրեանց ցանկայն՝ չէն ինչ զարմանք, քանզի արդարքն էին և անարատք. ամք նոցա էին ամք լինութեան, և ի հեանս իւրեանց մթերեալ գանձս բազումս, ցանկալի էր նոցա յարդիւնս վաստակոցն իւրեանց վայելել յաբքայութեան քոյ յերկինս։ Այլ ինձ, Տէր, երկիւղ մեծ է ի համառօտեցոյց աւուրցս, և շատ իսկ պատճառք են իմ երկնչելոյ։ Երկնչիմ՝ զի մի մահ մտաւրուտ բարձցէ յինէն զաւուրսն որոց պէտս ունիմ՝ ի փոխանակ ընծել նոքօք զանցեալ աւուրս կենաց իմոց։ Յուսամ՝ ի գթութիւն քո, Տէր, զի ոչ թողցես զիս ի սպառ, և յայս ապաստան՝ հաստատեալ եմ չկորուսանել յայսմ հեռի և ոչ վայրկեան մի ժամանակի, և ոչ վաղուց աւուրն ձեռ՝ ի սկսանել. այլ այսօր իսկ, այլ այժմէն սկսցէ։ Արդարև կարի անագան՝ սակայն տակաւին ի ժամու։ Ի ծառայել աշխարհն ինդրի դէպ ժամանակ, բայց ի սիրել զքեզ և յուղղել զանձն՝ ամենայն ժամանակ քաշադէպ է։

Վասն աստուածային պաշտամանն

ՄԱՍՆ Ա.

Մի՛ ի գլխաւորագոյն պարտուց իմոց է պաշտօնն աստուածային ժամերգութեան. Աստուած պահանջէ յինէն զայս որպէս պարտս կրօնաւորական և քահանայական կարգին իմոյ: Վերջանալ ուրեմն՛ ի պարտուց ասսի՛ է յանցուած մեծ: Պարտ է ինձ ապա համարել ըզպարտս զայս որպէս գլխաւոր գործ իմ և հանապազորդ պաշտօն, և նախադասել զայն քան զամենայն զբաղումն և գործ կարևոր:

Ո՛վ սրբազան պարտք, ո՞ւ տակաւ զնս առնել յերկրի զոր ինչ երանեալքն առնեն յերկինս, և զոր պարտ է ինձ առնել անդ յաւիտեան՝ եթէ լնցի ինձ միանգամ հասանել անդր: Ո՛վ սրբազան պարտք, որ զդէմս սրբոյ եկեղեցւոյ տայ ինձ բերել յանձին. քանզի ժամերգութիւն՝ հայցուածք են եկեղեցւոյ առ Աստուած, և ի ժամերգել իմում իսկ՝ ի դիմաց եկեղեցւոյ առ Աստուած. նա գնէ ինձ բան ի բերան և կացուցանէ զնս միջնորդ ընդ մարդիկ և ընդ Աստուած. այս և եթէ պաշտօն բաւական էր ինձ ի սրբութիւն, եթէ բարւոք կատարէի զայն, ընտանեցեալ ընդ Աստուծոյ՝ հանապազորդ ընդ նմա խօսակցութեամբ: Դարձեալ պատաղեալ ի հոգս թագաւորութեանն, տակաւին սահմանեալ էր իւր ժամն հանապազօր օրհնելոյ զԱստուած. « Եօթն անգամ յաւուր, ասէ, օրհնեցից զքեզ». և ինձ ծանր ինչ լեցի կատարել զպաշտօնն աստուածային ըստ ժամուց սահմանելոց ի սուրբ եկեղեցւոյ. և թէ ըստ կամի, կամ յանհոգութեան փոփոխեմ զժամանակս՝ խնդրելով զհանդիստ իմ, չեցեմ յանցաւոր առաջի Աստուծոյ: Ժամն այլ և այլ սահմանեկ եկեղեցի սուրբ, և ցանկայ պաշտօնէին Աստուծոյ առեալ խօսել ընդ նմա. և երբեմն ես ազատ ի խղճէ, եթէ անտես արարեալ զժամն սահմանեալս՝ կամ չպգուէ զամենայնն միանգամայն կատարեմ առանց երկար հարկի՝ առ ի զերծանել անտի երբ ի ծանրագոյն բեռանէ, կամ չար և՝ թողեալ զամենայն ի ժամ երեկոյի, առ ի կցկտուր կատարել զայն:

ՄԱՍՆ Բ

Իչխանութիւնք երկնից սարսեն առաջի Աստուծոյ ի վառաբանէն ջնս. որպիսի՞ ահիւ և դողութեամբ պարտ է ինձ ապա աղօթել, որ հողս եմ և մոխիր. խակ եթէ զչայցուածս զոր եկեղեցի սուրբ դնէ ի բերան իմ, չուժգին քան զամենայն գործս իմ, և արարեալ է ինձ սովորութիւն առանց մտադրութեան արտասանել զայնոսիկ, որպիսի՞ անարգանս փոխանակ պատուոյ առնեմ Աստուծոյ:

Քանզի եկեղեցի սուրբ ի պատուիրել ինձ զպաշտօնն աստուածային, սահմանէ զայն բանաւոր պաշտօն. և ես զնոյն չաղօթելն խմում դատանեմ՝ պաղատելով առ Աստուած՝ « Զառաւօտու զաղօթս և զբանաւոր պաշտօնս » իմ ընդդունել. և ոճր անդ բանին գուցե մնան, եթէ առանց մտադրութեան կատարեմ զայն: Սահման խակ և հուժգին աղօթից՝ է ամբառնալ զմիտս առ Աստուած. դադարեմ ապա չաղօթելոյ, այն ինչ վերջանան միտք իմ չամբառնալոյ առ Աստուած: Ապա ուրեմն՛ ի ցրուել մտաց իմոց չաղօթս կամաւորապէս, և կամ չանփոյթ

առնել իմում ամիսոփել զվիտս, գտանիմ մեզա-
պարտ իբր բնաւ իսկ զանց արարեալ զժամեր-
գութեամբ:

Ոչ միայն զվիտս, այլ և զսիրտ իմ պարտ է ինձ
ամբառնալ առ Աստուած. վասն զի սրտիւ կա-
տարի եռանդն՝ որ է կարևորագոյն մասն աղօ-
թից. վասն որոյ Աւգաբեանն ասէ « Կացից յա-
ղօթս հոգւով, կացից յաղօթս և մտօք »: Զի
եթէ սիրտ իմ ոչ կցորդէ մտաց իմոց և չբնանց,
նմանիմ Հրեից՝ զորոց Փրկիչն ասէր, թէ « ժո-
ղովուրդս այս շրթամբք մեծարէ զիս, և սիրտ
իւրեանց հեռացեալ մեկուսի են յինէն »: Եւ ի-
արդարանայեմ առաքն Աստուծոյ, եթէ և ա-
ղօթք իմ լինին ինձ՝ ի գառապարտութիւն հեղ-
գութեամբս իմով և գաղջութեամբ:

ՄԱՍՆ Գ

Եւ ոչ պայմանքս այսոքիկ առհասարակ բա-
ւականք են առ՝ ի ընդլինել զպարտս աստուա-
ծային պաշտաման. միւս ևս պարտք ըստ կարգի
կրօնաւորութեանս է ինձ՝ կանխել՝ ի դաս. և
եթէ առանց հարկի կամ կարևոր պատճառաց
չգտանիմ անդ, վերջանամ՝ ի պարտուցս, և պար-
տիմ տալ զայնմանէ համար Աստուծոյ: Պակա-
սել՝ ի դասէ առանց հարկի և ինքնահրաման՝ է
նշան գաղջութեան և թուլութեան և թօթա-
փելոյ զլուծ կանոնաց և սկիզբն զառածանելոյ
կրօնին՝ ի թուլութիւն և՝ ի զեղծումն: Դաւիթ
՝ի մէջ գիշերի յառնէր խոստովան լինել Աստու-
ծոյ, և օրհնել զԱստուած, այն չի թագաւոր
էր. իսկ ես հեղգանամ ընդ առաւօտս յանդիւ-
մանն լինել Տեառն իմում ընդ համակրօն եղբարս
իմ՝ ի դասի, և թերևս ինչ պատճառք բաւական
են ինձ առ՝ ի պատրուակել զհեղգութիւն իմ:

Եթէ փոքր մի ինչ ծանր լցէ ինձ կանխել հա-
նապազ անվրէպ՝ ի դաս, չեմք ինձ արժան յանձն
առնուլ մտագիւբ զծանրութիւնն զայն վասն
անբաւ առաւելութեանց միաբան ժամերգու-
թեան. « Ոբ լցեն երկու կամ երեք ժողովեալ
յանուն իմ, ասէ Փրկիչն մեր, անդ եմ ես՝ ի
մէջ նոցա ». և թէ « Զինչ և խնդրեսցեն, եղիցի
նոցա՝ ի հօրէ իմմէ »: Ապա ուրեմն քանի՛ զբո-
հուն լցէ ինձ պակասել՝ ի ժողովոյ եղբարց,
յորոց մէջն է ինքն Քրիստոս, և քանի՛ շնորհաց
կորուսանէ:

Դարձեալ՝ զի՝ ի միաբան ժամերգութեան ա-
զատ գտանիմ՝ ի վերնամանց՝ յորս յաճախ անկա-
նիմ առանձինն:

Դարձեալ զի և օրինակ չէրմեռանդն եղբարց
քաջալերէ զիս և յորդորէ յեռանդն, և զգաս-
տութիւն նոցա յամփոփումն մտաց: Նմանիմ
հաւատացեալք կանխելին հանապազօր՝ ի տա-
ճարն՝ միաբանութեամբ օրհնել զԱստուած,
վասն որոյ և ինքեալ՝ ի նոսա Հոգին, բաշխեր
նոցա առատապէս զշնորհս: Ի պակասել իմում
ապա՝ ի դասէ՝ զրկեմ զիս ինքն յայսպիսի շնոր-
հաց, զրկեմ զեղբարս՝ ի քաջալերութենէ՝ որ
օրինակաւ իւրեանց յաջողի, և չկատակիմ հրա-
մանաց եկեղեցւոյ և կրօնաւորական կարգիս:

ԱՂՕԹՔ

Խոստովանիմ, Տէր, զի հեղգ գտայ ցարդ՝ ի
պաշտօն քո և արհամարհեցի զմեծվայելչու-
թիւն քոյին, այնչափ ինչ ոչ ընծայելովք քեզ մե-
ծարանս՝ ի յանդիման լինել իմում առ քեզ, որ-
չափ պարտիմն և ընծայեմ աւագաց ոմանց:
Այլ դու, Տէր, որ տեսանես զծածուկս գաղ-
անեաց սրտի իմոյ, օգնեա առաջադրութեանս

խմուամ՝ զոր ի բոլոր սրտէ առաջադրեմ, նախա-
մեծար այսուհետեւ քան զամենայն գործս իմ
առնել զպաշտօն քոյին: Եւ եթէ ծանր իսկ և
դժուարին թուեսցի ինձ կանխել ըստ ժամուց
ի պաշտօն քո, և զտկարութիւն իսկ մարմնոյ
եթէ ինձ թելադրեսցէ հեղգութիւն բնու-
թեանս, մերժեցից զպատրանս նորա, և գթու-
թեամբ քով պատրաստեցից զմարմին իմ պա-
տարագ կենդանի, և հաճոյ աստուածութեանդ
քում զխօսուն պաշտօնս իմ:

ՕՐ ՉՈՐՐՈՐԴ

Ցաղագս մահուան

ՄԱՍՆ Ա.

Չիք ինչ ստուգագոյն քան զմահ, և ոչ ինչ ան-
խուսափելի քան զմահ: Պատուհաս է արդարու-
թեան Աստուծոյ ի վերայ ամենայն մարդկան
և օրէնք հաստարակաց, ընդ որով անկեալ կամ
և ես հաւասար այլոց: Հարկ է մեռանել. բար-
բաւ ահաւոր: Բայց մահ ինքնին միայնակ չէ
այնպէս ահարկու, որպէս որովք զհետ լուր
առեալ բերէ: Մահ ինքնին անձատումն է ի
սպառ ի կենցաղականացս համայն՝ յընչից, ի
մեծութենէ, ի փառաց, ի պատուոյ, ի ծնո-
ղաց, յաղգականաց, ի բարեկամաց, ի տուր և
առից, ի կենակցութենէ և համայն ասել
յաղցաւորացս յամենայնէ. և է չքանալ ինն և
անհետ լինել ի մարդկային ընկերութենէ: Մե-
ռելոյ չիք ինչ այլ ևս ընդ աշխարհի, և ոչ մասն
և բաժին յիմիք. ոչ ևս կարէ երևել և ոչ լինել
լսելի, և յիշատակ նորա ևս կորնչի վաղվաղակի:
Այս ամենայն բնաւորապէս սոսկումն ածէն
մարդկութեանս ի խոկալն ի նոյն, քանզի դի-
մամարտին բնութեանս, և վասն այնորիկ յա-
մենայն ջօրութենէ նմանի խորշի և խուսափէ ի
մահուանէ: Սակայն այդոքիկ համայն՝ առանց
հետագային մահուն չեն այնպէս սոսկալիք՝ որ-
չափ թուինն զգայական բնութեանս: Անչա-
տուածն այն զոյգ ընդ նախընթաց և զուգընթաց

ցաւոց անցանէ 'ի սուղ ժամու, և ամենայն ե-
րաշխիկք և տագնապ մահուն չքանան 'ի վայր-
կենի, և մեռեալն ոչ ևս ղպոյ պնդոցիկ:

Այլ որ ինչ զկնի գան մահուն ահաւորք՝ նո-
քին մշտնջենաւորք են. վերջին վայրկեան ասուի
կենացս՝ լցեալ սկզբան յաւիտենականին՝ երանու-
թեան կամ թշուառութեան. «Ուր անկիցի
փայտն անդ կացցէ». և 'ի պահուն յորում լինի
ասել զինեն ստուգապէս թէ մեռաւ, մարթ իցէ
յաւելուլ առ նմին նոյնին ստուգութեամբ թէ
արդ սահմանեալ էր Աստուծոյ բաժին նորա յա-
ւիտեան ընդ ընտրեալս կամ ընդ անարդեալս:
Փանզի կայ մինչ մարդկան միանգամ մեռանել,
և յետ այնորիկ ոչ ևս են ընդորկք և ոչ բարեգոր-
ծութիւնք, վասն որոյ անփոփոխելի է վճիռն
տուեալ վասն իմ, որ թէ 'ի գաւառապարտու-
թիւն ինձ իցէ, անդարմանելի իցեն աղէտքն:

Եւ երկիւղալի ևս այն է՝ զի անյայտ է ինձ
ժամ և ժամանակ սոսկալի վճռոյն որ լինի ինձ
յերանութիւն կամ՝ 'ի գաւառապարտութիւն յա-
ւիտենական. զի ոչ գիտեմ երբ հասցէ ինձ մահ:
Զկնի արդարև յայտնագոյն լինի և քաջածանօթ
քան զկարկ մահուն. բայց և ոչ ինչ առաւել
ծանկեալ և անծանօթ՝ քան զժամ մահուն: Ամե-
նայն օր կարէ լինել ինձ վերջին, ապա յամենայ-
նում աւուր կարէ հասանել ինձ վճիռն այն 'ի
վերկութիւն կամ՝ 'ի կորուստ անդարմանելի յա-
ւիտեան:

Խոհուեմն մեծ և կարևոր, յոր պարտ է լինել
խոհալ հանապազօր, և խորագոյնս տպաւորել
զայն 'ի մտի. քանզի աշխարհայնոց և կրօնաւո-
րաց հասարակաց է մահ, և ամենեցուն մեզ հարկ
է և հարկ կարևոր պատրաստել և ապահովել
զմահ բարի:

Արդ զինչ արարեալ է իմ ցարդ, կամ զինչ

է զոր առնեմ՝ առ ապահովելոյ ինձ զայն: Եմ
պատրաստ 'ի մեռանել, կամ կամիցեմ այժմ՝
որպիսի եմ՝ մեռանել: Շատ լեալ ինձ հարցա-
նել անկեղծաբար զինքզ մտաց իմոց, և լսել
թէ զինչ տայ պատասխանի: Ի՛ւ իւրաք կշտամբեք
զնս, և զոր ինչ խրատէ, ուղղել և կարդարել
յառաջ քան զմահ:

Այս գործ է իմ ահա մեծ և կարևոր յոր ջա-
նալ ինձ պարտ է անդուլուրթեամբ. գիտել
և ճանաչել զանկշռելի մեծութիւն և զառաւե-
լութիւն բարի մահուան, և անմոռաց յիշո-
ղակարծուց հասանել նմա հարուածն որով բառ-
նի: Յոյժ չար և ամենաչար զի մեռանի անապա-
շաւ: Արդ ոչ այսպէս իցէ մահ հեղգ և թարմա-
տար կրօնաւորի ըստ չափու պայմանին իւրոյ:
Աչքիւր արդարև և ցաւալի է նմանութիւնս
այս. բայց խորագոյնս քննեալ՝ որոշալով 'ի մտի
զոր ինչ գիտեմս, զորս լսեմ և զոր տեսանեմ
իսկ թերևս, ոչինչ անտեղի և առաւելազանց
գտանի:

Եւ որ այլ մեծագոյն պատճառք խոհուեմոյ
տագնապելոյ առն կրօնաւորի 'ի մեռանելն, որ-

պէս տեսանել զի չէ ինչ բնաւ արարեալ ըստ
պարտուց իւրոց և ըստ կանոնաց. զի կացեալ
յերկար 'ի տան Աստուծոյ՝ և չէ բնաւ ոտնփոխ
մի արարեալ 'ի ճանապարհին յոր առաքնորդէր
նմա Աստուած. զի թողեալ զքեզ զաշխարհ, և
'ի կատարածի աւուրցն՝ այնպէս զուրկ և թա-
փուր գտանէ զանձն յաստուածային հոգւոյ, և
այնպէս լցեալ և գրաւեալ խորհրդովք աշխար-
հականօք՝ որպէս եթէ զամենայն ցկեանս իւր
անցուցեալ եր յաշխարհին: Յայնժամ « Շուրջ
լինին զնովաւ երկունք մահու, և վիշտք գժո-
խոց պաշարեն զնա, և ժամանեն նմա որո-
գայթք մահու »: Քանզի վիշտք և երկունք մա-
հու ծնունդք են սիրելոյ զկեանս, զաշխարհ և
զանձն, և ահա յայսմ պայմանի կայ նա. սիրէ
զկեանս, սիրէ զաշխարհ, սիրէ և զանձն: Ո՛վ,
որչափ ծանր և գժաւարին եղիցի նմա խղճել
զկապանս զայնոսիկ, և որպիսի՛ մարտ խիստ և
սաստիկ հասցէ նմա. « Այսպէս գառն իցէ մահ »:

Զինչ առնել իցէ նմա յայնժամ. գիմել առ
Աստուած. այլ ո՞ւր ապաքէն տեսանիցէ Աստու-
ծոյ է որ յաճախէ զտագնապ նորա և զվհատու-
թիւն: Գիտեալով զիսոհ զգայնոյնքիւն իւր և
զնեղգործութիւն 'ի ծառայութեան նորա. զբաղ-
մունքիւն մեղացն, ընդ որս խրթև ընդ մնոտիս՝
ոչինչ խղճէր ամենևին 'ի մեզ և յաշխարհասէր
կեանս իւր, զանթիւ երկայնութիւնն՝ զորս
ստուգեալ ոչ կամէր, կամ ըստ հաճոյս իւր տայր
վճիռ. այսոքիկ համայն թէ ոչ մի ըստ միոջէ
մանրամասնաբար, այլ խառն 'ի խուռն և միա-
համուռ գան երեւութանան առաջի նորա և
զարհուրեցուցանեն զնա. և այնչափ առաւել,
որչափ զի անլուծանելի են վարանք երկիւղին և
անդարմանելի: Ամենայն ինչ յաւելուս նմա
կասկած և երկիւղ, խոստովանութիւնքն ա-

րարեալք, հաղորդութիւնք սուրբ խորհրդոյն,
յօժարութիւնք սրտի զորոց զհետ ջոգաս, ըն-
տանութիւնք և կենակցութիւնք զորս արար,
թիւր սկզբունքն որովք վարեցաւ 'ի ծանր և 'ի
կարևոր իրս, ինքնահաճ ազատութիւնք արհա-
մարհութեամբ կարգաց և կանոնաց, և յաճախ
ևս՝ 'ի գայթակղութիւն համօրէն միաբանու-
թեանն, առանձնաշնորհութիւնքն որոց հետա-
մուտ եղև, և հնարք՝ զորս 'ի վար էարկ առ այն:
Այսոքիկ ամենայն ոչինչ թուէին նմա յառաջն,
այլ այնր ժամանակի խիղճ մտացն լայն և
ընդարձակ՝ անձկացեալ 'ի ժամուն, մանաւանդ՝
թէ ուղղեալ՝ Հզօրիս առնէ զատաստան, առ
'ի յաւելուլ միայն զտագնապ նորա: Եւ թէ
խրախուսել ոք զնա կամիցի յոտնալ յողորմու-
թիւն Աստուծոյ, ամենայն բանիւք՝ զոր թէ
ասել կարիցէ, ոչ բաւեցնէ փարատել զերկևան
մտաց նորա, և յիշատակաւ հանապազորդ զան-
ցառութեանց պարտուցն իւրոց և երկիւղիւ
դատաստանացն Աստուծոյ ահաբեկեալ լքանի:
Եւ թէ ըստ աշխարհի մեղաւորաց ոչ անկցի 'ի
սպառ 'ի յուսահատութիւն, սակայն նշոյլն այն
յուսոյ առկայծեալ 'ի սիրտ նորա, նուաղ է
յոյժ և անբաւական 'ի կանդնել զնա և 'ի զօրա-
ցուցանել:

Բայց աւաղելի՜ւս է եթէ յանկարծուստ հաս-
ցէ նմա մահ. քանզի որպէս յաշխարհի՝ նոյնպէս
և 'ի կրօնի չմարթէ զերծ լինել 'ի յանկարծա-
հաս և 'ի վաղվղուտ մահուանէ. և որպէս յաշ-
խարհի, նոյնպէս և 'ի կրօնի՝ են որք ծածկապէս
պատուհասին յԱստուծոյ:

Համօրէն վանականք 'ի տեսիլ ողորմ արկա-
ծին գթան 'ի նա, և կարեկցաբար սիրով աղո-
թեն և աղերսեն վասն նորա յուսով. սակայն
չկարեն անտեսել զանբարի և զդայթակղական

վարս նորա, և սպիտին խոստովանել յայտնապէս, կամ գէթ ծածկաբար ասել՝ի մարթ թէ « Յանկալի էր յոյժ զի գոյր նորա ժամանակ զգաստութեան, և պատրաստելոյ զանձն՝ի մահ »: — Զի գոյր նորա ժամանակ... Իսկ զի՞ արդ. միթէ չտուաւ նմա բաւական ժամանակ, և զի՞նչ գործ էր նորա ընդ բովանդակ կեանս կրօնաւորութեան իւրոյ, ոչ ապաքէն հանապազորդ պատրաստութիւն առ՝ի մահ: Այլա ոչ եթէ պակասեաց նմա ժամանակ, այլ զի ոչ որպէս խրատէրն միշտ, գիտաց յօգուտ՝ի վար արկանել զայն մինչ՝ի ձեռս կայր, և եհաս յեղակարծ ժամն սահմանեալ՝ի Տեառնէ, և զոր հեռացուցանէրն յիւրմէ հանապազ, եկն եհաս՝ի ժամու յորում ոչ ակն ունէր: Քանի՛ քանիք՝ի կրօնաւորաց այսօրինակ զբաւեցան՝ի կենաց հանգոյն ինն աշխարհայնոց անապաշաւ մահուամբ. զի մեռան՝ի գաղջութեան իւրեանց և՝ի թուլութեան, ՝ի չար սովորութիւնն և՝ի ննաասակար յօժարութիւնս սրտի և հոգւոյ: Քանիք ևս, որոց էր պարապ ժամանակի զգաստանալոյ և զբացուցանելոյ զանձինս ընդունելութեամբ սուրբ խորհրդոց եկեղեցւոյ, ընկալան զայնոսիկ նովին իւրեանց սովորական գաղջութեամբ և անզգայ սրտիւ՝ որպէս յամենայն կեանս իւրեանց: Այս առած է հասարակաց ՃՀմարտեալ յամենայն ազգս կենաց մարդկան, զի որպէս կեայ ոք նոյնպէս և մեռանի. արդ մեայց և ես որպէս կեցի ցարդ, որպէս կեանն, և որպէս կամիմ և ցանկամ կեալ յայսմ հետէ:

ՄԱՍՆ Գ.

Ընչափ չար է մահ մեղաւորին, նոյնչափ և արդարոց պատուական է առաջի Տեառն, որպէս ուսուցանեն սուրբք գիրք: Պատուական է՝ զի մերկացեալ զատուցեալ յամենայնէ, մեռանին սրբութեամբ և անցաւ ամենևին: Պատուական է՝ զի մեռանին յուսալից՝ առաւելեալ միխիթարութեամբ և քաղցրութեամբ: Պատուական է՝ զի մեռանին միացեալ սրտիւ ընդ Աստուծոյ, և անցեալ ընդ կիրճ բարձրագոյն առաքինութեանց: Պատուական է՝ զի մեռանին՝ի ընորհս Աստուածոյ մեծագանձ պարգեւօք յարատեւակ ժուժկալութեան մինչ՝ի վախճան: Արդ զի՝ի թիւս արդարոց ոչ զլերկին տեղի ունին և հոգւիք Ճշմարիտ կրօնաւորաց, որպիսի եղէ ուրեմն մահ եռանդնոտ և հաւատարիմ կրօնաւորի՝ի ժամու անդ, յորում սկիզբն է վայելչելոյ նորա յարդիւնս վաստակոցն իւրոց և ընդունելութեան փոխարինացն:

Մեռանի խաղաղութեամբ և առանց ցաւոց սոսկացեալ՝ի սպառ յամենայն երից աշխարհին, ազատ է սկիզբ նորա և վերջ յամենայն կապանս որք արգելուն զնա կաշկանդեալ ընդ երկիր, և փոխանակ ցաւոց՝ գոհութիւնս վերառաքէ Աստուծոյ ասելով ընդ Դաւիթ. « Հատեր զկապանս իմ, քեզ մատուցից պատարագս օրհնութեան »: Զինչ ևս ինայ ինձ արդ, Տէր, բայց զօդ մահկանացու մարմնոյս, յորմէ արձակես զիս: Հաճ և հաւան եմ ընդ այն, նա՛և ցանկամ իսկ այնմ և փութագեմ: « Զինչ կայ իմ բնաւ, կամ՝ի քէն զինչ ևս խնդրեցից յերկիրէ»: Շատ է զի զքեզ գտից, զինչ իցեն այլք ամենայն: Ասացի նորա համարի մահ որպէս վախճան վըշ-

տակրուԹեանց իւրոց, և սկիզբն դերագոյն երա-
նուԹեան: Յաչս ամպարշալ համարի մահ որպէս
սպառսպուռ եղծուման մարդկուԹեան. եւ կայէ
արդարոյ՝ անց նմին ՚ի վայրկ աքսորանաց կեր-
նաւէտ հայրենիս, և ման այնորիկ ոչ բնաւ ցա-
կեսցէ նմա:

Մեռանի յոսափից և երկիւղած վատահու-
Թեամբ. և ընդ֊ի֊ բոյկ նմա երկնչել՝ մինչ տեսա-
նէ զինքն առանց պանծալոյ յանձն իւր, ձոխա-
ցեալ արդեամբք վաստակոց ՚ի կրօնի: Այն ամե-
նայն վաստակք ցիր և ցան սփռեալք յամենայն
կեանս իւր, գան ժողովին միահամուռ առաքի
իւր և ընուն զնա ինդուԹեամբ այնպիսեաւ, որ
քաղցրացուցանի նմա զդառնուԹիւն մահուն:
Մինաք իւր և խորհուրդք համայն կերկինս բե-
րին՝ յոր փոԹիլ ելանել յոսափից ժամանելոյ
անդր: Եւ Աստուած ինքնին, իբր առհաւաս-
Ճեայ քաւխտենական երանուԹեան կանխէ չը-
նորհել նմա քաղցրուԹիւն իմն այնպիսի, որով
որպէս ՚ի զմայլման կարէ գոչել ընդ նախա-
վկայն. « Ահա տեսանեմ երկինս բացեալ և
զՅիսուս զի կայ ընդ աջմէ Աստուծոյ »: Մեռանի
միացեալ ընդ Աստուծոյ սիրալիր միուԹեամբ և
վարժ և սովոր յառաքինուԹիւնս յորս մարդե-
ցաւ ընդ երկար ՚ի կեանս իւր, ժողովէ յայն-
ժամ զարդիւնս վարժիցն և գեղեցիկ սովորու-
Թեանց: Եւ ԹէպԷտ յերկուս մահու և ՚ի յե-
սին տիարուԹեան, սակայն ոչինչ կրէ դժուա-
րուԹիւն վերանալ մոջ առ Աստուած՝ նուի-
րելով նմա զանձն իւր ՚ի պատարագ: Սովորեալ
՚ի սուրբ խոհմուԹիւնս և ՚ի մտածուԹիւնս՝ ինքնին
իսկ անաչխատ մտաբերէ զայնոսիկ, և դարձ
բանք խօսեցեալք առ նա զԱստուածոյ և զաս-
տուածայնոց, բաւականք են ՚ի վառել առժա-
մայն և բորբոքել զիղձս սրտի նորա:

Հուսկ ապա՝ մեռանի ՚ի չնորհս յարատևու-
Թեան մինչ խոպատ, որ քան զամենայն չնորհս
մեծագոյն է և լուսին հանապազորդ աւելլով լու-
սոյ և հաստատուԹեան ՚ի կատարումն կրօնա-
կան պարտուցն: Քանզի ՚ի պահասել վերջ-
նոյ յարատևուԹեանն, չքանայ և առաջինն, և
միոյն է ունել զմիսն: Այսու օրինակաւ մեռա-
նի ՚ի բարեկամուԹեան ընդ Աստուածոյ, մեռա-
նի ՚ի գերկս Աստուածոյ և ՚ի ծոց նորա, ուր եր-
Թայ հանգչէլ հոգւով և ՚ի սրբուԹենէ փոխել
յանմեղանչականուԹիւն: Զի ԹէպԷտ և սուրբ
էր, ԹէպԷտ և միացեալ ընդ Աստուածոյ, սա-
կայն ՚ի վտանգի կայր միշտ վչասուցանելոյ
և անկանելոյ ՚ի չնորհաց նորա. այլ յայնմ հետէ
ոչինչ այլ մեայ նմա բայց սիրել զնա և փառաւո-
րել:

ԱՂՕԹՔ

Զինչ առաւել ցանկալի սրտի իմոյ, ո՛վ Տէր,
քան զնահ երջանիկ. այլ աւաղ հիգուԹեանս
իմոյ՝ զի ցանկամ մեռանել սրբուԹեամբ և խրն-
դրեմ զայն ՚ի քէն. բայց զոր դուդ խնդրես յի-
նէն առ այն՝ զսրբուԹիւն վարուց՝ զայն ես ոչ
կամիմ: Եղո՛ւկ ինձ, Տէր, զի այսու չկամուԹ
Թեամբ յանցուցեալ եմ շարդ և յանցանեմ: Բայց
արդ հարկ է ինձ խնդրել և զայս միանգամայն:
Զի ըստ կարգի և ըստ օրինաց տեսչուԹեանդ
քո՝ յանձին սովորուԹեամբ ոչ չնորհես զմին ա-
ռանց միւսոյն: Եւ խաբէմ մեծապէս ակնկալեալ
հանդիպել մահուան նախանձաւոր քոց ծառա-
յից, առանց ծառայելոյ քեզ իբրև զնոսա:

Յորպիսո՛ւմ վտանգի լեալ է իմ ապա յայնչափ
ամս կենաց իմոց, և գտանիմ տակաւին հեղ-
գուԹեամբս իմով և անհոգուԹեամբ ՚ի ծառա-

յԵՂ-քեզ: Տուր ինձ, Տէր, իմանալ զայն այժմին, և աղեաս յիս զերկիւղ և զսոսկումն մահուն ՚ի կեանս իմ, զի մի ՚ի մեռանելն առից զայրը ըզփորձ:

Բայց սխալեմ, Տէր, երկնչիմ՚ի մահուանէ և կարի յոյժ երկնչիմ, այլ ոչ որպէս պարան է երկնչել: Հաւատ զայն ուսո՛ ինձ Թէ ոչ որպէս պարա՛ ես երկնչել: Երկինչի ոք ՚ի մահուանէ՝ զի սիրէ զկեանս. և է այն երկիւղ մարդկային ոչ ըստ արժանի հաւատացելոյ և կրօնաւորի: Այնու քանաւորական երկիւղիս գարշի մերժի ՚ի մահուանէ, և զմուա՛ իսկ ածել զայն ոչ կամի, զի մի վրդովեալ տագնապեսցի. կամ եթէ ածէ իսկ զմուա՛, առ ՚ի խոսեալոյ է յայնմանէ. և որ չաւ ՚ի կարի իւրում է ՚ի բաց հեռացուցանելոյ զայն յիւրմէ նախասահմանա զդուշութեամբք, զորս անձնասիրութիւն և անձնդիւրութիւն Թելադրեն ինքեան: Երկիւղ այդպիսի ոչ միայն օգտակար ոչ է, այլ և կարի յոյժ վնասակար, ծնող և սնուցիչ Թուլութեան և մեղկութեան: Ոչ այդ երկիւղ է, Տէր, զոր կալան սուրբքդ ՚ի մահուանէ, և ոչ այդպէս երկնչել ինձ պարտ է: Զինչ օգնէ ինձ կեալ. այլ օգնէ մեծապէս բարւոք և կրօնաւորաբար կեալ՝ զի նոյնպէս և մեռայց: Երկնչել ինձ պարտ է ոչ ՚ի մահուանէ, այլ յորոց վշտաց գան մահուն ահաւորք, զի ապրեցայց յայնցանէ: Երկինչել ինձ պարտ է յահագին վտանգէ յանկարծահաս մահուան, զի մի յեղակարծ հասցէ ինձ այն: Երանի՛ այնմ որ երկիւղիս այսուիկ արթուն կայ միշտ և պատրաստ: Հաճեաց, Տէր, ողորմութեամբդ քով տալ ինձ զնորհդ զայդ, զի երկիւղ մահուն լեցի ինձ՚ի զգաստութիւն և՚ի սրբութիւն:

Յաղագս աստուածային դատաստանի

ՄԱՍՆ Ա.

Զհետ մահու դատաստան, այս ինքն է զի ընդ բաժանել հոգւոյ ՚ի մարմնոյ՝ պարտ է նմա յանդիման լինել աստուծոյ: Ոչ ձանապարհ ինձ առաջի կայ առնել, և ոչ տեղա փոխել առ՚ի յանդիման լինել գատաւորին իմում. ուր և հասցէ ինձ մեռանել, անդ գտանի Աստուած առ՚ի գատել զիս. ամենայն ուրեք է, և ամենայն ուրեք ներգործէ նովին զօրութեամբ: Ապա ուրեմն ընդ փչել ղշունչ իմ յերին, գայցէ շուրջ պատեալ՚ի մեծվայելչու թենէ փառաց նորա: Ոչ տեսից զփառս նորա, այլ զմեծասաստ բարբառ ևեթ նորին լսեցայց զդատողական, որ զգատակնիք իմ տալոց է: Եւ զինչ արարից յայնժամ. յո՞ գիմեցից, ո՞ լեցի ինձ պաշտպան: Ի զուր ջանացայց խոսել յերեսաց նորա, զի՚ի ձեռս Աստուծոյ կենդանւոյ գտանիցիմ անկեալ: Ի զուր զարարածս ամենայն կոչեցից յօգնութիւն. զի զինչ նորա զօրեցից ընդդէմ արարչին իւրեանց և իմ: Եղբարք սիրելեաք, և միաբանութիւնն համբիւն՝ յորում կեցի՝ շուրջ զդիակամբ իմով կացեալ վշտասցին, աղօթեսցեն, և ուխտս առ Աստուած ման իմ մատուսցեն. այլ աղօթք նոցա և ուխտք զինչ օգտեսցեն ինձ, եթէ ոչ լուիցէ նոցա Աստուած. և զինքրդ խոկ կարիցէ լսել, եթէ կեանք իմ չիցեն լեալ աղօթից նոցա արժանի: Գոյացյ ապա յայնմ ահեղ աւուրն լքեալ Թողեալ յամենեցունց յԱստուած և յիս. յԱստուած յորոյ՚ի ձեռս է յաւիտենական բախտ

իմ, և որ պատրաստի տալ զայնմանէ վճիռ. և
յիս՝ որ անօգնական և կողոպուտս յամենայնէ,
ոչ այլ ինչ ունելցիմ առ իս՝ բայց միայն զգործս
իմ: Եւ զի՞նչ լինիցի ինձ, եթէ և այսոքիկ պա-
կասեսցին: Ո՜հ, զի յայնժամ ուսայց զարդ սըր-
բութեան, զարդ կրօնաւորական վարուց. յայն-
ժամ զմեծութիւն կոչման իմոյ, եթէ հաւատա-
րիմ լեալ եցեմ՝ ի նմին, և կատարեալ զպարտս
իմ: Ո՜հ, զի յայնժամ հասցէ լինէ՛ ի թիկունս
հնազանդութիւն բոլորանուէր, աղքատութիւն
մերկ յամենայն ըղձից սեփականութեան, մե-
ռելութիւն զգայութեանց, հրաժարումն յաշ-
խարհէ, երկիւղած պահպանութիւն կարգաց և
կանոնաց, հանապազորդութիւն յաղօթս, և
փոյթ և խնամ՝ ի կատարումն պարտուց իմոց:
Ո՜հ, քանի գոհ գայցէ և հաճ, եթէ բուռն ա-
րարեալ եցեմ բնութեանս իմում, եթէ պատե-
րազմեալ ընդդէմ կրից, եթէ ոչ մոլորեալ՝ ի
հրապոյրս չար օրինակի, ոչ՝ ի թուլութիւն հա-
մարեալ, և ոչ՝ ի պատճառանս հեղգ բնու-
թեանս իմոյ խոնարհեալ: Այսոքիկ միայն հաս-
ցեն ինձ յօգնութիւն, այսոքիկ ևեթ սփոփես-
ցեն զարհաւիրս իմ յաւուրն՝ ուր անոք անօգնա-
կան անձամբ անձին պարտիմ դալ պաշտպան և
պատասխանատու: Իսկ եթէ ընդհակառակն
ոչ ինչ՝ ի կենաց իմոց գտից խրախոյս, և մերկ
և աղքատ յանդիման եղէց Աստուծոյ, որ ըստ
գործոց իմոց դատելոց է զնա՝ և չգտանիցեմ՝ ի
կեանս իմ այլ ինչ՝ բայց գաղջութիւն, հեղգու-
թիւն, անպատրաստութիւն, և ահարկու վիհ դատա-
կութեան. որպիսի՞ աղէտք, որպիսի՞ տագնապք
դժոխոց զնա պաշարեսցեն: Ֆանի՛ ցանկալի լինի
ինձ յայնժամ անդրէն միւսանգամ սկսանել ըզ-
կեանս, և որպիսի՞ վարել կեանս՝ եթէ լինիցէ ինձ
հնար վերակենցաղել:

Այլ արդ ժամանակ՝ ի ձեռս իմ է՝ և գուցէ
ընդ հուպ ոչ ևս իցէ. հապա, ուր կամ, զի՞ յա-
պաղեմ: աղէտք՝ յորմէ ինդրեմ զանձն ապահո-
վել՝ մեծ են յոյժ և արժանի ամենայն վշտա-
կրութեան և նախահոգ զգուշութեան:

ՄԱՍՆ Բ

Գաւեղոց է զնա Աստուած, և զամենայն կե-
նաց իմոց պահանջելոց է յինէն զհամար: Յօրէ
յորմէ ծանեայ զնա, մինչև ցօր վախճանի իմոյ՝ որ
ինչ գործեալ եցեմ ամենայնն մատուսցի՝ ի
հարցփորձ, և ոչ բան մի գաւառակ՝ ի հարցփոր-
ձէ անտի զերծ գտանիցի. զի «Ընդ ամենայն
գաւառակ բանի տայցէք, ասէ, համարս յաւուրն
դատաստանի»: Եւ ոչ միայն ամենայն գործք
իմ մատակեն՝ ի հարցփորձ, այլ և ամենայն յա-
րակից նոցին հանգամանք՝ որք զկիրս մեզաց ի-
մոց յաւելուն. պարտք ըստ բնական լուսոյ,
պարտք ըստ աւետարանական օրինաց, պարտք
ըստ կրօնաւորական ուխտից, պարտք ըստ քա-
հանայական կարգի. և ըստ ամենայն պարտուցս
այսոցիկ պահանջեցայց համար: Բարեգործու-
թիւնք իսկ գործեցեալք յինէն՝ ածցին՝ ի քըն-
նութիւն, և թերութիւնք և օտարոտի գիտա-
ւորութիւնք սպրդեալք՝ ի նոսա՝ ոչ ծածկես-
ցին յամենատես աչաց դատաւորին իմոյ, որ՝ ի
միում քթթել ական առաջի աչաց իմոց զամե-
նայնն ածցէ՝ ի տեսիլ, զմոռացեալսն իսկ յինէն
և զանծանօթս. ՝ի միակ ՝նշոյլ աստուածային
լուսոյ ցուցցէ ինձ զամենայն զնորհուրդս, ըզ-
բանս և զգործս իմ անշփոթս ընդ միմեանս, որ-
պէս եթէ ուրոյն զմի մի՝ ի նոցանէ նկատէի: Եւ
այնպէս՝ ի տեսիլն յայն յաղթահաւաքեսցին միտք
իմ, զի ես ինձէն ածից զինեւ զդատաւինիք՝ մինչ-

չև դատաւորին տուեալ զվճիռ դատապարտու-
թեան իմոյ:

Ո՛հ, որպիսի տեսարան լիցի լինիլ այն. եթէ
զաչս անտի ի բաց դարձուցանել կամիցեմ, խիղճ
մտաց իմոց բողոք բառնայցէ. և որ երբեմն խոր-
հրդատուս բարեաց էր լինէ՝ յարիցէ լինէ ոսոխ,
և գահիճ եղեալ յայնժամ արգարութեանն
Աստուծոյ անողոքելի՝ յաղթահարեսցէ զմիտս
իմ, և յաղևողորմն յայն բռնադատեսցէ զիս ի
խոստովանութիւն ոչ ևս լինէ փրկարար, թէ
մեղապարտ եմ: Ո՛հ, ընդէ՞ր էցէ լինէ չասել զայն
այժմէն լինէ ի փրկութիւն. ընդէ՞ր էցէ լինէ ոչ
այժմէն իսկ անկանիլ առ ոտս խաչին բեկեալ
սրտիւ, և առնել զխոստովանութիւնն զայն՝
մինչդեռ օգնէ լինէ, և ստիպել յատենին Աստու-
ծոյ ի յուսահատ սրտէ առնել զայն ուժգնու-
թիւ: Ընդէ՞ր էցէ լինէ չլսել ազդեցութեանց խղճի մե-
ռած իմոց, և ոչ այժմէն իրաւախոհ լինել ընդ
ոսոխի իմում մինչդեռ եմ ի ճանապարհի, զի
մի մատնեսցէ զիս դատաւորին: Զի եթէ սա
հաշտ էցէ ընդ իս, լիցի լինէ փաստաբան յատե-
նին յայնմիկ. առաջի արասցէ դատաւորին ի-
մում զեղջ և զապաշաւ իմ, և զանկեղծ առա-
ջադրութիւն իմ. և ընդէ՞ր ի համապարփակ
մատենէն որ ինչ ի դատապարտութիւն իմ էցէ
անդ արձանագրեալ, և ընկալցի լինէ զիողոչ-
թիւն այնոցիկ առ հասարակ:

ՄԱՍՆ Գ

Ըստ հարցափորձին զոր արասցէ լինէ Աս-
տուած, տացէ զվճիռ դատապարտութեան ի-
մոյ և կամ փրկութեան: Եւ թէպէտ դատա-
կնիքս այս չէցէ ի համաչխարհական աւետիս տը-
ւեալ, որպէս զայն՝ զոր ի վերջնումն դատաստա-

նի տալոց է, սակայն ոչ ինչ նուազ քան զայն
հաստատուն լիցի և անդարձ: Զի որ ինչ վճռեա-
ցէ անդ զնոսին Աստուած, կամ դատապարտու-
թիւն յաւիտենական, և կամ երանութիւն ան-
վախճան, ոչ ևս դարձուսցէ զայն յետս. զի և
ոչ մարթի լցէ լինէ այնուհետև բարի ինչ կամ
չար գործել: Կարևոր է ինձ ասել, և յոյժ կա-
րևոր, զի վճիռն այն լիցի լինէ նպաստաւոր. ա-
պա թէ ոչ՝ որպիսի ինչ ազէտք հասցեն ի վե-
րայ իմ:

Մտածութիւն սոսկալի. և որպէս կարացի ես
ցարդ անցուցանել զկեանս իմ առանց խոկալոյ
յայս. զի՞նչ այլ մշտայուշ յիշատակի էցէ ար-
ժանի: Նկարեա ի մտի, անձն իմ, թէ յանդի-
ման կայցես առենին Աստուծոյ. և զի յետ հար-
ցափորձին՝ ածէ զքեզ Աստուած զդատակնիքն
զարհուրական՝ թէ «Երթ յինէն անիծեալ»:
Ո՞ր հարուած չանթի գժնդակագոյն քան զայն
կայցէ: Մերժել յԱստուծոյ իմմէ. զկո՞ր յաւէր-
ժաբաւ ի նմանէ. անէծս ի նմանէ ընդունել.
և անէծս անողոքելիս՝ որով ոչ ևս ճնասցէ լինէ
յոյս ժառանգելոյ զնա: Աւա՜ղ. առ այս ուրեմն
թողի զաշխարհ, առ այս կոչեաց զիս նա ի կրօն,
պատապարեաց զիս ընդ յարկաւ տան իւրոյ, և
ետ լինէ չնորհս սրբութեան: Կամէր ընտանե-
գոյն իւր զիս քան զսյլս ի հաւատացելոց, և
ահա մերժէ զիս յերեսաց իւրոց. կամէր զիս ի
թիւս ընտրելոց իւրոց, և ահա ընդ դատապար-
տեալս է բաժին իմ. կամէր ի բարձրագոյն կայս
երկնից զիս ամբառնալ, և ահա գահավիժէ ի
վէհս անդնդախորս գժոխոց: Աւաղ լինէ, և բիւր
աւաղ. և ըստ հանդուրժես, անձն իմ, մտաւանալ
վայրկեան մի զահագին վտանգդ և ոչ ապահո-
վել զանձն այսմ: Համարեսջիր այժմէն ի նոյն
հասեալ ի վտանգ. և որ ինչ վտանգն այն ազդէ

'ի սիրտ քո արհաւիրս, ըստ այնմ զկեանս քո անօրինեա: Երանի՛ քեզ, և բիւր երանի, եթէ նորոգութեամբ կենայց քոց պատկեր ևեթ անձկակ աղէտից այս լեցին քեզ 'ի միտս քո նկատեալք և ոչ երբեք արդիւնք իրաց:

Այս նորոգութիւն, այս փոփոխումն կենայց, կարեն փոխանակ անիծից պատրաստել ինձ զվճիռ աստուածային օրհնութեանն. և փոխանակ աղետալի դառնակնքոյն, որ սպառնայր ինձ՝ եթէ հանապազորդեմ յառաջին կեանս իմ, քաղցրը եղիցի ինձ լսել 'ի բերանոյ դատաւորին իմոյ զհրաւէրն ցանկալի և զսիրելիս բարբառն. « Ա՛ղնիւ, ծառայ բարի և հաւատարիմ, որով հետև 'ի սակաւուդ հաւատարիմ եղեր, 'ի վերայ բազմաց կացուցից զքեզ. մուտ յուրախութիւն տեառն քո »: Զմայլեալ յայնժամ սուրբ և աստուածային ուրախութեամբն, և զանձուածքաղցրութեանն առեալ զձայնակ, խելամուտ եղեց՝ զի սակաւ ինչ էր զոր պահանջէրն յինէն Աստուած յաշխարհի, և զի ամենայն վշտակրութիւնք առ համեմատութեամբ վարձուցն պատրաստելոց 'ի նմանէ՝ ոչ ինչ են: Եւ եթէ էր ինձ մարթ յայնժամ վշտանալ ընդ իմն, վիշտ մեծ այն լինէր ինձ՝ թէ ընդէր խնայեցի ևս, ընդէր չափ և սահման պարտուց իմոց եդի, և ոչ անդր քան զամենայն սահման զձիւն իմ և զեռանդն ընդարձակեցի:

ՍՂՕԹՔ

Աստուած իմ, որոյ առաջի և երկինք անգամ չեն սուրբ, և 'ի հրեշտակս իսկ գտեր թերութիւն, աւա՛ղ, և որպէս հանդուրժեսցէ երեսաց քոց արարած տկար իբրև զիս, և ինքն իշխեսցէ միանալ ընդ քեզ 'ի դատաստան հոգւոյ այսքան

նեաք ծանրացեալ պարտեաք: Զի ողորմութիւն քո, յոր ամենայն յոյս իմ հաստատեալ է, ոչ ևս յատենին յայնմիկ կալցի տեղի, այլ արդարութիւն ևեթ քոյին բազմեսցի անդ դատաւոր: Զինչ ապա խնդրեցից 'ի քէն, Տէր, զծո՛ր այլ պաղատանս մատուցից, բայց զի մի թողցես յօրն յայն զդատաստան իմ, այլ դատեա զիս 'ի կեանս յայս՝ ուր դատաստանք քո ողորմութեամբ են: Ցիրաւի է ինձ կրել զպատուհաս մեղաց իմոց. այլ դու, Տէր իմ, մի զպատուհաս իմ թողուր յատենանդային՝ ուր սրամտութեամբ քով յանդիմանես զիս և բարկութեամբ քով դատես:

Այլ դու, որ 'ի վերդ ես բարութեամբ քան զամենայն միտս, և ոչ դատել զիս 'ի կենցաղումս յայսմիկ կամիս, եթէ միայն ես ինքն անձամբ անձին կամիցիմ լինել դատաւոր. դու հաճիս և զերբաւունս քո յիս առնել ապաստան, եթէ միայն լեցի ինձ փոյթ. առնել ընդդէմ անձին իմոյ արդարութիւն որչափ յիսն է: Եւ որ կուրութիւն աւաղելի քան զիս կայցէ, եթէ չառնուցում յանձն զպայման այսպիսի՝ զի մարդասիրութեամբ: Ընդունել ընդունիմ 'ի բոլոր սրտէ զշնորհ քո զայդ, Աստուած իմ, և ներքոյ արկանեմ զանձն իմ բարեբար կամացդ: Դատեցայց զիս այսուհետև ինձէն. կոչեցից զիս յատեան խղճի մոաց իմոց, եղէց անձամբ անձին դատախազ և վկայ, դատեցից զամենայն զկեանս իմ խնամ հարցափորձիւ, և սահմանեցից ինձ պատուհաս արդար 'ի հատուցումն մեղաց իմոց. և կրեցից զայն մինչև խիղճ մոաց իմոյ՝ պաշտօնեայ արդարութեան քո՝ լեցի հաճ, և որչափ տկարութիւնս իմ բերել կարասցէ: Եւ զմիացուած կենայց իմոց շնորհօք քո, Տէր, այնպէս անօրինեցից, զի 'ի կոչել քո զիս՝ ոչ ինչ

լեցի ինձ խափան գալոյ առ քեզ՝ և ժառանգե-
լոյ զանվախճան երանութիւնն՝ զոր խոստացար
ինձ և պահես սիրելեաց քոց։

Ճաղագս դժոխոց

ՄԱՍՆ Ա.

Երեք ինչ պարտ է մտածել զդժոխոց, որ
Թուրն հնանալն, և զարհուրանաց են արա-
բիչք. նախ՝ զի Աստուած ընդ ամենայն յաւի-
տեանս ոչ արասցէ անդ շնորհս և ոչ մի, այն որ
է գանձ ողորմութեանց։

Աստուած՝ որոյ բնութիւն է բարութիւն,
Աստուած՝ որ՝ի սկզբանէ հետէ աշխարհի ծագէ
զարեգակն անխափիր՝ի վերայ բարեաց և չարաց,
Աստուած՝ որ՝ի փրկութիւն Թշնամեաց իւրոց
և մեզաւորաց էջ՝ի փառաց իւրոց, զգեցաւ
զմերս բնութիւն, և հաճեցաւ մեռանել՝ի խա-
չի, յետ այնչափ բարեբարութեանց և տալոյ
ապացոյցս զգալիս զսիրոյ իւրոյ, ոչ ևս երբէք
հայեսցի քաղցրութեամբ՝ի մի ևեթ ոք յանար-
դելոց, և ոչ երբէք ցօղեսցէ՝ի վերայ նոցա չնե-
մի չարենէն՝ զոր եհեղ վասն նոցա առատապէս
՝ի չարչարանս իւր. որպէս զի ողորմութիւնն
աստուածային, որոյ անսահման է ծաւալումն
՝ի վերայ այլ ամենայն արարածոց, ևս և անար-
գաց, կացցէ մնասցէ յաւիտեան անգործ առ
դատապարտեալս։ Բարձցեն աղաղակ ողբալի,
առաւպէսցին, հեղցեն ըստ աւետարանականն
բանի ուղիս արտասուաց, այլ Աստուած վրէժ-
խնդիր ոչ երբէք ամենևին եցէ զգաշուկ իւր, և
ոչ վայրկի մի հարուածոց իւրոց գոլ արասցէ. և
ցորչափ Աստուած իցէ Աստուած, (որպէս է-
ղեն միշտ և եղիցի), տեսցէ զՅոգիան զայնոսիկ
առեղծեալս յիւրմէ՝ի պատկեր իւր, ՚ի գրոշ-
մեալս հնքով աստուածութեան իւրոյ, տեսցէ

զՀոգիս՝ որ բերեն յանձինս զինեալս սուրբ խորհրդոյ իւրոյ, առանց երբեք չարժեզոյ ի գործ: Մանրէ էր ինձ հաւատալ այսմ, եթէ ոչ իւր իսկ յայտնեալ էր մեզ զայս. այլ մանն է այս հաւատոց, զոր դաւանեմ: Պարտ է ապա զի հոգի անարգեալ՝ գարշելի յոյժ եղէ յաչս Աստուածոյ, զի առելութիւն՝ որով առեալ զնա Աստուած՝ այսպէս խստացուցանէ զԱստուած, և փակէ առ հոգին այն անիծեալ զամենայն աղբիւրս չնորհաց:

Այլ զինչ է՝ որ այսպէս ոտիզացուցանէ զնա յաչս Աստուծոյ, և կացուցանէ այսչափ գարշելի: — Մեղքն, զոր տեսանէ Աստուած ի նմա, և որ կայ և մնայ անմահ. զայս կեղտ՝ որ ոչ ևս է ընդելի՝ կրելով յանձին մեղաւորն, լեցի միշտ աստուածային զոհ բարկութեան ի դատաստանութիւն: Կարէր մեղաւորն ի կենդանութեան իւրում ջնջել զկեղտն զայն առելի, նուաճեան իւրում ջնջել զկեղտն զայն առելի, կարէր հրաժարել ի մեղացն, և դառնալ ի չքնորհս: Էր նա մեղքն ի սկիզբն դատապարտութեան իւրոյ, չև ևս ի կատարածի: Եհաս մահ. և ի կեան յայն անդարձ, մեղքն զոր մարթ էր նմա քաւել ապաշխարութեամբ գտաւ անքաւելի. դատապարտութիւնն այն կանխեալ, բայց սկսեալ ևեթ, դատ կատարեալ, և ընկալաւ պետին կատարումն իւր. ողորմութիւնն այն երբեմն նախաժամանի, և պատրաստ ի հեղուլ և ի քաւել, փակեցաւ ամիսուկեցաւ, ոչ ևս դարձի. և զի գտանէ միշտ զմեզս անդ կենդանի, լեցի միշտ այն ըստ աստուածասաստ վճռոյ արդեալ անյաղթելի՝ որ զնա ընկերկեսցէ, և ոչ ևս կարասցեն մեզք պատել զայն. այլ ընդ ամենայն յաւիտեանս, արդարութիւն ներգործեցէ անդ, արդարութիւն հարցէ, արդարութիւն խնդրեսցէ զնրաւունս իւր և զվրէժ: Ո՛հ,

կոյր եմ ես, եթէ ոչ ասեմ ի միտ առնումն. զարհուրել յարդարութենէն Աստուծոյ, և յանկանելոյ ի ձեռս իւր. Բ. զարհուրել առաւել ևս ի մեզաց, զի արդարութիւն Աստուծոյ վասն մեզաց ևեթ է զարհուրելի. և Գ. մի երբեք անփոյթ առնել զողորմութիւն Աստուծոյ, ի տալ նորա ինձ զայն առատապէս. այլ ամենևին յօդուտ ի կիր արկանել զայն, առ ի զերծանել ի վրէժխնդրութենէ իւրմէ:

ՄԱՍՆ Բ

Մինս այլ ինչ արժանի հետացման, և որում պարտ է ոչ ինչ նուազ արհաւիրս արկանել ի մեզ, այն է՝ զի հոգիք արարեալք վասն Աստուծոյ, առ ի տեսանել զնա, առ ի սիրել զնա, առ ի ժառանգել զնա, և ժառանգութեամբ նորա լինել երանելի, ոչ երբեք տեսցեն զնա, բայց ի գժոխոց. ոչ երբեք սիրեսցեն զնա, ոչ երբեք ժառանգեսցեն. այլ հակառակ ամենայն բնական բերման իւրեանց և յօժարութեան՝ որ ածէ զնոսա առ Էն գերագոյն, կէտ յետին և կենդրոն հանգստեան իւրեանց, տեսցեն զնա յաւիտեան, հայհոյեսցեն զնա յաւիտեան, և ի ծանօթութիւն անսահման կատարելութեանց նորա՝ որ մնասցէ ի նոսա, և ի տիպս կերպարանաց՝ զոր կալցեն ի մարդ, գոցեն յաւիտեան զաստակագոյն պատուհաս իւրեանց, և զպատաժառ յուսահատութեան:

Քանզի բաժանեալք Աստուծոյ բռնի, որպէս թէ խլեալք յամենայն վայրկենի ի ծոցոյ իւրեանց արարչին, բոլորովին անջատմամբ, զրկեալ գտանին յամենայն կցորդութենէ ընդ Աստուծոյ, յաւիտենական անջատմամբ՝ որ բառնայ ի նոցանէ զամենայն հնարս և զամենայն

յոյս գարձի նոցա 'ի միւԹիւն: Եւ գարձեալ՝ ղի ԹէպԷաև Թշնամիք Աստուծոյ, սակայն յիշելով միշտ և հանապազ զԱստուած որպէս գեր 'ի վերոյ քան զամենայն բարի և միայն գեղեցիկ, ԹԷ չինեբեան և ԹԷ առ իւրեանս, որպիսի ոչ ղոք այլ կարասցեն ունել, որպէս բարի անսահմանի. որ հանդերձեալ էր ընել զամենայն խղճ նոցա, և կացուցանել զնոսա 'ի կատարեալ երանութեան, որպէս բարի՝ որ սահմանեալ էր ինքեանց, և օրինաւորապէս երաւունք էին իւրեանց ժառանգելոյ զայն, որպէս բարի՝ յորմէ 'ի բաց անկանել լրումն աղետից է նոցա, և կորուսին զայն վասն մնոտի երից, որպէս բարի՝ որոյ ցանկային միշտ ըստ անհրաժեշտ հարկի էութեան իւրեանց, և զոր ըստ գԺնդակ Թըշնառութեան իւրեանց ոչ երբեք կարասցեն ունել: Այս է որդին՝ որ կերիցէ զնոսա անքուն, և որ ածցէ զնոսա 'ի զայրոյթ և 'ի կատաղութիւն յաւիտեան:

Այսու անողորմ՝ներկայութեամբ խորհրդոց, զԱստուած՝ որոյ անձկումն միշտ առջորին՝ առտեան, և գարշին 'ի նմանէ. և յորմէ գարշելին, ոչ դադարեն երբեք յանձկալոյ նմին 'ի տանջանս իւրեանց: Խղճք և անձկութիւնք մնոտիք, քանզի ելոյն նոցա ցաւագինք. և որ սաստկագոյն յոյժ զցաւս նոցա գործէ, այն իսկ է զի են անօգուտք: «Զի՞ որ պահիմ հաւատարեսցէ այնմ, ասէ սուրբն Բեռնարդոս, որպէս կամիմ հանապազ որ ինչ ոչ լիցի երբեք, և չկամիմ երբեք որ ինչ լինելոց է հանապազ»: Հոգի դատապարտեալ ցանկացեալ միշտ ելանել առ Աստուած, և ոչ երբեք կարասցէ. ոչ կամեցեալ երբեք բաժանել յԱստուծոյ. և միշտ հեռի կացեալ յԱստուծոյ Թշուառ ըստ ամենայնի, այս ինքն Թշուառ՝ զի է լքեալ յԱստուծոյ իւրմէ, և Թըշուառագոյն՝ զի 'ի լքման անդ զեալ զկորուստն արարեալ, և ըմբռնեալ զբովանդակ մեծութիւն նորա. Թշուառագոյն՝ զի անկեալ գոանի յամենայն իրաւանց Թագաւորութեան և ժառանգութեան Աստուծոյ. և առաւել Թշուառագոյն՝ զի 'ի գառնագէտ կործանման անդ ցանկայ ևեթ և հառաչէ անձկակարօտ զՏէտ երանաւէտ օթևանին. Թշուառագոյն վասն սաստկութեան կրիցն, և բիւր անիծիւքն ընդդէմ Աստուծոյ իւրոյ. և առաւել Թշուառագոյն, զի հանդերձ ամենայն անիծիւքն և հայհոյութեամբք ձգի սաստկապէս առ արարչապետն, յորմէ ընկալեալն էր զամենայն, և յորմէ պարտ էր նմա ակն ունել ամենայնի:

Ահա, ընդէր չկարէ մոռանալ զնա, ընդէր չկարէ Թօթափել յանձնէ զբեռնն զայն՝ որ ձգէ զնա 'ի բարչ, և զբերուումն՝ որ տիրէ և բռնանայ 'ի նմա. եթէ կարէր, գԺոխք ոչ էս լինէին նմա, բայց կիսամանեայ: Իսկ այն որպէս և է. այլ ինձ անկ է քննել՝ Թէ ինչ հանգամանս գոանիմ ընդ Աստուծոյ. կարիցեմ համարել զիս միացեալ ընդ նմա ընորհօք. եթէ այո, ոչ է ինձ մտրԹ՝ ոչ ըստ արժան բաւականին գոհանալ զնմանէ, և ոչ առաւել քան զբաւականն զգուշանալ՝ զի մի գուցէ բարձցի լինին գանձն անդին: Իցէ՞ն ինձ պատճառք խնԹալոյ՝ զի մեզք բաժանեալ լցեն զիս Աստուծոյ, կամ բաժանել կարիցեն ընդ հուպ. 'ի վերայ այսորիկ պարտ է ինձ արԹուն կալ, և 'ի կիր արկանել զամենայն դեղ զօրաւոր և պատրաստ: Կեալ արդ բաժանեալ Աստուծոյ և ոչ 'ի ընորհս իւր, է 'ի վտանգ արկանել զիս յաւիտենական բաժանման 'ի նմանէ յետ մահու: Պատապարտեալք ոչ կարացեն զԱստուած յաւիտեան, եԹէ ոչ վասն ակամանելոյ իւրեանց կորուսանել զնա յաւետ կեանս:

ՄԱՍՆ Գ

Առաւել ևս պարտ է մեզ ապչել ի մտածելն զդժոխոց, զոր սուրբ Աւետարանն ևս տայ մեզ ի միտ առնուլ, զի աբանչելեօք ամենակալ զօրութեան Աստուծոյ հուր նիւթեղէն ազդէ ի հոգիս՝ առ ի տանջել զնոսա. զի հուրն այն բոլորովին նիւթական՝ կայ և ունայ միշտ, պահէ անշուշտ զնոյն ազդումն իւր և զնոյն բորբոք, և չէք նորա այլ ինչ առ ի ձարակ, բայց փչումն Աստուծոյ. զի հուրն այն ածեալ զմարմնով դատապարտելոյն՝ այրէ զնա առանց ծախելոյ, և մարմինն այն անմահ ի մէջ բոցոյ՝ որ զնա շրջապատէ, ոչ ընդունի ի բոցոյն այլ ինչ ազդումն՝ այլ ցաւս կիզիչս անտանելիս. զի չէք վայրկեան մի յորում հուրն այն ոչ ազդեսցէ զամենայն խստութիւն իւր, և ոչ վայրկ մի յորում մարմինն և հոգի դատապարտելոյն ոչ զդայցէ զամենայն դժնդակութիւն և զսրութիւն նորին. զի յամենայն յաւիտեանս ոչ լինի հնար վայրկեան մի շնջանել հրոյն այնմիկ կամ դադարել յայրելոյ զդատապարտեալս։ Զի այնպէս փառաւորեցաւ Աստուած ի պատուհասել մեղաւորաց որ անաւրէնսն զնա և թշնամանեցին. պարտ է՝ զի կամ այսպէս և կամ այնպէս ծառայեսցեն արարածք ի փառս արարչին. եթէ ոչ փրկութեամբ իւրեանց ի ձեռն պարգեւաց ողորմութեան նորա լինի նոցա ծառայել, լինի դատապարտեալ արդարութեան նորա՝ դատապարտութեամբ նոցին։ Որպէս կամեցաւ վարձատրել ըզնոսա աստուածաբար. այսպէս և աստուածօրէն պատուհասեսցէ, ոչ ինչ նուազ ցուցեալ զգալի թանակ զօրութեան և զմեծութեան իւրոյ ի դժոխս քան յերկինս։

Մեծամեծք և կարևոր ճշմարտութիւնք, զորոց չէ ինձ օրէն երկբայել. քանզի քրիստոնեայ եմ, պարտ է ինձ դաւանել զայս ամենայն և գիտել։ Միտք մարդկիզին ի զուր խմաստասիրեն և դժուարութիւնս ի դէմս ածեն. ընդդէմ ամենայն խմաստասիրութեանց և դժուարութեանց՝ այս կարգ անարդելոց ըզաւ ցարդ և ընդ օրըստօրէ ի վերայ անթիւ անհամար բազմութեան հրեշտակաց և մարդկան, անկելոց ի ձեռս Աստուծոյ կենդանւոյ։ Ոչ ևս ապա խընդիր է հետազօտելոյ զնորս դատաստանացն Աստուծոյ, զի այսոքիկ հիմունք են հաստատոյ. այլ խնդիր է ատանօր քննելոյ և խելամուտ լինելոյ հետևանաց նոցին՝ որ հային յիս և յայլս, և թերևս առաւել քան յայլս՝ յիս։ Կրծնաւորեմ, այո. և չկարեմ ըստ արժան բաւականին գոհանալ վասն այսորիկ զՏեառնէ, որ կացոյց զիս այսուիկ յատաւելագոյն զդուշութեան ընդդէմ աղետից դատապարտութեան։ Այլ պարտ է ինձ յուշի ունել հանապազ, զի Թէպէտև կրօնաւոր լեցեմ, այլ մարթ է ինձ դատապարտել զի են խակ և ի կրծնաւորաց դատապարտեալք. բազումք ի նոցանէ ընդ ամենայնի լաւ ևս քան զիս կեցեալ, և ապա թշուառաբար մոլորեցան, և եթող Տէր յարդար պատուհաս անհոգութեանց ինչ նոցա և օրինազանցութեանց՝ յորս անկան։ Կարէ Տէր թողուլ և ինձ անկանել, և չէն ինձ իրաւունք յուսալոյ՝ զի առաւել քան նոցա օգնեսցէ ինձ, եթէ այսպէս վատօրէն և պղերգաբար ծառայեմ նմա։ Միով բանիւ. ոչ ոք գիտէ՝ թէ լցէ՞ ի ընորհս Աստուծոյ, եթէ չեկեց. յայսմ բոլորովին անգիտութեան՝ չէք ինչ, որ չեկեց ինձ կասկածելի. չէք ձիգն՝ զոր չեկեց ինձ պարտ գործել, չէք ինչ վտանգ յորմէ չեկեց ինձ պարտ հեռանալ, չէք կնճիռն խղճի կամ տա-

բակոյս կամ անձկութիւն մտաց՝ զոր չկրէ ինձ պարտ լուծանել: Զինչ տաժանաւոր, և զինչ հակառակ յօժարութեանց իմոց և ղպայուռ Թեանց կայցէ, զոր չկրէ ինձ յանձն առնուլ առ՝ի յապահովել ըստ կարի իմոստասիրապէս և բարեպապես զիրկութիւն իմ: Ընկալայ զուարթ կրօնաւորական կարգի առ՝ի հասանել փրկուԹեան. մի՛ լինի ինձ՝ի նաւահանգստի նաւակատեալ կամ խրել:

ԱՂՕԹՔ

Ո՛վ Տէր, որ մեծդ ես ողորմութեամբ, այլ անքննելի են դատաստանք քո, և ահաւոր ես՝ի պատուհասել: Որչափ խորհիմ յայս, այնչափ առաւել զահի հարկանիմ. և որչափ յաւելու յիս երկիւղ, այնչափ առաւել սիրեմ: Զի էիմ բեմ անգիտանալ, Տէր իմ, որոյ արժանի լեալ եմ պատժոց, և յոր վիճ կարող էիր դահավիժել զիս: Մեղայ ընդդէմ քո, և արգելէր զարդարութիւն քո, որ յառնէր ինձ ընդդէմ: Կաբէի և յայլ բազում մեղս զառածանել, յորս յանդգնութիւն իմ և վայրապատին զբաղումն մղէին զիս. այլ շնորհք քո պահպանեցին զիս. այսքան նիցս, Տէր, ամէնափեցեր զիս՝ի դժոխոց:

Ակնոց բազմաց ոչ ցուցեր զայս նախանձմունքիւն. զինչ արարեալ էր նոցա, որ անարժանս զնոսա կացուցէ ինամոց քոց. զինչ դործեալ էր այնքանեաց միանձանց և անապատակացս, որոց անկումն ողբալի ձգեալ զնոսա՝ի Ճահապարհ կորստեան, ուստի ոչ ևս դարձան: Համեմատեալ զիս ընդ նոսա, չկարեմ այլ ինչ զհետ բերել, բայց զի արարեր ընդ իս առաւելագոյն ողորմութիւն. և եթէ ոչ անկայ և ես՝ի նոյն կործանումն, քո է շնորհ, և պարա՛է ինձ վասն այնորիկ դոհանալ զքէն:

Արդ այս է, Տէր, որ լիսն հայի, և պահանջէ լինել յաւիտենական շնորհակալիս: Ահաւասիկ հոսն դժոխոց բորբոքեսցէ՝ի սրտի իմում ըզսուրբ սիրոյ քո հոգ, վառեսցէ յիս եռանդն, զարթուսցէ յիս հպարտութիւն, զի զօրացայց յամենայն հրահանգս խնամոց ապաշխարութեան, և քաղցրասցին ինձ ամենայն ճգնութիւնք: Եղէց համբերող յամենայն վիշտս կենցաղոյս, հաստատուն յամենայն պահպանութիւնս պարտուց իմոց, եռանդուն և նախանձաւոր յամենայնի՝ որ հայի՝ի պաշտօն քո և՝ի փրկութիւն հոգւոյ իմոյ: Ահա է պատուէր, Տէր իմ, զոր պարտ է լինէ քաղել՝ի մտածութենէ աստի և յերեսաց դժոխոց, յորմէ ցարդ հաճեցար պահել զիս. սակայն մարթ է լինէ տակաւին դատապարտել յայն, և ոչ կարացից զերծանել՝ի վտանգէ աստի, բայց միայն յարեալ՝ի քեզ անդրժելի հաւատարմութեամբ, և գործովք քրիստոնէական և կրօնաւորական առաքինութեանց:

Ցաղագս այցելութեան սրբոյ խորհրդոյն

ՄԱՍՆ Ա.

Բաց ՚ի սահմանեալ ժամուց՝ յորս ժողովիմք յեկեղեցւոջ ՚ի միաբանական աղօթս և ՚ի մատուցումն և առ ՚ի պատարագել, մարթ է և իւրաքանչիւր ումեք ըստ ներելոյ ժամանակին կամ ըստ ժամուց առանձինն աղօթել՝ այց առնել Փրկչին մերում յեկեղեցւոջ ՚ի սուրբ խորհրդեան: Զի՛ք ՚ի երեսեառնգումեան առաւել հաճոյական և պատշաճագոյն դիտաւորութեան Փրկչին մերոյ, և օգտակարագոյն հոգւոց մերոց: Քանզի անդ առաջի աչաց ունիմք զՅիսուս Քրիստոս, ոչ ՚ի պատկերս կամ ՚ի մոմ, այլ իրապէս ըստ աստուածութեանն և ըստ մարդկութեան. այնպէս ամենևին՝ որպէս էն յերկինս ընդ աջմէ հօր իբրոյ: Յորժամ՚ի սենեկի մերում և այլ ուր և իցէ զմտաւ ածեմք զՓրկիչն մեր, կամ խօսիմք ընդ նմա, կամ երկիր պագանեմք նմա և կամ որ ինչ լիցի և սէր Թէլադրէ մեզ՝ մատուցանեմք նմա աղօթս և նուէրս, ամենայնին ՚ի միտս մեր ևեթ կատարի, չեմք առ նմա իրօք, և ոչ նա ինքն մերձ առ մեզ: Այլ ՚ի սուրբ խորհրդեան անդ ճշմարտապէս և իրապէս ինքն իսկ Փրկիչն մեր աստուածութեամն և մարդկութեամբ գոյ և է. որպէս զի ՚ի գնալ մերում յեկեղեցի՝ ճշմարտապէս այց առնեմք նմա. երկիրպագանեմք նմա և խօսակցիմք իրօք ընդ նմա. ընդունի նա զմեզ, պատրաստ կայ ՚ի լսել և ՚ի տալ մեզ պատասխանի: Շուրջ զնովաւ բազմութիւնք հրեշտակաց պարառեալ կան՝ անմեկինք ՚ի սրբոյ սեղանոյն, և ես գոհանիմ ՚ի մէջ երանաւէտ հոգեւոցն այնոցիկ փառաբանակից նոցին: Ապաքէն չտեսանեմ զիարս նորա. այլ ընդ անփառունակ տեսակօք ծածկեալ. բայց հաւատոք ընուն զԹերին զգայութեանցս. և զոր հաւատովքս ճանաչեմ, ատուգագոյն է քան զփորձ զգայականացս:

Ընդէր ապա հաւատացեալքս և կրօնաւորեալ այսպէս անփոյթք գտանիմք այց առնելոյ խորհրդեանս այսմիկ, կամ մանաւանդ Փրկչին մերում ՚ի սուրբ խորհրդեանս. և ոչ յաճախեմք առ նա յերկրպագութիւն: Եթէ գնամք իսկ առ նա ըստ ժամուց սահմանելոց, սովորութիւնն և կամ պարտք ածէն զմեզ անդր. երկրպագեմք իսկ առանց զմտաւ ածելոյ ուր. կամք առաջի, առանց խորհելոյ այր. աղօթեմք և խօսիմք, առանց գիտելոյ ընդ ո՞ւմ: Տաղտուկ պատճառ զմեզ. և յոմանսիկ զի պարտ էր մեզ առելոյ և երախտագէտ ըղձից և մեծարանաց չըկարել մեկնել անտի ՚ի բաց, իբր բռնի ստիպմամբ կալանդ առ հարկի կարգաց և կանոնաց: Գաւթի զմի ինչ խնդրէր ՚ի Տեառնէ և զնոյն ազատ չէր բնակել ՚ի տան Տեառն զամենայն աւուրս կենաց իւրոց. Դանիէլ տարագիր ՚ի հրէաստանէ աքսորեալ ՚ի Բաբելոն, երիցս յաւուր բանայր զպատուհան սենեկին՝ հայել ընդ կողմն Երուսաղեմի, և ՚ի ծունր ելեալ՝ ըղերձէր անտի զաղօթան առ տէր Աստուած Իսրայելի՝ որոյ փառք ՚ի տաճարի անդ բնակէին Յերուսաղէմ: Նախանձ հաւատացեալք ընդ իւրեանս միշտ խնդրէին ունել զսուրբ խորհուրդն: Եւ եթէ աշխարհական օրինակօք իսկ արժան իցէ վարել, ոստանիկք չանան հնարին չմեկնել յերեսաց արքային որչափ իցէ նոցա հնար: Իսկ մեք միայն պարտիմք անփոյթ լինել Թագաւորին Թագաւորաց

ւորաց այլ առնելոյ հանդերձ այսքան անաչխատ գիւրութեամբ:

ՄԱՍՆ Բ

Զի՛ք պաշտօն պատշաճագոյն գիտաւորու-
թեան Փրկչին մերոյ: Ի մերձենալ աւուրց մեկ-
նելոյ նորա յաշխարհէ և գառնալոյ առ Հայր,
խոստացաւ աշակերտաց իւրոց՝ չթողուլ զնոսա
որբս յաշխարհի, այլ ընդ նոսա կալ մինչև՛ ի
կատարած աշխարհի: Նոյա չէր մարթի մինչև՛ ի
կատարած աշխարհի կեալ, ապա ուրեմն խոս-
տումն Փրկչին առ ամենայն հաւատացեալս էր.
և զայս ահա ընդ ձեզ եմ խոստումն կալով ընդ մեզ միշտ
՛ի սրբութիւն սեղանի: Կրկնէ միշտ անտի առ մեզ՝
զոր յայնժամ առ աշակերտան ասաց. Եւ ահա
ասեմ ես ընդ ձեզ եմ, ոչ զմի օր, ոչ զամ մի
եւթ, այլ մինչև՛ ի կատարած աշխարհի: Դար-
ձեալ առ հայր իմ, եւ լերկինս, այլ ոչ այսու
կորուսիք զուրբ զնա. ահա կամ՛ի խորհրդեանս.
որպէս զուրբ չկարեք կալ առանց իմ, չկարեմ և
ես առանց ձեր: Այսպէս բարբառի առ մեզ սի-
րապատար խանդաղատանաւք բանիւք Փրկիչն մեր,
և կամ գէթ այս են ձշմարիտ խմաստք բանից
նորա: Արդ եթէ մեք թողումք զնա՛ ի սեղանի
անդ, և չկոչեմ մեք զոյնժ յաճախել առ նա և լի-
նել ընդ նմա, ոչ ապաքէն ցրեմք զմենայն հը-
նարս սկզբ նորա և զհիւսուածոյ Եկեղեցի
ընդ մեզ անմեկին:

Այսու ապա պարտիմք՛ ի միտ առնուլ նախ,
զի չիք հաճոյագոյն ինչ Փրկչին մերում քան
զաճախս այսեւթիւն մեր: Ուշէ նա զմեզ, թա-
խանձանօք իսկ առ ինքն հրաւիրէ. և որպէս
զայսպիսի գորովական հրաւէր՛ ի բաց մերժի-
ցեմք: Նա ապաստ մեզ միշտ և հանապազ՛ ի սե-

ղանի. իսկ մեք ծանրանայցեմք այլ և եթէ առնել
նմա: Եթէ պաշտամունք մեր և զբաղմունք և
պարապք չներեն մեզ կալ ընդ Փրկչին մերում որ-
չափ ցանկալի էցէ սրտից մերոց, արասցուք որ
ինչ հնարս հնարի ջերմեռանդն հոգի: Գողանայ
վայրկեանս ինչ՛ ի զբաղանաց և՛ ի զբօսանաց
իւրոց, և դիմէ առ ցանկալին իւր: Դիմէ ընդ
այգն ողջունել զնա և նուիրել նմա զերախայ-
րիս աւուրն: Դիմէ՛ ի միջօրեի ամիսոփել զմիտս
իւր յորուեալս՛ ի զբաղանաց. դիմէ և ընդ երե-
կոս՝ ընդունել զօրհնութիւն նորա առ՛ ի հան-
գիստ գիշերոյ. քննել առ ոտս սիրելոյն իւրոյ
զթերութիւնս իւր, խոստովան լինել զայնոսիկ
՛ի սրտի իւրում, խնդրել զթողութիւն, և հայ-
ցել զամենազօր ձեռն նորա յօգնականութիւն
ընդդէմ աներեւոյթ թշնամւոյն: Այսքիկ ոչ
ժամուց կաթսին և ոչ երկար աղօթից, այլ ըղ-
ձիւք եւեթ՛ ի վայրկենի մարթին վճարել ըստ
իւրաքանչիւր յօժարութեան և ազատութեան
՛ի զբաղանաց:

Եւ՛ ի հակառակէն գաթձեալ պարտիմք՛ ի
միտ առնուլ, թէ քանի արհամարհանք են և
ապերախտութիւն առ սէր Փրկչին մերոյ, թո-
ղուլ լքանել զնա՛ ի սեղանի, և՛ ի սահմանեալ
ժամն իսկ չկենալ յեկեղեցի: Ո՞չ ապաքէն ի-
րաւամբք Փրկիչն մեր զայրացեալ ընդ այսպիսի
անփոյթութիւն մեր, զնոյն յանգիմանութիւն
արասցէ մեզ՝ զոր արար աշակերտացն իւրոց
ծանրացելոց՛ ի քնոյ, մինչ ինքն յաղօթս կայր.
«Այսպէս ոչ կարացիք ժամ մի ընդ իս արթուն
կալ»: Զինչ առ այս կարեցեմք տալ պատասխա-
նի. շատ իսկ յաշխարհասէր մարդկանէ թո-
ղեալ լքեալ կայ. դեթ մեք որ զհետ Փրկչին մե-
րոյ կոչեցեալս եմք, որ յընտանութիւն նորին
՛ի վեր առեալք, մի թողցուք զնա ապաշնորհ
արհամարհանաք:

ՄԱՍՆ Գ

Զկիք ջերմեռանդութիւն օգտակարագոյն հոգւոյ մերոյ քան զայսպիսի այցելութիւն և կենակցութիւն ընդ Փրկչին մերում: Զի մինչ խակ առնայ նա նորոգել և զարթուցանել զհաւատս մեր, հասուցանէ զնա ի զգալ զերկիւղ մեր, արծարծանէ զսէր, յորդորէ ի զգօն. այս ամենայն առանց խակ պարապելոյ անդ յաղօթս, առանց երկար մտածութեանց ի գնալն և ի գալն ներգործել ի մէջ: Իսկ ոչ այլ կարիցեմք դիմել առ ընդունելոյ առատագոյն շնորհս և օգնականութիւն, բայց առ աղբիւրն ամենայն շնորհաց, առ Փրկիչն մեր՝ որ լծուեցաւ առաջնորդել զմեզ ի սուրբ խորհրդեան անդ: Որպէս զի զայն ամենայն պանչելիս՝ զոր երբեմն գործէր նա առ ախտակիրսն մարմնով, ներգործէ առ ի հոգիս մեր, լուսաւորելով զաչս մեր, կազդուրելով զտկարութիւն, փարատելով զախտս և յարուցանելով զմեռելութիւն: Բայց առ ի գտանել ի նմանէ զայս ամենայն շնորհս, պարտ է մեզ դիմել առ նա, թախանձել զնա, և չէ հնար թէ զլացցէ նա մեզ պնորհս ընդ: Անդ գտանեմք և զաղբիւր ամենայն մխիթարութեանց, զի քաղցր է կենակցութիւն նորա: Կեանք մեր լի է վշտօք և թշուառութեամբք, և հանդերձ կրօնաւորական հրաժեշտիւս յաշխարհէ՝ տակաւին զգամք զի եմք ի կեանս յայս, և իւրաքանչիւր ուրուք են վիշտք առանձին և հատարակաց: Բայց երանի՛ հոգւոյ վշտացելոյ, որ գիտիցէ ո՛ւր սպեղանիս վշտացն գտանել, և որ գիմէ առ Փրկիչն իւր՝ խնդրել առ նմա մխիթարութիւն. չատ խակ է միակ այցելութիւն, առ ի փարատել զամենայն վիշտս նորա

կամ առ ի քաղցրացուցանել. դիմէ անդր տըխուր և նուաղեալ, և գառնայ զուարթ և զօրացեալ. և ոչպէս յաջողէ այս. գաղտնիք ինն են աստուածային. մեզ չատ է զարգասիսն գիտել, չատ լինի մեզ զփորձ նորին առնուլ և զճաշակ որպէս բազումք ի սրբոց և ի բարեպաշտից են մեզ առհաւատչեայ. «Ճաշակեցէք և տեսէք զի քաղցր է Տէր»:

Եթէ այս այսպէս իցէ, նորոգեսցուք և արծարծեսցուք զեռանդն մեր առ սուրբ խորհուրդս այս, դիմեսցուք առ նա յամենայն կարիս մեր, դիմեսցուք յամենայն տարակուսանս առ ի հարցանել զնա, դիմեսցուք յամենայն ձեռնարկս առ ի յանձն առնել նմա զայն, դիմեսցուք յամենայն փորձութիւնս առ ի խնդրել օգնութիւն ի նմանէ. դիմեսցուք ի գաղջանալս մերս, և տացէ մեզ եռանդն. դիմեսցուք ի զբաղանս մեր, և ամփոփեսցէ զմիտս մեր. դիմեսցուք ի նեղութիւնս մեր ի ներքինս և յարտաքինս, և մխիթարեսցէ զմեզ. դիմեսցուք և ի համայն իսկ պէտս, և նա լինի մեզ ապաւէն: Բայց մի միայն առ ի շահ մեր դիմեսցուք առ նա, այլ և առ ի փառս նորա. մի վասն մեր միայն, այլ և վասն նորա. հոգիագրկեսցուք զնա, միացուք ընդ նմին, սկսցուք աստուին վայելել ի տեսութիւն նորա՝ որով յաւիտեան մնայ մեզ երանաւետել:

ԱՂՕԹՔ

Փրկիչ իմ Յիսուս՝, որ վասն սիրոյ իմոյ ի սուրբ սեղանի սպասեալ մնաս ինձ զպայտ և զգերեզ, հրաւիրես զիս առ քեզ, և ընդունիս զիս սիրով յայց առնել իմում քեզ. հաւատամ ըղձրով սրտիւ զի դու ինքն ճշմարտապէս կաս

'ի սուրբ խորհրդեանդ . երկրպագեմ քեզ 'ի խորս ոչնչութեան իմոյ , գոհանամ զքէն վասն ամենայն բարեաց , զոր արարեր և առնես ընդ իս , և առաւել վասն սուրբ խորհրդոյս՝ յորում զքեզ ինձ պարգեւ դերադոյն պարգեւես : Սիրեմ զքեզ յամենայն սրտէ , զղջամ 'ի վերայ ամենայն մեղաց իմոց , առաջադրեմ ոչ ևս երբեք մեղանչել և զհեք և թշուառ սիրտ իմ նուէրս ողորմելի քեզ վերընծայեմ, հրաժարեալ յամենայն կամաց իմոց և յըղձից , և յամենայնէ՝ որ ոչ է հաճոյ առաջի աչաց քոց : Արա ընդ իս յայսմ հետէ որ ինչ և կամիս , բայց զմի ինչ խնդրեմ և զայն աղաչեմ, տպաւորել յիս զսէր քո , զի յաբակայեալ 'ի նմին՝ մի երբեք տեղի տացս յամտուածային կամաց քոց :

ՕՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Յաղագս առ Աստուած դարձի օրինակաւ անառակ որդւոյն

ՄԱՍՆ Ա.

Փրկիչն իմ Յիսուս առակաւ անառակ որդւոյն ուսուցանէ ինձ դառնալ առ ինքն 'ի սըրտէ : Որդի անառակ եմ և ես , որ 'ի բազում ամաց հետէ կրօնաւորեալ՝ կեցի դաղջութեամբ և վանեցի զամենայն ժառանգութիւն իմ: Ո՛չ չափ ընդհս , քանի պարգեւս երկնաւոր ձախողեցանց չեցեմ վառնեալ: Եւ մինչև յերբ կացից ետացից 'ի մոլորութեանս իմում. մինչև յերբ յապաղեցից դառնալ առ Աստուած , և որչափ 'ի կարի իմում է՝ դարման տանել ընտսուցս : Պատճառք հզօրագոյնք քան զանառակ որդւոյն յորդորեն և զիս նովին փութով դառնալ առ հայրն իմ և տէր : Նա հեչտասէր և անառակ կենօք զեղխութեան սպառեալ զձոխ ժառանգութիւն իւր՝ անկաւ յայն աւաղելի կարօտութիւն զոր նկարագրէ Աւետարան , և կապուտ կողպտուտ 'ի բազմապարթամ ձախութենէ՝ անկաւ յայն չետին չքաւորութիւն , մինչև վաճառել զաղաւտութիւն իւր որում այնչափ ցանկացեալ էր , և մտանել 'ի ծառայութիւն խիստ և անկարեկիր տեառն , մինչև պակասել նմա և հաց 'ի պարէն , և ցանկայր լնուլ զորովայն իւր չեղջերէն , զոր անարգագոյնք 'ի կենդանեաց՝

խոզքն ուտէին, և ոչ ոք տայր նմա: Անդ յայնժամ խելամուտ եղև եղկելին զի ոչ ինչ այնպէս գիտէ զգօնացուցանել զմարդ որպէս թըշուառութիւն և աղէտք: Յայնժամ յուշ եղեն նմա անցեալ կեանք իւր, և համեմատեալ ընդ առաքինեայն յորում գտանէր՝ ասէ. «Քանի՛ վարձկանք են ՚ի տան հօր իմոյ հացալիցք, և ես աստ սովամահ կորնչիմ»: Եւ խորամուխ լեալ ՚ի խորհուրդս իւր՝ ոչ ևս տատանի, ոչ ևս գանգաղի. այլ ուշ ՚ի կուրծս արարեալ խորհի գառնալ ՚ի տուն և կալ զգօնութեամբ:

Ի նմանօրինակ աղէտս անկեալ կամ և ևս. զի յորմէ հեռի հեռացեալ Աստուծոյ կորուսեալ զեռանգն կրօնաւորութեան, ցրտացեալ սրտիւ, բարձեալ ի լինելն ոգի ներանձնութեան, աղօթից, մեռելութեան և բարեպաշտութեան: Ո՛ւր ի յիս նախկինն այն փոյթ ներանձնութեան և զգաստութեան, ո՛ւր համեստութիւն և երկիւղած խիղճ մտաց. կապտեալ յամենայնի՝ անկեալ կամ յողորմ չքաւորութիւն, և անձնամտան ամենայն ախտաւոր կրից և ցանկութեանց՝ գերեալ եմ ՚ի ծառայութիւն անկարեկիր տերանց: Ի տան Աստուծոյ պատրաստ կայր ինձ սեղան և հաց հրեշտակաց ՚ի կերակուր, և վայելէի ՚ի բերկրանս աստուածանուէր կենաց. իսկ այժմ հանգոյն անառակ որդւոյն ցանկամ լնուլ զքաղց իմ յեղջերւ խոզից՝ մարդկայնոց մխիթարութեանց լինելով ՚ի խնդիր, յանարդ արարածոց, մանաւանդ թէ և յաչխարհէ մուրալով ափսիանս անտես, և ոչ գիտեմ թէ և զայն իսկ կարացից գտանել ըստ ցանկութեան սրտի իմոյ. քանզի պայման կրօնաւորական կեանացս զայդ ինձ ոչ ներէ կամ դէթ չտայ որչափ ցանկամս:

Յայսպիսում թշուառութեան զինչ առնել

ինձ լինիմ. ո՛հ, քանի՛ վարձկանք, քանի՛ քանի՛ հաւատացեալք են յաչխարհի որք յափշտակեալ մտօք առ Աստուած, առնուն զձաշակ քաղցրութեան նորա և վայելեն ՚ի սիրալիր գրկախառնութիւնս նորին. իսկ ինձ՝ զրկեցեալս յամենայնի՝ տաղտկալիք են աստուածայինքն համայն, անախորժք և անօգուտք: Սակայն այնու ևեթ բարեբախտ գտանիմ դեռ ևս, զի խելամուտ եմ թշուառութեանս իմում. և երանելի ևս իցեմ, եթէ ոչ անընդունայ և անզգայ գտայց մինչև ՚ի սպառ: Բայց զնաթրդ մարթի իցէ լինիմ կալ մընալ յայսմ պայմանի և չփութիլ յաղաստութիւն՝ հեղգագոյն քան զանառակ որդին երեւելով ՚ի դարձ: Մոլորեալ եմ իբրև զնա, վաղք իմ և գնացք հաւաստեն լինիմ զայս. և կայ միայ լինիմ կորուստ անխուսափելի և կործանումն անկանգնելի, եթէ ոչ հանգոյն նմին ածապարեցից ՚ի դարձ:

ՄԱՍՆ Բ

Որդին անառակ խելամուտ եղեալ թշուառութեան իւրոյ՝ լայ դառնապէս. և զգաստացեալ՝ ազնուական և արիական հոգւով անգոնեալ ընդոստնէ զձաշոյս անձին, և յիշատակաբարութեան հօր իւրոյ զամօթի հարեալ դայ ՚ի զեղջ. խելամուտ լինի չարութեան վատթար գնացից իւրոց, և ՚ի միտ առնու բովանդակ՝ զմեծութիւն յանցանաց իւրոց զոր յանցեաւ առ այնպիսի ոք հայր՝ արժանաւոր ամենայն պատուոյ և մեծարանաց, սիրոյ և երախտագիտութեան, և ՚ի զեղջ եկեալ կշտամբէ զանձն իւր և յանդիմանէ. և հուսկ ապա խրախուսէ գառնալ առ նա. և մինչ էև ուղղոյ եղեալ՝ խորհի զինչ ասել և որպէս յանդիման լինել նմա:

Ասէ անկանել նախ յոտս նորա և խոստովան լինել անկեղծաբար զմեղս իւր, և ցուցեալ զղեղջ սրտի իւրոյ՝ խնդրել զներումն յանցաց նացն. «Յարուցեալ գնացից առ հայր իմ և ասացից. հայր, մեղայ յերկինս և առաջի քո»:

Եւ ոչ զայն չատ համարի, այլ յուշ ածեալ զարհամարհանսն՝ որով արհամարհեալ էր զհայր իւր՝ խորհի նուաստանալ և ևս, և անարժան համարել զանձն չնորհի որդուութեան. «Ոչ ևս եմ արժանի կոչել որդի քո»:

Նա և զայն ոչ բաւական համարեալ, զառաւելագոյնն յանձն առնու՝ որպէս ապաշխարող կալ 'ի տան հօր իւրոյ 'ի ծառայից համարի. «Արա զիս երբև զմի 'ի ծառայից քոց»: Եւ ուսոլ ո՞ այսքան և այսպիսի փոփոխումն 'ի նմա:

Զայս ներգործեն 'ի սիրտ մեղուցելոյ զեղջ և ապաշաւ: Այս և յիս հարկ է թէ ներգործեսցի: Զինչ աւելի զթասիրեաց հայր անառակ որդւոյն՝ քան զոր զթասիրէ Աստուած առ իս՝ առաւացուցեալ զշնորհս ողորմութեան իւրոյ, որոց վասն պարտական եմ նմա. և զնաթրդ մարթ իցէ յիշատակաւ այնոցիկ ոչ գորովիլ և ոչ խանդաղատել 'ի սէր նորա: Կամ զնաթրդ կարթիցեմ անճանաչող լինել չնորհաց նորա ապաշնորհ երևեալ քան զամենայն մարդ: Ապա յիշատակաւ այնքանոյ բարութեան Աստուծոյ, և առաւել յիշատակաւ բարեբարութեանցն որ առ իս՝ ամբեռնալի սիրտ իմ, և թէ իցէ յիս զեղջ բաւական՝ ներգործեսցեն յիս երեքին այսոքիկ պայմանք կարևորք յապաշխարութիւն:

Նախ՝ դառնալ անյապաղ առ Աստուած, անկանել առաջի նորա, խոստովան լինել զմեղս իմ, գարշիլ յայնցանէ և դառնագին սրտիւ դառնալ Հայր մեղայ յերկինս և առաջի քո. ոչ միայն գամ որպէս զանառակ որդին, այլ բիւրեցս՝ որ-

չափ եղեն վայրկեանք կենաց իմոց: Ի զուր է ինձ 'ի չքմեղս լինել առաջի քո կցկցելով պատճառանս անտես. սկզբ իմ կչտամբեալ յանդիմանեսցէ զստուգութիւն իմ, և լռասով իմաստութեան քո նշաւակեալ յամօթ եղեց: Ո՛հ, մեղայ, Տէր, մեղայ առաւել քան զոր կարծեմն և որչափ առաւել քաջածանօթ են քեզ այնոքիկ, քան թէ ինձ: Ահա կամ առաջի քո խոստովան լինել զամենայն, և չկարեմ այլազգ հաչտ առնել զքեզ՝ բայց ցաւագին խոստովանութեամբ և արտասուօք զոր հեղում առաջի քո:

Երկրորդ՝ հարկ է ինձ խոնարհել և նուաստանալ, և որչափ բարձրագոյն է կոչումն իմ 'ի սրբութիւն, նովին չափով խոստովանել զապախտաւորութիւն իմ: Եղուկ ինձ. կամք էին Աստուածոյ զի եղեց կրօնաւոր. այլ եղէ, և իցէմ իսկապէս կրօնաւոր: Կրեմ այո զձև և զանուն կրօնաւորի առաջի մարդկան, այլ իցէմ Ճշմարտապէս կրօնաւոր: Կրօնաւորութիւն, որում պարտ էր լինել ինձ 'ի պարծանս, ամենապարտ առնէ զիս, զի ոչ մեծագոյն ամօթ վասն իմ որպէս ունել զկերպարանս կրօնաւորի, և չլինել կրօնաւոր: Ո՛չ ինչ զարմանք են ապա, ով Տէր, զի զուրկ եմ 'ի չնորհաց և յաստուածայնոց աղդեցութեանց անտի, որովք Ճոխացուցանես զընտիրս 'ի կրօնաւորաց՝ որք հարազատ որդիք են քո. զի պաշտեն և մեծարեն զքեզ որպէս հայր. և նոցա բաժին է հացն պահեստ մանկանց, զոր ինձ չէ խակ օրէն խնդրել և ոչ ակն ունել այնմ:

Երրորդ՝ հարկ է ինձ որպէս պարտաւորի յանձն առնուլ որ ինչ խիստ և դժուարակիր եցէ 'ի կրօնաւորութեան, և մտագիւր առնել այնոցիկ ոչ խնայելով յիս ամենևին, նա մանաւանդ ցանկալ զի մի և այլք խնայեսցեն, և

խնդրել ՚ի Տեառնէ կրել բովանդակ զծանրութիւն բեռնին՝ ասելով. Աստուած իմ, ո՞չ չատ է ինձ այն՝ զի ոչ մերժես զիս ՚ի տանէ քումմէ. և զի ոչ եղէ ես անդ որպէս պարան էր որդի հլու և հնազանդ, ՚ի գեպ է արդ զի եղէց որպէս ծառայ և գերի: Այս խղճք են և այս գնացք առն ղղջականի. այսպէս պարտ է և ինձ խորհել, խօսել և գործել:

ՄԱՍՆ Գ

Անառակ որդւոյն կանխեալ և պատրաստեալ ՚ի սրտի Հարցն էր զոր ինչ առնելոցն էր և զոր առելոց առ հայր իւր, սակայն խիթայր թէ գուցէ մերժեացի և ոչ լիցի լսելի: Քաջ խակ գիտակ էր մեծութեան յանցանացն իւրոց, և չէր մծայցս սիրալիր ընդունելութեան ՚ի հօրէ իւրմէ, և անառակութիւն վարուց ոչ աղդէր ՚ի նա վստահութիւն. բայց զմտաւ ածեալ զի գառնայց առ հայր՝ որ միշտ հայր է և չկարէ երբեք մոռանալ որ ինչ էն՝ ասէ. Յարուցեալ գնայցից, ոչ առ տէր կամ առ գառաւուր, այլ առ հայր: Ի հայրութիւն նորա յուսացեալ և նովին խրախուսեալ՝ մերժեաց յանձն զամենայն երկիւղ և ոչ վհատեցաւ. այլ աներկմիտ խորհրդով և հաստատուն յուսով եղ և գնաց. և մատուցեալ առ հայր իւր, գիտաց զի էր խաբեալ յանկալութեան իւրում: Քանզի հայրն տեսեալ զորդին ՚ի հեռաստանէ, ընթացաւ վազվազակի ընդ առաջ, անկաւ զպարանոցաւ նորա և ետ նմա համբոյր հաշտութեան. և վերստին ընկալաւ զնա ՚ի տուն առանց բանիւ ինչ յանդիմանութեան, կոչեաց զբարեկամս իւր և զդրացիս՝ հաղորդակից լինել խնդութեան իւրոյ: Եւ ոչ այսչափ

միայն, այլ և զնա՝ որ վատնեալ էր զամենայն ինչս իւր անառակութեամբ, և անկեալ յայն ողորմ աղքատութիւն, ընկալաւ ոչ որպէս ծառայ և գերի, այլ որպէս որդի: Հրաման ետ ըզգեցուցանել նմա պատմուճան նոր, զենուլ զնդն պարարակ և պատրաստել խնջոյս մեծաւոյ՝ քաղցրաձայնութեամբ երաժշտական երգոց. և չառնել ինչ պակաս ՚ի հանդէս ուրախութեան խնջոյիցն: Եւ առ ինչ այս ամենայն. զի որդի իւր մեռեալ էր և եկեաց. կորուսեալ էր և գտաւ:

Այս ահա Ճշդրտատիպ օրինակ է ընդունելութեան մեղաւորի գարձելոյ առ Աստուած. այսպէս լինի և ինձ ՚ի դառնալ իմում առ Աստուած Ճշմարիտ ապաշխարութեամբ, և յանկանելն իմ առաջի նորա խոնարհ խոստովանութեամբ մեղաց իմոց և ապաշնորհ գնացիցս. գոկց զնա ներող և մարդասիրագոյն առ իս քան զհայր անառակին առ որդի իւր: Մարթէր նմա ըստ օրինաց արդարութեան մերժել զիս. կարէր ամենայն իրաւամբ թողուլ լքանել զիս. զի բաց ՚ի չարաչար վարուց և անարժան գնացից չէք իմ ինչ այլ յոր յուսացայց. բայց գթութիւն նորա ամենողորմ երաշխաւորի զինձ և խրախուսէ զիս ՚ի վստահութիւն, և ՚ի խոստանալն իմ մտագիւր յօժարութեամբ առնել հատուցումն արդարութեան նորա, մեծայոյս եմ յանհուն ողորմութիւն նորա, որ պատրաստ է միշտ և սիրժէ ներել ամենեցուն:

Հապա, ՚ի բաց է լինել երկմտութիւն և վհատութիւն, որով թշնամին փրկութեան իմոյ և կատարելութեան հնարի յիւս ընկրկել զիս. մի զարհուրեցուսցէ զիս գժուարութիւնք զորս առաջի առնէ ինձ. և ոչ Ճակատամարտք թէ յարիցեն ՚ի վերայ իմ՝ երկեցուսցեն զիս. զի

թեպէտ դժուարայաղթելիք ևս էին, յաղթե-
ցից նոցա պնդակամ հոգւով ապաչխարու-
թեան. և ի զօրանալ խմբովք գամ մի կալ ան-
դրդուելի, լինել ինձ այն առաջին ոտնփոխ գնա-
ցից առ Աստուած, և ուսայց ի փորձոյ զի յո-
րոց զարհուրեալ խուսափէի՝ ցնորք էին համայն
և անոտի արհաւիրք ներդործեալք յիս ի տկա-
րութենէ բնութեան և յախտաւոր կրից: Եւ
այնուհետև ոչ ևս խիստ և անողոքելի թուեսցի
ինձ Աստուած, այլ բարեգութ և ողորմած՝ որ
և թէ զհետացեալն յիւրմէ ոչ առնէ անտես,
քանիցն առաւել զդարձեալսն առ ինքն:

Նմին իրի թեպէտ և ցասուցեալ իսկ էցէ ընդ
իս, թեպէտ արժանի էցեմ մերժելոյ յերեսաց
նորա, սակայն տակաւին ակն ունիմ՝ զի ընդ ա-
ռաջ իմ եղեալ՝ դիւրեսցէ ինձ զճանապարհ
դարձի իմոյ առ ինքն, ներողամիտ գտցի առ իս և
ոչ խստապահանջ, և յաւելուցու ինձ զընծրհս
իւր ի յառնել, և ի կալ հաստատուն յառա-
ջադրութեանս իմմէ: և սատարեսցէ ինձ ի
վերելս կատարելութեան, որով մարթացայց
ստանալ վերստին զոր կորուսի, և զուգահա-
սասար հոգւոյ ընտրելոյ վերամբառնալ ի սբը-
բութիւն: Քանիք ոմանք չարաչար կեցեալ ի-
բրև զիս, կացին ապա օրինակ ուղղութեան և
սրբութեան: Եւ ի վերայ այսոցիկ ամենայնի՝
յաւելցէ առատացուցանել առ իս՝ ըստ ոչ ար-
ժանեաց իմոց և անկալուածեան, զընծրհս երկ-
նապարգև մխիթարութեանց, և ի հոգւոյ ձա-
կատամարտի և ի մեռելութեան մարմնոյ կա-
ցուսցէ զիս յաղթական, և տացէ ինձ փոխարի-
նել տուժիցն իմոց առաջնոց: Եւ զինչ այլ
ինդրեմ, կամ ընդէր դանդաղիմ ատատամնելով
թէ զուր ճանապարհ ընտրեցից:

ԱՂՕԹՔ

Հայր գթութեան և Աստուած ամենայն մխի-
թարութեան, գոհանամ զքէն զի հաճեցար
օգնականութեամբ ընտրհացդ քոց ածել զիս ի
ղդաստութիւն. պարգևեա ինձ աղաչեմ հաս-
տատուն կալ ի նմին: Անհատնիկ ի բոլոր սըր-
տէ ի զեղջ եկեալ և յապաշաւ՝ անկեալ կամ
յոտս քո լի ամօթով: Աստուած իմ, դու ինքն
լսելի արարեր ինձ զձայն քո կոչելով զիս առ
քեզ, և ընդէ՞ր է ինձ զանգիտել թէ մերժեցայց
առ ի քէն:

Զի՞նչ ասացից, Տէր, կամ ի՞ւ ողբեցից զե-
րեսս քո՝ բայց անդարձ խոստմամբ արծարծե-
ցոյ յիս վերստին զբոց սիրոյ քո, և սկսանելոյ
ծառայել քեզ վերստին, զի ոչ բանիւք՝ այլ
գործովք եղէց քեզ հաճոյ: Սակայն և արդա-
րութիւնք իմ համայն զի՞նչ էցեն առաջի քո,
Տէր, եթէ խոսիս մտանիցես ընդ իս ի դատաս-
տան. «Զի՞որ գտցի մարդ արդար առաջի քո
եթէ կամիցես մտանել ընդ նմա՝ ի դատաստան»:
Աստուած իմ, ի հայրապետով գթութիւն քո
միայն կամ ապատան. վայ է ինձ և եղուկ եթէ
վրէպ էցեմ յանկալուածենէ աստի. զի կայ
մնայ ինձ ի բաց կալ ի քէն անդարձաբար:

Հաստատութեամբ ապա կալայց յանձին զայս
յոյս և զվստահութիւն, որով զբաղումս ձգե-
ցեր առ քեզ՝ ձգեայ և զիս աղաչեմ: Վստահու-
թեամբս այսու ոչ եթէ հեղգացեալ թուլացայց
ի կատարումն պարտուց իմոց, այլ մանաւանդ
յորդորագոյն ևս գտայց առ երախտագիտու-
թեան և սիրոյ. և ոչ եթէ վստահութիւն օ-
ժանդակեսցէ անձնդիւրութեան իմոյ ի թե-
թևացուցանել զլուծ խստամբեր ապաչխարու-

Թեան, այլ մանաւանդ ըստ մեծութեան ողոր-
մութեան քո և գթութեան, մեծասցին ինձ ա-
նօրէնութիւնք իմ և մեղք, և սաստկագոյն և
պահանջեցից յանձնէ վրէժս՝ խստագոյն կենօք
ապաշխարութեան և մեռելութեան: Հայեաց,
Տէր, ի տկարութիւն իմ և օրհնեա զնանս իմ
և զլաստակ և յաջողեա ինձ. աւս զյօժարու-
թիւն կամացս և զուղղութիւն սրտի. և ի դառ-
նալ իմում առ քեզ, դարձ և դու առ իս, և
լինի հաշտութիւնս մեր անթերի մինչև ի ըս-
պառ:

Յաղագս առնելոյ զլուծ Յիսուսի

ՄԱՍՆ Ա.

Յորժամ տեսանեմ զքրկիչն, զի գնայ առաջի
իմ ընդ ճանապարհ անձուկ և փշալից, խրախու-
սեմ գնալ զհետ նորա: Օրինակ նորա պատուի-
րան է ինձ, ամաչեմ զկայ առնուլ առ գժուա-
րութեանց՝ ի տեսանելն զնա դիմադրաւեալ
յառաջ քան զիս ամենայն վտանգաց. և գոչէ
գայ ինձ ընդ Թովմայի. «Ո՛ն, եկայք և սիք զի
ընդ նմա մեռցուք». ոչ է ծառայ մեծ քան
զտարարիչն: Նա ուրեմն առաջնորդէ ինձ, նա
զամենայն զքայլս իմ շարժէ, և տայ ինձ զօրու-
թիւն ի յորդորելն առնուլ զլուծ իւր ի յիս:
Կամիմ ուրեմն և ես արդեամբք այսուհետև
գնալ զհետ նորա, զի մինչև ցարդ վեր ի վերոյ
զայն կամէի: Այս քանի՛ սէք են, զի եղէք ևեթ
սրտի իմոյ եղեն ինձ առաջնորդք, և ոչ արկա-
ցայ յաղթել նոցա. յօժարութիւնք իմ և ընա-
կան բերմունք առաջնորդէին ինձ, և ես հաճէի
զնոսա. զգայութիւնք զհետ իւրեանց զիս կոչէ-
ին, և ես ոչ մահացուցի զնոսա: Առաջնորդէր
ինձ աչխարհ, զորոյ զհոգին կրէի միշտ ընդ սքե-
մաւ. փառասիրութիւն և չահախնդրութիւն
ձգեցին զիս միշտ զհետ իւրեանց, որոց թէպէտ
և այլ ի կրծին էին Ճարակք, այլ կիրք նոյն էին
յիս: Յայսպիսում ահա ի դերութեան անցու-
ցի ցայսմայր զկեանս իմ. սոքա բռնացան յիս,
և զարմանք եցեն զի ընդ այսպիսեօք բռնաւոր
աերամբք լեալ եցեմ աւազելի:

Այլ արդ ժամ է առնուլ ի յիս զքաջագր լուծ
Փրկչին իմոյ. գուցէ՛ իսկ ոչ լաւագոյն քան զնա

տէր, գուցէ իսկ իմասանագոյն քան «ՀԱստուծոյ իմաստութիւն, և որ զբանս կենացս յաւիտենականաց ունի»։ Զինչ նա յինէն պահանջէ, բայց իրս սուրբս, բանաւորս, արդարս և օգտակարս ինձ և վերուածս։ Նա աւանիկ զինչ իսկ պահանջէ յինէն առնել, զոր չկամիմ իւր արաբեալ նախ։ Քանի անարժան և դժպատահ իրք կացեն, եթէ խնամ Թուեսցի ինձ զհետ երթալ Փրկչին իմոյ, կցորդիլ ընդ նմա, գործակից նմա լինել, սիրել զոր նայն սիրեաց, և առնել զոր ինքն արար։

ՄԱՍՆ Բ

Որպէս քրիստոնեայ իսկ և եթէ պարտիմ յանձն առնուլ զլուծ Փրկչին իմոյ, և հետևիլ նմին։ Ընդէր ի մկրտութեան իմում հրաժարեցի ի սատանայէ, ի մարմնոյ, յաշխարհէ և ի պատրանաց նորա. ոչ ապաքէն զի մի մոլոց ընդ տէրութեամբ նոցա, և մի եղէց նոցա գերի ամօթալարս։ Ընդէր զինիւք և զդրոշմ Փրկչին իմոյ ընկալայ յիս. ոչ ապաքէն զի եղէց նորին։ Ո՛չ աւետարանն իսկ նորին՝ զոր գաւանեմ՝ ուսուցանէ ինձ, զի անդամք եմք Քրիստոսի, և նա է գլուխ մեր, զի խաչն եմք նորին, և նա հովիւ մեր. զի եկեղեցի եմք նորա, և նա քահանայապետ մեր. զի ազգ եմք նորա և սատցուածք և գինք արեան նորա, և զի ի գնել նորա զմեզ արեամբն իւրով սատցաւ ի վերայ մեր իրաւունս անկապտելի։ Ապա ուրեմն եթէ չէին իսկ այլ պատճառք, այսքիկ և եթէ բաւականք էին ի նուաճել զիս ի բոլորանուէր ծառայութիւն նորա։

Այլ իմ այլ ևս պարտք են, որ առաւելագոյն սան նմա իրաւունս ի վերայ իմ. այս ինքն է

կրօնաւորութիւն իմ։ Զինչ յանձն առի ի մտանել իմում ի կրօն, գաւանեցի բարձրացման գոլ աչակերտ Քրիստոսի և հետևող նմին, պատրաստ ի թողուլ զամենայն և ի կրել զամենայն ի սէր նորին։ Համարեցայ զվճռակ կրօնաւորական՝ որ պէս զսուրբ լինն կրօնաւորութիւն, յորում ինձ պատերազմել ընդ դրօշակաւն Քրիստոսի, և հնազանդել նմին որպէս զինուոր իւրում զօրավարի։ Զայսոսիկ ես երիւք ոճախիւքս հաստատեցի անլուծանելեօք, որովք տէր զնա ինձ կացուցի՝ մատուցեալ զանձն իմ նմա ի նուէր անդարձ, ի նուէր բոլորապատուղ։ Ոչխիւ աղքատութեան զամենայն մեծութիւնս աշխարհի նուիրեցի նմա. ոչխիւ զգաստութեան զամենայն զգայարանս իմ, և ոչխիւ հնազանդութեան զկամս իմ. որպէս զի չինայ ինչ յիս՝ որ չկեցէ նորա, և որում չկեցէ նա տէր։ Այդ կետ յանձն առնուլ զայս ամենայն, կարիցեմ կետս կալ կայսցանէ՝ առանց գտանելոյ ոչխտազանց։

Ապա ուրեմն որ ինչ և արասցէ ընդ իս, եթէ բարձրացուսցէ զիս և եթէ խոնարհեցուսցէ, եթէ մխիթարեսցէ և եթէ արկցէ ի վիշտս, տէր է յամենայնի, և ես ընդ ձեռամբ նորա կամ. տէր է իմ, և ես չկամիմ զայլ ոք բայց ի նմանէ. ընտրեցի զնա, և մի լիցի ինձ ի բաց կալ ի նմանէ։

ՄԱՍՆ Գ

Ոչ ծանր ինչ է և դժուարաբեռն, որպէս աշխարհս կարծէ, լուծն Քրիստոսի։ Վէր ի վերոյ տեսեալ՝ Թուի խնամ իմն ծառայութիւն, այլ փորձ իրին տայ առնուլ զձեռակ բարեբաստագոյն ազատութեան, որ է ազատութիւն որդեգրոյն Աստուծոյ, և որ զանդորրագոյն պա-

տրաստէ սրտի զնաղաղութիւն: Իբր ոչ եթէ չէիցէ ինչ այն բեռն և կամ լուծ, այլ է լուծ Քրիստոսի՝ որում նուիրեալս էք, և բեռն այնորիկ՝ որ ինքն իսկ վկայէ, զի «լուծ իւր քաղցր է, և բեռն փոքրոգի»: Եւ հարիւրապատիկ զփոխարէնս խոստանայ աստ և՛ի հանդերձեալսն. «Ոչ ոք է, ասէ, որ եթող զտուն կամ զեղբարս կամ զքոյր կամ զհայր կամ զմայր կամ իմոյ համար անուանն, եթէ ոչ առնուցու հարիւրապատիկ այժմ... և յաչխարհին՝ որ գալոցն է՝ զկեանն յաւիտենական»: Զի անդորր սրտի, ազատութիւն յաւիտենական կենցաղական հոգոց, վայելութիւն բարւոյ խղճի մտաց, ազդեցութիւնք ներքինք չնորհացն Աստուծոյ՝ որ ընծն զսիրտ կրծնաւորի սուրբ և երկնային ուրախութեամբ, յոյժ գեր՛ի վերոյ են քան զամենայն որ ինչ թողաք յաշխարհի, և որ ինչ ժառանգելն կարէաք:

Վկայէ իսկ սիրտ իմ, զի որչափ և լի նկեմ թերութեամբք, բայց եղեն յիս երբեմն չնորհք աստուածային և եռանդն՝ յորժամ հաւատարմագոյն էի՛ի կատարումն պարտուց իմոց, և չգտանէի՛ յայնժամ գոհ և հաճ, թուէր ինձ յայնժամ երանելի, և էի իսկ. և երբ սկսայ ոչ ևս լինել. յորժամ թուլացայ և զկետ գնացի յօժարութեանց իմոց և կրից: Ապա եթէ կամիմ զհարիւրապատիկս զայս ժառանգել զփոխարէն զոր կորուսի, պարտ է ինձ խնդրել զայն առ Փրկչէն իմում. այսինքն զի պարտ է ինձ վերստին նուիրել նմա զանձն իմ, հպատակել նմա զամենայն զկիրս իմ, զմիտս, զկամս, զամենայն ներգս իմ և զգործս. որպէս զի ոչ ևս ինձ յայսմհետէ կեցից, այլ նմա

և՛ի նմա: Կեանք ցանկալի, որ երանագունի կենացն է առհաւատչեայ, և այլոյ ինչ հարիւրապատիկ փոխարինի՝ որոյ չիցէ եզր և վախճան: Զի ոչ առ այլ ինչ հրաւիրէ զիս Փրկիչն իմ խաչակից լինել նմա, բայց զի Թագաւորեցից ընդ նմա յերկինս: Եթէ էջր իսկ ինչ ակնկալութիւն վարձուց՛ի յերկրի, այս ևեթ փոխարէնն ոչ էր բաւական՛ի հատուցանել, և վասն այսր ևեթ փոխարինի էջր ինձ արժան զամենայն վիշտս յանձն առնուլ:

ԱՂՕԹՔ

Մտադիւր այսուհետև տարայց, Տէր, զլուծ քոյին. դիր զայն՛ի վերայ իմ և արա ընդ իս՝ որպէս կամիս. զի ես քո եմ, և ըստ բազում դէպոց քեզ հպատակ: Եկ՛ի սիրտ իմ, և հալածեա՛ի սմանէ զամենայն օտարոտի տեսից. զի զքեզ միայն ընտրեցի ինձ տէր՛ի մուտս իմ՛ի կրծն. ասաղ, և ընդէր ոչ հաստատուն կացի յընտրութեան նմում: Բայց տակաւին է ինձ ժամանակ վերստին անփոփոխելի հաստատելոյ զընտրութիւն իմ: Դու ես այսուհետև «Տէր իմ և Աստուած իմ». որպէս մի յառաքելոց քոց յետ թերհաւատութեանն դաւանեաց, զնոյն և ես արդ բեկեալ սրտիւ դաւանեմ. «Տէր իմ և Աստուած իմ»: Հրամայեա ինձ, զի պատրաստ եմ՛ի հնազանդել քեզ յամենայնի. «Ասա ինձ առնել զկամս քո, զի դու ես Աստուած իմ»:

Ցաղագս խոնարհութեան օրինակաւ մարդեղութեան Յիսուսի

ՄԱՍՆ Ա.

Խորհուրդ անհասանելի է մտաց մարդկան խորհուրդ մարդեղութեան Յիսուսի, զոր Հոգեշն սրբոյ միայնոյ էր յայտնել մեզ, այլ ոչ և բացայայտել. և յայտնեաց իսկ զայն սուղ բանիւ բովանդակեալ զկատարեալն հրաշալն և երկրապագելի խորհրդոյն յասելն. « Ձանձն ունայնացոյց »: Քանզի այս իսկ է խորհուրդն ծածկեալ յաղագս և յաւիտեանց՝ որ յայտնեցաւ յիւրում ժամանակի:

Զինչ է մարմնանալ Բանին Աստուծոյ. բայց զնոյն ասելով՝ ունայնանալ Աստուծոյ: Բաբէ, Աստուած փառաց ունայնանայ, և որպէս. Աստուածծ գոլով՝ մարդանայ. ընդ Աստուած, ընդ Ին դերագոյն, և ընդ մարդ՝ որ ամենևին ոչինչն է, մեծ և անհուն է խորհուրդ: Առ սովաւ այլ ամենայն տնօրինականք չէին ինչ զարմանալիք. զի աղքատութիւն, նախատինք, խաչ և չարչարանք սովականք են և կնիք մարդկութեան. բայց Աստուծոյ մարդ լինել ոչ ըստ բնութեան ինչ է և ոչ ըստ պատշաճի, այլ անսահման սիրոյ նորա աքանչելագործ հաւաստիք: Մարդոյ նուաստանալ և առնուլ զկերպարանս ղեւնոյ կամ մկնկան, համարեսցի արդեօք ունայնանալ և չոչընութիւն գառնալ, սակայն զինչ նմին և այն առ մարդեղութեամբն Աստուծոյ: Ընդ մարդ և ընդ գեղուն անարդ՝ է ինչ համեմատութիւն. այլ ընդ Աստուած և ընդ մարդ չիք՝ և ոչ լինել կարէ:

Ցաւել և զայն զի ոչ եթէ մարգանալ միայն հաճեցաւ Որդին Աստուծոյ, այլ և տղայանալ, և որ Թագաւորն էր Թագաւորաց և տէր տերանց և գերագոյն իշխեցող սիեզերաց՝ զկերպարանս ծառայի էառ. ոմն անճառ և անհասանելի խոնարհութեան քո, Տէր:

Սակայն խոստովանել հարկ է ինձ յամենայնի անձինս զի ոչ ինչ ընդհատ քան զխոնարհութիւն քո մեծ՝ անիմանալի է և անբմբռնելի մեծաց բանիւք յիս ամբարտաւանութիւն, զոր ի գիտել առիթն չամաչեմ ևս արտայայտել առաջի այլոց՝ ոչ կարելով հանդուրժել դոյզն արհամարհանաց, և առանց զայրանալոյ լսել բան ինչ դժպհի. և խրատ մի թեթև կամ ազգարարութիւն առաջնորդին իմոյ՝ կարգելոյ ինձ՝ ի Տեառնէ յուղղութիւն վարուց՝ դառնանայ ինձ: Ո՛րպէս դիւրագրգիռ եմ՝ ի լուր յանդիմանութեան, զիարդ նախանձախնդիր պատուոյ և մեծարանաց անձին և ոչընչի ցանկացող փառաց. և փոխանակ զի պարտ էր ինձ նուաստացուցանել զանձն իմ ըստ օրինակի Փրկչին իմոյ, հեռատեսիկ եմ և ցանկացող մեծութեան և աւագութեան, և ձկտիմ ոտն առ ոտն վերանալ՝ ի բարձրութիւն ըստ ներելոյ կոչմանս իմոյ: Եթէ ամենայն մարդ ոչինչ է, և ամենեցուն՝ ի դէպ գայ յանդիմանութիւն իմաստնոյն Թէ « Զի՞ հըպարտանայ հողն և մոխիր », քանիսն առաւել հեռաւորն Փրկաստոսէ, որ ուսանի՝ ի հաւատոց և տեսանէ զԱստուած խոնարհեալ և ունայնացեալ. քանիսն առաւել ինձ կրօնաւորելումն՝ որ ըստ պարտուց կրօնաւորութեան յանձն առեալ եմ նմանող լինել Յիսուսի: Աւաղ, զի ընդ սուրբ ձևովս և ընդ խոնարհ կերպարանաւք կրեմ սիրտ և հոգի ամբարտաւան, ցանկացող մեծութեան՝ առաւել իսկ թերևս քան զերեսելի յաշ-

խարհի. և չիցէ այս սակաւ կոչմանս խնդրատ, սակաւ և առ անձն իմ։

ՄԱՍՆ Բ

Ի խոնարհել և յունայնանալ Բանին Աստուծոյ, բարձրացաւ Աստուած և փառաւորեցաւ, և Որդին միածին խոնարհութեամբն իւրով վերանորոգեալ զփառս հօրն իւրոյ՝ զիրկափորձութեան մարդկան կատարեաց զնորհուրդ, և եղև պատճառք սքանչելահրաշ շնորհաց և սքրբութեան, և ամենայն երկնաւիր պարգեաք և գանձք ողորմութեան Աստուծոյ նովաւ սփռեցան 'ի մարդիկ՝ առաւել քան այլովք հրաշափառ անօրէնութեամբք, զորս կատարեաց և զորս թէ կատարեալ էր։ Ո՛վ անհասանելի զօրութեան Աստուծոյ. որպէս զի անքննելի են ճանապարհք քո, Տէր, և որչափ մեծ ես և երկրպագելի 'ի նոսին։ Ի նորաբաղձ խոնարհութեան հաստատեցեր զմեծութիւն փառաց քոց, և 'ի խորոց անլուր նուաստութեան հայեցեր քեզ մեծութիւն դերամբարձ, և մեզ՝ հնարս փրկութեան և սրբութեան։

Այսպէս ահա մեծացար ես խոնարհութիւն. նոյնպէս եցէ և ներգործութիւն նորա յիս ըստ չափու պայմանի իմոյ։ Զի որ ինչ և եցեն խորհուրդք սեաչուքեանն Աստուծոյ 'ի վերայ իմ, այս ինչ յայտնի է և անժխտելի, զի ոչ կատարեցայ յիս մեծ ինչ և շքեղ որոյ հիմն հաստատութեան չիցէ 'ի խոնարհութեան և յոչնչութեան. 'ի խնդրել իմում լինել ինչ, եղէց և ոչ ինչ. բայց թէ եղէց որպէս ոչ ինչ՝ յայնժամ գտայց կարող ամենայնի. ընդ այս ճանապարհ յաջողեաց սրբոց վերանալ յայն ծայր կատարելութեան. ընդ նոյն և ինձ վերանալ հարկ է։

Աստանց խոնարհութեան չիք ճշմարիտ առաքինութիւն, չիք գործ իսկապէս սուրբ։ Ցամենայն գործս և յառաքինութիւնս երկու ինչ իրք են ջանադանելիք՝ որպէս հոգի և մարմին. մարմին է հանապազ գործոյն զոր առնէմ, և հոգի՝ դիտաւորութիւն ներքին որ վասն առնեմ։ Արդ հոգին է որ տայ կենդանութիւն գործոց իմոց և հոգևորէ զառաքինութիւնս իմ, և 'ի պակասել նորին կամ 'ի խանգարել հպարտութեամբ՝ շքեղագոյնք իսկ 'ի գործոց իմոց մեռեալք են, և մեծասպիծառ առաքինութեանց իմոց մնոտի է փայլ՝ որ ներղեալ խտադէզ աչս մարդկան, այլ յաչս Աստուծոյ նսեմացեալ անհետանայ։

Եւ արդարև զի՞նչ արժիցեն առաջի Աստուծոյ այն ամենայն՝ զոր ոչ վասն նորա գործեմ, այլ 'ի յագուրդ անափառութեան իմոյ՝ զի մեծարեալ փառաւորեցայց 'ի միաբանութեան, կամ յընկերութեան յորում գտանիմ։ Եւ թէպէտ Թուէսցի իսկ ինձ թէ ոչ յայտնապէս ջանայինն խնդրեցեմ այլ զԱստուածոյն, սակայն չիցէ և այն խանգարել և անարգել զգործս իմ մանաւանդ թէ և եղծանել 'ի սպառ՝ բաժանելով զփառս նոցին ընդ իս և ընդ Աստուած։ Եթէ անհնչիւ մարդահաճոյ գովութեան և շահախնդիր ակնկալութեամբ փոխարինաց գործիցեմ ինչ. և կամ 'ի շնորհուկս ուրուք, որ այնչափ առաւել վնասակարագոյն է, որչափ ընդ կերպարանօք խոնարհութեան՝ որպէս սովորութիւն է յաճախ՝ իցէ ծածկեալ ձարտարութեամբ, ամենասուս ակն Աստուծոյ թափանցանոյ ընդ ծածկոյթն քողախնդրեսցէ զնորս սրտի իմոյ վերբերել զամենայն։

Նա որ նախանձախնդիրն է փառաց իւրոյ՝ արգելլով արգելու չխորել և զդոյզն իսկ մասն 'ի նմանէ. սուրբ և անհաւն յամենայնէ խնդրէ

լուր փառս. և յորժամ՝ ի մարդկայնոց ինչ խառնիլ ՚ի նմա ոչ և է օրինակաւ, ոչ ևս սուրբ էցէ և անխառն:

Այսր ազագաւ տեսանեմք զի զհոնարհս աշխարհիս ընտրեաց Աստուած ամբառնալ ՚ի բարձրադոյն կատար սրբութեան և կամ ՚ի գործել նոքօք զմեծամեծս. զամենախոնարհսն ՚ի կուսից ամբարձ ՚ի փառս աստուածամայրութեան. և ՚ի ձեռն հեք և աղքատին ձկնորսաց նորակերտեաց զաշխարհ և հաստատեաց նոքօք զեկեղեցի իւր սուրբ: Զի ոչ բազում իմաստունք, ոչ ազնուականք, որք անձնահաճք են յաշխարհ և ամբարհաւաճք, այլ զակաս աշխարհիս ընտրեաց Աստուած զի յամօթ արասցէ զհզորս. և զանտոհմն աշխարհի և զարհամարհեալս ընտրեաց և զոչինչսն, զի զեան իմն խափանեսցէ. և առ ի՞նչ. որպէս զի մի պարծեսցի ամենայն մարմին առաջի Աստուծոյ:

Եւ ՚ի հակառակին՝ թէ զիարդ գտանիցի Աստուած զամբարտաւանս մտօք՝ զպանծացեալսն յանձինս թէ եցեն ինչ, բազմապատիկ կան առաջի օրինակք յանապատականաց և ՚ի կրօնաւորաց, և յայնցանէ խոկ՝ որք ՚ի համարի գոլով սրբութեան՝ ՚ի պատուհաս ամբարտաւանութեան իւրեանց լքեալք յԱստուծոյ, կործանեցան չարաչար: Եթէ արդարութիւն Աստուծոյ ոչ նովին խստութեամբ պատուհասեաց զնս յայսոսիկս, այլ ոչ դոյզն աղէտք լինէ են և այն՝ եթէ ամենայն վաստակք իմ տաժանաւորք և աստուածահաճոյք ՚ի բնի՝ ընդունայն լեալ լինեն. եթէ տենչ իմն անփառութեան ծածկաբար ՚ի ներքս սպրդեալ և գողացեալ եցէ զպատուականագոյն մասն նոցին: Եւ զինչ լեցի ինձ ՚ի կատարածի աւուրց իմոց՝ եթէ ծանրացեալ

ամօք ծխրեալ և տպատեալ ՚ի վաստակոց տեսից անավաստակ լեալ վասն փառասիրութեան և գոռոյց գաւտարհաճեան ամենեցին:

ՄԱՍՆ Գ

Մարգեղութեամբ Բանին Աստուծոյ մարդկութիւնս մեր կցորդեցաւ ընդ Աստուծոյ հաղորդակցութիւն եմն գերագոյն, որով վերամբարձեալ մեր յեղբայրութիւն Յիսուսի, և Յիսուս եղև մեզ եղբայր: Եւ ոչ միայն եղբարբք եղեաք Յիսուսի, այլ և անդամք յանդամոց նորա կցորդելով ընդ նմա ՚ի մարմին մի. և զոր կցորդութեանս մերոյ եկաց խոնարհութիւն նորա և նուաստանալ ՚ի կերպարանս մեր՝ ունայնացուցանելով զանձն վասն մեր: Եթէ չէր նորա մեզ կացեալ զփառս իւր և առեալ զմարմին խոնարհութեան մերոյ, ընդէ՞ր միշտ Աստուած մեր էր, և մեք նորա արարածք՝ զուրկք աւանդեալ ՚ի փառաց աստի եղբայրակցութեան և կցորդելոյ ընդ նմա որպէս անդամակից. այլ զի խոնարհեցաւ առ մեզ և նուաստացաւ երբև զմեզ, նովին և մեք կցորդեցաք ընդ նմա յաղգակցութիւն:

Այսպ որչափ մեծարգոյ և սիրելի հարկ է թէ էցէ մեզ խոնարհութիւնն այն և նուաստութիւն, որով փրկեցաք և յայս պատիւ վերամբարձաք: Աքանչանամ արդարև ընդ երկրպագելի խոնարհութիւն Յիսուսի, և ՚ի խօսելն իմ զայնմանէ չգտանեմ բան բաւական ըստ եռանդան սրտիս բացայայտել զհիացումն իմ. քաղցր է ինձ յոյժ խորհրդածել լինել մասք ՚ի նմին, և գործովիմ խակ երբեմն մինչև ցարտասուս: Այլ յորժամ ընդ առաջ լինին ինձ դէպք և պատեհ նմանողք լինելոյ նմին և կերպարանակից խոնարհութեան նորա, ոչ ևս զգամ յանձին զայն

քաղցրութիւն, և եւանդն նախանձուն իմոյ
ջնջեալ նուազել: Դոյզն արհամարհութիւն կը-
րեալ երջ և կամ ըստ կարծեաց, որպէս հան-
դիպի յաճախ, բաւական լինի խոտացուցանել
զսիրտ իմ և ընդել զնս դառնութեամբ: Յուզն
չիս ցաւումն մեծ, զոր թէ զգայեցեալ իսկ ի սըր-
տիս, սակայն զգրգիռ նորին տանիմ ընդ ես ա-
մենուրեք: Ա՛յս իցէ երախտագիտութիւն իմ,
և այս մեծարանք առ նուաստացեալն վասն իմ
Բանն Աստուած: Ես ինքն յանձն առ նմանող
լինել նուաստութեանս իմոյ և թշուառու-
թեան, զի օրինակաւ իւրով յորդորեսցէ զնս
նմանող լինել ինքեան. այլ ինձ չիք ինչ այնչափ
ծանր և այնպէս անհաճոյ որպէս նմանող լինել
նմա՝ այնու իսկ որով կցորդեցաւն նա ընդ իս և
ամբարձ զնս յայն չքեղ և մեծաշահ կցորդու-
թիւն: Հարկ է թէ իցէ ինչ համեմատութիւն
ընդ դէմն և ընդ անդամ. այլ ո՞ր նմանութիւն
իցէ կամ համեմատութիւն ընդ խոնարհութիւնն
նորա և ընդ ամբարտաւանութիւնս իմ: Ո՛րպէս
նախատինք են, կամ ո՞ր ամօթ, ասէ սուրբն
Բեռնարդոս, ընդ փշապսակ գլխով լինել ան-
դամ փափկակեաց և հեչասէր. զնոյն մարթի
է ասել և զինէն: Զի՞նչ այնպէս նորանչան և
հակառակամարտ՝ որպէս յօժարակամ խոնար-
հեալ գլխոյ ունել անդամ իւրև զնս. որ փո-
խանակ ի նա պարծելոյ և նովաւ փառաւորե-
լոյ, գայթակղեալ ընդ խոնարհութիւն նորա՝
խորշիմ գարշիմ յայնմանէ և խոյս տամ ի նմա-
նութենէ նորա: Եւ զի անդամք անկցորդք ընդ
գլխոյն չառնուն զօրութիւն և հիւծեալ նուա-
զին առ ի մահ, յայսմանէ պարտ է և ինձ եր-
կընչել: Զի հոգի ամբարհաւաճ և անափառ լը-
քեալ Թողեալ Աստուծոյ նուազի գաղջու-
թեամբ. և անավաստակ լեալ յամենայն կեանս

իւր, գործել գործէ և վաստակի և ըզաղնու,
այլ գործէ և ոչ ինչ: Սակայն և այդ փոքրագոյնն
իցէ ի չարեաց՝ եթէ անդ զկայ առնուցու և ոչ
ի մեծագոյն ևս և ի կարևորագոյն դէպս լքեալ
Թողցի Աստուծոյ: Զի Աստուած ամբարտա-
ւանից հակառակ կայ. տայ շնորհս խոնարհաց:
Ուր չիք խոնարհութիւն, չիք և հոգի քրիստո-
նէութեան և կրօնաւորութեան, որով և ոչ կա-
ռաջադէմ զարգացումն ի հոգևոր ճանապար-
հի, և ոչ կցորդութիւն և միաւորութիւն ընդ
Աստուածոյ: Զայսր ամենայնի շատ իսկ զփորձ
առեալ է իմ ցարդ. կամիցեմ առնուլ միւսան-
գամ, և ոչ մանաւանդ փութալ վաղագոյն ի
դարման՝ ուրչափ և որպէս մարթն իցէ:

ՈՂՕԹԻ

Դու, Տէր, ուսուցանես ինձ զաղգու և զկա-
րևոր գարման բաղմագիմ ախտիցն հասելոց ի
վերայ իմ յամբարտաւանութենէ, և խոստանել
զնեասակար արդասիս անսպառ չարեաց, որք և
ի սրբոցն վճռակի ասա կենաց յաճախեն հա-
նապազօր: Ամբարտաւանութիւն մայր է և ծնող
ամենայն մեղաց, և ի Թունաւոր ականէ անտի
բղխեցին բազմահոլովք մեղաց: Քոյոյ խոնարհու-
Թեան ևեթ մարթ էր գարման առնել չարեացն,
որ վասն իսկ այնքան խոնարհութեամբ արա-
րեր զմուա քո յաշխարհ: Օրինակաւ քով տաս
ինձ դաս և խրատ աղգու և գիւրիմաց. զի եթէ
Դու Աստուած փառաց հաճեցար պարագրիլ
անչափաւոր յարգանդն կուսին որպէս ոտայ,
զինչ այլ ուսուցանես ինձ այնու՝ բայց փոքրկա-
նալ և ինձ ոտայապէս: Եւ իրր իցէ ինձ մոռանալ,
զայդպիսի բարձրագոյն դաս աստուածատուր,
և որպիսի պատճառանօք կարիցեմ վերջանալ ի

ընդ զայն գործով: Մինչեւ ինձ առաւել քան զեկեղեցեն փառք և մեծութիւն անուան ի վերայ երկրի:

Ի խորհել իմում զայսոսիկ, ո՛վ Տէր, ամենածածկիկ զերեսս իմ և գտանեմ զիս պարտաւոր առաջի քո, և ի խոկմանէ ատի ընդոստուցեալ և յաղթահարեալ՝ պատրաստատուպն գտանիմ ի յանձնառութիւն որ և է նախատանաց և արհամարհութեան, և ի կեալ որպէս յետնեալ ոք ի մարդկանէ: Այլ աւաղ, զի վաղվաղակի մոռացօնք լինին ինձ այսոքիկ, և ի պատահել գոյն ներհակաց անհեառանան ի սպառ ի մըտացս: Դիժաւարընդել քան զամենայն առաքինութիւնս է խոնարհութիւն անկեղծ. և բուռն ձգանց և մեծի անձնուրացութեան պէտք են ի սոսացումն նորին. այլ ես քաջածանօթ տկարութեան իմոյ, ահա կամ՝ խոնարհեալ առաքի քո. գիտեմ զի դիւրամիտ եմ յամբարտաւանութիւն, և չեմ բաւական նուաճել զայն անձամբ՝ եթէ ոչ դու օգնեսցես ինձ և զօրացուսցես զիս յառաջադրութեանս, զոր ազդեցեր յիս այսօր, առ ի խլել արմատաքի ի սրտէ իմմէ զբուսնեալն ի նմա ամբարտաւանութիւն որ սկզբնեալ մտանէ յամենայն գործս իմ և ի գնացս:

ՅաղագՍ ներկայութեան Աստուծոյ

ՄԱՍՆ Ա.

Ներկայութիւն Աստուծոյ հաստատեալ է յերկուս յայսոսիկ սկզբունս հաւատոյ: Ամենուրեք է Աստուած, և թէ տեսանէ զամենայն: Աստուած ամենուրեք է, ապա պարտ է ինձ ամենայն ուրեք պատկառել ի նմանէ, և ամենայն ուրեք յուշ ածել զդէրագոյն էութիւն նորա և զիմ առ նա հպատակութիւն: Զիք տեղի ընդ սիեզերս համօրէն՝ որ ոչ սրբեսցի ներկայութեամբ մեծվայելչութեան նորա. և ուրեք եցեմ՝ կարեմ ասել ընդ Յակովբայ. «Ահեղ իմն է տեղիս այս, և ես ոչ գիտեի», մանաւանդ թէ՝ ոչ յուշ ածէի: Տէր է ասա, և ես ոչ զմոռաւ ածէի: Նմին իրի՝ խոկումն ներկայութեան Աստուծոյ է պաշտօն իմն մեծարանաց, զոր ըստ օրինի պարտ է ինձ մատուցանել նմա: Սուրբն Օգոստինոս համարի զաստուածութիւնն որպէս ծով համատարած՝ յորում բովանդակին արարածք ամենայն, և թէ օրէն էցէ ասել՝ այնպէս պարփակեալ են յէութենէ նորա, զի ջմարթէ նոցա էլանել և անջատիլ ի նմանէ. զի ըստ հարկի էութեան իւրեանց ի նմա և առաջի նորա կան հանապազ: Ապա արժան է, և ըստ հաւատոց՝ պարտք իսկ մարդոյ որպէս բանաւոր և խոհուն էակի՝ կալ առաջի նորա հոգւով և ճշմարտութեամբ՝ համարելով միշտ զինքն առաջի Աստուծոյ, և զԱստուած յինքեան, որ զի այնչափ և այնպիսի կցորդութիւն է ընդ ինքն և ընդ Աստուած:

Եւ զի ամենայն ուրեք է Աստուած, տեսանէ

զամենայն և գիտէ զամենայն, ապա պարտ է ինձ հանապազ ունել զնա զառաջեաւ՝ որպէս ականատես ոչ միայն գործոց իմոց, այլ և խորհրդոց մտացս. զի անսահման է տեսութիւն նորա և զնոսա զնորս. և թէ կամիմ և թէ ոչ՝ առաջի նորա կամ հանապազ, և չէք հնար թէ ծածկեսցի ինչ՝ի նմանէ: «Յո՛ երթայց, Տէր, ՚ի հոգւոյ քումմէ, ասէ մարգարէն Դաւիթ, կամ յերեսաց քոց ես յո՛ թաղեսցեմ. թէ ելանեմ յերկինս՝ դու անդ ես, թէ իջանեմ՚ի գիժոխս՝ և անդր մտ ես. թէ առից զթևս իմ ընդառաւօտս և բնակեցայց յեզերս ծովու, սակայն և անդ ձեռն քո առաջնորդեսցէ ինձ: Ասացի՝ խաւար ուրեմն արդեօք ծածկեաց զիս... խաւարն՚ի քէն ոչ խաւարանայ, և գիշերն որպէս տիւ լուսաւոր եղիցի, և խաւար նորա որպէս զլոյս նորա»: Զայս այսպէս խորհէր Դաւիթ, և խելամուտ լինէր՚ի սրտի իւրում՝ թէ որպէս պարտ էցէ կալ առաջի Աստուծոյ:

ՄԱՍՆ Բ

Խոհուն ներկայութեան Աստուծոյ կարևոր խոչ է և օգտակար՝ զի է գործման զօրաւոր և դեղ պահպանող՚ի մեղաց, և համառօտ ճանապարհ վաղագոյն հասանելոյ՚ի կատարելութիւն:

Դեղ է պահպանող՚ի մեղաց. զի չէք ինչ որ գիտիցէ այնպէս ունել զիս՚ի կարգի, որպէս յուշ ածել թէ՝ առաջի Աստուծոյ կամ: Զէք ինչ հզօրագոյն՚ի նուաճել զդուշմունս կրից, ՚ի յաղթել բուռն փորձութեանց, և՚ի բազմավաստակ առիթս մեղաց պահել զիս՚ի գլուխանել, որպէս ասել. Առաջի կամ դատաւորին խոյ, որ ընդ հուպ գտանէցոյ է զիս, և տալ զվճիռ

դատապարտութեան եթէ յանդգնեցայց մեղանչել: Զէք փորձութիւն որ ոչ յաղթեսցի խոհմութեամբ այսուիկ, ոչ գրգիռ կրից որ ոչ նուաճեսցի, և ոչ թուլութիւն և գլորումն, յորմէ ոչ պահեսցի: Մեղանչեմք յաճախ՝ զի ոչ յիշեմք եթէ առաջի Աստուծոյ կամք. դուն ուրեք մեզանչեաք՝ եթէ հանապազ առաջի աչաց ունիցաք զԱստուած: Մեղանչէ ընդդէմ Աստուծոյ, յանցանք են, ասէ սուրբն Օգոստինոս, այլ մեղանչել ընդդէմ ակներև Աստուծոյ՝ ոձիր այլանդակ, և սակաւք յոյժ յանդգնին՚ի մեզ՝ եթէ յուշ լինէր նոցա ճշմարտութիւնն թէ Հայի յիս Աստուած: Այսու խորհրդով և տեսութեամբ վարեցաւ անառակ որդին՚ի ցաւս իւր և՚ի դառնութեան սրտին և ասաց. Հայր, մեղայ յերկինս և առաջի քո:

Ի այս և ճանապարհ համառօտ՚ի կատարելութիւն. զի առն քրիստոնէի և կրօնաւորի առոյգ ճանապարհ կատարելութեան է բարւոք առնելն զամենայն զոր առնէն ոչ հեղգութեամբ, այլ փութով և եռանդեամբ: Արդ զինչ այլ հզօրագոյն առ՚ի ազդել յիս փոյթ և եռանդն, ՚ի հոգևորել զիս՚ի գործ և յուղղել զթերութիւնս հեղգ և գաղջ կենաց իմոց՝ որպէս յուշ ածել թէ առաջի Աստուծոյ կամ: Մարթ իցէ ինձ այնուհետև հեղգանալ և գաղջանալ՚ի ծառայութեան Աստուծոյ և յամենայնի զոր առնեմ վասն նորա: Ես՝ և յիշատակ առաջակայութեան Աստուծոյ՝ ազդիւր իմն է մխիթարութեան հոգւոց արդարոց և խրախոյս մեծ արժանանալոյ՚ի բուռն ձգտունս վերելից՚ի կատարելութիւն: Զէ զինչ այլ քաղցրագոյն որպէս զնոսա ածել թէ Աստուած ընդ իս է, և թէ Աստուած գոլովիսոր հն զինէն և չիս զբաղ: Այս ևեթ խոհուն չեցէ բաւական՚ի գիւրել ինձ զամենայն գժուա-

բուԹիւն և 'ի սրտապնդել զնս յամենայն պա-
տերազմունս յարուցեալս 'ի վերայ իմ: Ահա
արդասիք են բարեաց խոհման ներկայուԹեան
Աստուծոյ: « Արդարք ուրախ եղիցին, ասէն
սուրբ գիրք, և ցնծասցեն առաջի նորա »: և զնս
ա՛րդ ոչ. քանզի առընԹեր կայ նոցա Աստուած,
և ինքեանք միշտ առաջի նորա կան:

ՄԱՍՆ Գ.

Երկու ինչ երեք են կարևորք 'ի մարդս կրԹու-
ԹեաՒն առ 'ի խոհակ զներկայուԹիւն Աստու-
ծոյ: Խոյս տալ զդուշուԹեամբ յայնմ ամենայ-
նէ՝ որ խափան լինին մեզ 'ի կալ առաջի Աս-
տուծոյ. և երկրորդ՝ սրտի մտօք հետամուտ լի-
նել այնմ ամենայնի որք օժանդակեն մեզ 'ի
ստացումն և 'ի պահպանուԹիւն նորին:

Խափան լինին մեզ ներկայուԹեանն Աստու-
ծոյ՝ զբօսանք կենցաղոյս և զուարճուԹիւնք ո-
րովք կարի ինն յարին սիրտք յարտաքինս. առա-
ւելագնց ուրախուԹիւն՝ որ ցնդումն ածէ
մտաց. կենակցուԹիւն այնպիսի, որով Թերա-
նամբ 'ի պարտուց մերոց. զոր այնպիսւոյ բարե-
կամուԹեան, որով բոլորանուէրս լինիմք առ ա-
բարածս. բուռն ցանկուԹիւն սրտի յորմէ զե-
րիմք. ուժգին յուզումն կրից, յորոց ամբոխեալ
վրդովիմք. դատարկաբանուԹիւնք՝ որք ընուն
զմիտս մեր մնառեօք. առաւելագնց հոգք՝ որք
խառնին զմեզ. խուռն և մեծամեծ գործառնու-
ԹիւնՔ, որք զբաղեցուցանեն զմեզ. և այլ բիւ-
բաւոր պատճառք ցնդելոյ մտաց որոց հետա-
մուտ լինիմք: Ցայսցանէ ամենեցուն պարտ է 'ի
քաց հրաժարել՝ զի չկարեն կալ ընդ ներկայու-
ԹեաՒն Աստուծոյ: Ահա՛, Տէր, պարտ և արժան

է ինձ հրաժարել յայդցանէ. զի գանձ մեծ է
ինձ ներկայուԹիւն քո. յորոց 'ի գինս եթէ և
զամենայն զոր ունիմս տաց, տակաւին գիւբա-
գնոյ լեցի ինձ ատանալ զայն: Եւ եթէ հրաժա-
րեալ յամենայնէ՝ եղէց միաւորեալ ընդ քեզ՝
երանաւէտ ներկայուԹեամբդ քով, լեցի ինձ
այն այժմէն առհաւատչեայ հանդերձելոյ երա-
նուԹեանն:

Իսկ առ 'ի ստացումն և 'ի պահպանուԹիւն
ներկայուԹեան Աստուծոյ օժանդակէն նախ՝
աղօԹք և խնդրել հանապազօր զմեծագին պար-
գևն զայն ասելով. Տո՛ւր ինձ, Տէր, կալ հանա-
պազ առաջի երեսաց քոց և ոչ հեռանալ երբեք 'ի
սեռուԹենէ քումմէ: Երկրորդ՝ լռուԹիւն և ա-
ռանձնուԹիւն՝ խոյս տալով 'ի բազմայղզբաղ-
մանց աշխարհի և կարդելով ժամս պարապելոյ
յԱստուած օր ըստ օրէ: Երրորդ՝ կարգաւո-
րուԹիւն 'ի գործս՝ առնելով զամենայն հոգեւով
հնազանդուԹեան՝ ուշ եդեալ յամենայնի կա-
տարել զհամս Աստուծոյ և զՀաճոյս նորա, և 'ի
մանուանս իսկ գնա խնդրելով և առ նա ուղղե-
լով զամենայն: Զորրորդ՝ նկատել զարարածս
որ ինչ են՝ համարելով զնոսա որպէս յայտա-
րարս և հայելիս իմն՝ երևեցուցիչս կատարելու-
ԹեանՒ Աստուծոյ. զերկինս՝ որպէս աԹոռ նո-
րա, զերկիր՝ որպէս պատուանդան ոտիցն.
զմարդիկ՝ որպէս պաշտօնեայս սեպհականեան
նորա. զայլորդուԹիւնս՝ որպէս պարգևս առա-
ջաձեռնուԹեան նորա, և զձախողակս՝ որպէս
զպատուհաս արդարուԹեան իւրոյ: Ահա գնարք
են կալոյ միշտ 'ի ներկայուԹեան նորա. այսու
օրինակաւ սուրբն Իգնատիոս յափշտակեալ
մտօք վերանայր առ Աստուած: Շատ էր նմա
սեռուԹիւն ծաղկան միոյ 'ի յափշտակել զմիտս
նորա, և երևեցուցանել նմա զվսեմական պատ-

կեր համագոյից արարչապետին: Իցէ Թէ լե-
նէր և մեզ ըստ ասելոյ Աւաքեղեան՝ նոյնպէս
տեսանել զԱստուած յամենայնի և ամենայն ու-
րեք:

ՕՐ ՎԵՑԵՐՈՐԴ

Յաղագս կրօնաւորական աղքատու-
թեան

ՄԱՍՆ Ա.

Յիսուս Քրիստոս, տէր և արարիչ մեծու-
թեանց, ակնկալեաւն յաղագս և ազանց փրկիչ
և Թագաւոր Իսրայելի՝ եկեալ ի նորոգել զաշ-
խարհ, ոչ արքայորդի ծնանի յարքունիս և ի
ճոխութիւնս. այլ յաղքատին այրէ, ի կեանն
կաթսաւութեան, որպէս զի օրինակաւ իւրով
հաստատեսցէ զՀնազանդութիւնն զոր գայր ու-
սուցանել մեզ. և զդլուխ երանութեանց զոր
որպէս գաս նախկին տալոց էր աշխարհի, ան-
գըստին ի մանկութենէ յանձին իւրում երևե-
ցուսցէ: Օրինակ մեծ արդարև և ազդուցիչ
քան զամենայն ճառս ուսումնութիւն բանից. օրինակ
յայտարար յարգի և արժանեաց աղքատու-
թեան, զոր քան զամենայն ճոխութիւնս աշ-
խարհի մեծարեաց աստուածորդին. և սրբեալ
յանձին իւրում՝ սիրելի և ցանկալի փրկելոցս
արար զայն:

Յայս գերապանծ աղքատութիւն կոչեցեալ
եմ և ես յառանձին ընտրեալ փրկչին իմոյ լինել
իւր նմանող կրօնաւորական ուխտիւ:

Են և յաշխարհի աղքատք առ հարկի, որոց
պակասել պակասն ինչք, և կարեւորք ի պէտս,
այլ ոչ և ցանկութիւնն առ այնոսիկ: Են և

այլք Թէպէտ և ձոխք ընչիւք, այլ խակապէս աղքատք հոգւով: Առաջնոցն աղքատութիւն՝ ակամայ է և առ հարկի. իսկ վերջնոցն Թէպէտ և աստուածահաճոյ, Թէպէտ և արժանի քրիստոնէի, զի սոսկացեալք սրտիւ՝ այնպէս վարեն զաշխարհ, որպէս Թէ ոչ վայելէին. սակայն և ոչ նոքա են տիրապէս աղքատք ըստ Յիսուսի, որ հաճեցաւ մերկանալ յամենայնէ:

Զկնք ոք ասէ խակապէս և կամաւորապէս աղքատ ըստ Յիսուսի՝ որպէս զկրօնաւորն, որ ինքնայօժար կամօք հրաժարի յամենայնէ, պատրաստ դոլով հրաժարել համօրէն իսկ 'ի մեծութենանց աշխարհի՝ եթէ իւր էին բովանդակ: Ապա մարթ է և ինձ ասել ընդ առաքելոց «Տէր, ահա Թողի զամենայն և եկի զկնի քո»: Եւ եթէ կացից հաւատարիմ 'ի կոչմանս իմում և յաջողաջադութեան, ակն ունիմ լսել 'ի Քրիստոսէ զնոստուսն ուրախարար. «Նստիցիս և դու յաԹոռ փառաց»:

Արդ զայս յոյս ունելով ինձ 'ի զօրավիգն, և զօրինակ Փրկչին իմոյ 'ի խրախոյս՝ եկէ ինձ մարթ դառնալ և փափաքել վերստին յորոց կամակար հրաժարեցի առ աէր Փրկչին իմոյ Յիսուսի. եկէ ինձ մարթ մեծարել վերստին զորս միանգամ արհամարհեցի: Կամ Թէ համարիցի՞ մեծ ինչ արարեալ Աստուծոյ նուիրմամբս՝ և ոչ մանաւանդ մեծարեալ 'ի նմանէ՝ զի հաճեցաւ ընդունել զնուէրն իմ:

Աղքատութիւն զոր յանձն առեալ եմ՝ ոչ 'ի պատիւ եկէ ինձ մնաւանդ՝ նմանակից առնելով զիս աղքատացելոյն Յիսուսի. և ոչ 'ի ձոխութիւն մեծագանձ՝ առնելով զիս ժառանգորդ արքայութեանն Յիսուսի և յաւիտենական երանութեանց:

ՄԱՍՆ Ը

Աղքատութիւնն կրօնաւորական Թէպէտ և նմանութիւն ինն է աղքատութեանն Յիսուսի, սակայն խոիր մեծ է ընդ այս և ընդ այն: Շատ եկէ ինձ հայել և տեսանել զաստուածորդին նորածին 'ի գաւաժ այրին ինքնավանեալ. զմուր անբանից յորրանն նմին, զդոյզն յարդ 'ի խշեշտակ և զաղքատին պատանան 'ի խանձարուրս: Էր և նա երբէք զիս անկեալ ընդ կարեօք մարդկայնոյ վշտակիր բնութեանս, և փափկութեամբ մարմնոյն՝ զդայուն և ա քան զիս. այլ զի կամեցաւ անցանել ընդ ամենայն կիրս մարդկային կենցաղոյս, հաճեցաւ կրել և զծանր վիշտս աղքատութեան: Ձիչ նորա մանկական՝ վշտամբեր կրնոյն յայտարար՝ հնչեցեալ 'ի մորոյն ազդ առնէ ինձ անդուլ յամոթ և 'ի դառապարտութեան անձինս՝ համեմատել զկիրս իմ ընդ նորայոցն: Աղքատ եմ և ես, այլ չինչ յանկիցի աղքատութենէս իմ, և բնաւ իսկ կարիցէ դալ 'ի կշիռ ընդ աղքատութեանն Յիսուսի, ընդ գաւաժ այրին, ընդ անարգ մորոյն, ընդ դոյզն խանձարուրոցն. կրիցեմ և ես երբեմն զնա զվիշտս աղքատութեան. կարօտացայ երբէք երբեմն զնա. և չիցեմ յաղքատութենէն իմում լնացեալ կարեւորքն, նա՝ և առաւելեալ իսկ: Կրօնն խոստացեալ է արդարև տալ զպէտս իմ, այլ ոչ և զաւելորդս և զցանկալիս, որոց չկարեմ և չէր իսկ ինձ արժան ակն ունել 'ի նմանէ. զի տարօրինակ յոյժ աղքատութենէս իմ լինէր, եթէ և աւելորդաց և հեշտալեաց համարեմ զոյն ընդունակ: Բայց զկարևորսն, զորս պատշաճ համարեցան սահմանել աստուածարեալ հիմնադիրք կրօնից, և որովք առաջինքն մեր հարք ծերսունիք չատա-

ցան, և յարդ ևս բաղումք ՚ի կրծնակից եղ-
բարցս շտապանան, զլացաւ ինձ երբեք կրծնն և
ոչ մատակարարիցէ օր ըստ օրէ:

Նա և այդ իսկ զի կրծնն հոգայ և պատրաստէ
ամենայն պէտս իմ՝ ազատ առնելով զիս ՚ի
զբաղանաց յորս զբաղին բիւրաւորք ՚ի մարդ-
կանէ՝ ոչ յօգուտ մեծ ե՛ւ ինձ և ՚ի շահ: Ասաղ,
բաղումք յառաջ քան զիս՝ կրծնաւորք աս-
տուածարեալք և եռանդնոտք կացեալք յայսմ
կրծնի և ընդ սովին կանոնաւ, մեծ ի՛ւն պարգև
համարէին զայն, և աղքատութիւն իւրեանց
յերանութիւն համարեալ էր և ՚ի հանգիստ.
մինչև փոխանակ յաւելցի զվէտս կարօտու-
թեան իւրեանց, ձգդել ջանային և նուաղեցու-
ցանել ըստ նեղելոյ հնազանդութեան, զի նմա-
նագոյն ևս լցեն աղքատացելոյ Փրկչին. և ընդ-
այն ևեթ ցաւէր նոցա, զի ՚ի բացեայ յոյժ տե-
սանէին զանձինս ՚ի նախատիպ օրինակէն: Իսկ
ես որ բացագոյն ևս քան զնոսա գտանիմ, լցէ՛
թէ ցաւիցեմ և դանգատիցեմ վասն այնորիկ:
Ո՛հ, ո՛րչափ որատունչք, քանի գրգռիւք անձնա-
սիրութեան լռէին և գադարէին առ ժամայն,
եթէ լաւագոյն քան զոր այժմ՝ իմանային զինչ
լցէ լինել աղքատ ըստ Յիսուսի, և թէ քաջ
խելամուտ լեալ էի՛ թէ ո՛ր վատութիւն և ա-
մօթ մեծ լցէ կրծնաւորի՝ կոչիլ աղքատ ըստ Յի-
սուսի և չկամել լինել աղքատ ըստ Յիսուսի:

ՄԱՍՆ Գ

Կամ Յիսուս խաբեցաւ ընտրելով զկեանս
աղքատութեան, և կամ աշխարհս խաբի հե-
տամուտ լինելով երկրաւոր մեծութեանց: Այլ
զի անսահման իմաստութեանն Աստուծոյ խա-
բիլ չէ հնար, ապա խաբի աշխարհ, սխալէ և

մոլորի: Ո՛հ, վրիպակ բազմավտանգ և զգուշալի
ամենեցուն իսկ՝ այլ առաւել ևս կրծնաւորի, ո-
րոմ գիւրագոյն է յոյժ քան զայլս ՚ի մարդ-
կանէ ըմբռնիլ յայդ պատրանս, եթէ կրծնաւո-
րութեամբն հանգիւրժ՝ անձնգիւրութեան և
դրգռանաց զՀետ լինիցի: Քանզի զաղքատու-
թեան ունելով զՀանապարհ, կարծէ զՀետ երթալ աղքատացելոյն Յիսուսի, սակայն այլ ինչ
է ամենևին ունել զՀանապարհ աղքատութեան,
և այլ երթալ զՀետ Յիսուսի, որ ոչ այլազգ
յաջողէ, բայց յարմարելով և զիջեալ և զյօժա-
րութիւնս ընդ ըղձից և ընդ յօժարութեանց
Յիսուսի: Այդ զի՞նչ նմանութիւն ևս յօժա-
րութեանց Յիսուսի կամաւորապէս աղքատա-
ցելոյն յամենայնէ, ընդ յօժարութեանց կրծնա-
ւորի, որոյ զաղքատութիւն յանձն առեալ և
որչափ ՚ի կարի եւրուստն է՝ խնդրէ յամենայնի
զանձինն գիւր և զգրգռանս:

Չմարի զանձն վաստակաւոր առաջի Ա-
ստուծոյ վասն աւետարանական աղքատու-
թեանն, յորոյ ՚ի հոգւոյն զուրկ է ամենևին.
զի ո՛ր հոգի աղքատութեան ևս ՚ի նմա որ չհա-
մի կարօտիլ իւիք, և զպակասեալն ՚ի միոյ կող-
մանէ՝ Հանայ ընդ յայլմէ կողմանէ: Եւ զի ՚ի
վերայ ամենայն Հանիցն և նախահոգակ իմանոյ՝
տակաւին պատահէ նմա յաճախս զի ոչ ըստ ա-
մենայն ցանկութեան սրտի իւրոյ ունիցի զոր
ինչ և կամին, կրել կրէ զվիշտն և զձանրու-
թիւն աղքատութեան առանց արդեանց և վար-
ձուց ակնկալութեան: Թողեալ զկեանս աշխար-
հի և մեծութիւնս թերևս բազումս, չնչին
և դուրնաքեից լինի ՚ի խնդիր և տայ զանձն ՚ի
գերութիւն այնոցիկ, ոչ ինչ ընդհատ քան
զաշխարհիկան գերեալս ՚ի բազմամեծ ձախող-
թեանց: Եւ կուրացեալ բազմավտանգ պատա-

նոք՝ առաւելագանց ազատութեամբ վարի յա-
ճախ՝ խաբելով զանձն որպէս թէ չիցէ ինչ
յայնմանէ վտանգ վրկութեան իւրոյ, թէպէտ
և բռնաբարել բռնաբարեցի այնու ուրախ իւր,
թէպէտ և խիղճ մտացն ամբոխիլ մեծապէս:

Քան յայլսում ամենայնի՝ 'ի պատշաճեալն
աղքատութեան վտանգ է յոյժ կրօնաւորի 'ի
մոլորութենէ խղճի մտաց: Քանիցս դէպ եղև
լինել երկմտել, խղճել և տագնապել. և թէ
չխղճեցի՝ սակայն խղճել պարտ է լինել:

Սիթէ յամենայնի ուղիղ սկզբամբք վարե-
ցայ. քանիցս, ո՞ գիտէ, զընդունայն և զսուտ
պատճառանսն առ Ճշմարիտս կալայ՝ զի ցանկու-
թիւն խաբեաց զիս: Քանիցս բռնազբօս հրա-
մանաւ և թոյլտուութեամբ գործեցի, կամ ըստ
կամս մեկնաբանեալ զկրամանսն ընդլայնեցի:
Եւ զինչ. յաղն սակս ապա հրաժարեցայ 'ի մե-
ծութենից աշխարհի՝ խուսեալով յանանձրեպետ
վտանգաց նոցին, որպէս զի 'ի նմին իսկ յաղ-
քատութեան 'ի նոր վտանգս ա-
կից զանձն իմ. սիթէ այնո՞ւ պայմանաւ յանձն
առի զսուրբ աղքատութիւնս զայս՝ զի վտաց
նորին և նեղութենից չերեջց քնաւ բաժանորդ:
Կամ թէ հաստատեա՞լ էի 'ի մուխ յայնպիսեաց
լինել 'ի կրօնաւորաց, որք ներհակաբար իմաս-
տիւք Ճշգրտին յանձինս զբան առաքելոյն,
«Ոչ ինչ ունելով և զամենայն ինչ ունել»: Եւ
ընդհէր էր լինէ հրաժարել յաշխարհէ՝ եթէ
յետ հանգիստապէս նուիրելոյ Աստուծոյ զամե-
նայն զոր ունիցէ՝ տակաւին պահեցից ինչ. և
չերկինչեցեալ յանիծեցն սպառնացելոց 'ի Տեառնէ
այնոցիկ՝ որոց գողանայցեն յողջակիզացն խո-
րոց: Սպառնալիք չատ իսկ ստուգեալք 'ի փոր-
ձոյ. եղո՛ւկ լինէ եթէ և յիս ստուգեսցին:

ԱՂՕԹՔ

Տէր Աստուած, որ արարիչդ ես երկնի և
երկրի, և մանկակերպ երկրպագիս յաղքատին
այրի և 'ի մուրք անարդ. ընկալ զնուէրս պատա-
րագիս զոր մատուցանեմ քեզ այսօր վերստին՝
հրաժարելով յայնմ ամենայնէ զոր մատուցա-
նէ ինձ աշխարհ և որոց մարթ էր լինձ ակն ունել
'ի նմանէ: Ընկալ և զյօժարութիւն սրտիս՝ զոր
ընորհօք քովք առաջադրեմ այսօր նուիրելոյ
քեզ՝ թէ դոյր իմ՝ և թագաւորութիւն մի ող-
ջոյն, զոր յայն սակս ևեթ ունել ցանկայի զի
քեզ նուիրեցից:

Գիտեմ, Տէր, զի ոչ պահանջես յենէն զայդ-
պիսիս, սակայն այս իսկ սովորական վրիպակ է
մեր՝ զի զոր չունիմք՝ զայն ցանկամք նուիրել,
և զոր ունիմք՝ զանանմք. բայց դու չինդրես յի-
նէն ոչ զթագաւորութիւն և ոչ զինքնակալու-
թիւն զոր չունիմ, այլ զոր խնդրեսն այն է՝ զի
հոգւով աղքատութեան թողից զայս ինչ և
զայն, յորս յարեալ է սիրտ իմ, և գիտեմ իսկ
զի պարտք են լինձ սովորել կալ առանց այնո-
ցիկ:

Փոքր ինչ իրքն են, այլ թէ 'ի փոքունս յայ-
նոսիկ գտայց քեզ հաւատարիմ, ո՛ն, որպիսի
առատութեամբ ընորհաց և հոգեկան գանձուց
լցցես զնս: Այլ զի զլացայ քեզ ցարդ զայնո-
սիկ, մանուկքն այնոքիկ որո՛ց մեծամեծ վնա-
սուց հոգւոյ իմոյ չերեն պատճառք, և լինել
իսկ կարասցեն: Այս իսկ ես ապա զոր պարտիմ
նուիրել քեզ հրաժարելով յայնցանէ. ահա
պատարագն որով պարտ է լինձ մատչել առ
մուրդ: Եթէ փոքունքս այսոքիկ՝ ծանունք և
դժուարինք թուեսցին լինձ, զինչ ապա մեծա-

մեծքն, ով Տէր: Ձոր սահման կարօտութեան և ժամանեցից կրօնաւորական աղքատութեամբս, նուազագոյն իցէ միշտ քան զքոյդ. և ոչ իսկ կարացէ գալ 'ի կշիռ երկնայնոց բարեացն զորս խոստացեալ է քո աղքատացելոց վասն աւետարանին:

Վասն ինազանդութեան կրօնաւորի

ՄԱՍՆ Ա.

Զկնք ինչ սրբազոյն քան զՀիմունս, յորոց վերայ հաստատեալ է հնազանդութիւն իմ. զի հիմունք սորա են հաւատք խոնարհ, յոյս պերազանց, և սէր ամենակատար:

Հաւատք խոնարհ. քանզի 'ի հնազանդել իմում հաւատամ՝ զի ինքն Աստուած յանձին մերձաւորի հրամայէ ինձ. և այնպէս վստահ եմ ընդ այն, որպէս թէ Աստուած ինքնին երևեր ինձ, և յայտներ զկամս իւր: Հաւատամ դարձեալ՝ զի 'ի հնազանդել իմում կամակար մեծաւորի՝ Աստուած 'ի ձեռն նորա առաջնորդէ ինձ, և փոխանորդ ընտ և պատգամաւոր Աստուծոյ համարիմ: Եւ քանզի Հնազանդութեանն այսմիկ ոչ կարեն լինել խափան՝ ոչ թերութիւնք, ոչ մարդկօրէն սխալանք մեծաւորի, և ոչ գիտակամակութիւն իմ՝ 'ի հնազանդել, վասն որոյ հանդերձ այսու ամենայնիւ պարտին հաստատուն կալ հաւատք իմ. և պարտ է ինձ, թէպէտ և թերութիւնս գոյից 'ի մեծաւորն, հնազանդել նմա և մեծարել ընտ, զի զԱստուած յանձին նորա մեծարեմ:

Յոյս պերազանց. քանզի մարթ է ինձ երկմտել յաճախ ընդ հրամանս մեծաւորի՝ թէ գուցէ ոչ ըստ կամացն Աստուծոյ՝ այլ ըստ հաճոյից իւրոց և ըստ կրից ոգւոյ հրամանն. սակայն հանդերձ այսու ամենայնիւ հնազանդիմ նմա, վստահացեալ յուսով զի Աստուած հայեցեալ 'ի հնազանդութիւն իմ, ազդեսցէ 'ի նա որ ինչ օգտակար է հոգւոյ իմոյ, զի ոչ թողցէ ինձ վերջա-

նալ 'ի պարտուց պաշտամանս, յոր 'ի նմանէ կարգիմ. զի զերծուսցէ զիս յամենայն վտանգաց՝ որ ընդ առաջ լինցին ինձ. և զի թէպէտ և սխալեալ իցէ մեծաւորն իմ՝ 'ի հրամայելն, ոչ յինէն պահանջեսցէ Աստուած համարս զսխալանացն: Միով բանիւ՝ վստահ եմ զի հաճոյ իցէ Աստուծոյ որ ինչ և գործեմս վասն հնազանդութեան, և վարձս ընդ այնոցիկ տացէ ինձ փոխարկէն:

Սէր ամենակատար. քանզի չիք նուէր մեծագոյն քան զնուէր կամաց իմոց, և աստուածայնոյ սիրոյն ևեթ մարթ է տալ ինձ հրաժարել 'ի կամաց իմոց և յաղատութենէ՝ որ ազնուագոյնն է քան զամենայն պարգեւս բնութեան: Ֆանէ՛ մխիթարութիւն է ինձ այս, և յոյս վարձուց մեծաց: Իսկ եթէ ընդ հակառակն չկամիցեմ հնազանդել մեծաւորի, քանէ՛ երկիւղ պատուհասի: « Ոչ եթէ զքեզ անարգեցին, ասաց Աստուած զՀրէիկց առ Սամուէլ, այլ զիս մերժեցին »: Այսպէս 'ի ստունգանել իմոմմեծաւորի՝ հետեւիմ հրամանաց տեառն, ըմբռստանամ ընդդէմ տեառն, և ապստամբիմ 'ի նմանէ:

ՄԱՍՆ Բ

Փրկիչն իմ « խոնարհեցաւ , լեալ հնազանդ մահու չափ և մահու խաչի ». և ոչ միայն հօրն երկնաւորի լեալ հնազանդ, այլ և ծնողաց իւրոց. զի « էր նոցա հնազանդ » ասէ աւետարանիչն: Եւ զինչ երբեք հրամայեն ինձ գժտութիւն, որպիսի Փրկիչն իմ չանձն էառ. և սակայն բիւր պատճառանս թերացուի ինձ ընութիւն իմ առ 'ի կացուցանել զիս ազատ 'ի հրամանէ մեծաւորի. դոյզն ինչ գժտարութիւն երացն, դոյզն ինչ արգել, բաւականք են 'ի նպաստ դժկամա-

կութեանս իմոյ, ամենայն ինչ լինի ինձ անհնարին, և ոչ պակասեն ինձ խափանք 'ի տկարութենէ բնութեան, կամ՛ի զբաղանաց և կամ յոր և է պատճառաց: Թուի ինձ թէ մեծաւորն չհայիցի երբեք 'ի պատճառս իմ, և չկամիցի երբեք լսել ինձ. Թուի ինձ անողոքելի ոմն, և հաստատութիւն նորա, թէպէտ ըստ պարտուց պաշտամանն, թէպէտ ըստ պատշաճից խոհեմութեան, Թուի ինձ խստութիւն տարապայման: Ո՛չ ապաքէն բազում անգամ այսպէս խորհեցայ և երբեք որանձնէցի իսկ այսպէս: Եւ որ առաւելագոյն լինի 'ի դատապարտութիւն, բազում այն է զի զորոց դառնագոյն որանձնեմ և զորոց բողոք բառնամ՛ի հրամայել ինձ հնազանդութեան, զայնոսիկ յաղատութեան խոմամ մոտագիւր գործեմ: Որպէս զի եթէ անկեղծաբար զանձն գատիցեմ, այնպիսի գտանեմ չիս բունեալ հետութիւն՝ զի հրամանն ևեթ մեծաւորի բաւական է 'ի դժուարացուցանել ինձ զամենայն: Ո՛հ, քանի դիւրին և քաղցր թուէր ինձ ամենայն, եթէ ճշմարիտ հոգի կրօնաւորութեան էր չիս: Զիք յաղթանակ՝ զոր ոչ կարիցեմ տանել Յսովաւ. իսկ առանց սորա չիք ինչ թերեւ՝ որ ոչ թուեսցի ինձ լուծ անտանելի:

ՄԱՍՆ Գ

Հնազանդութիւնն Քրիստոսի ոչ միայն զիւրաքանչիւր մեր պաղաբերեաց, այլ և գերագոյն պատրաստեաց նմա փառս. « Վասն որոյ և Աստուած զնա առաւել բարձրացոյց, ասէ առաքեալն, և շնորհեաց նմա անուն՝ որ 'ի վեր է քան զամենայն անուն. զի յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի, երկնաւորաց և երկրաւորաց և անդարամեռակա-

նաց »: Եթէ 'ի միտ առնուն ես զվտանգսն կրօնաւորական հնազանդութեան, ոչ միայն չհամարիս զայն լուծ ծանրաբեռն, և չսըրտընջիս զայնմանէ, այլ և ինդուլենտիս զուա 'ի նեբբոյ արկանիս նմա, և ցանկալի զի զամենայն ինչ հնազանդութիւն պատուիրեր լինէ: Քանզի այս հնազանդութիւն ամբառնայ զամենայն գործս իմ ես և զանզանազանս յառաքինութիւն աստուածահաճոյ. Թէպէտ և զարհամարհագոյն գործիցեմ գործ, հնազանդութիւն սրբէ զայն, և գրոշմէ 'ի նմա կնիք սրբութեան: Նոյն ինքն և հրաւիրէ յես զընորհսն Աստուծոյ. զի յորժամ վասն հնազանդութեան գործեմ ինչ, զդործ Աստուծոյ գործեմ. վասն որոյ և Աստուած օգնէ ինձ ընորհօք իւրովք, և վարձասրէ զհատուցմունքիւն իմ: Վասն այսորիկ իսկ է՝ զի գործք յորս վասն հնազանդութեան ձեռնարկեմ՝ յաջողին օրհնութեամբն Աստուծոյ:

Սա ինքն հնազանդութիւն կրօնաւորական պահէ զես և 'ի միաբանակարգսն Թշնամոյ իմ, մէ, որ են կամք սեփական: Քանզի հնազանդութիւն առաքինորդէ կուրութեան սորա, և սանձահարէ զկեղտութիւն սորա, նուաձելով զսա 'ի կամս Աստուծոյ: Եւ ուր կամքն Աստուծոյ՝ միշտ ուղիղ և միշտ սուրբ՝ առաքինորդէ ինձ, գտանիմ յապահովի. քանզի ոչ է ինձ հնար մոլորել ցորչափ զկետ կոչմանն Աստուծոյ դնամ: Զի և ոչ առաքինութիւն ինչ հաստատագոյն և աներկեան գտանի քան զայն, որ հնազանդութեամբն գործի. և ամենայն առաքինութիւն կրօնաւորի առանց հնազանդութեան պարանք են և առ աչօք երևոյթք:

Զայսոսիկ արդեօք խորհեցեալ ես 'ի հնազանդութեան: Եթէ հրաման մեծաւորի զկնի իցէ

հաճոյից լինից, եթէ 'ի պաշտամանն՝ յոր կարգեմ՝ գտանիցէ իւր ձեռակ անպատուութիւն իմ, քաղցր է ինձ հնազանդել. իսկ եթէ 'ի փորձ և 'ի կատարելութիւն ևեթ կոչմանս իմոյ իցէ օժանդակ, եթէ չիցէ ինձ անտի այլ օգուտ՝ բայց միայն ընորհք հոգևորականք և մեռելութիւն ըղձից իմոց և անձնասիրութեան, գառն է ինձ հնազանդել: Այ ինչ ասա օգուտսդ ինձ հնազանդութիւն, առ ինչ ուխտիւք զայն յանձն առի: Յիրաւի ուրեմն պատահէ ինձ, զի 'ի խընդրել իմում զկամս Աստուծոյ 'ի հնազանդութեան՝ և այլքն ամենայն ընդ նմա յաջողին ինձ առաւելութիւնք. իսկ 'ի խնդրել զկամս իմ, ոչ այլ ինչ գտանեմ բայց վիշտս և վտանգս իսկ մեզայս:

ԱՂՕԹՔ

Գոհանամ զքէն Տէր, զի հաճեցար խնամ ունել զառաքինորդութեան կենաց իմոց, և յայսնել ինձ յամենայնի 'ի ձեռն առաքինորդի իմում զկամս քո. Թէպէտ և քեզէն ինձ հրամայիցես, Թէպէտ և 'ի ձեռն նորա, զոր ես միշտ՝ որ հրամայես. և ո՛ ինձ լաւագոյն քան զքեզ առաքինորդեալ կարիցէ, և յո՛ առաւել՝ քան 'ի քեզ լեցի վստահութիւն իմ աներկիւղ:

Ահա զկեանս քո գամ Տէր, 'ի ձեռն հնազանդութեան. ուր ինձ զկնդութիւն մանկան տղայոյ և զմիամտութիւն, որպէս և ետուր մեզ զմանկտին յօրինակ նմանութեան: Միամտութիւն, զի մի ես քննեցից և հետազօտեցից զպատճառս հրամայեցելոց ինձ իրաց. և կնդութիւն, զի միս պատճառանս և գիտութիւնս ընդդէմ այնոցիկ պատճառեցից: Թէպէտ և գիտութիւնք իցեն պատուհասք ինձ հրամայեալքն, Թէպէտ և ար-

համարհաք, շատ է ղի լցնէն քեզ հաճոյք, շատ է՝ ղի 'ի սուրբ խաղաղութեան զնս պահեացեն, շատ է՝ ղի 'ի շինութիւն եղբարց և՝ բարեկարգութիւն ոխտիս օգնեսցեն, շատ է՝ ղի կատարեցից նոքօք զկամս այնորիկ՝ որ զքոյին բերէ զգեմս յերկրի, շատ է՝ ղի զնս առ քեզ մերձ կացուցանեն, հնազանդեցայց մտադիւր, և ամենայն հրաման լինի ինձ հաւասար։

Յաղագս առանձնական կենաց Յիսուսի

ՄԱՍՆ Ա.

Մի 'ի մեծամեծ խորհրդոց տնօրինական կենաց Յիսուսի՝ առանին առանձնութիւն նորա է, մինչև յսկիզբն քարոզութեան իւրոյ. որ թէպէտ ծածկեալ 'ի մէնն, այլ ոչ ինչ ընդհատ քան զայլ լուսապայծառ խորհուրդս տնօրէնութեան նորա հրաշալի և քաջածանօթ լինել ինձ պարտի։ Բանն մարմնացեալ, յորում ծածկեալ կային ամենայն գանձք խնամատութեան և գիտութեան, որ Հնախագիտն էր լսութեամբ ամենայն ձրից բնութեան և ընդհատից, որում մարթ էր երևել աչխարհի փառաւք և մեծարոյ և սքանչելի գոլ առաջի ամենայն ազգաց և ժողովրդոց, նա մանաւանդ՝ մարթէր նմա՝ եթէ կամէր, մինչև երեսնամեայն լեալ՝ բազում գործս սքանչելեաց ցուցանել վասն փառաց Հօր իւրոյ, և քարոզութեամբ աւետարանին ընդ ամենայն երկիր՝ ածել ձգել ղհեթանոս 'ի գարձ և 'ի զգօնութիւն, քանզի և յայն խակ առաքեալ էր և իջեալ 'ի յերկինից, կայ առանին անկայտ և անծանօթ. և զերեսուն և զերից ամացն՝ զորս կալոց էր ընդ մեզ՝ զերեսնեակն անցուցանէ 'ի լռութեան, զերիսն և՛ երեք պահեալ՝ երևել աշխարհի և աւետարանել զարքայութիւն Աստուծոյ։ Եւ զինչ արար Յիսուս զամս երեսուն յառանձնութեան իւրում 'ի տան. «Էր նոցա՝ Յովսեփայ և Մարիամու՝ հնազանդ»։ Զայս և՛ եթէ աւանդեն մեզ գիրք՝ զայլն ամենայն

ծածկեալ ընդ լռութեամբ: Խորհուրդ արգա-
րև անխմանալի մեզ վերս՝ ի վերոյ տեսութեամբ.
այլ խորամուխ լեալ՝ ի նոյն լուսափայլին գաղտ-
նիքն: Կամեցաւ աստուածորդին օրինակաւ ի-
րով զպահել՝ ի մեզ զիջումն երևելի
լինելոյ՝ որ ընդաբոյս նմին է՝ ի մարդուսն, և
պատճառաք բազմագիմի անկարգութեանց՝ ի մե-
նատանս:

Անհնար է կրօնաւորի լինել իսկապէս մարդ
Աստուծոյ, եթէ նոյն միշտ մարդ աշխարհի. և
ոչ պէտք՝ ի չափու կայր՝ ի մեզ այս երկն և
ցանկութիւն սրտի, բայց օրինակաւ աստուած-
որդւոյն առանձնացելոյ՝ ի տան անծանօթ յաշ-
խարհէ:

Օրինակաւս այսուիկ բառնին ամենայն պատ-
ճառանք զորս թելադրէ նմա անձնասիրութիւն
բազում ձարտարութեամբ, որպէս թէ փառք
Աստուծոյ և օգուտ ընկերին պահանջեացեն
զայն, զի յայս կինչ և յայն դէպս և՝ ի հանգա-
մանս երբաց հարկն սակսեացէ, զի արժանն և
պատշաճ զնոյնն ինդրեացեն. զի՝ ի պահպանու-
թիւն ընկերութեանն և սիրոյ՝ կարևոր եցէ. զի
՝ի սպառ առանձնութիւն անպիտանս առնիցէ
զմեզ, և անգործ զսաղանդն ընկալեալ Աս-
տուծոյ: Պատճառանք համայն գեղեցկիք, այլ
անբաւականք տալ կինձ երաւունս վարելոյ նո-
քօք: Միթէ եցէ՞ կինձ մարթ յաւելուլ զիտառս
Աստուծոյ առաւել քան զՅիսուս. կամ թէ
եցէ յիս նախանձ առաւել քան զՅիսուսն՝ ի
փրկութիւն ընկերաց: Ինչեմ առաւել քան
զՅիսուս կարևոր աշխարհի, կամ թէ աշ-
խարհ ունիցի՞ կինձ պէտս առաւել քան զոր
Յիսուսի. գիտիցեմ զարժանն և զպատշաճ ա-
ռաւել քան զՅիսուս. եցեմ առաւել քան զՅի-
սուս նախանձաւոր՝ ի պահպանութիւն ընկե-

րութեան և սիրոյ. եցէ՞ իմ տաղանդ մեծագոյն
քան զՅիսուսին, կամ անկնկալութիւն բարեաց
յինէն քան՝ ի Յիսուսէ: Սթափեաց, հոգի
անափառ, սթափեաց և յամեթ լեր: Փրկիչն իմ
Յիսուս՝ ի նշանակել զպատրանն զորս թելա-
դրէ կինձ հոգի աշխարհական, եկն ուսուցանել
այլ ձանապարհ հակառակ՝ ընդ որ պարտ է կինձ
գնալ՝ սիրելով կալ յանծանօթս՝ որպէս լքեալ
ոք և մոռացեալ՝ ի մարդկանէ, ոչ յօտարաց միայն
այլ և՝ ի միաբանութենէ ասել յորում կամ,
և ոչ յայլ ինչ պարապել բայց՝ ի պահպանու-
թիւն կարգաց խնդ և կանոնաց, առանց ունել-
ոյ ինչ գործ պաշտաման և առանց հետամուտ
լինելոյ պատասխել յերս աշխարհի:

Այսու պատրաստութեամբ սրտի պարտ է
կինձ կալ՝ ի մենաստանի և չպակասել երբէք՝ ի
պարտուց հնազանդութեան առ մեծաւորս. զի
եթէ նոցա կամք եցեն կարգել զնս՝ ի գործ կինչ
պաշտաման ներքոյ կամ արտաքոյ, պարտիմ
հնազանդել և քանալ, որչափ կիան է, բարեաց
կատարել զպաշտօնն յոր կարգեցայ: Եւ՝ ի կա-
տարել խնամ զայն զգուշութեամբ, մանաւանդ
չերևելով արտաքոյ՝ բայց երբ և ուրչափ թոյլ
տայցէ կինձ՝ ի մեծաւորաց, և որչափ հնար է՝
համառօտ առնելով զտեսութիւն իմ, առաւել
յոյժ փառաւորեսցի Աստուած, չինեսցի աշ-
խարհ, և ըստ պատշաճի կրօնաւորութեանս ի-
մոյ երևեալ արտաքոյ, առաւելապէն սրբու-
թեամբ և հաւատարմութեամբ կատարեցից
զգործս պաշտաման խնդ: Պարտ է կինձ ապա
անայլայլակ և անվրդով սրտիւ հպատակել
հրամանաց տեսչութեան. և եթէ կամք եցեն
նմա թողուլ զնս կանչքութեան, խնդալ ընդ
այն, սիրել զառանձնութիւն և ասել ընդ սաղ-
մոսերգուին «Ընարեցի ես ընդ աղբ գալ՝ ի
տան Աստուծոյ»:

ՄԱՍՆ Բ

Զինչ գործք էին Յիսուսի առանին յառաջնոյ թուականէն իւրում. — գործք սովորականք՝ առնէին ըստ երեւութին և ծառայականք. վասն որոյ էր Յովսեփայ և գործակից Մարիամու՝ ի խնամս տեսչութեան սրբոյ տանն՝ հալածակելով յամենայնի, և՝ ի մանուկս իսկ՝ երկիւղն էառ նոցա մեծաւ փութով և առանց երկեղ զանցառութեան: Եւ էր այն գործ և պարապմունն արժանաւոր միածնի Որդւոյ Աստուծոյ ծածկոյ և առաքեցելոյ ի նմանէ: Սակայն և՝ ի գործոց անտի՝ ի մանկանց այնպէս փառաւորէր Աստուած՝ որպէս ի մեծագունից և՝ ի հրաշափառագունից անտի՝ զորս գործէլոցն էր ապա: Հայր իւր երկնաւոր՝ ի համբոյս իւր ընդունէր զայնոսիկ, և՝ ի տեսանէն զնա պարապեալ յայնոսիկ՝ վկայէր, որպէս՝ ի մկրտութեանն առուր՝ թէպէտ և ոչ նոյնպէս յայտնաբարբառ հռչակաւ թէ «Դա է որդի իմ սիրելի ընդ որ համեցայ»: Եւ վասն էր. վասն զի Յիսուս յամենայն՝ ի գործս իւր հպատակէր կամաց և համբոյնչն Աստուծոյ, և աստուածանուէրն դիտաւորութեամբն վերամբարձեալ այնոցիկ՝ մեծարգոյք էին նմա և համբոյականք:

Էին իսկ՝ ի ժամանակին ինքնակալք և թագաւորք մեծազօրք և աշխարհակալք մեծահռչակք, որոց համբաւ անուանն պրաւեալ ուներ զաշխարհ համօրէն. խորհուրդք նոցա և ձեռնարկք մեծամեծք, և երեւելի երեւելի արուեստիւնք՝ ի բերան ամենեցուն յածէին, և ընդ ամենայն ուրեք մեծահռչակ փառաւորէին. բայց առ Աստուծոյ համարէն և ոչ էին, զի ոչ սիրեցեալ նոցին և ոչ վախճան ինքն Աստուած էր, նմին իւրն ըստ գոյ ինչ նոցա ընդ Աստուծոյ: Իսկ ընդ հակառակն ոչ ոք խոսեր զՅիսուսէ, ոչ ոք ձանաչէր զնա կամ գիտէր զանուն նորա, և ոչ թէ ուրեք որպէս կեայր, և զինչ գործէր: Ցանկան ուրեք Հրէաստանի ծածկեալ կայր անծանօթ որպէս չէղեալ: Այլ աչք Աստուծոյ հանապազորդ՝ ի նա հայէին. և երկինք համօրէն ակնակառոյց կային՝ ի նա, և ամենայն գործք նորա մեծարգոյք էին և պատուականք:

Եւ որ խրախոյս և վստահութիւն մեծ քան զայս առն կրօնաւորի, որ ըստ պայմանի կրօնաւորութեան իւրոյ կարդեալ՝ ի գործ արհամարհ ըստ աշխարհի, մանաւանդ թէ և յանարգ և՝ ի նուաստ պաշտամունս մեհեաստանին, ոչ այլ ինչ ունի իւր՝ ի մխիթարութիւն բայց զԱռաքելոյն՝ թէ «Քանզի մեռարուք, և կեանքն ձեր ծածկեալ են Քրիստոսիւ ՅԱստուած»: Եւ զի կեանք ծածկեալ ՅԱստուած՝ կեանք հաձոյական նմա, ապա և կեանք սուրբ. և զի կեանք ծածկեալ Քրիստոսիւ, ապա կեանք ըստ կենաց, ըստ հոգւոյ և ըստ խրատուց Յիսուսի: Եւ զինչ առաւել ցանկալի քան զայն կեանս, որով մերձենամ առ Աստուածն իմ, և կցորդիմ ընդ Փրկչին իմոյ և ընդ նախատիպ օրինակի: Կեանք արդարև ներանձնացեալ. և զինչ այն իցէ այնչափ անարդ և արհամարհ ըստ երևութին, որ չիցէ վասն իմ մեծարգոյ և պատուականագոյն քան զամենայն: Պակասեցայց ապա՝ ի պարտուց կոչմանս իմոյ, եթէ ոչ ըստ սրբութեան գործոց և ըստ կամացն Աստուծոյ զոր կատարեմն՝ արարից դատաստան զայնցանէ. զի երկոքեանցիւք այնոքիւք ամենայն գործք առնուն յարգ մեծ և զարժանիս:

ՄԱՍՆ Գ.

Զհարդ քաղցր էր անդորը և խաղաղաւէտ ա-
ռանձնութիւն Յիսուսի: Անծանօթ յաչխարհէ՝
զերծ էր ի լեզուէ նորա և ի հակառակութե-
նէ. պատսպարեալ ընդ յարկաւ աղքատին
տան՝ պարապեր ի գործս իւր, և անհաղորդ ա-
մենևին աղմկայոյզ խռովութեանց աշխարհի,
վայելէր յանդորը լռութեան և յանվրդով միայ-
նութեան՝ ընդ Հօր իւրում միայնոյ լինելով խո-
սակից և զքաղցը ազդեցութիւնս նորա ընդու-
նելով ի սրտի:

Զի քան զամենայն բարութիւնս աշխարհի ո-
րոց մարթի լցել մեզ ցանկալ՝ գերագոյն և մեծ-
արգոյ է խաղաղութիւն՝ ոչ ոք երկբայեսցի.
բայց աներկբայելի է նոյնպէս զի միակ Ճանա-
պարհ առ ի գտանել զխաղաղութիւն նեղբլին
կամ արտաքին՝ են կեանք ծածկեալ և առանձ-
նացեալ: Աշխարհս է ծով ի՛ն ալեկոծեալ, իսկ
առանձնութիւն որպէս նաւահանգիստ և ապա-
ւէն անքոյթ և զերծ ի մրրկից: Ա՛յր աղագաւ
և աշխարհայնոց իսկ սիրելի է կրօնաւորու-
թիւն, և ի բազում գեղս սոխալն ասել զի
միանձն և միանձնուհի բարի՝ բիւրեցս առաւել
գոհ և երջանիկ են ի մենաստանի, քան զորս
կան արտաքոյ յաղմուկս և ի խռովս աշխարհի:

Զայս և աշխարհասէրքդ իսկ տան վկայու-
թիւն, և ասեն թերևս առաւել իսկ քան զոր
կարծեն. բայց մեծ ևս արդեօք տալին վկայու-
թիւն եթէ իրօք զվորձ առեալ էր նոցա ատեպ
քաղցրութեանն յոր վայելէ միանձն սովորեալ՝ի
միայնակեացութիւն, և որ գիտէ կեալ յառանձ-
նութեան: Են նորա գործք կարգեալք ի հնա-
զանդութենէ և կամ յիւրմէ սահմանեալ, որք

ղի չէն պաշտամունք չքեղք և փառաւորք, այնը
ազագաւ սիրելագոյնք են ինքեան և Ճշդիւ և
հաւատարմութեամբ կատարել զայնոսիկ, և
չխառնի ամենևին յայլ ինչ իրս: Որով և՝ի բազ-
մագէմ պատահարս աշխարհի, որ բազմաց՝ի
մարգկանէ ցաւոց և տրտմութեան են պատ-
ճառք, ինքն կայ մեայ անխռով: Եւ բազում այն
է՝ զի և չխմանայ իսկ և ոչ գիտէ կամի զե-
զեալն: Եւ երբ լցէ նմա խռովիլ ընդ եղեալն
արտաքոյ՝ երբ հազիւ գիտէ ինչ՝ի մտանէ զե-
զեալն չուրջ զիւրև՝ի մենաստանին: Որ ինչ
ոչ է իւր անկ և չէ գործ ինչ սիրոյ և կամ
բարւոյ հասարակաց մենաստանին՝ չհետաքննէ
ամենևին և չխառնի յայնս, և զայն իսկ պահանջէն
սահմանք կրօնաւորական առանձնութեան:

Ո՜հ, որքանեաց կրօնաւորաց յաջողեալ էր
արդեօք և յաջողէր կեալ՝ի խաղաղութեան՝ի
վիճակի իւրեանց, եթէ կանխաւ ստացեալ էր
նոցա զայս հոգի առանձնութեան, և սովորեալ
՝ի ներանձնութիւն: Բայց Թուի Թէ անձամբ
անձանց ծանրանայցեմք, և ոչ կարացեալ կալ
ընդ մեզ, խնդրեցեմք միջամուխ լինել յայլ ա-
մենայն իրս: Այր վասն հարկ լցէ մեզ լինել ա-
մենայն ուրեք. և եթէ խափանիցեմք, դառնա-
նամք. իսկ եթէ ըստ բերելոյ բնութեանս վա-
րիցեմք յո՛ և առեալ ձգեացէ զմեզ, մեծագու-
նիչ ևս չարեաց լիցի մեզ այն սկիզբն և պատ-
ճառ: Ինանզի չէ իսկ հնար Թէ տեսութիւնք այլ
և այլ և զանազան շահ օգտի չզարթուցանիցեն
՝ի մեզ կիրս և ցանկութիւնս պէսպէս, որովք
վրդովեալ բառնի՝ի մէնջ անդորրութիւն սըր-
տի: Թզնի մեր և մենաստան այնչափ առաւել
քաղցրացոյն մեզ, որչափ առաւել յամեմք՝ի
նոսին. իսկ՝ի Թողուլ մեր զայնս ստէպ և յեր-
կար՝ ոչ ևս հանդուրժիցեմք կալ՝ի նոսին:

Ա՛յլ ղի հարկ է մեզ գառնալ ՚ի նոսա, անտի ահա գԺամանակութիւն և տաղտուկ: Մի՛ արդեօք այս լեալ իցէ և ինձ բազմապատիկ չարեաց պատճառ: Եւ ընդէ՞ր է ինձ արտաքոյ քան զիս՚ի հեռաւորս խնդրել զերջանկութիւն, մինչ ընդհիւ Տեառն և օգնականութեամբ նորա կիս ինքն կարեմ գառնել զայն:

ՍՂՕԹՔ

Օրհնեալ ես, տէր Աստուած, յաւիտեան, որ հաճեցար գթութեամբ քով ընդունել զիս ՚ի տուն քո սուրբ, որ ոչ միայն պատսպարան է փրկութեան իմոյ և հանդերձեալ կենաց, այլ և օթարան խաղաղութեան յամենայն ՚ի կեանս իմ:

Հարկ է ապա, ով Տէր, զի քաղցրասցի ինձ տեղիս այս և ձգեսցէ զիս առ ինքն, և զայս քաղցրութիւն առանձնութեան՝ որ մի է ՚ի մեծագունից ընդհայց զոր հեղուս ՚ի սիրտ կրօնասէրն, ՚ի քէն ակն ունիմ ընդունել: Տուր ինձ ազատեմ, զընդհդ զայդ զոր խնդրեմ ՚ի քէն, և գիտես թէ ո՛րչափ կարեւոր է ինձ:

Ի բաց գաթձո զսիրտ իմ յամենայն ընդունայն ղբօսանաց կենցաղոյս որովք ղբաղեալ ցնդի՝ որպէս ցնդեցայ ցարդ: Ժողովեա զայն և ամփոփեա, և շնչեա յիս հոգի ներքինձնութեան, որով ևեթ մարթ է ինձ կալ ՚ի զգաստութեան և ՚ի խաղաղութեան: Ա՛յն ամենայն յոր ինչ և հաստատեցից զհաղաղութիւն իմ, կարէն պահասել, այլ առանձնութիւն ոչ երբեք պահասեսցի, և այն լինի ինձ զօրավիգն և ապաւէն: Մանաւանդ թէ՝ դու ինքն, Աստուած իմ, դու ոչ պահասեսցիս ինձ երբեք. և թէպէտ յանշուք նսեմութեան ծածկեալ կայցեմ, դու

ինքն լցես միշտ առ իս, և անդ գտից զքեզ, և զինչ այլ խնդրիցեմ: Յառանձնութեան անդ կենակից և խօսակից լինի ընդ քեզ հոգի, անդ լսէ զձայն քո, անդ ժառանգէ զքեզ և վայելէ ՚ի քեզ: Զես դու Աստուած խռովութեան և յաղմուկս շփոթից ոչ գոանիս, և հաղիւ թէ ուրեք երբեք երևեսցիս ՚ի նոսա: Աստուած իմ, ո՞ր կամ զինքդ էիցես դու ընդ իս, կամ ո՞ր գտայց Թշուառ, երբ դու ընդ իս նկես: Զինչ փոյթ է ինձ թէ ծանիցէ զիս աշխարհ, թէ պատուեսցէ զիս և կամ ոչ՝ երբ դու ինքն կաս առ իս հանապազ, և մերձաւորութեամբդ քով պատուես զիս: Դու ինձ փոխանակ ամենայնի, և յանշուք միայնութեանս նսեմաւ ծածկեալ՝ առաւելագոյն մխիթարութեամբ սրտի կարծեմ ասել զոր մի ոմն ՚ի հաւատարմագոյն ծառայիցդ ասէր. «Աստուած իմ և ամենայն ինչ»:

Յաղագս կենակցութեան ընդ ընկերս

Զկնք գրեթէ ընկերութիւն կրօնաւորական՝ յորում արգելեալ եցէ՛ի սպառ չլինել ընդ միմեանս խօսակից։ Որպէս ամենայն ուրեք՝ նոյնպէս և առ կրօնաւորս են սահմանեալ ժամք՛ի խօսակցութիւն ընդ երեսաս, նա՝ երբեմն և ընդ օտարս։ Սակայն անժխտելի է և այս՝ զի՛ի խօսակցութիւնս անդ զեղծանիմք յաձախ, և ջանալ Թէ մեզ որպէս պարտ է զգուշանալ յայնմանէ՝ բայց երիւք ամենակարևոր կանոնօքս։ Ա. Զի բանք մեր լեցին միշտ կրօնաւորական պարկեշտութեամբ համեմեալք։ — Բ. Զի եցեն պատշաճք և օգտակարք, և Գ. Զի սիրով եցեն համեմեալ՝ անխառն ամենևին՛ի հոգւոյ գրգռութեան և հակառակութեան։

ՄԱՍՆ Ա.

Պարտ է նախ՝ բանից մերոց լինել վայելուչ կրօնաւորի համեստութեամբ և խոհական ըզգուշութեամբ. զի որպէս աշխարհի մարդկան, նոյնպէս և կրօնաւորաց են իւրեանց սեփական պատշաճք և վայելուչք. և ո՛ր ոչ գիտիցէ՝ զի բազում ինչ իրք անտեղանելիք յաշխարհիկս, դժպատեհք են և գարովիչք յայր կրօնաւոր։ Վասն որոյ կրօնաւորաց մանաւանդ՛ի դէպ գայ առաքելականն խրատ առ նախկի հաւատացեալս Թէ՝ «Ցամենայնի ցուցջիք զպարկեշտ գնացս ձեր»։ Եւ երևի պարկեշտութիւն՛ի դէմս, ՛ի շարժ

ժուածս, ՛ի հնչումն ձայնի, ՛ի բանս և ՛ի խօսս, և յայն ամենայն՝ որ երևին արտաքոյ։ Իբր ոչ եթէ արտաքնայարդար և բռնազբօսեալ լիցի կերպանօք, որ ուրեք երբեք չէ գովելի, այլ բնաւրապես և անբռնազբօս ամենևին զգուշացեալ՛ի չուեմափելոյ, յանվայելուչ շարժմանց, ՛ի բարձրաձայնելոյ և ՛ի համարձակախօս բանից և զբօսից՝ մանաւանդ ընդ աշխարհիկս։ Է՛ և այս վերսպակ մեծ յոլովից՛ի կրօնաւորաց, որք կարծեն Թէ համարձակախօս զուարճաբանութեամբ յաջողեսցին դիւրաւ և անաչխատ որսալ զաշխարհիկս, և հաճոյ և սիրելի լինել նոցա, և մտերմանալ ընդ նոսա։ Ա. Այլ ընդ հակառակն՝ չիք գաստաւոր այնպէս ձարտար և խիտ և խելացի կրօնաւորի՝ որպէս զաշխարհ, որ գիտէ քաջ զարժանն և զպատշաճ կրօնաւորի, առ՛ի զգուշութիւն և ՛ի պահպանութիւն սրբութեան վիճակի նորա։ Ա. Այլ ազգ լինն են յայսմ գաստասան նորա. զի Թէպէտ և ինքն զնդ անարգ՝ այլ սաստկապահանջ է՛ի կրօնաւորէ, մինչև խղճահարաբար իսկ երբեմն։

Ա. Յաչափ խիտ է աշխարհ և պահանջէ՛ի կրօնաւորէ ծանրութիւն, զգուշութիւն, համեստութիւն, զգուշութիւն և խոհականութիւն՛ի կենցաղավարութեան, և պատահեալ այնպիսի որոյ եցեն այս հանդամանք՝ հաճի ընդ նա և ընդ նմա մտերմանալ, իսկ այլք ամենեքեան՛ի զբօսանս են նմա, զորոյ և սակաւ իսկ մարթ է Թէ նա և՛ի ներքս՛ի միաբանութեան՝ ոչ յայլ ինչ պիտանացու են յաձախ։ Թոյլ տուեալ է նոցա խօսել և շաղակրատել որչափ և կամիցեն, այլ բազում այն է՝ զի անոճ և խառնախօս բանք նոցա չունին ինչ կշիռ, և վերջ՛ի վերոյ լինին լսելի։ Ըստ հասարակաց առածին՝ ՛ի յաւելուած՝ ծոյ սրտի խօսի բերան, և արդարև սիրտ ընդ

քերան զեղանի արտաքս. որով մարթի է ասել զի կրծուածոր բուռն և անժոյժ և համարձակասխօս ըստ աշխարհի թուլացեալ իսկ է և տակաւ թուլասցի և ևս:

Հոգի ներանձնացեալ որ յամենայն ուրեք զԱստուած ունի զառաքեաւ, ոչ այնպէս անասյ բերմանց բնութեան իւրոյ: Քաղցր է և ընտանի, այլ ոչ առաւելազանց՝ի ցոյցս բանից, և ոչ յոտղի անհանգարտ: Զէ վայրենի և ոչ թախծադէմ, բայց և՝ի զուարթութենէն իւրում և՝ի զուարճաբանել՝ դիտէ զգօն լինի ծանրութեամբ՝ի չափու ունել զանձն: Ոչ կայ սխուր՝ի լռութեան, բայց և ջանայ՝ ոչ խօսել միայնակ և զրանալ՝ի վերայ ամենեցուն ընդ որս կենակցի: Աչք պարզաբար զոր ինչն խորհի, և տայ պատասխ այլոց ևս խօսելոյ զնա՝ պատրաստ կալով միշտ՝ի լսել, քան՝ի խօսել: Ո՛վ արբշիռ դեղեկայարմար և բարեկարգ լինէին ընկերութիւնք, եթէ այսու օրինակաւ վարէին ամենեքեան մեծարելով զմիմեանս, որպէս վայել է քրիստոնէի և կրօնաւորի: —

ՄԱՍՆ Բ

Պարտ է երկրորդ՝ զի բանք մեր և զոյցք կարեւորք լեին և օգտակարք: Իբր ոչ եթէ զի զբոյցք մեր համայն զաստուածգնոյց լեին և զհոգևորաց, որպէս ցանկալի էր արդեօք՝ի կրծնաւորս, այլ քանզի կանոնք սահմանեն ժամ ինչ կենակցութեան՝ի սեփուհւոյ և՝ի հանդիստ հոգւոյ և մտաց, ընորհեն յայնմ խուն ինչ ազատութիւն, և չարդելուն զնաւ խօսել երբեմն և զիրաց ոչ յոյժ բարձրագունից և կարևորաց: Եւ է այդ զիջումն պատշաճ և խոհական: —

Այլ անպատշաճ ամենևին այն է նախ՝ եթէ յընկերութիւնս կրծնաւորաց յաճախ զննչենոց լեցին բանք, և ժամք բազումք ծախեսցին՝ի անոսի և չընդունայն զրոյցս: Երկրորդ՝ եթէ զաշխարհային ևւեթ երից և զանցից լեցին բանք, և՝ի չադուրդ ևեթ ընդվայրաբնութեան հաճախեսցին՝ի լսել նորաշուրս և չիմանալ զինչ զրոյցք ընթանայցեն: Երրորդ՝ եթէ ընդդէմ կանոնաց՝ի սահմանեալ ժամս լռութեան սակաւք ոմանք ժողովեսցին ուրոյն՝ զկուցանել իւրեարց որ ինչ դոյնին՝ի միաբանութեան, և չատաբանել զայնցանէ չանօգուտս: Զորրորդ՝ եթէ չամենայն զրուցատրութիւնս, եթէ չառանձնականաց և եթէ՝ի հասարակաց, ոչ ինչ բանք լեցին զԱստուածոյ և զաստուածգնոյց, այլ համայն զաշխարհայնոց և ըստ աշխարհի սկզբանց, վարդապետութենէ և խմասոխց: Հինգերորդ՝ եթէ՝ի սկսանել ուրուք խօսել ինչ զերկնայնոց և զհոգևորականաց և որ ինչ՝ի չինութիւն լսէ, ընդմիջեալ խափանեսցի և որպէս՝ի ձանձրոյթ և՝ի տաղտուկ լսելեաց՝ արհամարհեսցին բանքն: Այսքիկ են, ասացից զարձեալ, զորս չմարթի միաբանել ընդ սրբութեան կրծնաւորական վիճակի: —

Եւ զինչ զարմանք լեցին եթէ յետ այդօրինակ զրուցատրութեանց՝ հոգի յուզեալ և զբաւեալ՝ի սնոտի և յընդունայն խորհրդոց՝ ցնդեալ մտօք և գաղջութեամբ մատեսցէ կալ առաջի Աստուծոյ, և՝ի տաղտուկ և՝ի ձանձրոյթ եղեցին նմա աղօթք: Եթէ օգտակարագոյն և հոգեկեցոյց բանիւք չահեալ ինչ էր, զօրացեալ նուաւ արծարծանէր արդեօք յեռանդն, առ որ ոչինչ առաւել խնդրի յաճախ: Աչակերտացն Եփեսոսեան՝ առ որս մեծեցաւ յարուցեալն Յիսուս յերեթալ նոցա յԵմմաուս, ՝ի խօսելն և

'ի մեկնել նոցա զդիրս, ձնշելին սիրաք և ար-
ծարծեալ վառելին հոգիք: Իսկ մերոց զուսա-
տրութեանց զինչ են յաձախ արգասիք, բայց
ունայնութիւն սրտի, միաք ընդվայրայածք և
անզգայ իմն թմրութիւն և գաղջութիւն 'ի
ծառայութեանն Աստուծոյ, և սակաւք յոյժ
են 'ի կրօնաւորաց որք ոչ ձգտեսցեն զայս
ձշմարտութիւն: —

Այլ առաւել ցաւալի այն է՝ եթէ կրօնաւորք
'ի բաղում յերկար խօսակցութիւնս խրեանց
նա և ընդ աշխարհիկս չառնիցեն ինչ բանս զձըշ-
մարտութեանց քրիստոսական կրօնից և զկա-
րևորաց 'ի փրկութիւն հոգւոյ, առ երկիւղ՝ զի
մի ձանձրացին և տաղտկացին: Յիրաւի խոհե-
մութեան պէտք են՝ զի մի զուսցատրութիւնն 'ի
քարոզութիւն փոխեսցի: Բայց և 'ի հակառակն՝
չէ մարթ ժխտել՝ զի ոչ այնչափ գիւրաւ տաղտկա-
նան աշխարհիկք 'ի բանից բարւոյ կրօնաւորի որ
խօսիցի 'ի չինութիւն, ընդելով 'ի նոսա զհոգի և
զիմաստս քրիստոնէութեան: Եթէ աշխարհիկ
ոք որպէս զինքեանս խօսեսցի զայնպիսեաց,
զարմացին արգելօք և ծիծաղեսցին ևս. բայց
ոչ նոյնպէս և 'ի լսելն 'ի բերանոյ բարւոյ կրօ-
նաւորի, այլ մտագիւրագոյնս լուիցեն և առա-
ւել ևս յարգեսցեն զխօսելին, տեսեալ զի կա-
տարէ զպարտս իւր: Դարձեալ՝ ոչ միայն չտաղտ-
կանան նոքք, այլ և բազմաց 'ի նոցանէ ազ-
գեն բանքն, և ախորժեն և օգտին: Նա մանա-
ւանդ գայթակղին ընդ այն՝ զի այր կրօնաւոր՝
բալարանաւոր Աստուծոյ՝ չխօսի ինչ զԱստուծոյ,
և չառնի նոցա յուշ զպարտս աստուածպաշտու-
թեանն խրեանց և զիոյն փրկութեան հոգւոյ
խրեանց զոր ունել պարտին: Եւ 'ի վերջ՝ գի-
ցուք թէ բանք այնպիսիք անհաձոյ լինին լսո-
ղացն, և զինչ այսի, բայց զի մեկնեսցին 'ի բաց՝

և ոչ ևս յաւելցին գառնալ, և չահեսցուք մեք
ոչ վայրապար ժամալաձառ լինելով:

Եւ արդարև, զինչ հարկ և որ օգուտ կրօնա-
ւորացս 'ի կալզ և 'ի գեգերելոյ յերկար ընդ
աշխարհիկս, եթէ այցելութիւնք մեր համայն
զոր տարքն և զոր ընդոունիք՝ ոչ մեզ և ոչ նոցա
օգտեացեն 'ի սրբութիւն. և առ իմ՞ զաւուրս
ողջոյն ծախել մեզ 'ի նոյն. միթէ այդ եկեղ գործ
կրօնաւորի: Ո՞չ տպաքէն լաւ ևս եկեղ կալ յա-
ռանձնութեան 'ի մենաստանի, և ըստ Տեառն
բանի՝ Թողուլ մեռելոց թաղել զմեռեալս իւ-
րեանց: Առաքեալքն սուրբք ընթանային այժ
ընդ աշխարհ, այլ յուսուցանել և 'ի հրահան-
գել զնոսա 'ի հաւատս, և 'ի քարոզել ամենե-
ցուն զաւրութիւն Աստուծոյ: Ա՛յլ ազգ կալ
և շրջել յաշխարհի հրաժարեցեալ ուսյաշխարհի,
և լինել աշխարհային. և թերևս աւելի եսկ քան
զոր թէ կացեալ էր յաշխարհի: —

ՄԱՍՆ Գ

Պարտ է երկրորդ՝ զուսցատրութեան լինել
քաղցր և եղբայրական սիրով առանց խուեալոյ
զոք: Զոր իմաստուն հասարակաբար ասէ «Նա
է այր կատարեալ, որ ոչ մեզաւ բանիւք», մարթ
է մանաւանդ իմանալ զայն զայսմանէ, զի
արդարև դժուարագիւտ առաքինութիւն է և
կատարելութիւն մեծ՝ ոչ յանցանել յայսմ 'ի
զուսցատրութենս: Քանզի և 'ի վանորայս եսկ
է յաձախ վտանգս այս մեծ և խիթալի կրօնաւո-
րաց, զի պէսպէս օրինակաւ մեզանի և 'ի նոսա
սէրն եղբայրական՝ յորոց գլխաւորագոյնք են.

Նեղսրտութիւն իմն բնաւորական՝ յանկարծ և
դժնեայ անձանց, որ չգիտեն ասել ինչ կամ
խօսել քաղցրութեամբ: Զէ մարթ գոգցես խօ-

սել ընդ նոսա, և չառնուլ պատասխանի անհաճոյ, զամենայն հնարաւոր զգուշութիւն ի վար արկեալ՝ տակաւին մնայ դառնութիւն ինչ ընդունել ի նոցանէ:

Երկրորդ՝ հակառակութիւնք և վէճք երկուսութեք գրգռեալք, որոց պատճառք են յաճախ երկտեսակ բնաւորութիւնք դժուարըմբռնք յընկերութեան, ոմանց հակառակասոյ գոլով և ոմանց յամառ, որով նոքա հոգւով հակառակութեան յարուցանեն անգուլ դժուարութիւնս առ ասացեալն, և սոքա հոգւով յամառութեան ոչ կամեցեալ տեղի տալ ամենևին, ի տեսանելն զվնասակ իւրեանց՝ բերին ի բանս խոցոտիչս և կսկծեցուցիչս սրտի:

Երրորդ՝ կատակաբանութիւնք կարի համարձակախօսք և կամ թէ դիւրագրգիռ բնութեան հանդիպեալք, լինին միաստակարք: Քանզի և են իսկ այնպիսիք ոմանք փոքրոգիք, որոց և դոյզն ի բան բաւական է ի գրգռել զոգիս նոցա. են և, որոց այնպիսի նիհն բերումն է և ախորժ անպայման ի ծաղրածութիւն՝ զի յախուռն և առանց իրիք ակնածութեան ծաղրեն զամենայն և զամենեսեան: Միայնում ուշ եդեալ ի հաճել զանձինս, անտես առնեն զամենայն. և չէ ինչ նոցա փոյթ՝ թէ վշտանայցէ ոք: Այլ ոչ դոյզն և թեթև ինչ իցէ վիշտն այն. զի թեպետ և չիցեն պատճառք իրաւացիք, և որ վշտանայն՝ առ տկարութեան բնութեանն վշտանայցէ, սակայն զգուշանալ պարտ է. զի ոչ միայն սէրն կրօնաւորական, այլ և մարդկութիւնն ինքնին զնոյն պահանջէ: Զարհ ևս քան զայս է խաղ առնել զոք և ղեօնուլ միաստաք այլոյ՝ առնելով զնա նիւթ և պատճառք ծաղրոյ:

Զորրորդ՝ դատել և քննութիւնք զմեծաւորաց և զպաշտօնատարաց, որոց յանձն է գործ ինչ

կամ սեպհականութիւն ի միաբանութեան, և կամ զայլոց ոմանց՝ յորժամ գործեսցի ինչ ըստ ոչ հաճոյից. և որ այն իրք լցեն ոչք ըստ հաճոյից ամենեցուն գործելոյն, բայց սակայն ոչ պակասեն տրտունջք և քրթմնջիւն: Գէթ վասն բանից ինչ և օգտի լինելոյն խօսեցեալքն, այլ գիտելով չափ թէ քնաւ ելոյ ընդունայն և վայրապար բանք են, երկայնեն զոյցս. և առ ինչ. զի հաճոութիւն նիհն չար և դատապարտելի, և յօժարութիւն ի պարսաւել, ի դատել և ի դատապարտել զայլս՝ զղջեալ կայ ի սրտի:

Հինգերորդ՝ չարադոյն քան զամենայն բամբասանքն է, յորմէ ոչինչ նուազ քան զաչխարհիկս զգուշանալ պարտ է կրօնաւորաց: Ցայլսում ամենայնի սովորաբար երկիւղածագոյն են կրօնաւորք և խղճին. իսկ ի բանս բամբասանս՝ խստագոյնք իսկ ի նոցանէ և բարեկեցիկք՝ թուլագոյնք երբեմն գտանին: Սակաւ յոյժ զգուշացարութիւնք են, յորս ոչ լիցին բանք զընկերաց. և սկսեալ միանգամ՝ միաձայն զկեաս ձայնզակի յաջորդեն բանքն, և ոչ առնուն վաճառ, մինչև ոչ բովանդակ ապառեսցին՝ զոր ինչ և որ դիտել հարկաւոր է, և զոր լսել պարտ էր մանաւանդ և ունել ի ծածկութեան:

Չայսոսիկ ամենայն եղբայրսիրութեան է ուղղել և արտաքսել յընկերութենէ հաւատացելոց ամենեցուն՝ և առաւել կրօնաւորաց: Հեռի ի նոցանէ ամենայն բան դառնութեան և գըռդութեան: Եթէ չէ մարթ զսպել միշտ և նուաճել զնեբքս ի սրտի զի մի զեղանիցին արտաքս: Էր ալ ի նոցանէ հոգի հակառակութեան. առն իւրաքանչիւր են իւր այլասոհ կարծիք և տե-

ութիւնք զորս իչման է յառաջ բերել, այլ ՚ի տեսանելն զի զայրանան բանք և փոխին ՚ի կապ և ՚ի կռիւ, լաւագոյն է և յոյժ լաւագոյն լռել, քան թէ մնոտի և ընդունայն փառասիրու-թեամբ յաղթական լինելոյ՝ յամառել և պնդել, և լինել պատճառք գժտութեան և հակառակութեան: Չեռի և ամենայն բան դառնութեան և ծաղրու. ոչ են դադրուիլի և արգելեալ խոպան բանք աղիւ լինն համեմելք և վայելչապէս ասացեալք, միայն զի չիցէ ոք առ որ ակնարկես-ցեն բանքն, կամ եթէ իցէ՝ ՚ի բարւոյ մասին կալեալ զայն, և ոչ վնասացի: —

Համայն և այնպէս կարի յոյժ յաճախելոյ ծաղրաբանութեան՝ բազում այն է զի չարաչար են արգասիք, և ոչ զօրէ ՚ի չքմեղանս ասել՝ թէ անզանազան և անվնաս բանքն իցեն. զի աւր ինչ սէր, անդ ոչ ևս անվնաս են բանք. քանզի և յանհնարինն է՝ թէ առ ակարութեան և գիւրադրդիռ բնութեան բազմաց, որոց և դոյզն ինչ հարուած աղդէ ՚ի խոր, չինասեացն սէր:

Չեռի և ամենայն արատունջ և քրթմնջիւն՝ գէթ ՚ի հաւաքակաց զրուցատրութիւնս. եթէ իցէ ինչ արգարև սոգտանելի՝ մարթ է առանձինն ծանուցանել զայն մեղմի ուրեք խոհականի, եթէ առաջնորդն իցէ և թէ այլ ոք, այլ՚ի հա-մախումբ ընկերութեան լու՝ ի լու ամենեցուն հրապարակագոյժ առնել՝ ըմբռնամանալ լինն է և ՚ի նոյն գրգռել և զայլս: —

Հուսկ ապա Չեռի ամենայն բամբասանք և չա-րախօսութիւն, որ եթէ առ աչխարհիկս ծանր մեղք են, քանիցն առաւել առ կրօնաւորս: Ձամենեցուն խոսեացուք բարիս, և եթէ չունիմք ինչ բարի խոսելոյ՝ լռեացուք: Պահպանու-թեամբ կանոնացս այսոցիկ՝ զերծ գոցուք ՚ի

բազում անկարգութեանց, քաղցրասցի ընկե-րութիւնն կրօնաւորական և լիցի ՚ի չինութիւն, և ՚ի նա Ճշմարտասցին բանք ասելոյ մարգարէին, թէ «Ձի՛ բարի կամ զի՛ վայելուչ զի բնակիմ եղբարք ՚ի միասին»:

ՕՐ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Յաղագս գործնական կենաց Յիսուսի

ՄԱՍՆ Ա.

Յիսուս յետ երեսնամեայ առանձնութեան յանծանօթս՝ եկ ապա երևեցաւ աշխարհի քարոզելով զաւետարանն. և այս են նորա գործնական կեանք: Հարկ էր նմա ընդ ամենայն մարդկան՝ որպ և է պայմանի լինել կենակից, և զայն կալաւ իբր պատուհ տարածանելոյ հասարակաց զսէր իւր առ ամենեսեան: Եւ է առաքինութիւնս այս կարևորագոյն քան զայլն ամենայն՝ ի կենցաղավարել ընդ մարդկան, և առանց այսորիկ չէք և ոչ միով ընկերութեան կալ՝ ի հաստոջ: Աւրդ սկզբն Յիսուսի զոր պարտ է լինել առնուլ յօրինակ, երեք այս յատկութիւնք էին, զի քաղցր էր, զի բարերար էր, և զի հասարակաց էր առ ամենեսեան:

Անյօրինակ պարտ է և լինել սիրել զընկերս իմ. զի՝ ի պակասել միոյ՝ ի յատկութեանց ասել, սէրն իմ ոչ ևս եղէ ոչ ըստ քրիստոնէի և ոչ ըստ կրօնաւորի:

Սէրն Յիսուսի քաղցր էր համայն ըստ արտաքին կերպարանացն, ըստ համեստութեանն և ըստ անայլայլակ և անվրդով չափաւորութեան:

Չլինէ ոչ կրեաց յապառում և՝ ի թանձրա-

սիրա Ժողովրդենէ անոն, որոց զերկնային Ճըշ-
մարտութիւնն աւետարաներ. որմէ ներողա-
մտութեամբ վարեր ընդ հակառակորդս իւր՝ եր-
կայնամիտ եղեալ առ նոսա ի համոզել և ի շա-
հել զնոսա, և որմէ անտրտունջ համբերու-
թեամբ լսեր զարհամարհոտս և զձշնամանագիր
բանս նոցա և զընդդիմախօսութիւնս: Որքանցի
աշխատութեան և վաստակոց եղև նմա կրթել
և հրահանգել զաշակերտս իւր՝ զարս գաւհկիս,
զաղքատն և զխմար ձկնորս, որք բաղում
այն էր զի չիմանային ինչ յորոց ասէրն, և գառ-
նայր կրկներ և երկբկներ զնոյն և բացայայտեր
զի խելամուտ լինիցին: Վ.ՃՀին նոքա յաձախ և
հակառակէին ընդ միմեանս, և ինքն խաղաղէր
զնոսա քաղցրութեամբ: Կայր ընդ նոսա հանա-
պազ և կենակից լինէր ընդ նոսա անձանձրոյթ
և առանց տաղտկանալոյ յընկերութենէ նոցա:
Վասն որոյ ամենայն իրաւամբք կարէ ասել առ
մեզ. « Ուսարոյք յինէն զի հեզ եմ և խոնարհ
սրտիւ ». ուսարոյք յինէն թէ ո՛րպէս պարտ է
և ձեզ լինել:

Այլ ուսեաւ է իմ ցարդ տանել տկարու-
թեան եղբարց իմոց և ընկերաց. նոքա տանել
տանէն իմոյն, և զինչ իրաւունք էին այս, մա-
նաւանդ թէ որպիսի՞ անիրաւութիւն մեծ՝ զի
այլք ներողամիտ լինէին անձին թերութեանց ի-
մոց, և ես զլացայց նոցա զնոյն չնորհս: Թերու-
թեանց նոցա և յոտութեանց պարտ է սրբել
զսէր իմ և կատարելագործել, և ոչ եթէ նուա-
զեցուցանել: Եթէ ընդ կատարեալսն միայն,
որոց չիցէ ինչ թերութիւն, պարտ էր ինձ վա-
րիլ սիրով և քաղցրութեամբ, զինչ վարձք
էին ինձ անտի. կամ զի լաւ ևս ասացից, ոչ զոք
պարտ էր ինձ սիրել, զի չիք ոք անթերի: Եթէ
ընդ հրեշտակս ևեթ կամ ընդ անմեղնչականս

ումանս էր ինձ կեալ՝ ընաւ իսկ զինչ պէտք էին
համբերատար սիրոյ և քաղցրութեան: Այլ զի
հարկ է ինձ կեալ և կենակցիլ ընդ այնպիսեաց,
որոց իւրաքանչիւր՝ որպէս և միոյ միոյ ի մէնջ
այլազգ են տեսութիւնք, ընաւորութիւնք, հա-
ճոյք, կանխակալ կարծիք և թերութիւնք, զորս
ոչ ինձ անկ է փոխել և ուղղել. և թէ կամե-
ցայց իսկ, ոչ յաջողեցայց. զնմանէ լինի ինձ պա-
հել զնուաղաղութիւն և զսէր՝ եթէ ոչ զինչանե-
լով տկարութեան նոցա որչափ մարթն է և շա-
հելով զնոսա քաղցրութեամբ: « Երանի՛ հեզոց
զի նոքա ժառանգեսցեն զերկիր ». զի նոքա շա-
հին զսիրտս ամենեցուն:

Աւրդ լցի՛մ ես յայնպիսեաց անոն. և ոչ յան-
դիմանիցէ զիս սիրտ իմ թերացեալ յոյժ ՚ի
մասինս յայսմիկ: Քանիցս արդեօք փոխանակ
եղբայրասէր ներողամտութեան, ցասմամբ և
արհամարհանօք գնացեալ եմ ընդ եղբարս իմ.
քանիցս խոժոռ դիմօք և անարգական բանիւք
յարձակեալ ՚ի նոսա, բաղում այն է զի և ա-
ռանց նմանալոյ թէ լցի՛ զինչ զկծեցուցիչ ՚է
բանս իմ. և չար ևս այն է թէ պարծեցեալ ևս
լցեմ որպէս հառուցեալ քաջաբար զսրիտսուր
փոխարինին որպէս արժանն էր: Այսպիսեօք
ահա վերդովեալ խռովի միաբանութիւն մի ող-
ջոյն, աստի ծնանին ՚ի նմա երկպառակութիւնք
և հերձուածք, աստի կռիւ և կռիւք: Եթէ
խուն մի աւելի բռնադատեցից զանձն իմ, խա-
փանեսցին այն ամենայն չարիք. և զինչ այն զոր
չիցէ արժան զոհել վասն այնորիկ:

ՄԱՍՆ Բ

Սկզբն որով այնպէս հեղաբար սաբառ Յիսուս խեռուբէեան այնոցիկ՝ ընդ որս եհէաց, նոյն ըստ սպասեաց զնա առաստացուցանել ՚ի նոսա զսպաղական աստուածային զօրութեան իւրոյ. զի սկզբ բարեգործական էր սկզբ նորա: Շրջէր ընդ քաղաքս և ընդ գեօղս և բարի առնէր ամենեցուն, հանէր զդևս, բժշկէր զախտաժէտս, յարուցանէր զմեռեալս, քարոզէր զաւետարանն և վաստակէր անխոնջ ՚ի փրկութիւն հոգւոց:

Իմ էիք զօրութիւն հրաշագործելոյ որպէս զՅիսուս յօգուտ և ՚ի շահ ընկերացս. էիարեմ տալ որպէս զՓրկիչն իմ կուրացս տեսանել, խլացեալ լսել, համրոյ խօսել, անդամալուծից և առ ՚ի մահ խօճացելոց բժշկութիւն յախտից իւրեանց: Այլ ոչ պակասին, մանաւանդ ՚ի միաբանութեան մերում, դեպք և պատեհք անհամարք օգնելոյ միմեանց, սպաս տանելոյ և բարեբարելոյ իրերաց: Եւ յայսմ ահա երևի սէրն քրիստոնէական, և առաւել սէրն կրօնաւորական: Եղէ՛ս ես փոյթեռանդն և յորդորամիտ յայսմ որպէս պարտ է, թէ թերահոգ ամենևին և անփոյթ ՚ի հաճել զայլս՝ անձին ևեթ խնամ ունելով և խոյս տալով ՚ի պատեհ ժամուն: Ի տեսանել պարտուց պաշտամանս ՚ի նըպաստել եղբարց և ՚ի ընդ ղպէտս ինչ նոցա փութաթմ առ այն յօժարամիտ սիրով և անեթերի. կամ դեթ՝ էղէ՛ յիս փոյթ և սէր այնչափ և այնպիսի՝ զի զոր չկարեմն առնել զբարին՝ ցանկացեալ նոցա զայն ՚ի սրտէ. զի յամենայն գեպս կցորդ եղէց նոցա և համակարիք, կարեկից ՚ի վիշս նոցա և ՚ի նեղութիւնս և ՚ի ձախողակս ցաւակից. զայս պահանջէ յինէն սէրն եղբայրական:

Ո՛չ ապաքէն բաղում անգամ թերացեալ եմ յայսմանէ և թերանամ: Ի պատշաճէալն առնս սաստկապահանջ եմ յոյժ, և ընդարձակեալ ընդ ընդարձակեմ զսահմանս եղբայրսիրութեան, և համբերեմ կրել զդիանս յայլոց: Զկեանս և պայման սիրոյն որ առ իս, և գժկամակիմ յոյժ զի ոչ յամենայնի և ըստ ամենայն ցանկութեան սրտի իմոյ առնուամ զպաշտօն սիրոյն: Իսկ ես նոյնչափ և նոյնպիսի սիրով վարիմ առ այնոսիկ, որոց ՚ի բաղում էլեալ պարտաւորեան եմ: Ծանր թուի ինձ ամենայն յորժամ զայլոց լսեն բանք, և փոխանակ առնելոյ նոցա բարիս որչափ ՚ի կարի իմում է, թերևս գժկամակիմ և զլարիմ ևս ընդ եղեալսն յայլոց, թերևս և հնարիմ իսկ ուրեք արգելուլ զայնս և խափանել: Փոխանակ կանխելոյ և պաշտելոյ զնոսա յայնս իսկ, զորս չէին ինչ ինձ պարտք, քանիցս ալդեօք գժնեաթար գնացեալ եմ ՚ի պաշտամանս իմոմ, զլանալով զոր կանոնք իմ և պարտք պաշտամանս օրինագրէին:

Փոխանակ գիւրելոյ նոցա կարեկցաբար և թեթևացուցանելոյ զվիշս նոցա, քանիցս աղեօք ախորժեալ եմ չարակամութեամբ՝ թերևս և պատճառք իսկ ազեսին երբեմն եղեալ: Փրկիչն իմ Յիսուս ասաց յայտնապէս թէ զոր ինչ առնիցեմք մեք առ եղբարս մեր, զնոյն և Հայրն երկնաւոր արասցէ առ մեզ: Ըստ այսմ կանոնի զինչ ակն ունել իցէ ինձ ՚ի Տեառնէ, համ որով համարձակութեամբ կարիցեմ աղօթել առ նա գթալ յիս և առատացուցանել զնորհս իւր, մինչ ես փակեցի զդուռն իմ առ արդիս նորա և առ անդամս:

ՄԱՍՆ Գ

Սէրն Յիսուսի սքանչելի ևս էր սիւնա-
բաձուածքն. զի հասարակաց էր առ ամե-
նեսեան: Քանզի վասն ամենեցուն առաքեալ ՚ի
Հօրէ, որ սիրէրն զամենեսեան, հասարակաբար
տարածեաց զսէր իւր առ ամենեսեան և անխըտ-
բաբար խնամէր զամենեսեան: Զհրեայն և զհե-
թանոսն միօրինակ հրահանգէր և տայր նոցա
բժշկութիւն ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ: Ոչ
ուրեք անարգեաց զաղքատան և զանանուն, և ոչ
մեծատանց և աւագաց առաւելագոյն խնամ
կալաւ: Պատրաստ էր և հակառակորդաց իսկ
իւրոց, որք անպատկառ չարութեամբ վարէին
ընդ իւր, առնել նոցա զամենայն բարիս որոց
մարթ էր նոցա ակն ունել. և որք դիմէին առ
աստուածական զօրութիւն նորա, յիւրեանց
ձեռս էր հաղորդ լինել և ընկալուչ ամենայն
շնորհացն՝ զրոս բաշխէր: Եւ ոչ եթէ պատ-
րաստ միայն էր, այլ կոչէր ևս զնոսա, յորդո-
րէր, հրաւիրէր և չքշէր ևս ՚ի խնդիր նոցա:

Եթէ ոչ այսպէս սիրեցից և ես զընկերս իմ,
Թերի է սէրն իմ և անկատար կամ կեղծիք ևեթ
են սիրոյ, զի ոչ է սէր քրիստոսական, որ պա-
տուիրէ մեզ սիրել զընկերս մեր ըստ Աստուծոյ
և վասն Աստուծոյ: Եւ զի այնպիսւոյ սիրոյ չէիք
չափ և սահման, ամփոփել զայն առ ոմանս ևեթ
և ոչ սիրել զամենեսեան առ հասարակ՝ է եղ-
ծանել զայն և բառնալ ՚ի սպառ:

Այսր աղագաւ և որդին Աստուծոյ և ըստ
նմանէ առաքեալք ամենեքեան նովին միով վա-
րեցան բանիւ յասելն՝ «Սիրեցեք զիրարս
ձեր, սիրեցեք զընկերս ձեր». և զի ամենեքեան
եղբարք մեր են և ընկերք, ոչ է մարթ առ այս

ոք և առ այն ամփոփել զսէրն. այլ առհասա-
րակ սիրել զամենեսեան: Վասն որոյ յաւելուս
Փրկիչն մեր ասելով. «Բարի արարէք ամենե-
ցուն». զի թէ սիրեցէք միայն զսիրելիս ձեր,
զինքնաւսրս և զբարեկամս և ընդ որս անձուկ
կցորդութեամբ կցորդեալ լցիք, զի՞նչ աւելի
առնիցէք քան զհեթանոսս, զի և նոքա սիրեն
զբարեկամս իւրեանց և զմերձաւորս: Այսպա-
հեստարանական սիրոյն այս սեփական տիպք են
զանազանութեան և սրբութեան, որով գե-
րազանցէ քան զսէր լոկ մարդկային՝ որպիսի
առ հեթանոսս էր, և է իսկ ցարդ ըստ աշխար-
հի: Ոյր աղագաւ Փրկիչն աշխարհ ՚ի տալն
մեզ զօրինս և զպատուիրան սիրոյն զոր պա-
տուիրան իւր կոչէ, բովանդակեաց ՚ի նմին և
զհակառակորդս, զհընամիս և զատելիս ասելով.
«Սիրեցէք զհընամիս ձեր, բարի արարէք առե-
լեաց ձերոց, օրհնեցէք զանիծիչս ձեր, աղօթս
արարէք ՚ի վերայ նեղչաց ձերոց»: Սէր արդա-
րև գերասահիճան, այլ զիարդ դժուարագիւտ:
Բայց թէպէտ գերասահիճան, թէպէտ դժուա-
րագիւտ՝ մեզ ամենեցուն կարևոր և անհրա-
ժեշտ պարտք են. և չիք վասն քրիստոնէի, և
առաւել վասն կրօնաւորի՝ այլ սէր ՃՀմարիտ
ընդունակ վարձուց առ յԱստուծոյ:

Ո՛ւր եմ ես արդ և ո՞րպէս ընուցում զայս
պարտս սիրոյ: Նոյն ինքն Յիսուս ղեկուցանէ
մեզ թէ եկեսցէ ժամանակ զի ցամաքեսցի սէր
բազմաց, որ ոչ եթէ առ աշխարհիկս միայն,
այլ և առ կրօնաւորս Ճշդիւրն: Ցամաքելով ցա-
մաքի արդարև. և ՚ի ցամաքելն՝ ամփոփի, անձ-
կանայ և մանաւանդ. և փոխանակին զայն սի-
րելութիւնք մանականք և առանձին մտերմու-
թիւնք և բերմունք բնութեան. և ըստ զանա-
զանելոյ բերմանց զանազանին և գնացք. զօրա-

նանձառանձին բարեկամութիւնք առ որս չինա-
յի ինչ. մինչ զայլոց ոչ ինչ է փոյթ ամենևին ։
Ի գործս հասարակաց պաշտամանց յորս պարտ
է ամենեցուն միօրինակ վայելել ՝ի խնամս պաշ-
տօնէին, նախամեծար լինին ոմանք և ամենայն
փոյթ և խնամ առատաձեռնի առ նոսա, և այլք
զուրկ ՝ի խնամոց լքանին և անտես լինին ։ Ի
կրել ինչ ուրուք յիշխանէ՝ փոխանակ եղբայ-
րական սիրով հեղձուցանելոյ ՝ի սրտի ղերդիւ
կրից և զրկաժխտութեան, խղճէ ինչ ոչ՝ ՝ի
տալ պատեհին՝ արտայայտել զայն հատուցա-
նելով զարհատուր փոխարինին ։

Պատահէ ևս յաճախ զի առ արտաքինս և առ
օտարս շնայլևալ ոմանց զամենայն փոյթ, զսէր
և զնախանձ, իսկ առ եղբարս, ընդ որս անձկա-
գոյն ևս կցորդեալ են զօգիս սրբութեան, ցըր-
տութեամբ բերին և դառնութեամբ ևս՝ աղար-
տելով զկարգ և զօրէնս սիրոյ ։ Ո՞ւր ճնայ յայն-
ժամ սէրն քրիստոսական, բայց միայն ՝ի սիրոս
սակաւուց և եթէ ոմանց, զորս առաջին գնէ մեզ
Աստուած՝ օրինակ ուղղութեան վարուց ։ Ո՞չ
ապաքէն իմ իսկ տեսեալ ՛ի և տեսանեմ գեռ ևս
զայնպիսիս, յորս անձնաւորեալ լինի է սէր, և
համ այնչափ առատացեալ ածէ ՝ի նոսա տա-
կաւ, որչափ յաճախեն պատճառք սիրոյ ։ Ամե-
նեքեան զարմանան ընդ նոսա, այլ քանիք ո-
մանք նախանձաւորք լինին նոցա և հեռաւորք ։
Եւ զինչ օգուտ իցէ ինձ ՝ի զարմանալոյ եթէ
ոչ ջանացայց նմանողք լինել նոցա ։

ՍՂՕՐԻ

Ո՛վ Աստուած իմ, Աստուած խաղաղութեան
և սիրոյ, դու ես որ հաճեցար պահել ՝ի վանո-
քայս և ՝ի կրօնաւորական ընկերութիւնս զհոգի

նորածնունդ եկեղեցւոյ քո սրբոյ, և զառաջ-
նոցն հաւատացելոց ։ Արդ նոցա ամենեցուն մի
սիրտ էր և մի հոգի ։ և զնմանդ մարթ իցէ ինձ
առանց սիրոյ լինել, ձմարիտ կրօնաւոր ։ Ոչ է
ինձ մարթ զամենեցուն զսիրոս յարմարել և ա-
ծել բովանդակ ՝ի մի միաբանութիւն սրբու-
թեան. այլ ինձ գէթ պարտ է յարմարել զինն
և միաբանել, և զայս ասի ունիմ ՝ի քոյ շնոր-
հաց ։

Տուր ինձ, Տէր, զսէրն զայն համբերող և եր-
կայնամիտ, զսէրն բարեգործական և համա-
սիրեալ առ ամենեսին ։ Ով Տէր, որչափ և առա-
ւելուցու սէր իմ առ եղբարս, ոչ հաւասարես-
ցի երբէք սիրոյ քո որ առ իս ։ և ոչ այնչափ եր-
կայնամիտ գտայց ես առ նոսա որչափ երկայնա-
մտեցեր դու ցարդ առ իս ։ Զոր ինչ և արարից
և կամ ցանկացայց ես նոցա վասն սիրոյ քո, ոչ
հաւասարեսցի երբէք որոց ընկալաւել է իմ
յամենառատ բարութենէ քումմէ ։ Եւ զինչ
մեծ իցէ ինձ տարածանել զնմանս սիրոյ իմոյ
առ ամենեսին ընդ որս հասանիցէ ինձ կալ և
առ որս կանն ընդ իս, մինչ դու ողորմութեամբ
քով լցեր զերկիր և զսէր քո ձգեցեր մինչ առ
խաչահանուան քո ։

Վասն որոյ ղքեզ, Տէր, ունելով առաջի իմ
օրինակ եղբայրսիրութեան, և համօրէն առաքի-
նութեանց, ակնկորեալ ամաչեմ՝ զի չգտանեմ
ինչ նմանութիւն ինչ ընդ իս և ընդ քեզ ։ Ամ-
ընդ այն մանաւանդ ամաչեմ, զի այսչափ ցուրտ
եմ և անփոյթ ՝ի գործս սիրոյ, զորս ստատուտ
կաս դու ընդունել երբեմն առ քեզ արարեալ, և
ոչ ինչ անարժան համարիս սիրողաբար զնչ-
մանէ քեզ վերադրել և երախտահատոյց լինել
ինձ վասն այնոցիկ ։ Վայ ինձ, Տէր, զի եթէ ար-
դարև սիրեմ ես զքեզ, զնմդ կարիցեմ չսիրել

զայնոսիկ՝ զորս փոխանակ քո ցուցեր ինձ։ Ո՛չ ապաքէն յեղբարս իմ զքեզ սիրեմ։ ո՛չ ապաքէն զոր ինչ առնեմ նոցա՝ ի սիրոյ, քեզ առնեմ համայն, և զի՞նչ աւելի սիրեք եցեն ինձ առ այդ՝ ի սիրել։ Ո՛հ, կարի յոյժ ապառումք եցեք սիրա իմ, ով Տէր, եթէ ոչ ընդոստնուցու՝ ի խորհելն զայսոսիկ։

Ցաղագս համբերպտար ժուժկալու-Թեան՝ ի վիշտս

ՄԱՍՆ Ա

Պարտ էր զի Փրկիչն մեր Յիսուս լեցեր մեզ օրէնակ յամենայնի, նմին երի կամեցաւ և՝ ի չարչարանս իւր ուսուցանել՝ թէ որպէս պարտ է ոտանեղացուց և վշտաց կենցաղոյս։ Կրկին ազգք են ցաւոց. ներքինք՝ որք ոտնջեն զոգի, և արտաքինք՝ որք ոտնջեն զզգայութիւնս, և ըստ երկուց այսոցիկ երկու ինքնուրոյն կարևոր մտածութիւնք լեցին մեզ՝ ի խոհուն։ Եւ նախ ըստ առաջնոցն նկատեաւ՝ ներքին ցաւք Յիսուսի որդւոյն Աստուծոյ բովանդակին յերիս յայսոսիկ, որպէս յայտ առնեն աւետարանիչքն, ՝ի տրտմութիւն, ՝ի տաղտուկ և յերկիւղ։

Յիսուս յետ վերջին ընթրեաց ընդ աշակերտսն՝ այն ինչ եղ՝ ի պարտէզն՝ ի Գեթսեմանի, խակ և խակ կալաւ զնա տրտմութիւն այնպիսի՝ մինչև հազիւ կարել կամ ժուժկալել միայնակ, և բաւական էր տրտմութիւնն այն ևթե բուռն սաստկութեամբն լինել նմա մահաբեր, որպէս աշակերտացն յայտ առնէ ասելով. «Տրտում է անձն իմ մինչև ցմահ»։ Այս սկիզբն եղև դառնակսկիծ չարչարանացն զորս կրեաց վասն իմ։ Ոչ չատ համարեցաւ սակ զըրբասնեալ մարմին իւր՝ ի տանջանս խաչի, հարկ էր զի բռնագոյն ևս կրեսցէ ցաւս՝ ի հոգւոջ։ Եւ այս խակ մասն էր և կարեւորագոյն մասն հատուցմանն, զոր պարտ էր հատուցանել Հօր իւրում վասն մեղաց մարդկան. զի հոգին է որ զշղացեալն՝ ի սրտի վէրս, հեռութեամբ կամացն ածէ յարդիւնս։

Սակայն 'ի մեծի սրտմտութեանն յայնմիկ, զ-
րուեմ անհնար էր հանդուրժել առանց աքան-
չելոյ, զի՞նչ արար Յիսուս: Խնդրեաց ուսանիլ
միութենէն ինչ մարդկային, կամ դէթ սիր-
փանս և օդնականութենէն յիւրոց աշակերտաց:
Թուլացաւ երբեք 'ի համբերութենէ. բողո-
քեաց ինչ կամ յերկարեաց 'ի զղջացս 'ի դիւր և
'ի սիրտիանս սրտի իւրոյ: Բանք երկու կամ ե-
րեք բաւականք եղեն նմա 'ի յայտնել աշակերտ-
ացն զկիրս իւր: Եւ ոչ յամեցեալ առ նոսա մեկ-
նեցաւ կալ առանձին յաղօթս ընդ ժամս երիս,
ոչ զոք ուսնելով իւր օգնական և հզօրիչ բայց
զաստուած Հայր, որում թէպէտ լեալ լսելի,
թէպէտ և ոչ ըստ երևութին, սակայն միակ ա-
պաւէն իւր նմա էր՝ յոր և էիթ յուսացեալ, ոչ
յայլ ինչ խորհէր՝ բայց հաստակել կամաց
նորա. «Հայր իմ, ասէլով, ոչ իմ կամք՝ այլ քոյդ
լինիցին»:

Կրօնաւորութիւնն որչափ և զերծ և ազատ
թուիցի 'ի վշտաց կենցաղոյս, սակայն են և
'ի կրօնի, որպէս և այլուր, աւուրք դժուա-
րինք, աւուրք սրտմտութեան: Ամենեցուն ա-
մենայն ուրեք են աւուրք չարեաց, նոյնպէս
և ինձ: Եա՝ այնպիսիք եմք 'ի քնէ, զի 'ի պա-
հասել մեզ պատճառաց արդար ցաւոց, մեզին
ստեղծանելոք զայն մտօք: Թողեալ քննել արդ
զպատճառս այնքանոյ սրտմտութեան աստուած-
որդւոյն զոր կրեաց, և որպէս յայտ արար, ոչ
ոք երբեք երկբայեսցի թէ ըստ չափոյ ծանրու-
թեանն և դառնութեան՝ նոյնպէս ևս արդար և
իրաւացի ցաւքն էին. ուր իմքն՝ բազումայն է
զի ցնորք իմն են ինքնասեղծ զորս չերմ ընա-
տորութիւն, հպարտութիւն և անձնասիրու-
թիւն հնարին ստեղծանել. զի եթէ խորամուխ
լեալ յանձն իմ քննեցից զծածուկս սրտի իմոյ,

անդ գտից յաճախ զպատճառս դառնութեան
նորա. « Ընդէ՞ր սրտմտիմ ես անձն իմ, կամ ընդ-
դէ՞ր խռովիս զիս »: զի ձարտար ես և բազմա-
հնար 'ի խռովել անպատճառ և յաճախ ևս յա-
նիրաւի:

Բայց որպիսի և իցեն ցաւք իմ, թէպէտ
իրաւացիք թէպէտ ոչ, զիա՞րդ տանիմ ես այնո-
ցիկ. քանի՛ քանի խորհուրդք և կասկածք կեղա-
կարծք 'ի սրտի մաշեն զիս և տապնապեն վայ-
րապար: Ո՛րչափ զբաղանս մնոտիս հնարիմ ան-
ձին նեղելոյ և արտաքոյ պատճառանօք հանգուս-
ցանելոյ զմիտս իմ, և 'ի բաց դարձուցանելոյ 'ի
խորհրդոց անտի յորոց պաշարեալն է: Ո՛րպէս
զայրանամ իսկ երբեմն և զչարիմ ընդ այնոսիկ
զորս պատճառս համարիմ և առիթ չարեացն
իմոց. նա՝ և ընդ նոսա, զորոց զմտեմ հաստա-
տուածք թէ չիք ինչ նոցա մասն և բաժին
յերան, և որպիսի նեղսբտութեամբ և զչծեցուս-
ցեալ բանիւք հարկանեմ զսիրտս նոցա, որպէս
թէ նոքա իցեն մեղապարտք. կամ թէ՝ զի կրեմ
ես, օրէն իցէ տալ կրել և այլոց:

Ո՜հ, ո՛րչափ հեռի եմ՝ 'ի հլու հպատակութենէն
Յիսուսի. եթէ դիտացեալ էր իմ լուել և համ-
բերել քրիստոնէաբար և կրօնաւորաբար, եթէ
յիս ինքն ամփոփեալ 'ի սրտի իմում թագուս-
ցանէի զկիրս իմ՝ Աստուծոյ ևեթ յայտնելով
զայն, և ոչ այլուր խնդրելով ինձ սիրփանս և
միսիթարութիւն բայց յԱստուած և յաղօթս,
յորքանեակ զերծ գտանէի 'ի սխալանաց, և
յորոյց վերդովմանց և յանձկութենից պահէի
զանձն: Հրեշտակ 'ի յերկնից առաքեալ գայր
յայնժամ՝ 'ի զօրացուցանել զիս. մանաւանդ
թէ Աստուած ինքնին գայր ինձանէր. օծու-
թեամբ ընորհայ իւրոյ, և որպէս բարեկամ
մտերիմ և որպէս հաւատարիմ խորհրդական

դարման առնէր չարեացն խնդ. և թէ բժըշկել ես՝ ի սպառ ոչ հաձէր, սակայն դիւրիւր և քաղցրացուցանէր ինձ զայնս, և ոչ միայն դիւրատարս առնէր, այլ և չարեկանս և փրկաւէտս: «Տառապէր չիս հոգի իմ, ասէր մարգարէն, և ոչ կամէր միխիթարել. յիշեցի զԱստուած և ուրախ եղէ»: Զայսր ստէպ զիտրձ էառ մարգարէն, ընդ՚ը լեցե և ինձ չառնուլ նոյնպէս:

ՄԱՍՆ Բ

Երկրորդ նեբքին տանջանք, որով տագնապէր փրկիչն Յիսուս՝ էր տաղտուկ լինն, բնաւորական արդասիք մեծի և անհնարին արտմութեանն յոր անկաւ. ամենայն ինչ Թուէր տաղտկալի և ոչինչ քաղցրանայր նմա:

Այն ամենայն մտածութիւնք և պատճառք զորաւորք, որք յառաջն եառնդն և քաջալերս ազդեին՝ ի նա զգալասէս՝ անկորուստ ունելով զառաջնոյ ազգեցութեան իւրեանց զզօրութիւն, ոչ ևս ներգործէին՝ ի նմա որպէս յառաջն, և ոչ ևս ազդեին՝ ի նա զայն եառնդն և զբորբոք, որով վառեալ խրախուսէ հոգի. և այնպէս լքեալ Թողեալ Յիսուս յանձն իւր անօգնական, կայր որպէս վհատեալ: — Եւ էր նմա այն՝ ի տաղտուկ և՝ ի տագնապ մեծ և դժուարին՝ բիւրապատիկ ծանր քան զայլ ամենայն տանջանան: Զայս տաղտուկ սրտի կրէին յաձախ և յոլովք՝ ի բարեպաշտից և՝ ի կրօնաւորաց:

Ի երբեմն զի ամենայն գործք և հրահանգք բարեպաշտութեան անհամացեալք՝՝ ի տաղտուկ են նոցա: Աղօթք, խոստովանութիւն, հաղորդութիւն, ընթերցմունք հոգևորականք և համայն իսկ կարգք, կանոնք և կրթութիւնք դժպհիք են նոցա և՝ ի ձանձրոյթ, և փոքր միւս

և ևս և՝ ի կոչմանէ իւրեանց տաղտկացեալք, տարբր. Զանային արդեօք ընդ հրաժեշտ իւրեանց յաշխարհէ:

Ո՛չ արդեօք՝ ի նմին պայմանի գտայ և ես յաձախ: Եւ արդ Թէպէտ չիցեմ համաւորապէս անկեալ՝ ի նոյն Թուլութեամբս խնդ, սակայն չիցէ՛ ինձ պարտ ցաւել և վշտանալ ընդ այն որով լինցի ինձ այն՝ ի փորձութիւն փրկաւէտ, և բիւրապատիկ փոխարինից պատճառք՝ եթէ գիտացից տալ այնու զՀաւատարիմս անդրդուելի հաստատութեանս խնդ: Այլ ջար այն է՝ զի առ վտրաբար ես ինքն եմ պատճառ ձանձրութեանս այսմիկ և տաղտկութեան յորում կամիմս զգալ ջութեամբ և անհոգութեամբ: Չկամիմ սակաւ մի բանադատել զանձն իմ, ամբոխել զիս առ Աստուած, բառնալ առ Աստուած, և զի՞նչ զարմանք լցեն եթէ ծանրութեամբ բնութեանս վայրաբերիմ: զի՞նչ զարմանք եթէ հեռասցի յինէն Աստուած, մինչ ես ոչ մերձիմ առ նա. որով և ծիւրեալ ծնգիմ՝ ի տան նորա. և երկայն Թուէն ինձ յոյժ ժամքն յորս՝ ի նա պարապիմ: Ո՛վ, ո՛րպէս ես բազ անցանէն ժամքն յորս զՀետ երթամ յօժարութեանց իմոց:

Ի ևս երբեմն՝ զի ոչ յիմմէ ինչ Թերութենէ պատահէ ինձ հոգևութիւնս այս և տաղտուկ յայնմանէ աստուածայնոց երից: Բայց դիտեցեմ յօդուտ՝ ի վար արկանել զիտրձանն որպէս պարտն է: Գիտեցեմ սրբել և նուիրել Աստուծոյ զտաղտուկն զայն և ձանձրոյթ՝ առնելով ինձ զայն պատճառ և առիթ մեծագունից ևս առաքինութեանց՝ համբերութեան, զղջութեան սրտի և անկեղծ հաստատութեան: Ոչ փոքր ինչ արդիւնք են առաջի Աստուծոյ հանդուրժել վասն նորա տաղտկութեան սրտի, և ոչ դոյզն առաքինութիւն՝ տաղտկութեամբ հան-

դերձ յառաջել ՚ի ձանապարհի կատարելու-
թեան: Այս ձիրք պարգեւաց ինն սրբոց, յոր-
մէ վերջինամ ես յաձախ՝ երբ ՚ի ձանձրանալ
լսումէ ՚ի հոգեւորաց, թողում զքանեմ զայնս ՚ի
սպառ, և կամ հարեանցի և վեր ՚ի վերոյ կա-
տարեմ՝ զձանձրութիւն և զտաղտուկ առնելով
ինձ պատճառ հեղգութեան և թուլութեան:
Փոխանակ զի պարտ էր ինձ, ընդհակառակ Աստու-
ծոյ, որ տալոյ ինձ այնուիկ և ձանձրու-
թեամբ փրթէք զնս, զամենայն ձիրսն և զղօրու-
թիւն ՚ի վար արկանել և յաղթող լինել անձին:
Դաւիթ ոչ ուրեք այնպէս փառաւորեաց զԱս-
տուած՝ որպէս յասելն առ նա. « Հեռի եղեր
դու յինէն, այլ ես ոչ թողի զքեզ և ոչ խոտորե-
ցայ ՚ի պատուիրանաց քոց»: Այսպէս փառա-
ւորեցից զԱստուած, այսպէս գանձեցից ինձ
գանձս անթիւս արդեանց:

ՄԱՍՆ Գ

Երրորդ պատճառք անձկութեանն և տագնա-
պին յորում կայր Յիսուս, էր երկիւղ սաստիկ
և կիրք ընդդիմամարտք: Իմանք զիշերի, յառաջ
ձնութեան վայրին գան նկարին առաջի նորա
ամենայն կիրք չարչարանացն, և ՚ի տեսիլ մօտա-
ւոցեա գոն և անարգանաց կատարածին ունի
զնա երկիւղ այնպիսի, մինչև զդայութեանցն
համայն ամբոխեալ և վեր ՚ի վայր յուզեալ սոս-
կալ և հրաժարել յընդունելոյ զգառն բաժակին
զպատրաստեալն նմա ՚ի Հօրէ. « Հայր իմ, եթէ
հնար է, անցո՛ յինէն զբաժակս զայս»: Եւ զինչ
զարմանք թէ ՚ի տեսիլ այնչափ և այնպիսի ա-
նարգանաց որոց երթայր լինել նչաւակ, և չա-
րաչար չարչարանացն զոր կրելոցն էր ՚ի մարմնի
իւրում, զարհուրեալ սոսկացն բնութիւնն հա-
մայն և ՚ի բաց սարանուցաւ:

Հարկ էր զի մարտ բռնագոյն քան զոր լեալ
ևցէ երբեք, դրդեսցի անդ ՚ի ներքս ՚ի սրտի,
որպէս և դրդեցաւն: Ի սաստկապ օրհասական
անկաւս Յիսուս և յոտից մինչև ցգլուխս հարաւ
՚ի քերան արեան. բայց զայն ամենայն զմարդ-
կային կիրս զդայութեանց կրեալ ՚ի սրտի, կայր
մնայր մինչ անդրդուելի հաստատութեամբ կա-
մաց՝ ոչ անսալով բնաւ հակառակամարտ ազդ-
մանց բնութեանն: Վասն որոյ այն ինչ հասանէր
առհմանեալն ժամ և դպին հասանելին թշնամիք
ունել զնա, ոչ ևս այլ ՚ի փախուստ կամ ՚ի
թագուստ մտաբերէր, այլ ընդ հակառակն
համարձակութեամբ ընդ առաջ ելանէր ասելով
« Ես եմ» զոր ինդրէք. « Այս է ձեր ժամ և
իշխանութիւն խաւարի». արարիք ընդ իս որ-
պէս հրամայեցաւն ձեզ: Ո՛վ, որշան երկիւղ և
որպիսի՛ խրախոյս, որպիսի՛ վհատութիւն, և
որքան արիութիւն միանգամայն երևեալ յաս-
տուածամարդն Յիսուս:

Յորժամ դէպք և պատեհք ընդ առաջ լինին
ինձ մաքառելոյ ընդ անձին՝ և նուաճելոյ զնա
իշխանաբար, ոչ կարեմ զառաջինն զապել զբնա-
ւորականն յիս վերդովումն և զդրդռութիւն և
զդիմադարձ յօժարութիւն սրտի: Զայսր զիտէ
ոչ ոհա ՚ի կրթութեան աւուրցս առնուամ մա-
նաւանդ: Զիք ոք այնպէս զաչքսցկալ և անզգ-
դայացեալ հոգւով որ ՚ի սրբութեան աւուրցս
ոչ ընդոստնուցու և ոչ հոգեւորեսցի: Աստուած
խօսի ՚ի սրտի խրատ, ընդրկե լռեսցուս լինին
հոգւոյն, ՚ի միտ առնու զանցուածս իւր, խո-
ստովանի լինի պատճառաց նոցին, և թէ զոր
դարմանս առնել պարտ էր և զոր առնէն պար-
տի դեռ ևս: Իմանայ թէ որչափ թերի է և ՚ի
բացեայ յայնմանէ որ ինչ և որպէս պարտն էր
լինել և զվասն էրն ևս ՚ի միտ առնու, այլ զան-

դիտէ բռնանալ՝ի վերայ իւր և ձեռն՝ի գործ առնել. դժուարութիւնս բազումս պատճառի՝ի սրտի իւրում և ոչ համարձակի. կապի ընդ անձին, այլ յետ յերկար վիճաբանութեանց տատանի յերկմիտս ոչինչ ամենևին որոշելով և հաստատելով։

Մի արդեօք յայսմ պայմանի իցեմ և ես. վայրապար հնարիմ խաբել զիս. Աստուած յակառակս ինձ ցուցանել ցուցանէ զոր ինչ յիս պարտ է փոխել, և ուղղել՝ի վարս իմ՝ զի եղէ ըստ արժանի բարեաց կրծանաւորի։ Օրինակք բազումք որք առաջի կան ինձ, խայթ խղճի մտաց որ խօսի յիս լռելեայն, խրատաք առաջնորդաց, մտածութիւնք զորս արարի և զորս առնեմ դեռ ևս՝ի կրթութեան աւուրցս, չթողուն ինձ տեղի անգիտութեան թէ որոյ ուղղութեանց կարօտելեմ. և շատ իսկ են յազդէն և՝ի թելադրել ինձ խորհուրդս բարիս և իմաստս օգտակարս։ Եւ զինչ այն որ արդէնուցս զիս, բայց որ ինչ արդէն ցարդ՝ի բազում նուաստս։ Ահ մնոտի և երկիւղ անեկ որում անձնամատն եմ, տան ինձ ստեղծանել պէսպէս պատճառանս վերբերոյթս՝ի յապաղել, և մի շուտով և վաղվաղել՝ի գործ։ Ոչ այդպէս խորհեցաւ Յիսուս և ոչ այդպէս յապաղեաց. մինչ նուաղագոյն քան զոր յիսն յաղագաւորութիւն էր՝ի սրտի նորա։ Մինչ տեսիլ մծամաշտ չարչարանացն, յորոց՝ի սոսկալի տեսիլ այնպէս խռովեալ էր հոգի նորա, մինչ՝ի ինչ էնէն և անբաւականք՝ի զարհուրեցուցանել զնա։ Ո՛հ, մինչև ցերբ վանն դպղն դժուարութեան զոր ակարութիւն իմ ստեղծանի ինձ և առուաբացուցանէ՝ մանն եղէց երկիւղ. կամ թէ կանխէ և պաշարէ զնս երկիւղ, զնաբդ ոչ ուսանիմ՝ի Փրկչէն իմմէ սրտասնդիլ ընդդէմ նախայարձակ երկիւղին և նովին արիական սըրտ

դուրեամբ և համարձակութեամբ ասել ընդ նմա. « Օ՛ն արիք դնասցուք »։

ՍՂՕՓՔ

Ո՛վ սիրելի փրկիչ իմ Յիսուս, որ անհուն խնամոտութեամբ քով և դիմութեամբ հաճեցար յանձն առնուլ զակարութիւն իմ, և կրել իբրև զնս զվշտովուն և զտաղնապ սրտի, զի հրահանգեսցես զնս և զօրացուսցես քոյով օրինակաւդ, առանց որոյ վրէպ գտեալ յայդպիսւոյ ծուղրութենէ և յօդնականութենէ զոր գտանեմս արդ՝ի քեզ, զինչ առնել էր ինձ՝ի բազում դէպս, և յոր սահման հասեալ էր իմ ցարդ։ Տեսանես, Տէր, ուրպէս յեղափոխիմ յարաժամ ես ինձ ելեալ աննման, և ուրպէս յօրղիմ մշտատատան. այսօր՝ի խաղաղութեան կամ հոգւով և սուրբ խնդութեամբ զուարթացեալ, հաճեալ եմ ընդ կոչումն իմ և ընդ պարտս նորա, չէք ինչ ինձ ծանր և դժուարին, և թուիմ կազմ և պատրաստ ամենևին՝ի յաղթել անձին և ամենայն խլբրտմանց սրտի իմոյ։ Ահ՝ի վաղիւ ոչ նոյն ինքն եմ. ամենայն պարագք իմ և հրահանգք ծանրանան ինձ, և ոչ անհաճոյ միայն, այլ և դժպհիք լինին ինձ՝ որպէս բեռն դժուարակիր և անբերելի։ Ա՛յսպէս յար՝ի փոփոխման կամ և հանապազորդ՝ի պատեհապղծ՝ի կրկին ներհակակիր հոգւոյ անդուլ տարուբերեալ։

Եւ առ իմ՝, Տէր, թողուս զնս և քանես այսպէս. որպէս յայլում ամենայնի՝ եղեն անշուշտ և յայսմ քո խորհուրդք և կամք. այս են խորհուրդք և կամք փրկութեան իմոյ և սրբութեան։ Կամիս զի ըստ չափու պայմանի կոչմանս իմոյ՝ մարզեցայց և ես՝ի նոյն առաքինութիւնս և ձոխացայց արդեամբք։ Կամիս զի նոքիմբք

երիւք սրտի տանջեալ և տագնապեալ զուրկ
գոյից յամենայն քաղցրութենէ և ի մխիթա-
րութենէ հոգւոյ: Եւ զի այս կամք են քո, Ա-
տուածդ իմ, եղիցի ինձ որպէս կամիս. քաղցը և
հիւանդութիւն միօրինակ կալայց մինչ յաւիտեան: Բայց
դու, Տէր, օրինեալ քո՛վ արիացո՛ զիս, և ան-
սպառ ընդհակառակ քո՛ւ լեր ինձ զօրավիգն, և այն-
պէս հաստատեալ ամրացո զոտս իմ՛ ի ճանա-
պարհի քումմ, զի անսասան լերկիցեմ, ի տըրտ-
մութենէ և ի տագնապալից վհատ քո ընթա-
ցայց՝ եթէ ոչ քաղցրութեամբ սրտի, այլ ան-
սայթաք ընթացիւք: Որչափ բուռն ձանձին ա-
րարիչ ի յառաջադիմել, նովին չափով յաւելից
քեզ փառս, և պատրաստագոյն գտից զքեզ ի
փոխարինացն հատուցումն:

Ի ՀԱՐՑԱՐԱՆՍ ՓՐԿՉԻՆ

ՄԱՍՆ Ա.

Ա՛ռ ի խելամուտ լինելոյ փոքր ի շատէ՛ որ
ինչ Փրկչին մեր կրեաց հարցարանս, շատ է զի
առցուք ի ձեռս զնաչափայն, և ի խաչելեալն
ի նմա ակնարկեսցուք յերկրպագելին ի հրեշ-
տակաց՝ արիւնաթաթաւ վիրալից, որ հրաւիրէ
զմեզ ասելով. «Անցաւորք Ճանապարհայ, հայե-
ցարուք և տեսէք եթէ եցէ՞ն ցաւք ըստ ցաւոցս
լեալ»: Շատ եղէ մեզ ակնարկել ի գեմն նորա
կապուտակեալս ի հարուածոց, զերկնաստեղծ
Յօնան ծակոտեալս ի փշոց, զկենսատոյց շըր-
թունսն երեթացեալս ի լեղւոյն, զձեռսն և
զոտս կեղեքեալս ի բեւեռաց, զսուրբ կողն
սիգախոց, և զամենայն իսկ զմնասունս մարմնոյն
պատառոտեալ ի ճաղկանաց: Ահա յոր տեսիլ
կերպարանաց հատուցին զնա գահիճքն, յորում
և մեռաւ. զի՞նչ կարեցեմք մեք ասել ի տեսիլ
օրինակիս, զի՞նչ խորհել ի սրտի: Յորժամ
խրատիմքն ի մեռելութիւն և ի Ճգնութիւն, առ ի
զմահն Յիսուսի ի մարմինս մեր կրել, պահան-
ջեցի՛ ինչ այս ամենայն ի մեզ: Ո՛հ, եկատ կեանք
կոչի ի մեզ և ե պահպանութիւն ևեթ կրօնա-
ւորական պարտուցս մերոց. այս են ամենայն
Ճգնութք մեր, և աւելի քան զայս ոչ ինչ ի մեզ
պահանջի առ ի կրել զմահն Յիսուսի ի մահ-
կանացու մարմինս մեր:

Բայց զայսոսիկ հաւատարմութեամբ և մտա-
գիւր պահանջիմք ընդուն պարտս առանց խնայե-
լոյ ի մեզ. չատանալ այնու՝ զոր ընդունիմք մեզ
Աստուած ի կերակուր և ի հանգերձս, կար-

գայ և կանոնաց հպատակել, յարատևել ՚ի վաստակս սահմանեալս մեզ ՚ի միաբանութենէ, վաղվաղորդս լինել և մի վերջանալ ՚ի միաբան ազօթից, և ՚ի համառօտ ասացեալ՝ միանձնական վարել կենցաղ: Ահա որ ինչ ՚ի մէնջ պահանջէ Աստուած և շատ համարի, ահա յոր ինչ սահմանին պարտք մեր: Ապաքէն ոչ թէթև ինչ է, մանաւանդ յարատևել ՚ի սոսին ոչ մի օր, ոչ ամօրեայ մի ժամանակ, և ոչ տարւոր, այլ մինչև ցմահ. բայց զի՞նչ կշիռ համեմատութեան կայցէ ընդ այսոսիկ և ընդ այն որ ինչ Փրկիչն մեր վասն մեր կրեաց: Զկնի՞ ինձ պարտ ուրուք քաղցը համարել զձգտունս զայսոսիկ. այլ ասաՀ, որչափ ինչ ընդ հակառակն ջանամ և հնարիմ ՚ի բաց հատանել յայնցանէ, քանի՞ սփոփանս և գիւրութիւն խնդրեմ: Զպակասեն ինձ պատճառք առ այս, և քաջ գիտեմ վարել նոքօք և անձամբ զանձն խաբել: Ո՛հ, եթէ չարչարանքն Քրիստոսի ՚ի սիրտ իմ տպաւորէին, փոխէի ՚ի խորհրդոց աստի, կերպարանափոխ առնէի զվարս իմ, ամենայն ինչ թուէր ինձ թեթև, ամենայն ինչ դիւրըմբռնելի: Որչափ և գժկամակեր բնութիւնս իմ, պատասխանէի նմա զի ոչ ինչ են վիշտք իմ առ չարչարանօք Փրկչին իմոյ, և եթէ կրեմ իսկ ինչ, այլ չէ և արեամբ չափ հակառակ կացի մեղացն, չէ և վասն մեզաց այլոց հեղի նայսպէս զարիւնն իմ: Աչէի ցիս յայնժամ, և պարտիմ ասել յամենայն ժամ. լաւ իցէ ինձ մեռանիլ քան կեալ և մեռանել անզղջ:

ՄԱՍՆ Բ

Ա՛ռ ինչ Տէրն մեր կրեաց զայնչափ և զայնպիսի չարչարանս. խոկումն ոչ ինչ ընդհատ կա-

րնաւոր, ոչ ինչ ընդհատ գործովական: Կրեաց վասն փառաց հօրն երկնաւորի, և վասն փրկութեան մերոյ. զերկոսին և ազատ կամաւորութեամբ ինքնիշխանաբար յանձն առեալ: Ասէ թէ նմա փրկիլ զաշխարհ առանց չարչարելոյ և մեռանելոյ, և փոխարինել անարգութեան փառաց հօրն երկնաւորի. այլ այնպէս ցանկալի էին նմա փառք հօրն, և այնպէս փըրկութիւն մեր, զի ընդ երկաքանչիւրոյն խակ լինուլի և առաւել քան զչափն կամեցաւ փոխարինել չարչարանօք և մահուամբ: Ահա հարկին որ եւս նմա յանձն առնուլ զայսպիսի խիստ պարտս. և յետ միանգամ յանձնառութեան՝ օրինքն այն՝ որում ազատն էր նեղըլոյ արկանել զանձն՝ եղեն նմա այնուհետև որպէս պարտք անհրաժեշտ. նմին երբ և հնազանդ եղև այնմ մահու չափ և մահու խաչի:

Եթէ չէին իմ այլ ինչ պարտք քան զբրիստոնէի, սակայն բաւականք էին առ ՚ի հարկ առնելոյ ինձ կեալ հանապազօր ՚ի մեռելութեան: Փրկիչն մեր առանց երկիք խտրութեան ասէ առ ամենայն հաւատացեալս. «Եթէ ոք կամի զկնի իմ գալ, ուրասցի զանձն և առցէ զխաչ իւր հանապազ և եկեսցէ զկնա իմ». և վասն ոչ այսպէս արարողաց ասէ. «Ա՛յնպիսին ոչ կարէ իմ աշակերտ լինել»: Արդ եթէ այս պարտքս իցէն Քրիստոսեան քրիստոնէի, զի՞նչ պարտ իցէ կրօնաւորացս. զի բաց ՚ի հաւատարակաց պատուհասելութենէն և ապաշխարական վարելոյ կեանն՝ է մեր միւս այլ պարտք, յորմէ չկարեմք վերջանալ առանց դրժելոյ ուխտիցս մերոց. այս ինքն է՝ պարտք կատարելութեան և կրելոյ զամենայն ձգտունս յարակից կրօնաւորական կենաց: Ցանձն առաք զկնա երթալ Փրկչին մերոյ, վասն որոյ և ընդ նոյն չափիլ հեռանել ձգանց չինդրե-

ղայ զՀանգիստ մեր. և կամայ թէ ակամայ պարտիմք ընդ նոյն, զի խոստացաք, յանձն առաք, ուխտեցաք. պարտ է մեզ կատարել զխոստումն:

Մարթ իսկ է ինձ առ վաստուածեան, առանց թօթափելոյ զլուծ իմ, ինդրել թեթեւացուցանել զայն, որպէս և արարի իսկ ցարդ: Այլ զինչ օգուտ եղև ինձ անտի. ոհ, չկարեմ ըստ արժանի բաւականին աւաղել. կորուսի նախ զպատուական ամենայն Ճգանցս և կրօնաւորական կարգիս. կորուսի դարձեալ զամենայն քաղցրութիւն սուրբ և զմխիթարութիւն: Չի է ինչ 'ի կրօնաւորական կեանս կեանս յայս քաղցրութիւն այնոյիկ ևեթ զգալի որ Ճշմարտապէտն ևցեն մահացեալք. արդ որ չանայն ազատանալ 'ի մեռելութենէ, և այնոյիկ ևեթ հպատակիլ Ճգանց՝ յորոց չկարէ խոյս տալ, ոչ ևս է մահացեալ: Կեանք բարեբաստիկ՝ որ հայթայթէ մեզ զամենայն հնարս քաւութեան մեզաց սրբելոյ զհոգիս մեր, և հաղորդս լինելոյ չարչարանաց Փրկչին. և ոչ միայն հայթայթէ մեզ զհնարս զայսոսիկ փրկաւէտս, այլ և հարկաւորէ զմեզ 'ի նոյնս: Կեանք կրօնաւորական է ապաշխարութիւն իմն հանապազորդ. այլ ամենայն Ճգունք կամաւորք կոչին լինել ինձ կեղակարծք. զի մարթ է ինձ խնթալ թէ դուցէ չիցեն բաւական, թէ դուցէ չիցեն ըստ հաճոյից Փրկչին իմոյ. այլ զՃգանց կարգիս չկարեմ կասկածել. Աստուած կոչեաց զիս յայս, նա ինքն սահմանեաց ինձ զայնս. եղիցի օրհնեալ յաւիտեան, և ասացէ ինձ կալ հաւատարիմ 'ի սոսին:

ՄԱՍՆ Գ

Եւ ոչ պակաս կրեաց Փրկիչն իմ զչարչարանս: Անապարատելի համբերութեամբ և անյողդողդ սրտիւ համբերութեամբ. զհամբերութիւն նորա մարգարէն համեմատէ համբերութեան գառին՝ որ կայ առաջի կտրչին անմռունչ, և ոչխարի 'ի սպանդ վարիլոյ: Որպիսի՛ լռութիւն յատկեին Պիղատոսի 'ի դատապարտելն իւրում: Երբոյ իսկ զբերան իւր ընդդէմ հրեից, որք կալեալ ածէին զնա ընդ քաղաքամէջս Երուսաղէմի. ասաց զինչ առ դահիճսն՝ որ ձաղկանօք զփափուկ մարմին նորա կեղեքէին, և զվշտեալ պատկն ոլորեալ պրկէին 'ի Ճակատ նորա. և՛ն իսկ Ճիկ ընդդէմ բնաւ առղացն ինա 'ի խաչին: Անդրայ լինն թռուչք. այլ այս են արդասիք համբերութեան վշտաց: Իսը ոչ եթէ անզգալիք եցեն չարչարանքն դառնակսկիծք, այլ թէպէտ և հեծեծեցէ իսկ մարմինն, իղձ մեռելութեան ցածուցանէ զբողբոջ նորա:

Այսու ըղձիւք մեռելութեան մի՛ ևս լեցեր ինձ տրտնջել և մեծամեծս քան զոր են երևալ կայել զվիշտս իմ, մի ևս ինայել յանձն և խընդրել խուսափել 'ի Ճգանց: Սովին ըղձիւք պատրաստ եղէց կրելոյ զամենայն, ասելով ընդ առաքելոյն՝ զի զմահն Յիսուսի 'ի մահկանացու մարմին իմ կրեցից: Այլ ընդ՛որ ոչ այսպէս առ ըարի և ոչ այսպէս խորհեցայ ցարդ. զի սկսեալ ևեթ դնալ զհետ Փրկչին իմոյ, ոչ ևս հեռևեցայ, զկայ առի յուղղոջ: Համբերութիւն Փրկչին իմոյ յարատևեաց մինչև ցմահ. իսկ իմն անդէն 'ի սկզբան վաստակաբեկ գտաւ: Որ՛ը ևցեն Ճշմարիտքն հետևողք Յիսուսի, որք զաւրութիւն մարմնոյ իւրեանց ածեն մինչև 'ի

դերեզման՝ անդադար ընդ անձին ոդորելով։ Իսկ ես եթէ փոքր մի ինչ աշխատ լինիմ, անդէն նոյն հետայն սիրտիանս խնդրեմ և զհանդիսատ։ Որչափ յաւելուն սէր իմ, այնչափ ևս առաւել խնդրեմ ազատ լինել՝ի ձգանց. որպէս եթէ ոչ նոյնպէս յամենայն կեանս իմ էցէ լինէ պարտ գոլ կրօնաւորս. ահ, զի ոչ ածեմ զմտաս՝ որպիսի՛ ինչ էցէ միաբարութիւն կրօնաւորելս, որ՝ի մեռելութեան կեցեալ՝՝ի վերայ խաչի տայ զշունչ իւր վերջին։

ԱՂՕԹՔ

Փրկիչ իմ Յիսուս, գու զիս խաչիւ փրկեցեր, և որպէս առանց խաչի մարթ էցէ լինէ փրկութեան հասանել, և եթէ մարթեր իսկ՝ ՚ի բաց կացեալ կամել զայն։ Դու առաջնորդ ես լինէ՚՚ի փրկութիւն, և չկարեմ հասանել յայն, եթէ ոչ զհետ քո հետևիմ ընդ ճանապարհ խաչի։ Այլ եթէ գոյր իսկ այլ ճանապարհ, կարէի երբեք մեկնել՚՚ի հետոց քոց, և զարտուղի՚՚ի ճանապարհէ անտի գնալ. ոչ բանն ինքնին և հաւատք զինէին ինձ ընդդէմ։ Տեսանեմ զսուրբ մարմին քո զանպարտական՝ վիրալից արիւնաթաթաւ, և ՚ի բաց ես զմեղապարտ մարմին իմ կարիցեմ գդուել։ Դու լեղեաւ կերակրեցար, և քացախ տուաւ քեզ յարբուսին. և ՚ի բաց ընդդրիցեմ ես պարարել զձաշակ իմ։ Դու յանողոք ջրչարանս մեռանիս, և կարիցեմ ես խոյս տալ՚՚ի ձգանց։ Եթէ խնայեմ ինձ՝ քրիստոնեայս գոլով և պաշտօնեայ քոյին և ուխտիւք քեզ բոլորանուէր, ՚ի բաց կարացից կալ յատենի քումմ, զի՞նչ տալ համարս, և որպէս հանդուրժել ընդ խոցն ահագին ընդ կեանս քո և ընդ իմ։ Զի՞նչ իսկ ասեմ յատենի քումմ, այժմէն իսկ

՚ի բաց ՚ի քէն և յիս, և ոչ յամօթ լինել և ոչ զարհուրել. կամ մանաւանդ պիտոյ էցէ լինէ այլ ինչ քան զնաև առ՚՚ի զարթուցանել յիս զհոգի մեռելութեան, և առ՚՚ի խրախուսել՚՚ի ձգունս և արիանալ՚՚ի մարտ ընդդէմ անձին։ Ոչ ոչ, Տէր իմ, ոչ ևս այսուհետև կամիմ գիտել ինչ, որպէս երանելի առաքեալն քո, բայց զքեզ՚՚ի խաչ ելեալ. այս լիցի ամենայն գիտութիւն իմ. նկատել զքեզ՚՚ի խաչն, և նմանիլ քեզ մեռելութեամբ։

Յաղագս ընթերցման

ՄԱՍՆ Ա.

Մի՛ ի կարևորագոյն հրահանգաց լեալ է միշտ ընթերցումն և յամենայն ժամանակս հրամայեալ՝ ոչ կրօնաւորաց ևւեթ, այլ և ամենայն մարդկան առ հասարակ: Այնու յոլովք ի մեջ երթեալց եկեալ են յոտղորմութիւն և ի զեղջ. այնու մեանի և աճէ Աշմարիտ աստուածպաշտութիւն, և նոյն ինքն զօրավիգն է նմին և պահապան: Բազում են յոյժ օրինակք առ այս. նմին իրի յամենայն կարգս և յընկերութիւնս կրօնաւորաց բազում փութով և խնամով կալզեալ և սահմանեալ է ժամանակ փրկաւէտ կրթութեանս: Այլ զի են գրեան որք ինաստակաքն են, են որք անգամանագնք, և են որք օգտակարք, ընտրութեան սէաք են և խնաստութեան յընթերցումն նոցին: Է գրեան ինաստակաւ, որոց ընթերցումն արգելեալ է. և անգամանագնք՝ թողացուցեալք յընթերցումն, և են օգտակարք՝ կարգեալք և սահմանեալք յընթերցումն: Ըստ երից տեսութեանցս այսոցիկ մարթ է նկատել զանենայն պաշտաձեալսն յընթերցումն:

Կրկին աղբք են արգելեալ գրոց. կէսք որպէս զեղծուցիչք և ապականարարք բարուց, և այլք որպէս խանգարիչք հաւատոյ և Աշմարիտ աստուածպաշտութեան: Առաջինքն որք ապականեն զսէրս և վարակեն զայն ախտիւք, սովրաբար չեն յաձախեալ՝ի վանորայս, վասն որոյ և սակաւ ինչ է ասել զնոցանէ: Բայց գրեան որք խախտեն զհաւատս և մոլորեցուցանեն յոտղիղ շաւղաց Աշմարիտ աստուածպաշտութեան,

բազումք են յոյժ և ամենայն արթնութիւն և զգուշութիւն չէ բաւական վասն այնոցիկ: Կէսք յայնցանէ լի են յայտնի մոլորութեամբք և դատապարտեալք յեկեղեցւոյ: Առլք կասկածաւորք յոյժ՝ի վարդապետութիւնս, որոց թոյնն այնչափ առաւել ինաստակար է և բազմատանդ, որչափ ձարտարահիւս նրբութեամբ է ծածկեալ: Են և այլք հիւսեալ այնպիսի սիզբամբք և վարդապետութեամբք, որք բերին՝ի ծաղր և՝ի խափան հինաւանդ սովորութեանց և հրահանգաց բարեպաշտութեան, զի նորահնարք փոխանակեսցեն ընդ այնոցիկ: Այդպիսեաց գրոց ընթերցումն մարթ է ասել հաստատութեամբ թէ չար է և ինաստակար: Վասն որոյ զգուշովից յայնցանէ զընթերցումն յայտնապէս արգել եկեղեցի. և զայլոց ոմանց եթէ չետ վէճս բացայայտ խոսեալով յերկար վիճաբանութեանց, սակայն փոխան նորա պաշտօնեայք նորին հովուապետք՝ փոյթ և խնամ կալան զեկուցանել և հոլանել հաւատացեալ հոգւոց զթոյնն մատուսակեալ նոքօք:

Այդպիսեաց գրոց ընթերցումն ինաստակար է մանաւանդ դեռահասից, որոց թերակատար է հմտութիւն և դիւրըմբռնելիք են՝ի պատրանս. որք և՝ի էքմեզնս անձանց սովոր են պատճառել վայրապար՝ թէ յընթեռնուլն զայնպիսի գրեան, օգտակարացն ևւեթ և պիտանեաց որ՝ի նոսա ուշ եդեալ, զինաստակարսն՝ի բաց ընկենուն: Ջայս այսպէս պատճառեն նոքա հանգոյն ինն այնոցիկ՝ որոց ըմպիեն օշարակ թունագեղեալ. և համարիցին ոչ ինչ ինաս ընկալեալ, զի յըմպելն ոչ այլուամ խիք ուշ ունին, բայց քաղցրութեանն և դուռնոյն գեղեցկութեան: Իցէ թէ սակաւիկ մի և թունոյն ինաստակարութեան լինիին ուշակալ: Սակայն յորժամ զանտեսեալ

լինքեանց գուշակեսցեն նոցա այլք, զի՛նչ ուր սուցանէ իմաստութիւն, բայց հեռի և՛ ի բաց կալ յայնպիսեաց ընթերցուածոց, զի մի յանդգնասից ապականեալ վտանգեսցին: Բայց զայս ոչ այսպէս առնեն յոլովք. այլ հերևեալ գրոց ինչ և՛ ի ծաւալէն ընդ աչխարհ, խղճ լինին ունել զայնս. և թէ սոգտեալ և արգելեալ ևս իցէ գրեանն, չատ է և այն՛ ի յաւելուլ և ևս զանգուռթիւն նոցա չարասէր իմն հետաքննութեամբ, որ ընդակիզ է բնութեան:

Ընդ վայր լինին ջանք և հնարք խոհական առաջնորդաց, ջոալ մուտ այնպիսի գրենից՛ ի նեղքս՛ ի միաբանութիւնն. ոչ պակասեն հնարագիտութիւնք՛ ի գերև առնել զխոյեն նոցա և զաքնութիւն, և՛ ի ձեռս բերեալ՝ ընթեռնուլ ծածկաբար անգուլ պարապմամբ և որպէս ազնիւ կերակրով պարարել զոգիս իւրեանց:

Եւ այն իսկ առաւելագոյն զարմանաց է արժանի՝ զի արհամարհեալ զամենայն սուտ և ըստ հրապարակագոյժ դատապարտութիւն եկեղեցական իշխանութեանց, անխիղճ և անեղկիւղ առնի այդ ամենայն: Զի թէպէտ իշխանութիւնք ամենայն արգելուցուն միաբանութեամբ, թէպէտև նզովս և բանագրանս դիցեն՛ ի վերայ, ոչ ինչ զօրեացեն յաղթել ընթերցողացն յամառութեան և մոռահաճութեան: Եւ մինչ հոգւով Աստուծոյ բերկրին՛ յայն, մինչ օրհնութիւն Աստուծոյ իցէ՞ ընթերցմունս յայնպիսիս. և ո՞ կարիցէ հաւաստել և անեղկիւղ լինել: Ո՞չ իւրեանց իսկ խիղճ՝ ինքնագատ սոգտանէ զնոսա. բայց թէ չսոգտանէ՛ ի թանձրագոյն ոգիտութեան պատրանս ըմբռնեալ են արդարև:

Լաւագոյն յոյժ էցէ այնպիսեաց հպատակել երկիւղածութեամբ առաջնկայ կանոնաց և հաստատուն կալ՛ ի նոսին. Ա. Ընթեռնուլ

անհրաման զարգելեալսն յառաջնորդաց: Բ. Զմի միոյ՛ ի գրոցն ղրս ընթեռնուլ կամիցին, հարցանել զառաջնորդս: Գ. Զսալել և նուաճել զբաւան մարմոջ ցանկութեան ընթեռնլոյ զամենայն, որ գրենն և վաճառին յամախութեամբ՝ բաւական կարծելով զանձինս և կարողս՛ ի գատել, և զի ոչինչ պարտք և ոչ վտանգ արգելուցուն զինքնեանս յընթեռնլոյ: Դ. Ընթեռնուլ բնաւ գրոս կասկածաւորս, չատ համարեալ զի են ընդ կասկածանաց: Եւ ո՞ զոր ոչ գիտեցէ զի յոլովագոյնք՛ ի գրոց, որոց հետամուտն լինիմք՝ կասկածելիք են և կարի յոյժ կասկածելիք: Եթէ միաբանութեան ամենեցուն հպատակեալ էր օրինաց այսոցիկ՛ ի բաղուսս՛ ի նոցանէ ոզջ և անարատ պահէին հաւատք և հոգի հիմնագրի իւրեանց, և ոչ հերձուածք և կուսակցութիւնք՛ ի վեր երևէին՛ ի նոսա. որով և պնդագոյն ևս զոդիւս միութեան ամրացեալք՝ զերծ մնային չաղեոից խրամատելոյ նախնի կարգաց և հրահանգաց և կանոնաց պահպանութեան, որպէս և ձշմարիտ հոգւոյ աստուածպաշտութեան:

ՄԱՍՆ Բ

Են և գրեան անզանազան՝ ոչ չար և ոչ բարի, ոչ օգտակար և ոչ վնասակար հաւատոյ և բարւոյ վարուց. գրուածք հանճարեղք՝ որոց ոչինչ կցորդութիւն է ընդ վարդապետութեանց հաւատոյ և ընդ պարտուց բարեպաշտութեան, և ընթերցուածն նոցին՛ ի զբօսուսին է պարզապէս և՛ ի կարճել զձանձրոյթ երկայնութեան ժամանակի՝ առանց իրիք չահու կամ օգտի, բայց և առանց կասկածանաց վնասու: Ի բարեկարգ միաբանութիւնս, յորս երևի տակաւին անվթար

պահպանութիւն նախնի կարգաց և հրահանգաց՝ էր յաճախեալ ընթերցուն այդպիսեաց ընդու- նայն և անօգուտս գրոց, այլ հանապազորդեան պարապուն նոցա էր յատուածայինս, ի հո- գևորականս և յօգտակարս: Բայց ապա թոյլ տուուեալեամբ ինն, որ մուտ կալեալ՝ երթայ տա- կաւ և յաճախէ, յոլովք յառաջնորդաց կրօնից ոչ պատշաճ համարեցան խափել և սաստկու- թեամբ ընդդէմ կալ և արգելուլ ըզայն ի սպառ: Այսպէս լուսեամբ մեծաւորաց և որպիսեաւ ինն սովորութեամբ ոչ գիտեմ, համարի այն արդ յօրինս:

Բայց եթէ այնչափ տկար իցէ ոք և անբաւա- կան հրաժեշտ տալ ի սպառ ի սնոտի սփոփա- նաց այսի հոգւոյ, պարտ է նմա գոնեայ զգու- շանալ ի ծայրայեղ անչափութենէ և զեղծմանց ոչք գործին այնու յաճախս: Քանզի ի քաղցրա- նալ գամի սիրտ պարապմանն, ի նոյն սպա- ռին ժամք և ժամանակք, առ որ բաւական ճին արգելոք և տակաւ վայրկեանք, և լինի այն ղբաղումն հանապազորդեան և ի սովորութիւն. և ի բուռն ցանկութենէ նորին բերեալ հոգի, ոչ ևս գիտէ չափ և պայման:

Եւ այնպէս բանանայ ի նմա հեշտութիւն հաճոյական ընթերցուածոյն, մինչև թուանալ ի սովորական կրթութեանց իւրոց, և չկամիլ ի պարտուցն՝ զանց զկնսովքն արարեալ և զայլսն հարևանցի կատարելով: Եւ եթէ ոչ ըստ ամենայն ցանկութեան սրտի իւրոյ լիցի նմա ժամանակ ի տուընջեան, գողանայ ի ժամուց գիշերային հանգստեան, և ի յադուրդ ցանկու- թեան իւրոյ ոչ ինչ խնայէ ոչ չեղծումն կար- գաց և կանոնաց, և ոչ ի ոյժ առողջութեան անձինն:

Եւ չար ևս այն է՝ զի որ արտաքնովքն այնո-

քիւք ընթերցմամբ ձարակեալ պարարէ զմիտս իւր ընդունայնութեամբքն, և զայն առնէ իւր գործ և պարապուն կամ թէ ասել զբօսանս, տաղտկանայ տակաւ ի հոգևորականացն, և առ սակաւ մի էջս երկուս կամ չերիս վեր ի վերոյ ընթերցեալ՝ զի մի ի սպառ զանցառս երևեսցի, փութայ դառնալ յախորժականն իւր ընթեր- ցուն, և յայն թափէ բովանդակ զուշ իւր և զուրուշ, և ընտրելագոյնք ի հոգևորական գրոց, ձոխացեալք խմաստութեամբ, հանձարով և կրօնիւք, ոչինչ թուին յաչս նորա, և նորա- մանց ևեթ և համբակաց ի դեպ համարին զայ- նոսիկ ընթերցուն: Եւ աւաղելի ինն կործան- մամբ, ընդ որ հեծեծն խմաստունք, զընդունայ- նութեան բանս սնոտեաց՝ ըստ ասելոյ Աւաքե- ղին՝ գեր ի վերոյ համարի քան զստոյգ և զան- ւղլի վարդապետութիւնս, և զառասպելս քան զձշմարտութիւն: Ն՝ և փառս անձին համարի և պարծի ևս ընդ նրբիմաց հանձար իւրյընարել և ի գաւել զգեղեցկութիւն գրուածոց: Եւ մոլեալ զհետ այնոցիկ, ոչ ևս յուշ լինի նմա զի առն կրօնաւորի գիտութիւն մեծ և պատուա- կանագոյն խոնարհութիւնն է և յառաջադէմ լինել ի ձանապարհին Աստուծոյ և սրբել զանձն իւր, զոր ոչ գիտեն ուսուցանել նմա գրեանն իւր. սակայն յաչս նորա այլ ամենայն գիտու- թիւնք չարժեն ինչ առ նոքօք:

ՄԱՍՆ Գ

Է և ընթերցուն բարի և ոգեշահ, կարգեալ և պատուիրեալ յայտնապես. և երկու ինչ իրք ինդրին առ այն՝ զի իցէ օգտակար, ընտրութիւն կամ հանգամանք գրոցն և եղանակ ընթերցման: Ըստ առաջնոյն՝ չիք երկբայել զի յոլովք են յոյժ

մաւեանք հոգեշահք մի քան զմի պատուական-
նագոյնք, յորոց իւրաքանչիւր ոք ըստ բերելոյ
չօժարութեան սրտի իւրոյ կարէ ընտրել զոր
կամիցի: Ոմանց հաճոյագոյն են հրահանգիչքն,
այլոց՝ ոգեշարժքն և եռանդնոտք. կիսոց սիրելի
են պատմութիւնք և վարք սրբոց, որ օրինակաւ
յորդորեն և վառեն զսիրտս ի նմանութիւն, և
այլոց ճառք հոգեպատուք, որք չայտնաբանու-
թեամբ և պատճառաբանութեամբ յաղթահա-
րեն և համոզեն զմիտս. ընտրեսցէ ոք զոր և ա-
խորժէ՝ զի բարի է ամենայնին, միայն թէ արդա-
րև ընթիր լցեն և ողջախոհք ըստ վարդապե-
տութեան, զի օգտեսցի նոքօք և չատաչեսցէ ի
կատարելութիւն:

Բայց ընտրութիւն եւեթ ինչ ոչ օգնէ, եթէ
ոչ որպէս պարան է լեալ և ընթերցուին, զի
չայնմ հաստատեալ կայ ամենայնն, որպէս և
եւչայլ ամենայն իրս՝ եղանակն է որ տայ չարգ և
զօրութիւն իրին: Որ ընթեռնու չտապաւ,
վտանգ է թէ օգտեսցի և ոչ ինչ. զի ոչ ազդես-
ցեն ի նա բանքն և ոչ որպէս պարան է խեղա-
մուռ լեալ այնոցիկ. զոր օրինակ և ի կերա-
կուրս եթէ ոք ձեռով և չատապաւ հաս և խած
լինիցի, միասի մանաւանդ քան թէ օգտի: Նա-
զումն ինչ միանգամայն ընթեռնուլ անչափու-
թեամբ, խճողել է զմիտս. զորս ոչ կարացեալ
ամփոփել և զեռեզ պահել, խառն ի խուռն և
ընդ աղօտ կալցի ինչ յիչատակ, որպէս և չոլո-
վուիին կերակրոյ, որչափ և առողջարարք լ-
ցեն, ծանրացուցանեն զստամոքս և ոչ հալին:
Ընթեռնուլ առ ի քաղել բանս ինչ ի սուրբ գրոց
և զնոր և զանաւորը ասացուածս հարց սըր-
բոց, է փոխել զընթերցուին ի յուսումն. և
ամենայն ուսումն աչխատ առնել զմիտս, պար-
տասեցուցանել և ցնդել: Ընթեռնուլ զկայ

ռնչով սահել և ուշ ունելով գեղեցկութեան
ոճոյ բանիցն և չատակութեան լեզուին, այլա-
փոխել է զդիտումնն, և փոխանակ պատուղ
խնդրելոյ, ծաղկամբք զուարճանալ:

Յասացելոցս դիւրաւ է ի միտ առնուլ թէ
որպէս պարտ եղէ առնել զընթերցուին հոգևո-
րական և զոր կանոն ունել չայնմ: Ասյս է՝ նախ
ամբառնալ զմիտս առ Աստուած և առ նա ուղ-
ղելով զսիրտս, խնդրել զի լուսաւորու լիցի մեզ
հոգւոյն իւրով սրբով. զի Աստուած է որ տայ
զօրութիւն և ազդեցութիւն բանից, իւրոցն
մանաւանդ՝ եթէ չընթեռնուն և եթէ ի լսել:
Ր. Ընթեռնուլ հանդարտութեամբ և խելամուտ
լինելով բանիցն, զի քաջ տպաւցին ի միտս և չո-
ղիկ ինչեն ի հոգիս՝ որպէս ցօղ հանդարտ որ չինի
առ չինի հեղեալ ծաւալի ի խոր: Գ. Զօր ամենայն
ընթեռնուլ չափով, քանզի օգտակարագոյն է
սակաւն մտագրութեամբ, քան զբազումն վեր
ի վերոյ և առանց ուշադրութեան: Դ. Ի հան-
դիպել ազդու և ոգեշարժ բանից՝ զկայ առնուլ
և երկրորդել զընթերցուին, խորամուխ լինե-
լով ի նոսին, և յինքն գարձուցեալ զչէս չանձն
իւր մերձեցուցանել զբանին: Ընթերցուած այս-
պիսի՝ լիցի որպէս խոկումն, և վարժապետք
հոգևորական կենաց խմաստութեամբ մեծաս-
թելագրեն զայս անվարժիցն դեռ ևս անսովոր
եղելոց ի մտաւորական աղօթս, և որոց ցանկան
ուսանել և հրահանգիլ ի նոյն, որպէս զի այնու
օրինակաւ զընթերցուածն արարեալ, խորհուրդս
ինչ բարեաց գիցեն ի մտի: Ե. Զկայեալսն հա-
սարակաբար զընտիրս և զպիտանեգոյնս ի գրոց՝
ղորոց օգտակարութեանն անձամբ իսկ զփորձ
առեալ եմք, ընթեռնուլ վերստին: Վերոյիչ
եմն է՝ անխորհրդաբար ընկալեալ ի բազմաց՝
չընթեռնուլ երկիցս զնոյն գիրս՝ զի մի հաճոյա-

ցեալն յառաջնում ընթերցման, յերկրորդումն լեցի 'ի տաղտուկ: Ընտիր և պիտանի մտեանք՝ բովք լին են բազմահարուստք անսպառ օգտու-թեանց:

Այսքիկ են կանոնք և հրահանգք կարևորք յընթերցումն հոգևորական. և մեզ անկ է զայս-պիսի մեծազօր և զառաձեռնպատրաստ օգնա-կանութիւն՝ 'ի սրբութիւն անձանց մերոց 'ի վար արկանել:

ՕՐ ՈՒԹԵՐՈՐԴ

Յաղագս նորոգ կենացն Քրիստոսի 'ի յարութեան

ՄԱՍՆ Ա

Քրիստոս էջ 'ի գերեզման՝ ոչ առ 'ի մնալ անդ, և մտանել իսկ իւր ընդ օրինաց մահու, էր առ 'ի յաղթանակել ապա 'ի վերայ մահու, և նուաճել զնա ընդ իշխանութեամբ իւրով: Այդ հրաշափառագոյն այն եղև 'ի յարու-թեան աստուածորդւոյն, զի անճառն զանճառ յարոյց: Սաղմոսերգուին կոչեցեալ էր զնա կանխաւ «ի մեռեալս ազատ». այս ինքն զի մեռանելոց էր որպէս կամէրն և յորժամ կա-մեր, և թօթափելոց էր զկապանս մահու 'ի սահմանեալն պահու, ոչ ինչ նուազ կարող 'ի յառնել քան 'ի յարուցանել զայլս. և կատա-րեցաւ այս յերրորդումն աւուր յետ չարչա-րանացն: Առանց իրիք օրինականութեան՝ աս-տուածային ևեթ սքանչելահրաշ զօրութեամբն, զոր 'ի բազում այլս ցուցեալ էր յայնքան գէպս, 'ի հասանել ժամուն վաղ քան ընդ առաւօտն, բացաւ գերեզմանն՝ ուր մարմին նորա էր վա-կեալ, ինքն զայն կենդանացոյց, և եհան 'ի ծո-ցոյ երկրին. եկաց 'ի մէջ զինուորացն՝ որ պա-հէին զնա, և այնպէս զնոսա զարհուրեցոյց, զի ոչ ոք 'ի նոցանէ իշխեաց զդէմ ունել նմա և ոչ իւիք. «Ո՞ր է մահ յաղթութիւն քո. ո՞ր է

մահ խայթոց քո. ես եղէց քեզ 'ի մահ »: Յետ տարածանելոյ զնշխանութիւն քո Թողացուցեալ լինէին, և ածելոյ զՏարուածս քո մինչև յիս, պարտ է զի աեղն ասցես արդ ակամայ գերադոյն իշխանութեան իմում: Ովսէի մարգարէն են բանքս, զորս Առաքեալն 'ի կիր առնու, և եկեղեցի յարէ յաստուածորդին յաղթական մահու. և այսքիկ ուսուցանեն մեզ որով զօրութեամբ գործեաց Քրիստոս զայս բութեանն իւրոյ զնեծ աքանչելիս:

Ի Թանձրագոյն քան զամենայն մելորութիւնս լինէր ինձ անկանել և 'ի յանդգնութիւն անբեռելի, եթէ կարող զանձն համարեի յաանել ինձ էն ըստ հոգւոյ և ըստ Աստուծոյ: Տկար այսպիսի գոլով' զնմրդ իշխել կարեցեմ, յուսալ առանց շնորհացն Աստուծոյ յաղթել չար սովորութեանց իմոց, և ուղղել զամենայն թերութիւնս իմ: Ոչ օգնէ ինձ ապա օրինակն Քրիստոսի 'ի կանոն, և չունիմ ինչ անդ համեմատել ինձ և ոչ ինչ: Այլ շնորհքն այն Աստուծոյ, սկիզբն կարևոր և անհրաժեշտ, յոր կարեմ ողորմութեամբն իւրով վաստհել, ոչ միայն չհրաժարէ լինէն' այլ և յաճախէ զնոգս իւր 'ի վերայ իմ, և առաւել քան յամենայն ժամանակս' 'ի սուրբ աւուրս յայսոսիկ: Բայց և այն է հաւասար' զի պարտ է ինձ գործակից լինել շնորհացն, գործել ընդ նմին. և ըստ այսմ' ինձ անկ է կատարել զգործ յարութեան իմոյ ըստ հոգւոյ, և զարբութիւն անձին իմոյ:

Յարութիւնն Քրիստոսի եղև նմա 'ի յաղթութիւն. կամիմ զի և իմս լիցի ինձ 'ի յաղթութիւն. որպէս մարմին Փրկչին երկրպագաեալ էր 'ի դերեզմանի, են և իմ պատանք' զորս պարտ է ինձ լուծանել, յօժարութիւնք բնութեան իմոյ և սխալք: Որպէս մարմին նորա ծածկեալ էր վիմով մեծաւ, է և 'ի վերայ իմ վէմ ծանրակիր, հակումն մարմնոյ իմոյ, և յուղութիւն' յորում կեցի ընդերկար, և եղև ինձ այն սերկրորդ բնութիւն: Շուրջ զմարմնով նորա պահ ունէին թշնամիք' զդոյշ միշտ կացեալ, զի մի ոք բարձցէ զայն. և ինձ, թող զաներևոյթ թշնամիս փրկութեան իմոյ և կատարելութեան, որ հսկեն և պահ ունին անձին իմոյ զգուշութեամբ, քանի՛ և այլ թշնամիք են երկիւղալիք: Տեսութիւնք մարդկայինք, օրինակք, ծաղրածութիւնք ինչ և զրոյցք, բարեկամութիւնք ինչ և կցորդութիւնք, սովորութիւնք ինչ, յաձախութիւնք վտանգաց, և զիջմունք, յորոց գժուարին է ինձ խուսել. և համառօտիւ' որ ինչ ինձ եղև ցարդ խոչ, և ոչ զօրեցի կոխել զայն: Այլ ընդդէմ այս ամենայն գժուարութեանց և խոչից' Քրիստոս որդին Աստուծոյ ոչ յամեաց 'ի կատարել զնոստուածն իւր, զոր խոստացաւ առաքելոյ' յաւնել և երևել նոցա. իսկ ես առանց հեռացոյնս գնալոյ, յայսմ իսկ առանձնութեան' զոր մերձ եմ 'ի վախճանել, քանի՛ խոստմունս արարի Աստուծոյ, քանի՛ առաջադրութիւնս և ուխտս, կամելով կեալ այսուհետև խնդապէս և ճշմարիտ յեղափոխութեամբ յարութեալ ըստ հոգւոյ: Ժամ է արդ ցուցանել զնաւատարմութիւն իմ, և յայսմ օրէ գնել 'ի գործ որ ինչ հաստատեցի 'ի մտի, և որ ինչ խոստացայ: Եթէ հաստատութեամբ եցէ իմ առաջադրեալ, գտեցայց ըստ գործոյ: Ա՜հ, Տէր, լքցէ՛ արիութիւն իմ, ուր անկ է ինձ զօրացուցանել զայն. դու ոչ լքանես զնս, Տէր իմ. վայ ինձ եթէ ես լքից զքեզ:

ՄԱՆՐ

Քրիստոս՝ ի յաւետից իւրում հեթե յանձին կեանս բոլորովին նոր. զի եղեն յետ այնորիկ կեանք նորա փառաւորեալ, և այլազգ ամենևին յայնմանէ՝ զոր մինչև ցայնժամ վարեցին յերկրի: Աստուածորդին նեղբոյ երբեմն կացեալ ամենայն աղետից աննչան և աղքատ կենաց, ամենայն նախատանաց և ցաւոց անողոքմագոյն չարչարանաց, երևեցաւ ապա լուսափայլեալ այնպիսի փառաւք, զի պայծառութիւն մարմնոյ նորա արեգակնայինչ յաղթեր ճառագայթից: Յառաջին կեանս տկար էր մարմին նորա և զգալի, ընդունակ ամենայն մարդկային կարեաց. այլ յերկրորդումն զգեցեալ է այնպիսի զօրութիւն, որ գեր՝ ի վերոյ կացուցանէ զնա ամենայն տկարութեանց բնութեանս մերոյ, և աներդիծանելի յամենայն նեղից հալածչացն իւրոց: Պայծառութիւն նորա չացուցանէ զաչս. թեթևութիւն նորա յական թօթափել ածէ զնա տեղւոջէ՝ ի տեղի, և ոչ ինչ խափանէ զնա վասն նրբութեանն, որ առնէ զնա որպէս մարմին հոգևոր. Թափ անցանէ ընդ օդս, ընդմտանէ ամենայն ուրեք. որպէս զի մարթէ է ասել միւս այլ խորհուրդ այլակերպութեան լեալ անդ՝ ի Քրիստոս բնութապահակ առաւել քան զթաքսօրականն հրաշափառ:

Եթէ կամի զի և յարութիւնն իմ լեցի խաչպէս, և որպէս պարտ է՝ կատարեալ, պարտ է՝ զի այլակերպեսցէ և զնա, և արասցէ յիս զնոյն յետպիսութիւնս: Եւ զինչ իսկ կայցէ յամենայն կեանս իմ, որ չեցէ կարօտ նորոգութեան և փոխոխութեան: Սուրբ նորոգութիւն նեղբեին և արտաքին. նորոգութիւն նեղբեին ըստ

հոգւոյ, կարևորագոյն և գժուարագոյն: Դիւրին լեցի ինձ յետ առանձնութեանս՝ զգուշանալ յարտաքնոց ինչ իրաց, բերել յանձին առաւելագոյն համեստութիւն, եղանակ և կերպարանս առաւելագոյն երկիւղածութեան. այլ զինչ օգնէ այս ամենայն, եթէ սիրտ իմ չեցէ նոցին համեմատ, կացեալ մնացեալ միշտ նոյն: Պարտ է ինձ ապա զնջես նորին կարգաւորել, մաքրել զզգացմունս իւր, ուղղել զտեսութիւնս և զգեստաւորութիւնս, խոնարհել զվերքացումն և զամբարտաւանութիւն, քաջալերել զդիւրութիւն և զվատութիւն: Պարտ է ինձ լուծանել զբազում խաբէութիւնս մտաց և զառանցանս՝ յորոց ոչ զգուշանայի, և՝ ի բաց թօթափել զյարմանս դատղնաբեայս, որ թէպէտև անմեղք թուին՝ այլ չեն յԱստուծոյ, և ոչ ըստ Աստուծոյ, և զերծուցանել զսիրտ իմ յանձնասիրութենէ անտի՝ որ սիրէ չիս, և որում գերեալ է սիրտ իմ: Միանգամայն ասացեալ, պարտ է ինձ ունել սիրտ բոլորովին նոր:

Ի նորոգմանէ ասի սրտի յառաջ գայցէ նորոգումն արտաքին. պատկառ կացից միւսմի՝ ի կանոնաց իմոց, լցից հաւատարմութեամբ զհրահանգս իմ հոգևորս. որչափ սարսուցին գնացք իմ զմիաբանութիւն եղբարցս, և եռուզ նոցա պատճառս գայթակղութեան, այնչափ եղէց նոցա ի չինութիւն, յորժամ տեսանիցեն՝ զի այլով զգուշութեամբ և բոլորովին այլազգ եռանգեամբ բերիմ՝ ի գործ. ամենայնի զանձն՝ ի նեղբոյ արկից, զամենայն ինչ անտես արարից:.. Զինչ է զոր ասեմս, Տէր իմ. լցէ՛ թէ յաջողեսցի լինձ այսպէս. ասաղ. այս խմաստք չեն ինչ գժուարինք առ ոտս սեղանոյ, և՝ ի մտածութեան՝ յորում չնորհք քո զսիրտ իմ չարժեն. այլ՝ ի գործել անդ չեն որպէս խոր-

հել պարզաբար, կամ առանձնանալ: Գոնեա այս նուագ առանձնութեան իմոյ լինի հիմն նորոյ կենացս, և ելից ի միայնութենէս սուրբ առաքադրութեամբք. մեծ լինի ինձ, եթէ քաջ տպաւորեսցին այնք ի սրտի իմում: Նորոգեցից զայնոսիկ օրըստօրէ, և զօրհանատաղ յաւելցեն այնոքիկ նորոգել զիս:

ՄԱՍՆ Գ

Ցարութիւնն Քրիստոսի լինելը Թերակատար, եթէ ընդ նորոգ և փառաւորեալ կենացն չառնոյը և կեանս անմահ. « Եթէ Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց, այսուհետև ոչ մեռանի »: Պատգամ առաքելական, ի բազմայոլով գարուց հետէ կատարեալ, որ և կատարեսցի ի յաւիտեան: Մեռեալքն յարուցեալք ի գերեզմանոց յանշնչանալ աստուածորգւոյն ի վերայ խաչին, յարեան առ Ժամանակ մի, կայլին առ կաւին ընդ իշխանութեամբ մահուն. այլ Քրիստոս, անդրանիկն մեռելոց, եւ միանգամ ի գերեզմանէն, ոչ ևս մնանել անդր. որպէս և մոցն իսկ ոչ յաւիտեան:

Երանաւէտ անմահութիւն՝ որ յանդիման առնէ ինձ զմի ի կարևորագոյն առաքինութեանց, միանգամայն և դժուարագոյն և չքնաղ, ասեմ իսկ զյարատևութիւն: Սակաւք եղեն յոյժ, որ ոչ զաւուրս ինչ և զեօթնեակս իսկ ոչ օգտիցին յառանձնութենէ. ելանեն անտի բոլորովին նորոգեալ, և որպէս թէ յարուցեալ: Որ ինչ խոստանանն Աստուծոյ, կատարեն. ոչ ի բանս զկայ առնուն, և ոչ ի խորհուրդս, այլ ի գործս անդր բուռն հարկանեն: Այլ այս յարութիւն, այս գարձ, ոչ ընդելիկար սեւէ: Ոչ ապաքէն զայսորիկ բաղում անգամ առի զփորձ.

առանց դատելոյ զայլս, ոչ յիս իսկ տեսի յաճախ օրինակս: Զո՞ր պատուղ քաղեցի յայնքանեաց առանձնութեանց, և զի՞նչ խոհր է յիս արդ յանցելոց ամաց. Թերևս ցանկալի իսկ եղէ, զի եցեմ արդ զէթ այնպիսի՝ որպիսի երբեմն էի. զի փոխանակ ի լաւ անդր յառաջադէմ լինելոյ, Թերևս յետս ընդգէմ ամ ըստ ամէ եցեմ ընթացեալ, և առաւել յուլացեալ:

Իցէ այն որպէս և է, այլ ուսայ է ինձ, զի այսպէս սակաւ օգտիմ ի սուրբ հնարից աստի, զոր սովորաբար ի կիր արկանեմ: Իբր ոչ եթէ յիւրաքանչիւր նուագի չեցեմ լուսաւորեալ ի Տեառնէ և չարժեալ. զի քանիցս անգամ անկեղծ զղջմամբ և ջերմեռանդն աղօթիւք ասացի ի սրտէ ընդ սաղմոսերգուին. « Ահա՛ սկըսայց »: Ահաղ, ասացի, և սկսայ իսկ. այլ ոչ կատարեցի: Ինձն քննութեան ընկրկեաց զիս յառաջին գնացս իմ, և ընկէց զիս ի նոյն թուլութիւն: Նոյն արգելօք և յայտ նուագի ինձ դիպեսցի. Թուի ինձ զի արդ բաւականապէս յօժարեալ եմ ի բարին, այլ ցո՛ր վայր արգելօք տեսեսցէ յիս այս յօժարութիւն. ո՛ր չյոյս եցէ ինձ հաստատուն կալոյ և յարատևելոյ: Նա աւանիկ ընդէ՞ր ոչ յուսայցեմ. Թէպէտև յերկրկելք եցեն կեանք իմ, այլ բաղուկ Տեառն ոչ է կարճեալ, և ոչ աղբիւր ընորհաց նորա սպառեալ. եթէ կամք իմ իցեն յողդողդ, կայ րող է Տէր հաստատել զայն, և ի նոյն պարտ է ինձ զամենայն գուն գործել այսուհետև: Եթէ փոքր մի քննել կամիցեմ որ եցէ լեալ սկիզբն վերստին կործանման իմոյ, դիւրաւ ի միտ առնում. արդ այսմ պարտ է ինձ դնել կարգ: Ընդ առաջ ելցեն ինձ դժուարութիւնք, այլ Տէր օգնեսցէ. եթէ ցարդ արիագոյնս պահեր ազեալ էր իմ ընդ այնոսիկ, վայելէի արդ

'ի վաստակս իմ և յարգասիս ձգանց իմոց: Զիցէ արդ ժամ՝ բովանդակութեամբ ձեռն 'ի գործ առնելոյ, խորհուրդ հաստատուն 'ի մտի դնելոյ. անցանեն գնան ամք, թերևս մերձագոյն քան զոր խորհիմն իցեմ 'ի վախճան: Աւելի՛ ինչ իցէ տալ Աստուծոյ որ ինչ ինայ ինձ ցայն վայր տալ. չիցէ ոք ընտրեալ, բայց որ 'ի սպառ յարատևեցէ:

ԱՂՕԹՔ

Կատարեա՛ յիս, Տէր, զյաղթութիւն քո. 'ի կիր արկ, առ 'ի հանել զհոգի իմ 'ի գաղջութենէ աստի՝ յոր անկեալ դնիմ, զնոյն զօրութիւն՝ որով հաներ 'ի գերեզմանէ զմարմին քո, ուր ածեալ էր զնա մահ: Զիցէ՛ ինձ մարթ ասել զի և աստ հանգոյն ինն մեծի սքանչելեաց իցեն պէսք: Ո՛ միայն զօրութիւն, առանց ուրուք օգնականութեան, յարոյց զմարմին քո. այլ որպէս զի յարիցէ հոգի իմ ընդհօք քովք, կամիս յինէն ձիգն, կամիս զի եղէց գործակից: Աւրժան և իրաւ, Տէր իմ, ձգնեցայց առ այս, և ջանացայց ըստ կարի առ 'ի յառնել, որպէս ե՛ ինձ օգուտ և կարևոր: Յարութիւնս այս սահմանեցէ զնս 'ի նոր կեանս, այլ ո՛չ իմ են յանցանք՝ զի նոր պատահէն ինձ կեանքն այն. ո՛չ 'ի բազում ամաց հետէ պարտ էր ինձ լինել սովորեալ 'ի սուրբ յայն կեանս:

Գոհանամ զղջմութենէ քումմէ, զի դեռ ևս ե՛ ինձ ժամանակ ընդգրկելոյ զայն, և հաստատեալ ե՛ իմ զայն 'ի մտի: Այո, Տէր իմ, պարտ ե՛ զի կենդանասցի յիս ամենայն ինչ յայսմհետէ, հոգի իմ, սիրտ իմ, ամենայն գործք իմ. պարտ ե՛ զի լեցի յիս յարութիւն և նորոգութիւն ամենայնի. մի ինչ կիսամանեայ,

մի ինչ կէս 'ի կէս. ոչ ևս խորհիմ յապագայն, ոչ ևս վհատիմ թէ գուցէ չլինիցիմ որպիսի եմս արդ, թէ գուցէ չլինիցին յիս նոյն իմաստք, թէ գուցէ ոչ միշտ գնացից այսպէս: Եթէ յիս հայիմ, ակարութիւն բնութեան իմոյ յապուշ հարկանի. և որպէս զօրեցից յաղթել. այլ դու, Տէր, ոչ անտես արասցես. և եթէ վհատիմ զնիզն, լեցի ինձ այնուհետև առաւել ևս վստահել 'ի քեզ և յամենակարող զօրութիւն քո: Ոչ ժխտեացես ինձ զայն, 'ի դիմել իմում առ քեզ 'ի խնդիր նորին. և իմ չէղեց բաւական քոյով զօրութեամբ: Մի, մի խորհեացուք յոյժ յապագայն, այլ 'ի մերձակայն ուշ դիցուք. զի մերձակայն պատրաստութիւն է ապագային, և հանդերձէ զօրբութիւն նորին:

Յաղագս համբարձմանն Քրիստոսի

ՄԱՍՆ Ա.

Սկիզբն արարի առանձնութեանն մտածելով վասն որոյ երաց սուգիւաչն եմ, և համբարձումն Քրիստոսի տայ ինձ պատճառս մտածելոյ և արդ՝ ի նոյն. զի ասասուածորդին՝ի վառաւորեալ համբարձման իւրում ցուցանել նախ՝ ո՛ւր պարտ է մեզ ուշ ունել, այսինքն յերկինս: Յետ յարութեան իւրոյ երբեք երբեք երևեր աշակերտացն, է զի ոմանց, և է զի այլոց՝ այլ՝ի վերջնում աւուր, յորում սահմանեալ էր մեկնել յերկրէ, ժողովեալ զամենեսին, կամեցաւ՝ զի տեսցեն զնանել իւր յաչխարհէ դառնալ առ հայր: Եւ զի՞նչ այսու տայր նոցա՝ի միտ առնուլ. դիտաւոր՝ի խորհրդոյ իւրոյ էր քաջ խելամուտ առնել զնոսա այսմ՝ձեի Ձէմարտութեան, զի յետ անցուցանելոյ՝ի մահկանացու կենցաղս յայս ամ Թուով յերկինս լինելոց է կէտ ընթացից մերոց, և զի՝ի մերձակայս ժամանակի պարտ է մեզ զամենայն խորհուրդս մեր և գոյս ուղղել անդր:

Խրատս բազումս յաղագս այսորիկ տուեալ էր նոցա, այլ չէ և Թուէին քաջ խելամուտեալ. կարևոր էր նոցա յետին ինն խրատս, համառօտ՝ այլ քան զամենայն Ճառս բանից համոզիչ. առ այս կացոյց զնոսա ականատես համբարձման իւրոյ, և յանդիման աչաց նոցա վերացաւ յերկինս՝ ուր կոչէրն և զնոսա: Ամենայն տարակոյս նոցա լուծաւ՝ի տեսլէն յայն. ամենայն որ լինչ զարքայութենէն Աստուծոյ ասացեալ էր նոցա Քրիստոս, նկարագրեցան կենդանի՝ի միտս նոցա, զի արքայութիւն այն էր բուն հայրենիք նոցա, զի անդ վասն իւրաքանչիւրոց՝ի նոցանէ էին օթեւանք, զորս երթայր լինքնին պատրաստել. զի պարտ էր նմա յառաջագոյն երթալ անդր որպէս գլուխ նոցա, և զի նոցին ևս պարտ էր ապա գնալ որպէս անդամոց զհետ նորա. և զի վասն այսորիկ Թողլոյր զնոսա յերկրի որպէս՝ի Ճանապարհի, և պարտ էր նոցա համարել զանձինս որպէս օտարս՝ի վերայ երկրի և անցաւորս: Այս ամենայն խորհուրդք զարթեան՝ի միտս նոցա, և այնպէս չարժեցին զսիրտս նոցա, զի արհամարհ եղև նոցա աշխարհ՝ի սպառ, և ոչ ևս այնուհետև յայլ ինչ ուշ ունէին՝ բայց՝ի հանդերձեալ կեանս, զորոյ զհասասի գրաւական ունէին՝ի վարդապետն իւրեանց:

Արդ այս ամենայն ոչ լինչ նուաղքան զնոսա և ինձ պատկանի. և զամենայն առհաւատչեայս, զորս ետ նոցա Քրիստոս, ետ և ինձ անդամին: Յերաւել ապա յերկինս պարտի լինել ամենայն ակնկալութիւն իմ, և չիք ինձ այլ ուշ նպատակ: Խոստովանիմ զայս, զի մանի է հաւատոց. այլ որպիսի՞ ինչ են հաւատք իմ: Եղի՞ արս խելամուտութիւն այնպիսի՝ որ զգալի առնի ինձ զայն, որ գրաւ է զհոգի իմ և տիրէ նմա բովանդակ: Եթէ քաջ հաստատեալ եցեմ յայս գլխաւոր մանն կրօնից, և քաջ այսմ խելամուտեալ, ընդէ՞ր ոչ աստի խնամատարեմ՝որ ինչ կարգ ըստ կարգի զհետ գան:

Զի՝ի խոստովանել միանգամ զայս Ճշմարտութիւն, ոչ ևս պարտ է ինձ ուշ ունել այլուր, բայց յերկինս, և յամենայնի և քան զամենայն ինչ յանդիման աչաց ունել զերկինս, և որպէս Առաքեալն ասէ. «Ունել զքաղաքավարութիւն մեր յերկինս»: Ամենայնի որ ինչ անցք անցանեն

'ի վերայ երկրի, և որ յերկիր պատկանին, թէ- պէտև մանաւանդ և այնոցիկ գոհանիցիմ, ոչ ինչ վտիտ պարտ է ինձ ունել թէ այսպէս կամ այնպէս պատահիցեն, առ ոչ ինչ պարտ է ինձ համարել զամենայն: Զի եթէ անցք և եթ է երկիր, զինչ օգուտ ինձ յամենայնէ՝ որ ինչ 'ի սմա տեսանեմ. տեսանեմ վտռտվմունս, տեսանեմ մեծութիւն և շուք աշխարհական, բաղդ և յաջողութիւն՝ որոց պայծառութիւն շլացուցանէ զաչս: Ցիմուա իսկ պայմանի, 'ի կրօնաւորականս կարգի, տեսանեմ աստիճանս, աւագութիւնս, պատիւս, զանազանութիւնս պաշտամանց՝ որ թէպէտև աննշանք ըստ աշխարհի, սակայն զարթուցանեն երբեմն զգացմունս կենցաղականս, և խնդիրս նիւթական օգտի. այլ յայսմ ամենայնի զինչ ասել էցէ ինձ, բայց զոր մեծ ոմն 'ի սրբոց ասէր. « Ա՛յս ամենայն չէ Աստուած իմ»: Պարտ է ինձ լինել առ այս ամենայն որպէս թէ անզգայ: Որպիսի՞ աղատութիւն սրտի չտայր ինձ այս պատրաստութիւն. կէի որպէս ճշմարիտ կրօնաւոր, զի լինէր ինձ կեալ որպէս ճշմարտապէս մեռեալ աշխարհի, և որպէս զմի յանապատականաց հին օրինաց « զորս ոչ արժէ աշխարհ »: Զինչ էր նոցա հանապազօր պարապուն, բայց խորհել յերկինս, և անդր զնդաս իւրեանց ուղերձել: Ա՛յս էր նոցա գործ յանապատի և 'ի փառաբան լերանց. զինչ այլ պարտ էցէ և ինձ առնել 'ի միայնութեան իմում և 'ի տան Տեառն:

ՄԱՍՆ Ը

Զէր բաւական լինել երկնից մեզ նպատակ, եթէ երանութիւնն խոստացեալ մեզ անդ ոչ ընդ զամենայն բաղձանս մեր: Ա՛յլ երանութիւն

այն է ամենակատար, զի հաստատեալ է 'ի ժառանգութիւն գերաբուն բարւոյն, որ է Աստուած: Վասն որոյ քանի փոյթ ցուցանէր Փրկիչն աշխարհի, և քանի՛ եռանդն դառնային յարքայութիւն իւր. որպիսի՛ կերպարանս այր զայնմանէ Աւաքելոցն 'ի պատրաստութիւն զնոսա 'ի հրաժարումն իւր' 'ի նոցանէ, և 'ի մխիթարէն զնոսա վասն ոչ ևս կարելոյ նոցա տեսանել զերեսս իւր: Յանդիման առնէր նոցա զերանութիւնն զայն որպէս հանդիստ անյեղլի, յորում հանդերձեալ էին լինել զերծ յամենայն խռովութենէ և յամենայն չարեաց կենցաղոյս. որպէս փառս յաւիտենական, զոր ոչ ինչ գեղք, և ոչ յեղափոխութիւն ինչ կարէր բառնալ 'ի նոցանէ. որպէս պարտութիւն ամենայն բարեաց, յորում ոչ ինչ պակասէր նոցա, և յորում հանդերձեալ էին յագենալ լիապատար: Ի գնալ է ևս հաւատալ, զի յորում աւուր մեկնէին 'ի նոցանէ՝ եցոյց նոցա զայս ամենայն խորհուրդս, և հաստատեաց նոցա զկոստմունն մեծամեծս. որպէս զի յետ բառնալոյ զնա ամպոյն յաչաց նոցա՝ կալին նոքա տակաւին 'ի լերին անդ. և ոչ կարէին գադարել 'ի հայելոյ ընդ երկինս, և ոչ խոնարհել զաչս իւրեանց յերկիր, զմայլեալք 'ի գեղ երանաւէտ այնր օթևանին. զոր չև ևս տեսանէին, այլ լեալ էր սիրտ նոցա նովաւ, և միայն արժանի թուէր այն ուշադրութեանց:

Նոյն այն արքայութիւն սահմանեալ է ինձ, և նոյն այն փառք. չկարեմ ունել արդ զայնմանէ՝ բայց աղօթ իմն ծանօթութիւն. զի ոչ ոք 'ի մարդկանէ էտես կամ լուաւ, և 'ի սիրտ ուրուք ոչ անկաւ, զոր պատրաստեաց Աստուած ընտրելոց իւրոց. այլ հաւատք ուսուցանեն ինձ զայն ըստ բաւականին: Ա՛յս ևեթ տեսութիւն

հաւատոց, և այս յոյս բարձր՝ զոր ընծայէ ինձ, Տուն ինձ զօրութիւն հրաժարելոյ յամենայն բարեաց աշխարհի. Թողի աշխարհայնոց զամենայն ժառանգութիւն երկրաւոր, և ընտրեցի «զման բարի» որպէս զՄարիամ: Այլ յետ այսր ընտրութեան, և առնուն կոխելոց զամենայն՝ որ ինչ ժառանգէի կամ ժառանգել կարէի երկրի, չկարեմ աւազելի, եթէ թողեալ զերկինս՝ որ միայն պահէ ինձ, պարապեմ այլում իմիք, և ի զգացումն այլոց երից գրաւիմ:

Բայց սակայն այսպիսի են գնացք իմ, այսպիսի գործք. զի ո՞չ ապաքէն միտք իմ և սիրտ երկրաւորս տակաւին կցեն բնաւեալ: Ո՞չ բերին յաճախ մտագրութիւնք իմ և խղճք և ամենայն պահանջմունք: Հրեշտակք կշտամբեցին զառաքեալս, վասն կարի ընդ երկար ընդ երկինս պչրացեալ կալոյ նոցա, և հարկ լինի եղև բռնի վնասա՛ի խոր հնացմանէն սթափեցուցանել: Աւաղ, այլազգ յոյժ պարտ է ինձ զանձն իմ կշտամբել, պարտ է ինձ ասել ցիս ընդ հակառակն. Զի՞ կաս պչրացեալ՝ ի մնոտիս՝ յորս չէ արժան քեզ յարել, և որք ոչ կարեն զքեզ յագեցուցանել. հաստատագոյն երանութիւն և հանգիստ լիուլի անկ է քեզ: Այլ ո՞ւր իցէ այն. ո՞ւր ցարդ խնդրեցի. և գալ՝ արդեօք, և կարծեցեմ գանել երբեք. անցին կեանք իմ, և անցցեն՝ եթէ ոչ բացիւ զաչս իմ, ՚ի մնոտի զբաղանս. զի զի՞նչ այլ պարտ իցէ կոչել զամենայն, որ ինչ մանաւանդ՚ի կարգի կրօնաւորութեան բախտ ինչ և արգասիք իցեն դուզնաքեայք: Եթէ իցեն և պարզաբար զբաղանք. զի չէզի՞ն ինձ յաճախ, և չիցեն և այլոց բազմաց յաղմուկ և ի կնճիռն, որ ՚ի վերայ ածեն իսկապէս տառապանս: Փանի՛ երանեալ է այր,

որ աստուածային յաչխարհէ ազատ յամենայն մարդկային և անցաւոր բարեբաստութեանց՝ հառաչէ ցհետ հանդերձելոցն, և կանխէ առնուլ զնաշակ աստուածայնին օծութեան և զտուրբ քաղցրութեան:

ՄԱՍՆ Գ

Ծանուցեալ յոր ինչ կոչեցեալս էք, և որ երանութիւն առաջի կայ մեզ, ծայ արդ գիտել՝ որո՛վ պայմանաւ խոստացեալ է մեզ գերագոյնն այն երանութիւն, և ընդ որ ձանապարհ կարիցեմք հասանել այնմ: Արդ զայս ուսուցանէ մեզ աստուածաւորդին՝ ի խորհրդեանս յայսմիկ. ելանէ յերկինս, և մտանէ անդր որպէս ՚ի տեղի սահմանեալ յիւրմէ. զի առ՚ի սահմանել զայն՝ հարկ եղև նմա զարիւն իւր հեղուլ և փոխանակել զկեանս: Ձեմարտութիւն՝ զոր յայտնապէս ցուցանէն մեզ սպիք վիրացն, զորս պահեաց ՚ի սուրբ և ՚ի փառաւորեալ մարմնի իւրում՝ ՚ի յաղթանակել իսկ անդ: Զորս ցուցանելով մեզ՝ ասէ. Ահա գինք արքայութեան իմոյ, զոր երթամ ժառանգել, և ահա որպէս և ձեզ պարտ է զայն սահանալ, և որով պայմանաւ ժառանգել. զի ոչ այլազգ քան զիս լինիլ ձեզ ուրեք զայն:

Ո՞ կարասցէ տրտնջել ընդ այսպիսի բանաւոր օրէնս, և ո՞ կարասցէ ցանկալ պատկին Քրիստոսի, առանց արժանի լինելոյ այնմ հանգոյն նմին: Սակայն զի՞նչ գործեմ ես վասն յաւիտենական երանութեանն այսմիկ. ոչ եթէ վաթեմ կենցաղ՝ որ չիցէ ընդդէմ զգայութեանց և խիստ ըստ բաւականին. զի ամենայն կեանք կրօնաւորական ինքնին իսկ խաչ է: Այլ եթէ ոչ սոսկապէս վասն Աստուծոյ, և վասն վարձուցն՝ զոր

պատրաստեալ է ինձ, կրեմ զնաչս զայս, թէ-
պէտ և կրնեմ, այնպէս է վասն երկնից ալքա-
յութեան՝ որպէս թէ չկրնեմ. թէպէտ և ձըզ-
նիցեմ, այնպէս է՝ որպէս թէ ոչ ձգնիցեմ, զի
ոչ գնամ զհետ Քրիստոսի, և անհնձք սրբոյն
Բեռնարդոսի անկանին՝ ի վերայ իմ. « Անհնձեալ
որ բառնայ զխաչն Քրիստոսի, և ոչ զհետ եր-
թայ Քրիստոսի »: Արդ յամենայն պարտս իմ,
և յամենայն հրահանգս կարդիս, ո՛ր հոգի է՝ որ
տայ ինձ գործել. գործեցեմ արդեօք խնդասէս
առ՝ ի կատարել զկամս Աստուծոյ և առնել ըզ-
փառս նորա: Առանց այսորիկ՝ երկիւղ է ինձ,
զի կեանք կրօնաւորական չեցե՛ վասն իմ ճանա-
պարհ երկնից:

Այլ ո՞վ է այնպիսի. այնմ՝ որ չերմեռանդն
է, որ առաւել է կրօնաւոր մտօք և սրտիւ՝ քան
ձևով և անուամբ: Որ վասն կենացն յաւիտենից
յանձն առեալ է զաղքատութիւնն Քրիստոսի,
զհնազանդութիւն նորա, զլռնարհութիւն, ըզ-
մեռելութիւն. և յոյն այն, զոր ունի միշտ ան-
մոռաց՝ ի մտի, տայ նմա համբերել անյողդողդ
ամենայն խաչութեան և սրբութեան կարգին:
Եւ եցէ՛ ինչ խորհուրդ առաւել յորդորիչ և
հզօրագոյն քան զայս առ՝ ի խրախուսել. գնամ
ես զհետ Քրիստոսի առ՝ ի հասանել՝ ի կէտ կոչ-
ման իմոյ, պահպանութիւնք կանոնաց՝ որոց
հպատակիմ կրօնաւորաբար և հաստատու-
թեամբ, են քայլք՝ որ ածեն զիս՝ ի սուրբ ժա-
ռանգութիւն իմ, և աստիճանք՝ որ հանեն զիս
անդր՝ ի վեր: Այսու խորհրդով յո՛ր ինչ ոչ
խրախուսէ ոք, զո՛ր ինչ գտանէ՝ ի կարգին կարի
խստակրօն և կարի տաժանաւոր, և զո՛ր յորդ
ոչ ընծայեսցէ կարգին՝ զոր համարի գուցեն ար-
քայութեան երկնից: Լինէ՛ք ես այսչափ գողջ և
պղերգ, եթէ քաջ՝ ի մտի իմում տպաւորեալ

էր այս խորհուրդ: Ո՛վ լսուեսցի միթէ արուեստի
կրօնաւորի, որ յետ արկանելոյ զանձամբ զձե
ծառայութեանն Քրիստոսի, աղքատ և վշտա-
կեր Փրկչին իւրոյ, մանաւանդ լեցեալ նմին երանու-
թեան և անմահութեան փառաւորեաւ և քա-
ջայաղթ Փրկչին իւրոյ:

ԱՂՕԹՔ

Ո՛վ է մարդ, Տէր իմ, և ո՛վ եմ ես, զի հա-
ղորդ եղեր փառաց քոց, և թագաւորեցից յա-
ւիտեան ընդ քեզ՝ ի ժողովս ընտրելոց քոց:
Դու ես Աստուած՝ խնդասէս սքանչելի՝ ի պար-
գեւս քո, և հաւատարիմ յամենայն բանս քո:
Ոչ վասն քո միայն դարձար դու՝ ի ծոց Հօր քո,
այլ և վասն իմ, ընդունել զիս անդր՝ ի ժառան-
գակի՝ զոր նախանձամ սէրդ աստուածութեան քո սահ-
մանեալ է: Դու ինձ զայն խոստացար, և ըստ
հաւատարիմ և անսխալ խոստման քո ակն ու-
նիմ այդմ ծայրագոյն երանութեան: Այլ
յայսմ ակնկալութեան ո՞րպէս կարեմ, Տէր,
կալ մնալ՝ ի վերայ երկրի. եթէ հարկ է ինձ
կալ ասա ըստ մարմնոյ՝ ի մահկանացու կեանս
մինչև՝ ի վախճան ընթացից իմոց, այլ թո՛ղ
իմ չեցե՛ այժմըն յերկինս ընդ քեզ, որպէս
պարտ իսկ է նմա լինել:

Ո՛հ, Տէր իմ. այս զիս յամենի առնէ, այս զիս
դատապարտէ: Ընդդէմ աստուածային խոսա-
մանդ՝ սէրս իմ տակաւին բոլորովին է մարդ-
կային. ոչ աշխարհի և եթէ մարդկան, զբաղեալոց
յաղմուկս երկրաւորս և արբեցելոց՝ ի հրա-
պոյրս նորին, այլ և ինձ՝ ի դէպ եւանէ կշռամ
բուեթիւն մարգարէին՝ որ Հոգւովք քով սըը-
բով գոչէ. « Որդիք մարդկան, մինչև յե՞ր ե՛ք
խստասիրտք, ընդէ՞ր սիրէք զնանրութիւն, և

խնդրէք զտուէթիւն»: Խոստովանիմ զայս, այո, և խոնարհիմ. կարդ կրօնաւորական, սուրբ ինքնին և ամենասուրբ, սակայն չէ և այն զերծ յունայնութենէ և 'ի պատրանաց՝ յորս թէ ոք անկանիցի: Զերծո՛ զնս, Տէր, 'ի պատրանաց անտի, և ամրացո՛, պաղատիմ առ քեզ: Տո՛ւր ինձ 'ի միտ առնուլ զերեսին զայսոսիկ կարևորագոյն մասունս, զի մի՛ անկցին յոչնչութիւն՝ զոր մարթ իցէ ինձ համարել Ձմարիտ, բայց միայն երկնային. զի երջանկութիւնն այն ոչ ինորհք եւեթ ողորմութեան քո պարտի գոլ առ ինս, այլ և վարձ գործոց իմոց. և զի չէ մարթ արժանի լինել այնմ գոլով եւեթ կրօնաւոր, այլ գործելով որպէս կրօնաւոր: Ըստ այսոցիկ կարգաց եթէ ուղղեցից զգնացս իմ, գոից չիս բաղում ինչ փոփոխել:

Յաղագս գալստեան Հոգւոյն սրբոյ

ՄԱՍՆ Ա

Ամենայն արարածք պատմէին մեզ զկատարելութիւնս Աստուածոյ, և արարածք ամենայն էին առ մեզ բարերարութիւնք նորա, վասն ոչ ոյց էաք, որպէս և եմքս տակաւին ընորհապարտք տեսչութեան նորա, և որովք ոչ դադարէր ընդ ընդ զմեզ, առ 'ի յորդորել զմեզ 'ի սէր իւր: Սակայն այս բարեառ արարածոց չէ ևս չարժէր զսիրտ մեր, և ոչ ինչ թուէր բաւական 'ի դորովել զայն և 'ի սաստկել: Զո՛ր ապա գերագոյն հնարս 'ի գործ էարկ Աստուած առ 'ի շնչել զսէր իւր 'ի մարդիկ: Աւաքեաց 'ի մեզ զՀոգին սուրբ, որ է անձնաւորապէս և գոյացապէս սէր Աստուծոյ: Եւ որո՞վ իսկ կերպարանաւ էջ Հոգին. — 'ի կերպարանս հրոյ, առ 'ի յայտ առնել՝ զի է բոլորովին եռանդն սիրոյ, և գայր բորբոքել նովին եռանդեամբն զհոգիս:

Այրդ ոչ մի անգամ եւեթ էջ Հոգին, այլ ինչանիկ և հանապազօր. և է իսկ՝ զի յայտնի առնէ զէջ իւր, և հուրն այն երկնային հզօրագոյնս ազդէ 'ի հոգի, որպէս 'ի ժամանակի առանձնութեան: Եւ ահա 'ի կատարել աւուրց առանձնութեան, յորս ժողովեալ էին առաքեալք 'ի սուրբ վերնատանն, առաքեցաւ առ նոսա հոգիս այս սիրոյ. և եթէ եւ իսկ զպարտս իմ լցի բարեաւք յառանձնութեանս՝ յորոյ հասեալ կամ 'ի կատարած, գոյ և ինձ տեղի համարելոյ՝ զի ընկալայ վերըստին զՀոգին սուրբ: Այլ կամիցիմ առ այս առհաւատչեայ հաստատուն. ծանեայց զայն 'ի

սիրոյ խմիդ առ Աստուած. զի ընդունել զՀոգին սուրբ և սիրել զԱստուած, նոյն ի ինչ է. և հարկ է՝ զի սիրեցից զԱստուած ըստ չափոյ, որով զՀոգին սուրբ ընկալայ:

Զինչ է զոր ասեմն, և ընդէր զչափ 'ի ներքս ածեմ, ուր չիք չափ. « Զի ոչ եթէ չափով տայ Աստուած զՀոգին ». ապա և զԱստուած առանց չափոյ պարտ է մեզ սիրել: Մի ասա, Տէր, մի լեցի չափ և պայման սիրոյ խմոյ առ քեզ. քանզի չիք և յամենայնի՝ որ առնէ զքեզ սիրելի ինձ: Աստուած ես ամբաւ. պարտ է ասել և սիրոյ խմոյ ըստ կարի խմոումն լինել ամբաւ. որչափ և եցէ լայնածաւալ, սակայն չեցէ երբեք առաւել քան զոր եսդ արժանի. և զայս դուն ինքն ցուցանես հանապազ 'ի սրտի խմոում, եթէ արդարև խցեմ քեզ սիրելի. զի յանդիման առնես անդ զամենայն մեծութիւն քո, զամենայն զօրութիւն, զամենայն կատարելութիւն. և անտի զհետ բերեմ, զի որչափ և սիրեցից զքեզ, չկարեմ զանցանել 'ի սէր քո: Յայլում ամենայնի մարթի առաւելութիւն. կարեմ 'ի դէպս ինչ առաւելուլ 'ի զգուշութիւն և 'ի խոհեմութիւն, կարեմ առաւելագանց առնել մտադրութիւ յերս ինչ և հակողութիւն, կարեմ զանցանել 'ի ճգունս և 'ի մեռելութիւն, այլ ոչ կարեմ, Տէր, սիրել զքեզ առաւել քան զարժանն, անյագ է յայսմ մասին հոգին սիրոյ, չասէ երբեք չատ:

Այլ ես, աւաղ, ասեմ զայն, և ասեմ կարի յաձախ. առ դոյզն ինչ ներդործութիւն սիրոյ՝ զոր առնեմն, կամ համարիմ առնել առ Աստուած 'ի բարեպատեհ վայրկենի՝ յորում Հոգին սուրբ շնորհէ ինձ առնուլ զձաշակ շնորհաց, և զբաղցր աստուածային օծութեան, կարծեմ յափչտակեալ զիս յերերորդ երկինս, և միայեալ բոլորովին ընդ Աստուծոյ. այլ երբ չնչանի կայծակն այն: Ո՛հ, կարելիցէ սիրտ այնպէս դիւրաւ մոռանալ զսէր, և այնպէս դուն ուրեք յիշել զայն. աննեղուելի է այս ամենայն ուժեք. այլ քան զամենայն մարդիկ առաւել է մեզապարտ կրօնաւոր ոք յայսմ մասին. զի 'ի կրօնի կարի յոյժ նուազ են երբ՝ որք 'ի բաց դարձուցանեն յԱստուծոյ զիտոս, և 'ի հրաժարել խմոում յաչխարհէ՝ զինչ այլ մեայ ինձ, բայց միայն Աստուած. բաժին երջանիկ, զոր չկարեմ ըստ արժան բաւականին մեծարել. եթէ չկեցեմ գոհ ընդ այն, զինչ այլ կարասցէ առնել զիս գոհ, և ի յաջեցայց. « Ագահ է յոյժ, ասէ սուրբն Օգոստինոս, որում ոչ բաւէ Աստուած »: Այլ թերջուտ է և մեղապարտ, որ զԱստուած միայն ունի, և ոչ յարի 'ի նա:

ՄԱՍՆ Բ

Հոգին սիրոյ ծաւալի նախ 'ի սրտի, անդ հաստատէ զբնակութիւն իւր, և անդ սկսանի ցուցանել զաքանչելագործութիւնս իւր: Փանզի սէր քան յամենայն ինչ հաստատեալ է յիղձս: Զինչ ոչ ազդէ նա 'ի հոգի, յորոյ իւրաց ոչ գնա զերծ կացուցանէ, ոլոր ոչ 'ի վեր ամբառնայ: Տեսանեմք զայս յառաքեալս. առաջին արդասիք ի՛ման Հոգւոյն սրբոյ 'ի նոսա՝ եղև մաքրութիւն սրտից նոցա, միչև չնայլոյ 'ի նոսա և դոյզն ինչ ըղձից՝ որ չեցէ Աստուծոյ անմիջաբար, և ոչ 'ի վեր զնոսա ուղղակի ամբառնայցէ առ Աստուած միայն. զի անդամին նոքա 'ի միտ առին, զոր ասա մեծ ոմն 'ի սրբոց ասաց, զի « Աչինչափ թերանայ սիրտ 'ի սէր Աստուծոյ, որչափ ինչ այլ սիրէ ընդ նմա, կամ ոչ սիրէ վասն նորա »:

Ասաւ յառաջ գայ և երկրորդն արդասիք նորին սիրոյ, որով լցան առաքեալք: Որչափ մա-

քրագոյն է սիրա և զերծ՝ի յաղմանէ յերևելիքս, առաւել ազդէ սէրն աստուածային՝ի սիրա նորա, և զարթուցանէ զնա և բորբոքէ: Յորժամ հրոյ չկոչեն խոչք և արդելք, զի՞ր հրդեհ ոչ յարուցանիցէ. քան այսմ օրինակի եղիցի առաքեալք՝ի վերնատանէն, արք այլակերպեալք, մինչև քաղցուալեցս զնոսա կարծել տեսողաց, այնչափ Թուէին արիացեալ և այլ յայլմէ լեալ: Ձայսորիկ և բազումք՝ի սրբոց զիտորձ առնեն: Որ ինչ սէր աշխարհական ներգործէ՝ի մարդն, ոչ կարէր կալ՝ի կշիռ ընդ խանդաղատանս, յորս նոքա զմայլէին: Անհանգէին՝ի սուրբ նուաղուածն, մինչև կորուսանել զղջայութիւն: « Եթէ գտա՝ նիցէք զէզբօրորդին իմ, ասէր Հարսն հաւատարիմ, պատմեսջիք նմա՝ զի կաթոգին եմ՝ի սէր նորա »:

Ա յսպիսի էր սէր նոցա. արդ չիցէ՞ և իմ սիրա հանդոյն նոցին, կարող՝ի սիրել զԱստուած: Եւ զի՞ է զի սիրա իմ, զոր վասն իւր արար Աստուած, այսպէս ցուրտ է և անզգայ առ Աստուած. որ ինչ հայի ԱԱստուած, ոչ ինչ յայնցանէ գործովէ զսիրտ իմ, ոչ ինչ շարժէ զայն. ոչ աղօթիք, ոչ ժամակարգութիւն, ոչ սուրբ խորհուրդք, ոչ Ճառք հոգևորք, և ոչ սուրբ ընթերցուածք: Զուր է ինձ ասել՝ թէ եռանդն զգալի չիցէ կարևոր՝ի սէրն Աստուծոյ. Ճշմարիտ է, այլ ոչ ինչ նուազ և այն է Ճշմարիտ, զի եթէ գտաւորիկ էր սիրա իմ յերկրաւորացս և հաստատեալ ԱԱստուած յոյժ այլազգ գտանէի, և այլ զգացմունք կրէին յիս: Աւաղ, այնչափ եռանդն է յիս՝ի զգալիս, և ոչ դուն ուրեք գիւրագործով եմ՝ի անտես, վասն Աստուծոյ և՛ եթէ պարտ իցէ ինձ լինել ցրտասառոյց. չիցեմ նմա ընդհատարար. ոչ արար ընդ իս ընդհատ անհամար, և ոչ առնէ զօրհանապազ. չիցէ՞ ինձ խանդաղատալի որպէս հայր, որպէս արարիչ, որպէս պահպանիչ, որպէս փրկիչ, և որպէս ամենայնի պարգևատու. ոչ չատ իցէ այս ամենայն առ՝ի ձգել զիս առ նա: Ա յս ամենայն չիցէ՞ առաջի իմ յամենայն ժամ, և զի՞նչ տեսանեմ զինև՝ որ ոչ պատմեցէ ինձ անգադար զամբաւ ողորմութիւնս նորա: Անհասանելիք են այնոքիկ, Տէր իմ. և որչափ՝ի վեր են քան զիմոս իմ և զնորհուրդս, այնչափ և անզգայութիւն սրտի իմոյ լինի ինձ անհասանելի, և այնչափ առաւել պարտ է ինձ հշտամբել զանձն իմ, և յամօթ լինել:

ՄԱՍՆ Գ

Եւ դարձեալ՝ զի՞նչ իցէ սիրել զԱստուած. միթէ յիղձս ևեթ և՝ի զգացմունս ամփոփել զսէր իմ: Ա՛ւ՝ի գիտել զղանակ սիրելոյ՝ չատ է ինձ նկատել որ ինչ արար Տէր վասն իմ. սիրէ զմեզ Աստուած, և առ՝ի ցուցանել զսէր իւր՝ ոչ չատացաւ տալ մեզ զՈրդի իւր, այլ և զՀոգին իւր սուրբ տայ մեզ, և՝ի տալն զնա՝ զինքն ընծայէ մեզ: Ա յսպիսի է սէրն Աստուծոյ առանարգ արարած իւր՝ որպիսի եմս, զամենայն ինչ փոխանակէ ընդ օգտի իմում. և չէք ինչ մեծ, չէք ինչ աստուածային, որում չառնիցէ զիս հաղորդ:

Հաւրկ իցէ բազումս խնամատարել վասն ուսանելոյ որ ինչ պարտ իցէ ինձ տալ նմա տրեւտուր, և որպէս սիրել զնա: Ոչ միայն սիրեաց նա զիս՝ի սրտէ, այլ և արդեամբք. նա աւանիկ քանզի սիրեաց զիս Ճշմարտապէս՝ի սրտէ, սէր իւր չէղև անգործ, այլ եղոյց արդասիս առաքինի հրաշալիս, բոլորովին յայտնաբարբառս: Վասն որոյ եթէ սիրեմ զնա, կայցէ՞ ինչ՝ զոր խնայել՝ի նմանէ կարիցեմ. և ոչ մի ինչ. զի ուր պարտ

է ինձ ծառայել նմա և հաճոյ լինել, ընդ՞նչ կա-
րեմ զանազանել նմա: Այսպա թէ ոչ, առանց այսր ա-
մենապարտաս հաւատարմութեան գնալոյ
ընդհետ կամացն Աստուծոյ, և առնելոյ ձեղիւ
զամենայն՝ զոր ինչ խնդրէ նա յինէն և որպէս
խնդրէ, և ցոլջալի խնդրէ, 'ի զուր է ինձ ասել՝
թէ սիրեմ զնա:

Ըստ այսմ օրինակի աստուածսիրութիւն է
լուսոյն ամենայն օրինաց. զի չիք յօրինս գրախեց
մի՝ զոր սէրն Աստուծոյ անփոյթ արասցէ, և ոչ
դժուարին ինչ այնպիսի՝ զոր սէրն Աստուծոյ ոչ
տացէ մեզ կատարել: Ընդ՞ը չէ ևս սկսել քաջ
սիրել զԱստուած. այսուհետ ամենայն դժուա-
րութիւնք՝ որ 'ի բազմոց հետէ խափանեն
զնա, բարձցին առ հասարակ: Զարմանամ զի
ևս, բարձցին առ հասարակ: Զարմանամ զի
սուրբք այնպիսի ինչ մեծամեծս վասն Աստու-
ծոյ գործեցին, և զի մինչև ցյետին օր կենաց
իւրեանց տարան ամենայնի. այլ դադարեն զար-
մանք յածել իմում զմտաւ՝ զի սիրէին նոքա
զԱստուած: Արդ ևս տեսանեմ՝ 'ի սմին կարգի և
ընդ սովին կանոնաւ արս սուրբս, որ ամենայն
բարեկարգութեամբ կեան, և գործեն զամենայն
այնու եռանդեամբ և յարատևութեամբ, որ
չհաւատալի ինձ թուէր՝ եթէ չէի ականատես:
Ուսաւ է նոցա այս եռանդն անչէջ, և այս հաս-
տատութիւն անսասանելի, բայց 'ի սիրոյն Աս-
տուծոյ: Փոխանակ զարմանալոյ ընդ այն՝ զոր
առնեն, պարտ էր ինձ զարմանալ եթէ 'ի սիրելն
զԱստուած՝ ոչ առնէին զայն ամենայն: Պարտ է
ինձ ապա տեսանել՝ թէ իցէ ինձ տեղի յերկանա-
կաւ իմն համարելոյ, զի սիրեալ իցէ իմ ցարդ
զԱստուած: Թերևս բազում անգամ հաստա-
տեալ եմ սիրել զնա. այլ ըստ գործոյ զբանս իմ
գաւեալ, կարեցեմ վստահել ընդ հաստատու-
թիւն նոցին: Պարտ է ինձ խոնարհել 'ի մտա-

ծութենէ աստի, զի չէ ինձ մարթ սիրելի լինել
Աստուծոյ, եթէ ոչ սիրեմ զնա: Ա՜հ, Տէր իմ.
գէթ յայսմ օրէ և մինչև 'ի սպառ բորբոքեսցի
սուրբ սէր քո 'ի սրտի իմում:

ԱՂՕԹՔ

Հոգիդ սուրբ, սէր խակապէս և միշտ է, աղ-
բիւր անսպառ սուրբ սիրոյն՝ որ վառի անչէջ
'ի հրեշտակս երանելիս և յամենայն ընտրեալս
Աստուծոյ, էջ, բայց զսիրտ իմ, ևկ 'ի վառել
զսա. եթէ տակաւին փակեալ կայցէ, բռնադա-
տեա զայն առ 'ի փրկութիւն: Զիք ուրեք քեզ
արդել 'ի մեւս, կայծ մի 'ի հրոյ քումմէ շատ է
առ 'ի բորբոքել և ծախել զսիրտ իմ. քեզ ապա
մարթ է ինձ ելանել յառանձնութենէս, որպէս
առաքեալքն եղին 'ի վերնատանէն, նովին սիրով,
վասն որոյ և նովին հաստատութեամբ, նովին
գործունէութեամբ և նովին զօրութեամբ:
Յայնմհետէ ընդ ամենայն կեանս նոցա ոչ ինչ
կարաց մեկնել զնոսա 'ի սիրոյն Քրիստոսի, և
ոչ մեկնեսցէ զնս. զի և ես արդ, Հոգիդ սիրոյ,
տամ զիս բոլորանուէր Աստուծոյ իմում, ան-
լուծանելի զօդիւ և յաւէրժ սիրով. զի՞նչ ևս
այլ 'ի կենաց իմոց խորել կարիցեմ. և եթէ խո-
րեցից, ոչ մատաց զայն:

Ա՜ահ, Տէր իմ. կարի յոյժ բաժանեցի ցարդ
զսիրտ իմ ընդ քեզ և ընդ արարածս. և զի չէր
այն քո միայն, չէր իսկ քո ամենևին. զի դու
Աստուած նախանձորդ ես, և բոլորապատուղ
կամիս զսէր. արժանի ես դու այնմ, իսկ ես ան-
արժան եմ ընծրհայ քոց, եթէ այնչափ ընծրհք՝
զորս 'ի բարերար և 'ի հայրենի ձեռաց քոց ըն-
կալայ՝ ոչ բաւեսցին ուսուցանել ինձ սիրել
զքեզ: Ո՜վ Տէր, գիտացի՛ արդեօք զայն մինչև

ցայսօր. և ըլ՞նչ այլ պարտ էր ինձ գիտել. սա-
վասւ եւեթ լինէր ինձ գիտել զամենայն, այսինքն
ընուլ զամենայն զպարտս կարգիս, և զամենայն
առաքինութիւնս սորին բերել յանձին: Հոգի
քո սուրբ ուսուսցէ ինձ զայս. եկէ թէ նա յիս
ազդեսցէ հանապազ, եկէ թէ լուսոյ հանապազ
ազդեցութեանց նորա, և մի երբեք ելջցէ յիս
եռանդն նորա սուրբ:

Վասն յաճախելոյ ի սուրբ խորհուրդս

ՄԱՍՆ Ա

Ի մէջ սուրբ խորհրդոց երկու միայն են, յորս մարթ է մեզ յաճախել. խոստովանութիւն և սուրբ հաղորդութիւն: Փրկիչն մեր էգ զնոսա ի սուրբ եկեղեցւոջ, որպէս կրկին աղբերս յորդառատս շնորհաց, և մեզ անկ է ձգել յանձինս ի նոցունց զշնորհս կարևորս առ ի փրկութիւն մեր:

Երկաքանչիւր այլ և այլ զօրութիւնք են. խոստովանութիւն է երկրորդ ելն մկրտութիւն, որ զմեզ սրբէ յամենայն արատոյ մեղաց. իսկ հաղորդութիւն որպէս մանանայ մնուցիչ հոգւոց մերոց, որ զօրացուցանէ զմեզ և միաւորէ ընդ Աստուծոյ: Արդ եթէ եօթն անգամ յաւուրն անկանի արդարն, ապա պարտ է մեզ դիմել անդադար ի սուրբ խորհուրդս յայսոսիկ առ ի վերականգնել: Դարձեալ և չկարեմք անգիտանալ՝ որպիսի ինչ է ակարութիւնս մեր, և ո՛րպէս ստէպ վերջանամք ի կատարելոյ ըզխոստմունս մեր առաջագրեալս ի սուրբ խոստովանութեան և ի հաղորդութեան. ապա կարօտիմք զօրութեան առ ի գնալ ընդ Հանապարհ կատարելութեան, և օր ըստ օրէ ի յառաջադիմն նկրտել. և ի՛ւ մարթ եկէ մեզ զօրանալ ի նոյն, բայց հաղորդութեամբ կենարար մարմնոյ և արեան Փրկչին մերոյ: Վասն այսորիկ վարժապետք հոգևոր կենաց պատուիրեն յաճախել ի խոստովանութիւն, և ըստ նախնի հաւատացելոցն սովորութեան՝ հանապազօր հաղորդել սուրբ խորհրդոյն: Խոստովանու-

Թիւն ոչ միայն սրբէ զմեզ ՚ի մեղաց, այլ և օգնէ յոյժ ՚ի պահել զմեզ ՚ի սրբութեան և յանմեղութեան, ՚ի ձանաչել զտկարութիւն մեր, ՚ի միտ առնուլ զվտանգս մեղաց առ ՚ի սպառազինել ընդդէմ նոցին, և առ ՚ի պատերազմել ընդ թերութիւնս մեր՝ զի մի սովորութիւն լեալ տարրասցեն ՚ի մեզ: Զայս ամենայն չնորհս ներգործէ ՚ի մեզ խորհուրդ խոստովանութեան, և մանաւանդ հանապազօր հաղորդել սուրբ խորհրդոյն. քանզի սովաւ հոգիս մեր միանայ ընդ Քրիստոսի, և փոխակերպի նմին ՚ի նա: Ցիւրաքանչիւր նուագի առաւելագոյն ընդունի լոյս առ ՚ի միտ առնուլ զպարտս իւր, սաստկագոյն ղաչ խայթս խղճի ընդ թուլութիւն և ընդ թերութիւնս իւր, և յաւելու ՚ի զօրութիւն գնալ անսայթաք ընդ ճանապարհ կոչման իւրոյ:

Ուրեմն կարևոր է ինձ և յոյժ կարևոր, հաղորդել հանապազօր կենարար մարմնոյ և արեան Փրկչին իմոյ, որպէս զի պահեսցէ նա զիս ՚ի մեղաց, զօրացուսցէ զտկարութիւն իմ և ածցէ զգաղջութիւն իմ յեռանդն:

ՄԱՍՆ Բ

Բայց յաճախել ՚ի սուրբ խորհուրդս ոչ ինչ օգնի, եթէ չիցեն ՚ի մեզ կարևոր պատրաստութիւնք. այս ամենեցուն է ծանօթ, ամենեքին գիտեմք զայս, այլ ոչ միշտ որպէս պարտ է զան ՚ի գործ արկանեմք ՚ի սոյն:

Է զի այնու վեր ՚ի վերոյ առաջադրութեամբ և զղջմամբ մատչիմք ՚ի խոստովանութիւն, զի ՚ի վտանգ զսուրբ խորհուրդն արկանեմք: Ֆանճ աւաղելի գտանիմք, եթէ փոխանակ արգարացեալ դնիք մեկնեցայ ՚ի խոստովանարանէ, յանցաւորք անտի ՚ի բաց ելանիցեմք: Ֆանճի մարթ

է մեզ մատչել անդր ներելի ևեթ մեղաք, որպէս և յուսամքն իսկ ըստ ողորմութեանն Աստուծոյ, այլ առ թերութեան զղջման մերոյ և առաջադրութեան՝ որ առ ՚ի լուսին սրբոյ խորհրդոյն պահանջին, մեկնել անտի ծանրագոյն ևս մեզաց պարտապանք վասն արհամարհութեան խորհրդոյն: Վտանգ՝ յոր դիւրագոյն է մեզ անկանել քան մեղաւորաց մեծաց:

Ո՛հ, յերաւել է ինձ երկբայել ընդ զղջումն իմ և ընդ առաջադրութիւն պարելոյ ցարդ. զի եթէ ոչ կարի անկատարք այնքիկ էին, ոչ այսպէս ՚ի նոյն թերութիւնս գտանէի միշտ անուղղայ ամենևին: Քննեա ուրեմն անձն իմ և տես, մի գուցէ անհոգութիւն զբեզ յայսպիսի ինչ զառածեալ եցէ ՚ի վտանգ. լո զանցելոց խոստովանաբանեցդ զթերին, և զգուշագոյն յայսմ հետէ պատրաստեսջիր ՚ի խոստովանութիւն:

ՄԱՍՆ Գ

Բարւոք խոստովանութիւն պատրաստէ առ բարւոք հաղորդութիւն. այլ ոչ անպիտանամղն և այլ պատրաստութիւնք խնդրին յիս առ ՚ի մատչել ՚ի սեղան անդր: Պարտ է ինձ ապա քննել՝ թէ զիարդ զպատրաստութիւնս զայսոսիկ կատարեցեմ, և ամաչել առաջի Աստուծոյ՝ զի այսպէս սակաւ յիս տեսանին արգասիք յաղագիմութեան, որ ձաշակեմն հանապազօր զհաց հրեշտակաց: Միանգամ ևեթ պատարագեցի ըստ արժանւոյն՝ չատ էր առ ՚ի սրբել զիս ըստ արժանւոյն՝ չատ էր առ ՚ի սրբել զհոգի իմ. այլ ես յետ այսքանիցս պատարագելոյ՝ ոչ ինչ այլ գտանեմ յանձին, բայց թերութիւնս և յանցանս: Եւ ուստի՞ լեցէ ինձ այս, բայց միայն ՚ի դաղջութենէ և ՚ի հեզութենէ իմմէ:

Պատարագեմ և հաղորդիմ հանապազօր, այլ որով եւանդեամբ մատչիմ՝ի սեղան, և որով ընդհակառակ՝ մեկնիմ անտի: Յուշեալ և զբաղեալ մտօք, նիւթապէս ևեթ զօրինադրեալ աղօթիցն արտասանելով, առանց ընտանեբար խօսակցութեան ընդ Տեառն իմում՝ որ զծայրագոյն սէր իւր առ իս ցուցանէ՝ի սուրբ խորհրդեանն. և իբրև պարտս իմն կատարեմ զսուրբ պատարագն: Թերևս առ՝ի չգայթակղեցուցանելոյ ևեթ զայլս յամեմ վայրկ մի՝ի ընդհակառակս, ուր պարտ էր ինձ զամենայն զկարօտութիւնս իմ և զաղէտս առաջի առնել Տեառն իմում՝ որ կայ՝ի սրտիս, և չհամել մեկնել՝ի նմանէ: Իսկ ես ընդ հակառակն փութամ՝ի կարևորագոյն կարծեցեալ՝ի գործս իմ, և զջրն՝ի բուն ոչ ևս յիչեմ զմեծութիւն ընդհակառակ, որպես թէ ոչ ևս լցէ մեծ այնու՝ զի հանապազօր ընդհակառակ ինձ: Ո՛հ, ոչ այսպէս մտօք ես զառաջին պատարագն իմ:

ԱՂՕԹԻ

Ներեա ինձ, Տէր, զի այսպէս սակաւ մեծապէս ցարդ զընդհակառակ քո մեծ, և անպատրաստ՝ի սուրբ սեղան քո մատուցեալ՝ կորուսի զարգասիս սրբոյ խորհրդոյդ՝ զեւանդն յառաջադիմութեան՝ի կատարելութիւն: Զի եթէ մատգրութեամբ նկատեալ էր իմ զմեծվայելչութիւն քո յեկաւորելդ առ իս, զանձառ բարութիւնդ՝ի ընդհակառակ քո զքեզ ինձ, և զդանձս անբաւ՝ զորս բերկիր առ իս, ոչ այնպէս ցուրտ և դաղջ մատչէի՝ի սեղան քո. ահ և մեծարանս՝ մեծվայելչութիւն քո ազդէր՝ի յիս, սէր և ընդհակառակս՝ բարութիւն քո, իղձ և փափաք՝ մեծութիւն դանձուցն: Տպաւորեա՝ի միտս իմ զնորհ-

հուրդս զայսոսիկ. զի սոքիմք միշտ մատեայց այսուհետև՝ի սուրբ սեղան քո: Որչափ զմտաւ ածեմ զսրբութիւնն զոր պահանջես՝ի պաշտօնէից քոց, այնչափ առաւել զարհուրեալ դողամ: Առաջինքն քո պաշտօնեայք պատրաստաբար՝ի հեղուլ զարիւնս իւրեանց վասն անուան քո՝ մատչէին՝ի սուրբ քո սեղան. իսկ ես և ոչ՝ի մահացուցանել զիերս իմ գտանիմ պատրաստ՝ի մատչել իմում անգր: Նոքա անմահական բաժակաւդ զմայլեալք մեկնէին՝ի սեղանոյ անտի, տանջանս վասն քո խնդրելով և գահիճս. իսկ ես՝ի սովորականն իմ դիմեմ անտի՝ի կիրս և՝ի հանգիստ: Հայեաց, Տէր, յաղէտս իմ, վասն՝ի յիս զեռանդն ծառայից քոց, որպէս զի արժանապէս այսուհետև մատեայց՝ի սեղան քո սուրբ, և ձաշակումն սուրբ մարմնոյ և արեան քո լցցի ինձ՝ի փրկութիւն և՝ի կեանս յաւիտենից:



ՅԱՆԿ

Ջեկուցումն 5
Վասն հոգեւոր կրթութեան 9
Օր ԱՌԱՋԻՆ — Յաղագս առ ինչ ստեղծեալ է մարդ 13
Յաղագս հոգւոյ քրիստոնէութեան . . 20
Յաղագս հոգւոյ կրօնաւորական կոչման . 27
Յաղագս կատարելութեան հանապազորդ գործոց մերոց 32
Օր ԵՐԿՐՈՐԴ — Յաղագս մահուչափ մեղաց . 39
Յաղագս նեբելի մեղաց 46
Յաղագս գայթակղութեան և չար օրինակի . 52
Յաղագս մտաւորական աղօթից . . 57
Օր ԵՐԲՈՐԴ — Յաղագս գաղջութեան ի ծառայութեանն Աստուծոյ . . 65
Յաղագս յարգելոյ ընծորհս Աստուծոյ . 72
Յաղագս յարգելոյ ժամանակ . . 79
Վասն աստուածային պաշտաման . . 86
Օր ՀՈՐՈՐԴ — Յաղագս մահուան . . 91
Յաղագս աստուածային դատաստանի . 101
Յաղագս դժոխոց 109
Յաղագս այցելութեան սրբոց խորհրդոյն . 118
Օր ՀԻՆԳԵՐՈՐԴ — Յաղագս առ Աստուած դարձի օրինակաւ անառակ որդւոյն . 125
Յաղագս առնոյ ղուկ Ցխսուսի . . 135
Յաղագս խոնարհութեան օրինակաւ մարդեղութեան Ցխսուսի . . . 140

Յաղագս Ներկայութեան Աստուծոյ . . 149
Օր վեցերորդ — Յաղագս կրօնաւորական
աղքատութեան 155
Վասն հնազանդութեան կրօնաւորի . . 163
Յաղագս առանձնական կենաց Յիսուսի . 169
Յաղագս կենակցութեան ընդ ընկերս . 178
Օր եօթներորդ — Յաղագս գործնական
կենաց Յիսուսի 189
Յաղագս համբերատար ժուժկալութեան
'ի վիշս 199
Ի չարչարանս Փրկչին 209
Յաղագս ընթերցման 216
Օր ութերորդ — Յաղագս նորոգ կենացն
Քրիստոսի 'ի յարութեան . . . 225
Յաղագս համբարձմանն Քրիստոսի . . 234
Յաղագս գալստեան Հոգւոյն սրբոյ . . 243
Վասն յաճախելոյ 'ի սուրբ խորհուրդս . 251

4087

ՀՀ Ազգային գրադարան
NL0030988

3959